


# ԱՐԿԱՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԵՐԳԻՆ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## Մի երկու խօսք

Դեղաբուժատական բաժնի և «Երաքսի» հրատարակութեան մասին . . . . . Ա. Երես.

Օրէնութիւն սրբադյոս միւռօնի . . . . . 3  
Սմէն. Խրիմման-Հայրիկի եօթանասնունց տարեգարձի  
առիթով. . . . . 4

**Հասարակական խնդիրներ**  
Հայկական խնդիր առիթով . . . . . Ա. Ֆ. Ա.  
Սղցցին-Եկեղեցական խորհրդածութիւններ . . . . . 5

**Տեղազրական**  
Մուշ Ալեքսէն. . . . . 17  
Տաճկահաստանի արզի անուեսական վիճակը . . . . . 30

**Կենսագրական**  
Մտեփաննոս եպիսկոպոս առաջնորդ՝ Նիկոմիզիոյ (շաբ-  
րունակելի) . . . . . 41  
Ասպետն Աստուածատուր Թունդ » » . . . . . 67

**Մատենագրական**  
Հայր, դրուադ մը թատրոնական կեանքէ. \*\*\*. . . . . 89

**Բանաստեղծութիւններ**  
«Երա ալբումն. Աղ. Շապուռցեան. . . . . 104  
Մուրացիան. . . . . » . . . . . 105  
Մատաղ երգիչը . . . . . » . . . . . 106  
Ահանքը. Յան. Մալիսանեանց. . . . . 107

**Մատենախօսական**  
Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache  
von Dr. Sophus Bugge, Professor an der norvegischen Univer-  
sität. Christiania, 1889. Եսուն. . . . . . . . . . . 108

Մովսէս Խորենացու Հայկական Պատմութիւն. Գլուխ  
Խալանեան. . . . . . . . . . . 113

**Այլ և այլք**  
Հասունեան և Հակահասունեան Հայերի միութեան պայ-  
մանագիրը . . . . . . . . . . . 152  
Ներսէս Պատրիարքի ատենախօսութիւնը . . . . . 157  
(Հարունակութիւնը աես երրորդ երեսում):

**ԱՆԻՐՁԵՆ ԴԵՎՔԵԼԻՐԻ ՄԱՍԻՆ** (Կարնոյ և Պոլսի Շուպումները, Խորէն Պատրիարքի հրաժարականը, Դատասալբառուածների անուշները) . . . . . 170

**ԼՐԱԳՐԱԳ ՀՈՒՐՁՐ** . . . . . 179

**ՄԱՀԱԳՈՒցակ**

**ՄԱՀԱՐԻԸ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԱՅ** . . . . . առել

**ԵՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ ՀԱՅԿԱՂԵԱՆԱՅ** . . . . . զ

**ՅԱԼԵԼՈՒԱԾ**.

«ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵԼՈՍԱՐ ԼԵՐՃԵԿԱՅ, ԳԼՈՒԽ ԲՆ. ՄԱԿՍԻՄ

**ՄԱԿԱՐԻՄԻԸ ԹՄԱՐԳ. Յ. ՄԱԼՔԱՆԵԱՆԱՅ** . . . . . 43-84

**ՍՐՋԱԴԱՆՔ մի Մշցյ աշխարհէն. ԳԵԼԵՎԱԾՔ. . . . . 1-15**

**ՅԱՅՄԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** . . . . . 1-5

### ՆԿԱՐՆԵՐ

1. Ա. ԵԶՈՒՄԻԱԾԻՆ . . . . . 3
2. ԵՐԱՐԱՏԵԱՆ ՊԱՉՄ. . . . . 5
3. ՄՉԵԳԻ ՀԱՅԵՐ. . . . . 17
4. ՔՈՆՐԳԵՐԻ ԽՈՆՄԻ . . . . . 33
5. ԱՆԻՎԱՆՆՈՒ ԵՎԻԽՈՂՈՍ, ԱԽԱԾՆՈՐԻ ՆԻՒԿՈՄԻԳԻՌՅ . . . . . 41
6. ԱԱՎԵՏՈՆ ԷԱՄՈՒԱԾԱՄՈՒՐ ԳՐՈՒՆԴ . . . . . 67
7. ՄԿՐՏԻԸ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ. . . . . ա (180)
8. ԵՂԴԵՄԵԱՆ ԿԻՐՃ. . . . . յԱԼԵԼՈՒԱԾՈՒՄ . . . . . 43
9. ԳԱՐԱՊԱՅ . . . . . » » . . . . . 59
10. ԳԻՒԼԻՊԱՐ. . . . . » » . . . . . 84

### ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ընտառ աշնան ժամանակ, նկար ԱՐԻԺԵՂՈՒ:

Բախչիսարայի տեսարանը, նկար

Առվկասեան տեսարան, նկար Լագօրիօ:

Սուխում. Ա. ալէի տեսարանը, նկար Լագօրիօ:

Շիկահեր գլուխ, նկար Ուացցիոնի:

Հայելուն նայող երեխաներ, նկար Լավերեցկու:

Գլխանկար, նկար Մակովսկիի:

Ժամադրութիւն, նկար Ուացցիոնի:

Սմօռ նկար, Մակովսկիի:

Սմօռը (Սիրյ Էատուածը) Պաիլսէյի դռանը:

Ընտառային հովուելութիւն, նկար Բալսի:



«ԱՐԱՔՍ» պատկերազարդ վեցամսեայ  
հանդիսի բաժանորդագինն է 3 ռուբլի:  
իւրաքանչիւր զիրքը արժէ 2 ռ. 50 կ.  
«ԱՐԱՔՍԻ» բաժանորդագրութիւնը բա-  
ցուած է միմիայն երկու զրբի համար:

Ամեն մի զիրքը բազկանալու է 12 թեր-  
թից ութածալ զիրքով:

Ապառիկ բաժանորդագրութիւն ամենեին  
չէ ընդունվում:

Առաջին տարուայ գրքերը սպա-  
ռուած են:



Նարունակվում է «ԱՐԱՔՍԻ» 1890  
թուականի բաժանորդագրութիւնը:

1890 տարուայ ընթացքում կը հրատա-  
րակուի. դարձեալ երկու զիրք նոյն ուղղու-  
թեամբ և նոյն զիրքով:

Երկրորդ զիրքը կը հրատարակուի գեկ-  
տեմբերի վերջին:

Բաժանորդագինն է երկու զրքի համար  
ձանապարհածախով 3 ռուբլի, իսկ իւրա-  
քանչիւր զիրքը արժէ 2 ռուբլի 50 կոպ:

«ԱՐԱՔՍԻ» խմբագրութեան հետ գործ  
ունեցողները դիմելու են Սիմեօն Գուլամի-  
րեանցին այս հասցեով.

С.-Петербургъ. Симеону Гуламирянцу. Стремянная улица,  
домъ № 1, кв. № 15. կամъ St. Pétersbourg. Simeon Goulami-  
riantz. Rue Stremiannaja, m. № 1, leg. № 15.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 августа 1890 года.

Типография И. Н. Скороходова (Надеждинская, 43).

# ԱՐԱՔՈ


ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1890

ԵՐԻՊՈՒԹԻ ՏԱՐԻ

ԳԻՐՔ Բ

ԴԵԿՏԵՄԲԵՐ



Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
Տպարան կ. և. ԱԿՈՐՈԽՈՎՈՎ  
1891.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 июля 1891 года.

Типографія И. Н. Скородова (Надеждинская, № 43).





**S. S. Մակար Ե. Կաթոլիկոս Ամենայի Հայոց:**

Верховный патриархъ и католикосъ всѣхъ армянъ, Макарій I.

*Հրատ. և Արտադ. Հանգիսի:*



## ՀԱՆԳԻՍ

ՎԵՅՍՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՃԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏ-  
ՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՈՒՐԲ ԷՊՈԽԱՆԻ.

ԱՊՐԻԼ ԱՐՄԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՏԵՐՆՈՒԿԵՍ ԺԵՄԻՆ Ս. Է. ՀԱՅԻԵՆԴՆՈՒՄ  
ԸՆ ՏԵՐ ՓՈԽԵՑԱՆ ԸԶԳԻՆ ՎԵՀԱՓԸՌ ՄՐԲԱՋՆԱՍՈՒՐԲ ՀԵՑԲԱՊԵՏՆ ԵՄԵ-  
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՄԵԿՄՐ Ս. ԵՐԵՎԱՆԸՈՒՆ ԵՒ ՈՒԹԸ ՏԵՐԵԿԱՆ ՀԵՍՏԿՈՒՄ:

Նորից սպոյ քողով ծածկուեցաւ հայ ազ-  
գի հայրապետական գահը ու գաւազանը:  
Կնքեց իր մահկանացուն Հայաստանեայց  
Առաքելական Ս. Եկեղեցու բազմաշխատ և  
արթուն հովուապետը՝ Տ. Տ. Մակար Ա.-ը.

Մաղթենք առ Ամենաբարձրեալ Աստուած,  
որ Սուրբ Լուսաւորչու թափուր մնացած  
նուիրական գահը շուտով ունենայ իր ար-  
ժանաւոր և իմաստուն ս. գահակալը ի փառս  
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և ի սփիւռս  
աշխարհի սպացեալ հայ ազգի:

Ի Տէր հանգուցեալ Սրբազնասուրբ Մակար  
Առաջնի կենսագրութիւնը արդէն զետեղած  
ենք «Սրբաքսի» նախորդ գրքերից մինում:  
Յաւում ենք, որ հանդիսի տպագրութիւնը  
վերջացած լինելով, այլ ևս մեր միջոցը չէ

ներում զնել այստեղ Վեհափառ Հայրապետի վերջին երկու տարուայ գործունէութեան նկարագրութիւնը, որով պատկերացրած կ'լինէինք Մակար Ա-ի ներքին աշխարհահայեցողութիւնը: Մակայն պէտք է ասել, որ Ծերունի Քահանայապետի գործունէութիւնը, մանաւանդ վերջերս, ամբողջովին նուիրուած էր ի շահ հայ ազգի և եկեղեցու վերաշխնութեան սուրբ գործին: Անշուշտ ի Տէր Հանգուցեալ Հայրապետի մահուամբ ազգը զգալի կորուստ ունեցաւ, մանաւանդ այնպիսի մի ժամանակում, երբ Մակար Ա-ը իր հոգեկան ու բարոյական բոլոր ոյժը գործ էր զնում Մայր Աթոռի և ազգային գպրոցի բարգաւաճման և պահպանութեան վերայ:

Նորին Օծութեան թաղման փառաւոր հանդէսին ներկայ էին Կառավարութեան կողմից. Ներգործը Խորհրդական Մ. Սմբարդանեան, Երևանի նահանգապետ գեներալ մայոր Գրիգէ, փոխնահանդ. կոմս Տիգէնդհառուղչն, նահանգական գատարանի գատախազը, զիմնազիոնի և ուսուցչական դպրանոցի տեսուչ ները: Երեզակնափայլ Շահի կողմից՝ Պարսից հիւպատոս Միրզայ Զաքբար-Խանը և Երևանու մահմետականների աշխարհական ու հոգեորական ներկայացուցիչները ու մօտաւորապէս 20 հազար հայ բազմութիւն:

Պատգամաւորներ կային. Պոլսոյ Պատրիարքի և բազմաթիւ ազգային հաստատութիւնների և հայաբնակ քաղաքների հայ հոգեորականութեան և աշխարհականների կողմից:

Պատցուել են բազմաթիւ պատկեր և ցաւակցական հեռապիլներ դրեթէ ամեն հայ հասարակութիւններից և հաստատութիւններից:

Նշյնալէս ստացուելէ հեռազիր և Վարաստանի ոռւս էքզարիս Պալլազիայից:

## ՄԻ ՔԱՆԻ ԽԾՈՒՔ

Եյս զգբով լրանումէ «Երաքսի» երրորդ տարեշրջանը:  
Եյս պատճառով կարեոր ենք գտնում մի երկու խօսք ասել  
հայ ընթերցող հասարակութեանը:

«Երաքսի» երեք տարուայ հրատարակութիւնը, կարծում ենք,  
մասսամբ մի թոյլ գրաւական կարողէ համարուել մեր այն ուղղ  
զութեանը, որով առաջնորդուած ձեռնարկեցինք 1887 թուի  
վերջերին մեր հանդիսի հրատարակութեանը:

Թէ «Երաքսը» ի՞նչ ուղղութեամբ է շարունակում ծառա-  
յել հայ ժողովրդի մտաւոր վերածնութեան գործին, դա պէտք  
է որ պարզ լինի հանդիսի ընթերցողներին. թէև այս էլ զի-  
տելու է, որ առայժմ «Երաքսը» նիւթական ձախորդ հանդա-  
մանքներում գեռ ևս հարկաւոր պայմանները չեն ունեցել ըն-  
դարձակօրէն երեան հանել իր ծրագիրն, որն է հայի անցեալ  
և ներկայ կեանքի և հայ աշխարհի բազմակողմանի ուսում-  
նասիրութեամբ նպաստել հայ անհատի մուաւորական զարգաց-  
ման և ինքնառնախաջութեան, իբրև հայ աղդայնութեան անդամի:

Համոզուած լինելով, որ գեղարուեսար մի ժողովրդի ձա-  
շակը վարդացնելով հանդիրձ նորա բնաւորութեան անտաշ  
ու յոռի կողմերն է հարթում և աղնուացնում, ուստի և մենք  
ամեն խնամք գործ ենք գնում «Երաքսի» և այս կարեւոր բա-  
ժինն ևս իր բարձրութեան վերայ պահել. Եյս աեսակէտով  
իսկ, մեծ ուշագրութիւն ենք գարձնում նաև «Երաքսի» տպա-  
գրութեան վերայ, որը նոյնպէս ունի իր հրահանգիչ կողմը:

Եյս զքից սկսեալ տպագրում ենք «Երաքսում» և գեղա-  
րուեսառութեանը վերաբերեալ զրութիւններ, թէ ընդհանուր  
ուղղութեամբ և թէ զետեղելիք նկարների մասին յատկապէս:  
Գեղարուեսաական բաժնում կարմոր տեղ է բռնելու հայկա-  
կան ճարտարապետութիւնը անցեալում հանդերձ նկարներով:

Ի դէպս աւելորդ չենք համարում յիշել նաև, որ «Երաք-  
սում» մասնակցող անձանց մեծամասնութիւնն առաջին անդամ

Հայոց մամուլում դրում է միմիայն «Երաքսում» և որոնցից շատ շատելով գիտութեան և օտար գրականութեան մէջ յայտնի անձնաւորութիւններ են ներկայանում:

«Երաքսի» ուղղութեանը և արտաքինին այս մի քանի տողերը նուելինուց յետոյ, բնական է, որ այժմ գտնանք հանդիսի մի այլ կենսական խնդրին. թէ արգեօք նոյն իսկ նիւթառէս գործ դրած մեր ջանքերի փոխարէն, հանդէսը ունի բաժանորդներից այնքան եկամուտ, որ կարող լինի ծածկել գեթիր ամենաանհրաժեշտ ծախսերը, անշուշտ, գեւ հաշուի ներքց չառնելով այն կողմնակի մխսերը, որոնք սերտ կապով կապուած են «Երաքսի» հրատարակութեան հետ:

Եյս հարցին պատասխանելու համար նպատակայարմարն է մէջ բերել «Երաքսի» հէնց մի տարրուայ հաշիւը, որով մի դադախար էլ կ'տանք հասարակութեանը տալազրական գործի մասին, մանաւանդ գեղարուեստական մի հրատարակութեան:

Եւելի պարզ լինելու համար վեր առնենք 1890 թ. տարեցքանի հաշիւը, որը և գնում ենք այստեղ.

«Երաքսը» տպագրած ենք 720 օրինակ, ինչպէս առաջին, այնպէս և երկրորդ զբքից, հաւասար թուով:

Առաջին զիրքը  $17\frac{1}{2}$  թերթից և 21 նկարից բաղկացած ամեցաւ մեզ բոլոր ծախսով. 1.107 ռ. 21 կ.

Երկրորդը, այսինքն այս զիրքը  $14\frac{1}{2}$  թերթից և 19 նկարից բոնից. . . . 1.002 » 39 »

---

Ընդ ամենա. . . 2.109 ռ. 60 կ.

1890 տարեցքանի մէջ «Երաքսը» տարածուած է 617 օրինակ, որոնցից 482 հոգի կանխիկ վճարած են երկու գրքի համար Յական ուուբլի բաժանորդագինը, որ անումէ 1446 միթ. 71 օր. ապառիկ է, իսկ 64 օրինակն էլ նուէրներ են աշխատակիցներին, լրագրներին, այս և այն անձանց, որով դուրս ցըռուած գրքերի գումարն է 617 օր. ուստի դեռ միումէ ևս 103 օր. անվաճառ:

Եյսպէս «Երաքսի» երկու գրքի ծախսն է. 2.109 ռ. 60 կ.

Իսկ մինչեւ այժմ ստացուած է միայն . . . 1.446 » — »

---

Ուստի միայն այս տարի մենք վեսս ունենք. 663 ռ. 60 կ.

Աշա 1890 թ. այս երկրորդ գրքի մանրամասն հաշիւը.

Բառական «Արագոն» ծախոս.

Կարուածք 14 <sup>1</sup> / <sub>2</sub> տպագրական թերթին,		188 ռ. 50 կ.
իւրաքանչիւր թերթը 13 ռուբլիով . . .	37 » 50 »	
14 <sup>1</sup> / <sub>2</sub> թերթի տպագրութիւնը 2-50-ով .		
Վելորդ համարուած շարուածքի գեն ձգե-		
լուն և խմբագրական սրբագրութեան համար.	24 » 75 »	
Հապկի շարուածքը և տպագրութիւնը .	6 » — »	
Վարդունինից թուղթ 12 օգմայ, 11 ռ. 80 կ.	141 » 60 »	
12 օգմայի օսլայումն 50 կոպէկով . . .	6 » — »	
Գունաւոր թուղթ շապկի համար 8 դեստ.	8 » — »	
Ձաղթակցութիւնք, զանազան ծախսեր, վար-		
ձատրութիւններ ևն . . . . .	75 » 25 »	
700 «Արագոն» փոստի ծախսը, իւրաքան-		
չիւր 100 օրինակին 20 ռուբլի . . . . .	140 » — »	
Լրագիրներին յայտարարութեանց համար.	27 » 56 »	
Կազմարարին. . . . .	30 » — »	

685 ռ. 16 կ.

Կազմակերպ ծախոս.

Ա եննա՝ Անդերէր և Վեցշ գործարանին 6		
Կլիշէի համար և մաքսածախս . . . . .	89 ռ. 71 կ.	
Դարձեալ, Ա եննայի 6 այլ կլիշէի համար.	49 » 40 »	
Կրոյս, Պետերբուրգում 4 կլիշէի համար.	37 » 55 »	
Շէմ, գրավեօր, 2 կլիշէի համար . . .	29 » 72 »	
Գուպակէ, 1 կլիշէ Ա եհ. Կաթողիկոսինը.	12 » — »	
Լուսանկարին զանազան նկարիչների իւղա-		
ներկ պատկերներից օրինակելու համար . . .	19 » 75 »	
Ակարներ փորագրութեան համար . . .	9 » 50 »	
Ակարների տպագրութեան համար թուղթ.	23 » 60 »	
Գուպակէի տպարանում առաջ տպագրութեանը.	50 » — »	
Ակարների երեսի համար ալբոմինի թուղթ.	3 » — »	

Գումարն է 317 ռ. 23 կ.

Այսպէս այս դրքի բնագրի ծախսն է . . .	685 » 16 »
Այս դրքի նկարներով հանդերձ արժենում է . . .	317 » 23 »

Ուրեմն «Արագոն» այս երկրորդ գիրքը 720  
օրինակից նկարներով հանդերձ արժենում է . . . 1.002 ռ. 39 կ.

Եյժմ, այս պարզ հաշիւը ներկայացնելով հայ հասարակութեան ուշադրութեանը, մեզ մնումէ միայն յուսալ, որ եթէ յիրաւի «Ծրաքսի» հրատարակութեան յարատեռութիւնը ցանկալի է մեր հասարակութեանը՝ այն ժամանակի, բնական է, որ հասարակութիւնը մեզ տայ գէթ անհրաժեշտ ծախսի համաձայն այնքան բաժանորդ, որ կարող լինենք գործը կանոնաւոր կերպով առաջ տանելու, առանց ո և է վեսաների ենթարկուելու, որ այսուհետեւ մեզ անտանելի է դառնում:


2<sup>ն</sup>այելով մեր այս ձախորդ պայմաններին, որ միայն այս տարի 663 ռ. 60 կ. վեսա ունենք, մանաւանդ որ մենք նիւթական միջոցի տէր անձը չենք, այսուամենայնիւ, կարծում ենք, որ ամեն մի ընթերցող տիսնում է, որ «Ծրաքսը» նաև արտաքին կողմով շարունակ մշակվում է, մանաւանդ նկարների ընտրութեամբ և հանդիսի շքեղ հրատարակութեամբ\*): Մենք խցու էնք տալու «Ծրաքսի» հրատարակութեան մասին խօսելու զանազան պատճառներով. իսկ թէ ինչու փոքր ինչ կանդ առանք այս խնդրի վերայ, այդ էլ սոսկ նորա համար, որ արդէն հակառակ մեր յուսալուն, սահմանած եղանք պարզելու հայ հասարակութեանը «Ծրաքսի» վիճակը ու այնու ազատ կացուցանենք մեզ աւելորդ բացապատճիւններից:

Առհասարակ մեր մամուլի ընդհանուր վիճակին ենթարկուած է և «Ծրաքսը». բաժանորդ գրուղները փոխանակ օր առաջ կանխիկ վճարմամբ ստորագրուելու, ստորագրվում էն կամ բաժանորդագինը ուղարկում են, ինչպէս ասած, գանձակը ոսկորին հասած ժամանակը, որ մի շատ տղեղ երեսյթ է: Մենք մեզ թոյլ ենք տալիս յուսալ, որ հասարակութիւնը բարցական պարտականութիւն ունի իր մամուլի ներկայացուցիչներին աջակցելու, բայց ոչ իր անտարբերութեամբն աւելի ևս անտանելի կացուցանէ նոցա և հետեւապէս մամուլի վիճակը:

## Ա. Գուլամիլը և ան


\*). Յաջող պատկերներ հրատարակելու գլխաւոր պայմանն է, որ փոխադրութեան համար պատրաստած նկարը, մանաւանդ իւղաներկ պատկերներից, լինի յաջող արտադրյառուած. այլապէս կլիշէն գուրս է գալիս անյաջող և հասարակ տպագրչի ձեռքում նկարը աւելի ևս փշանումէ: Այս պատճառով է, որ մենք կլիշաները պատուիրում ենք առաջնակարգ գործարաններում և նկարների միայն տպագրութեան թերթին վճարում ենք 50 ռուբլի գուպէի տպարաններ:





II. Էշմածին և Ներսիսիան լիճ. լուսանկար Պ. Վրյաբ

Эчміадзинский прудъ съ видомъ монастыря Св. Эчміадзина. Съ фотографіи П. Вруяра.



# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԻՐԱՄԱՐԱՆԻ ԲԱՑ ՇԱՄԱԿԸ Կ. ՊՈԼՍՈՒՅ ԵՂԵՌՆԱԴՏԱՏ ԱՏԵԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՅ \*\*\* ԷՓԵՆԴՈՒՆ:

Մի դատիք, մի մի դատիցիք.  
Զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք.  
Եւ որով չափով չափեք՝ չափեսցի ձեզ:  
Աւեաւ ըստ Մատթեոսի գլ. և.

Ողբամած Տէր: Դուք ցանկութիւն էիք յայտնել իմանալու իմ հայեացքը հայկական վերջին քաղաքական դատավարութեան մասին:

Սիրով յանձն իմ առնում կատարելու ձեր ցանկութիւնը, կանխօրէն ներովութիւն խնդրելով, թէ մի գուցէ ես ստիպուած լինեմ յայտնել այնպիսի բաներ, որոնք անախորժ լինեն ձեր ազգային ինքնասիրութեան համար և քննել ինդիրը այն տեսակետից, որը զանց է առնվում ձեր պաշտօնական շըջաններում:

Մի ուղերձում, որը վերջերս նուիրուեցաւ Սուլթան Շրիւշամիդին, ի միջ այլոց ասուած էր.

Gloire à Vous, Grand Sultan! Avec vous sur le trône  
Triomphant la Justice et l'auguste Bonté...

Երջանիկ է այն երկիրը, որը կարող է բարձրաձայն ասել առանց ճշմարտութեան դէմ մեղանէելու, թէ նա ձգտում է գործով իրականացնել այս ուղերձի մէջ յայտնած վսկէ ճշմարտութեան և զթասրտութեան սկզբունքը: Յանուն նոյն թող թզյլ տրուի այսահղ և մեղ կատարեալ ազատութեամբ յայտնել այն մաքերը և զգացմունքները, որոնք յառաջ են բերում վերջին քաղաքական դատավարութիւնները, որոնց մէջ հանդէս են եկել և հայերը:

Եթէ դատաւորի համար առհասարակ անհրաժեշտ է անկողմակալութիւնը, այդ մանաւանդ հարկաւոր է այս տեսակ դատավարութիւնների մէջ: Եւ իրօք բոլոր ոչ քաղաքական, հասարակ գործերում բարձրագոյն պետական իշխանութիւնը, որի ներկայացուցիչն է հանդիսանում դատարանը, կարող է և պէտք է խստիւ չէղոք զրութիւն պահպանէ ամբաստանեալի

և ոճիրից տուժողի մէջ. իսկ ներկայ գէպքում այդպէս չէ. այստեղ իշխանութիւնը ինքն է ներկայանում տուժող կողմբ: Դիւլին է հասկանալ այն վրդովմունքը որը պէտք է յուզէ ձեր ջերմ հպատակութեան և ազգասկրութեան զգացմունքները, երբ տեսնում էք այս յանդուզն օտարադաւաններին և օտար երկրացներին, որոնք համարձակութիւն էին ունեցել ձեռք բարձրացնելու ձեր կայսրութեան բաղմադարեայ շինութեան վերայ, որը մինչեւ այժմ հետաքրքրութեան հաւաստիք է ներշնչում թէ բարեկամներին և թէ թշնամիներին: “Նոյանից մի քանիսը գիտակցաբար և յօժար կամքով զոհելով իրենց անձը քաջութեամբ, որ պատիւ է բերում նոցա բնաւորութեան ու բարցյական սկզբունքին, պատրաստ են ընդունել ձեր իրաւոցի վրդովմունքից և ինքնապաշտպանութեան զրոգուուած զգացմունքից ներշնչուած խստագոյն գատավծիոր:

Բայց, Ողորմած Տէր, վրդովմունքը և հոգու գրգռուած զրութիւնը վատ խորհրդաւուներ են. սոքա չունեն հիմնաւոր կազ իսկական արդարադատութեան հետ, որը միշտ անվրդով և յաւերժ ողորմած է: Ի զուր չէ ասել մեր ժամանակուայ ամենասեծ բանաստեղծներից մինը. Nul n'est juste, sil n'est doux. Երդարացի չէ այն, եթէ հեղ ու քաղցր չէ:

Եւ ուրեմն հեռու մեղնից գատի համար անողոքելի և անպատշաճ անձնական վրդովմունքը: Ճշմարտութիւնը և միայն լիովին և սուրբ ճշմարտութիւնը, որը երկար ժամանակ և ի զուր որոնում էր ձեր երկրի նշանաւոր իշխողներից մինը՝ Աելիմ Գո-ը, ահա՛ ի՞նչ է ձեզ հարկաւոր:

Ի՞նչի մէջ է կայանում ճշմարտութիւնը և ի՞նչպէս նորան հասնելու է:

Հնումը, երբ բնագիտական գիտութիւնները դեռ իրենց սկզբնական փեճակի մէջ էին գտնվում, իսկ ընկերավարական (social) գիտութիւնները դեռ նոր էին զարդանում, ֆիզիկական ցաւերը բժշկելու համար մի հասարակ միջոց կար, նոյնը և ընկերավարական ցաւերի համար, ի միջի այլոց և ոճիրների, որոնք նշյալէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ընկերավարական ցաւերի մի տեսակը: Ըուժել և բժշկել հիւանդը, արիւն թողնելով, երկաթակէզ առնելով և կամ հիւանդի փողը անմիտ և անհոգ կերպով գեղեր լցնելով առանց որոշ գաղափար

ունենալու նոյս օդաի և յարմար լինելու մասին, — ահա այս էր  
բժշկութեան սովորական եղանակը: Երբ փոքր առ փոքր բնա-  
գիտական գիտութիւնները առաջ են ընթանում, աւելի և  
աւելի բացատրվում է այն պարզ ծշմարառութիւնը, որ բո-  
լոր տեղական հիւանդութիւնները կախում ունին կազմուած-  
քի ընդհանուր վիճակից, իսկ այս դրութիւնը իր հերթում  
կախում ունի այն պարագաներից, որոնց ըջանում ապրում է  
կազմուածքը, այսինքն այն մժելքներից, որոնք նորան կերտ-  
կուր և շունչ են տալիս: Այժմ անհմուտ բժիշկն անգամ դի-  
տէ, որ անկարելի է կանոնաւորապէս բժշկել հիւանդութեան  
արտադրութիւնը, օրինակ՝ կազմուածքի սյս կամ այն տե-  
ղում դուրս եկած ուռոցքքը, առանց հետազօտելու նորտ  
ներքին հաղորդակցութիւնները, որոնք գոյացնում են իսկա-  
պէս հիւանդութիւնը և արտաքին կողմերը, որոնք առաջ են գա-  
լիս նորանից: Այժմ արգէն պարզ է իւլաքանչեւրի համար, որ  
առանց լուրջ մաքառման՝ անհասկանալի է երկիւղալի տարա-  
փոխիկ այսինքն համաժողովրդային հիւանդութեան առաջն  
առնել եթէ կանխօրէն չփոփոխել հասարակական կեանքի վաս  
և հակառաօղջական պայմանները, որոնք իսկապէս առաջաց-  
նում են և հիւանդութիւնը: Մինչեւ տեղի չունենայ ասսէնի-  
զացիա, անվարակացումն, օդի մանրազնին մնալութիւն, որոնք  
անհետացնում են հասարակ տէքի համար անտեսանելի, բայց  
գիտութիւնից ապացուցած հիւանդութեան բէալական, ծշմա-  
րիտ պատճառները, մինչև այդ ժամանակ հիւանդութեան  
գէմ մաքառումը անօգուտ է:

Այսպիսի պայմանների մէջ են գտնվում և հասարակական  
կեանքի երեցյթները: Միայն կարճտուես հետազօտողները կա-  
րող են նոյս մէջ տեսնել այս կամ այն դործողի բայցառական  
մտքի արտադրութիւնը: Վերջապէս հօ Ռուսասոն Վիրարօի  
հետ ըստածացրին ֆրանսիական յեղափոխութիւնը: Առսեմ  
գետ աւելին: Փիլիսոփայութիւնը կամ ֆինանսական ատդ-  
նապը (crise) հօ առաջ ըլ բերեց 1789 թուականը: Միթէ ուր  
և իցէ սակաւ են տեղի ունեցել տաղնապներ, որոնք բնաւ չեն  
առաջացրել այսպիսի հետեանքներ: Նշանակում է հասարա-  
կական հողի վերայ և օդի մէջ պէտք է լինէին պատրաստի  
հող յաջողակ նպաստարար ըջան նոյս վերայ թափած սեր-

մերի պաղաբերութեան համար: Միայն գործին այսպիսի մանրաղնին կերպիւ խորամուխ լինելով՝ միջոց է տրվում հետազոտելու երևոյթի պատճառների խիստ զանազանումը նորա պատշական առիթից և կամ նորա անմիջական սկզբնապատճառից:

Դատարանական դատավարութիւնը ոչ այլ ինչէ, եթէ ոչ նոյն իսկ մի տեսակ զիտնական հետազօտութիւն, տու generis, որը որոշ նպատակ ունի պարզել բացատրել բազմակողմանի կերպիւ ինչպէս ձեռնարկած գործի բնաւորութիւնը, այնպէս և նրա մէջ ամբաստանեալի գերը: Աթէ ձեզ ցանկալի չէ մեքենապէս լինել, իբր՝ machine à sentence, այլ գիտակցական գործիչ այն noble justice-ի, որը շեշտում էն ֆուրբից և Նւրոպից մէջ կազմած դաշնադրութիւնները (capitulation), այն ժամանակ դուք պէտք չէ բաւականաք գործի միակ կմախքով, կամ նորա արտաքին կողմովը, այլ պէտք է թափանցէք նորան առաջ բերող պայմանների կամ պատճառների մէջ: Ֆող ապացուցուի, թէ ամբաստանեալները պատկանում էին յեղափոխական ընկերութեանը որի նպատակն էր հայերի աղատումը Տաճկաստանի տիրապետութիւնից, բայց ով և ի՞նչը առաջ բերեց յեղափոխական շարժումը Տաճկաստանի խաղաղ հայ ազգաբնակութեան մէջ, ահա մի խնդիր, որի բացատրելովը և վճռելովը դուք ոչ միայն ծառայութիւն արած կինէք արդարադատութեանը, այլ և ձեր սեփական կառավարութեանը, որը արդարացի զարմացած է այնքան անսպասելի կերպիւ բռնկող շարժումից, և այն մի ժողովրդի մէջ, որի միակ յանձնաքը Նւրոպան համարում էր նորա չափազանց խոնարհութիւնը:

Այս գարուց ի վեր բազմաչարչար հայ ժողովուրդը, պատմութեան և բաղդի այս խորթ որդին, այս՝ ձիշոն ասած, որբ ժողովուրդը հաւատով և ծշմարտութեամբ ծառայելէ թուրքաց սուլթաններին տաճկաց աէրութեան հիմնելու օրից սկսած: Ֆորջելով արիւնապէ քրտինքով այն հողը, որտեղ հանդչում էն նորա անմթիւ նախորդների ոսկերտիքը, ծառայելով իւր լուսոյ մի թոյլ շաւիդ շըջապատող նոմադեան կեանքի կիսավայրենի կամ բոլորովին վայրենի պայմանների մէջ, հայ ժողովուրդը իր ծանր, բայց ոչ ապահով աշխատանքի մէջ աղօթում էր միայն մի բանի համար, որ նորան թողնէին հանդիսատ ապրել իր ընտանիքի հետ հայրենի մոխրակոյտի վե-

բայ և չզըկել նորան այն փշքանքից, որը ձեռք է բերումիր քրտինքով և որը թրջած է իր արտասունքով: Եւ այս մի չնչին բանը, խակապէս մի աննշան բանը առանց որին անկտրելի է նոյն իսկ ամենաստորին կեանքը և առանց որին կեանքը դառնում է մի տեղական անկեաց գյուղիւն և մարտիրոսական հեծութիւն,—և ահա այս մի չնչին բանը հայերը ըստ կարողացան ձեռք բերել Տաճկահայաստանում... Կրում էին այս բոլորը լոօրէն՝ ծիշտ քրիստոնէական խոնարհութեամբ և կրիստոմէին Գրիգոր Նարեկացու այս խօսքերը. Չայն հաւա-լանց, հեծունեան արդէ, ողբոց աղաղանի +եղ վերընծայշմ, գետողի գաղրնեաց: Ճնշվում էին մի գար, երկրորդ, երրորդ, յուսա-հաստութեանը հասած այնպիսի սարսափելի սառնասրտութեամբ, որ նոյն իրենք տիրապետողներն էլ ինչպէս և օտա-րաերկրացիները իրաւունք ունեին խստօրէն, բայց հասկա-նալի արհամարհանքով, հայ ժողովրդին անուանել «առանց խղճի» և ինքնաճանաչութեան սարուկ ժողովուրդ: Եւ ով-զիտէ, շատ կարելի է, հայ ժողովուրդը և իսկապէս կը իրուեր բարոյական ստրկութեան աղստութեան մէջ, եթէ եկեղեցու ամբիօնից աւետիք ըստ հնչէր այս հողազուրկ և անդոյն ազդի ականջին, որը և իսկ զարթեցրեց նորա մէջ նորա մարդկային պատուի գիտակցութիւնը, աղատութեան ձգտումը, առանց որին և անհասկանալի է մարդկային գյուղիւնը:

Բայց և բարոյական ինքնաճանաչութեան այս հազեւ հանգչող կայծը, որ ծածկուած է մոխրի թանձր ծածկցիթով՝ բթացած և անհետեանք համբերութեան նման, շատ կարելի է բոլորովին կհանդէք, եթէ բարեղէպ հանդամնքների և ազդեցութիւնների հոսանքը չպարթեցնէր հայ ժողովուրդի գի-տակցութեան մէջ լաւ ապադայի յոյար և չմեաւորէր նրան գարեւոր գերութիւնից և թշուառ հեծութիւնից ազատման յոյավէ: Ի հարեւ այս մուրացող և փայրենացած ժողովուրդը, որը մինչեւ անգամ վաղուց արգէն կորցրել է իր յիշողութիւնը երբեմն ունեցած իր քաղաքական անցեալի վերայ, չէր կարող մասած քաղաքական վերածնութեան, այլ միայն բարեկարգուած կեանքի տարրական պայմանների վերայ:

Տաճկահայերի բարոյական զարթմանը կամ աստիճանաբար յեղափոխականութեանը նպաստող պատճառները բաւականին

Հին ծագում ունեն: “Խոքա մասամբ օտարերկրեայ, մասամբ ներքին՝ տաճկական ծագում ունեն: Լոյսի առաջին ճառագայթը խաւար տէրութեան հորիզոնում ծագեց հայոց, ինչպէս և տաճկահպատակ ուրիշ քրիստոնեաների համար, 1774 թ. Քիւչիւկի Քայնարձեան գաշնակցութեան 7 դրյօդուածով, որով ուղղափառ քրիստոնեաները տրվում են Ոռուսից արծուի հզօր հովանաւորութեան ներքոյ: Թէե Պատեօմկինի ծրագիլը հայկական թագաւորութիւն հիմնելու մասին հաւանականօրէն չը հասաւ Հայաստանի խուլ անկիւնները, բայց Հօ Մոսկովեան քրիստոնեայ մեծ թագուհու յաղթութիւնների համբաւը, որ խնամակալում էր իր հզօր ձեռքի ներքոյ Ճնշեալ ժողովուրդները, անկասկած կարող չէր առաջ չքերէր նահապետական գութանի վերայ կոնթող հայի ուրախութեան արտասուքը, նորա ջերմեռանդ օրհնութիւնը և Ծից թերեւանալու հոգոյը: Բայց այս գաշնագրութիւնը, որը փայլեց որպէս մի մէտէօր, մթնոլորտական մի երեսյթ, կամ փայլակի յիսուն տարուայ ընթացքում տաճկահայերի վիճակի մէջ մի իրական փոփոխութիւն չքերեց: Ոռուսաստանի Թուրքիոյ հետ ունեցած ներկայ դարու պատերազմները մի անդամ չեն առաջ բերել հայերի մէջ փոքր ի շատ է փայլուն յոյսեր, որոնք վերջացել են հիասթափութեամբ, թէե իրենց ծանր ճակատազրի բարւագելու յոյսը տաճկահայերի մէջ երբէք չէ մարել այլ միայն ժամանակաւորապէս յետաձգուել է: Հայերի բարոյական ինքնաճանաչութեանը և բաղձանքի իրականալու զարգացմանը գէպի յաջող ապագան և առհասարակ գէպի իրենց վիճակի ապահովութեանը մասնաւորապէս զօրեղ զարկ տուեց Սան Պատէֆանոյի գաշնազրի 16-երորդ, իսկ այնուհետեւ Բելլինի գաշնագրութեան 61-րդ յօդուածը, ուրբարենորոշութիւն մացնելու խնդիրը Տաճկահայաստանում հայերի կեանքի և գոյքի ապահովութեան անհրաժեշտութեան մասին օրակարգի զբեց և նոցա գործագրութեան կատարութումը պարտաւորեցուցիչ դարձրեց Թուրքիոյ կառավարութեան համար Եւրոպիոյ տէրութիւնների միաձայն հսկողութեան ներքոյ ենթարկելու նպատակով, որոնց և նա պարտաւորվում է իւրաքանչեւր տարի հաշիւ ներկայացնելու:

Եյս օտարերկրեայ ազգեցութեան հետ միատեղ, որը

Հայերի մէջ ներմուծելէ վճռական համոզմունք նոյա թշուառ վիճակի բարոքման անհրաժեշտութեան և մերձաւորութեան նկատմամբ, զրդելէ նոյն իսկ տաճկական կառավարութեանն աղգու ցոյցիր անելու, որ բացարձակ ընդունում է քրիստոնեաների, ի թիւս նոյա և հայոց, տեղի ունեցող Ճնշեալ վիճակը, բարձրաձայն մեղաղբելով գոյութիւն ունեցող դատավարչական կազմակերպութիւնը և խոստանալով անհրաժեշտ բարենորոգութիւնը: Այս դէպքում մամնաւոր ուշադրութեան արժանիէ հռչակաւոր Խաղդի-Շերիֆ-Գիւլիսանէի կամ 1839 թ. նոյեմբերի 3-ի, Թամանդիմատի օրէնքները, որ պէտք է սկիզբ գնէին Տաճկաստանում իրաւանց ըէժիմի և փոփոխէին արմատական կերպիւ քրիստոնեաների վիճակը: Կրտաքոյ կարգի հանդիսաւոր արարողութեան ներքոյ, ուր տեղի ունեցաւ այս առանձնաշնորհութեան օրէնքի յայտարումը՝ հրապարակի վերայ բարձրաձայն կտրդացուելով ի գիտութիւն ընդհանրութեան, և այդտեղից առօք-փառօք աարուելով պահուելու համար այն դաշլիճը, ուր գտնվում է Մահմէզի ծածկոցը, — պէտք է առաջ բերէր և իսկ տուաջ բերեց Ճնշեալ ժողովքների մոքերի վերայ իսկական յեղափոխութիւն: Այս երեկի հրավարտակի բնագրի ճիշտ ընթերցումը, որ ուղարկուեցաւ տաճկական պետութեան ամեն կողմերը, պէտք է համոզեցնէր գոյութիւն ունեցող կազմակերպութեան անպէտքութիւնը և նորա անխստավելի փոփոխութիւնը:

Եթէ գուեք կամենում էք, Պարտն, իմանալ՝ ի՞նչաէս և ի՞նչու ծագեց հայերի մէջ ներկայ յեղափոխական շարժումը, այն ժամանակ հարկ չկայ փնտուելու կեղծ ոտնձգութիւն այս կամ այն կողմից, այլ սորա համար բաւական է միայն ուշադրութեամբ կարդալ վերցիշեալ հրովարտակի պետական իմաստուն կանոնները և նոյա օրինաղանցութեան հետեանքը: Զաւով ապացուցանելով ամենուրիք տեղի ունեցող օրինաղանցութիւնը և բարեկեցութեան անկումը, Խաղդի-Շերիֆը խոստանումէ նոր հաստատութիւններով ապահովել տաճկական կառավարութեան ներքոյ գտնուող նահանդները և բարւոք կառավարութեան առաւելութիւնը, այսինքն. 1) ապահովել կեանքի, պատուի և գոյքի անձեռնմխութիւնը, 2) հարկերի կանոնաւոր ժողովումը 3) զինուորագրութեան կանոնաւոր

բաժանումը։ Հայերը միւս ազգութիւնների հետ միասին անհամբերութեամբ սպասում էին հանդիսաւորապէս խոստացուած այս բէֆորմների իրագործումը, մաքի մէջ ընդ միշտ տպաւորելով այս հրովարտակով բարձրաձայն արտայայտած ծշմարտութիւնը, որ առանց այս բէֆորմների ամնհասկանալի է պետութեան համար ոյժ, հարստութիւն, բաղդաւորութիւն և անդորրութիւն։

Իրականացածն արգեօք Երգիւլ-Մէջեղի այս բարի ցանկութիւնները։ Աւաղ ընաւ երեք։ Ընցնում է 16 տարի և հանդամանքների զօրութեամբ տաճկական կառավարութիւնը ստիպուածէ նորից 1856 թ. փետրուարի 18-ի Խաղդի-Շիւմայունի նոր հրովարտակով հաստատել ապահովութեանց իրագործումը, որոնք խոստացուած են 1838 թուի Խաղդի-Շիւմիֆով։ Ընցնում է դեռ ևս երեսուն տարի և Տաճկաստանը ամբողջ Խւրոպիոյ գիմաց ստիպուածէ խոստավանուել, որ հայերով բնակուած նոր նահանջներում էին և գոյտի համար ապահովութեան չիա և պարտաւորվում է ճայնելու անհրաժեշտ բարեկանութիւնը որոնք և մինչեւ հրմայ քամ desiderium-ամենասուրբ իղձեն ներկայանում։ Եյսպէս տաճկահայերը յիսուն տարուայ ընթացքում դեռ չկարողացան տեսնելու այս փոքրի իշատ է տանելի գոյութեան տարրական պայմանների իրագործումը։ Հայերի մէջ անբաւականութեան յուղման գրգուման համար այլ ևս ի՞նչ պայմաններ պէտք են։ Պէտք է վերջապէս պատուէր դժբաղդ տաճկահայերի մինչեւ անդամ՝ անսահման համբերութիւնը։ Եյս դէպքում քարերն անդամ կաղաղակիէն։

Հաւատացէք, Ողորմած Տէր, այստեղ չկայ չափազանցութիւն և ևս յանձն եմ առնում ձեզ ապացուցել հայկական շարժման արդարութիւնը ձեր սեպհական պաշտօնական հրովարտակներով։ Եհա ինչենք կարդում Երգիւլ-Մէջեղի վերոյիշեալ Խաղդի-Շիւմիֆում։ «Ի՞նչը կարող է աւելի թանգ լինել քան պատիւը և կեանքը։ Ո՞վ կարողութիւն կունենայ բռնի գործողութիւնների առաջ զսպել իրեն, ինչքան էլ որ նա ընութեամբ խաղաղասէր լինէր, երբ երկիւղի են երթարկում նորա կեանքը և պատիւը։ Խոկ եթէ, ընդհակառակը, նա օգտվում է ապահովութիւնով, նա երբէք օրինաւորութեան

շաւղից դուրս չկ գայ և իր բոլոր ոյժով կաշխատի աջակցել յօդուտ տէրութեան և իր մերձաւորների»\*):

Ոսկէ խօսքիր, որոնք արժանի են զբուելու Չեր դատարանների գոների վերայ... Եւ դեռ Դուք հարցնում եք, թէ որաշղց է խաղաղ հայերի մէջ շարժումը. նորից կարդացէք ծշմարտութիւնները, որ գտնվում է Սբդուլ-Վէջերի հըս-չակաւոր օրէնսդրական հրովարտակների մէջ և նոքա ցոյց կտան ձեզ այս հարցի բանալին:

Եթէ խորասուղուիք այս ծշմարտութիւնների մէջ և ու-շաղբութեան ներքյ առնիք, թէ Հայաստանի բարենորոդու-թիւնների խնդիրը Եկերլնի դաշնապրութեան եղակացու-թեան հետ իրական փոփոխութիւն է կրել և տաճկական պե-տական իրաւունքի շրջանից մտել է նա միջազգային պարտա-ւորութիւնների շրջանը, այն ժամանակ դիւրութեամբ կհաս-կանաք, որ հայերի իրաւացի անհամբեկութիւնը պէտք է ա-ճէր և նորան համապատասխան զարգանար և նոյց դժո-հութիւնը, երբ նոքա տեսան, որ ոչ միայն բարենորոդումներ չեն ներմուծվում, այլ մինչև անդամ տւելի զարգանում է նոյց դէմ հալածանքը, որոնց նպատակն էր արտաքսել նոյց հայրենիքի մոխրակցութից, որը գարերի ընթացքում ողողուած է; նոյց քրտինքով և արտասունքով, ջնջել նոյն իսկ և Հայաս-տանի անունը և Եւրոպիոյ դիւնապիտութեան ձեռքից հա-նել նաև այս հարցին միջամտելը առիթը: Պատմութեան մէջ տակաւ է պատաշում այսպիսի եղերերգական, յուղող մի-ջոցներ, ինչպէս այս վերջին տարիները վիճակուած էր կրելու տաճկահայերին:

Վի կողմից Եւրոպան ցոյց է առւել լաւ կեանքի յօյսեր, որոնք պէտք է վերջ դնէին նորա բազմագալիայ շարքարանք-ներին, իսկ միւս կողմից տաճկական կառտվարութիւնը ցանկա-նալով հայերին համոզել թէ որքան զուր են Եւրոպիոյ վերայ դրած նոյց յօյսերը՝ հայերի նկատմամբ խստութիւնները ա-ւելի սաստկացրել է. և սկսել է վերաբերուել դէպի նոյց չա-փաղանց կասկածանքով և զրգուելով: Եյսպէս, Եւրոպիոյ պատմութեան մէջ գյոււթիւն է առել անօրինակ մի երեսյթ.

\* ) Legislation Ottomane par Aristarchi-Bey II, p. 8-9 p.

իր իրաւունքները պահանջող ժողովուրդը յեղափոխական է համարվում. և եթէ իրաւունքի կոիւը կարելի է յեղափոխութիւն անուանել այն ժամանակ տաճկահայերը իրաք գտնվում են այս ակամայ յեղափոխութիւն է, որովհետեւ նա դոյութիւն է առել եւրոպական պատմութեան անցքերից և ոչ մասնաւոր անձանց քմահաճոյքից կամ դատապարտելի յափշտակութիւններից: Վհա ինչի մէջ է կայանում հայերի այժմեան յեղափոխական տրամադրութեան դիմաւոր պատճառը, որի առիթով չեն կարող չտուժել և ամենաբարեմիտ խաղաղ հայերը, որը և տեկու է մինչև որ Բերլինի յայտնի դաշնագրութիւնից յառաջացած շարժումը իր որոշումը չստանայ: Բերլինի դաշնագրութիւնը և վերեք փաստերով յիշատակած իրողութիւնները տաճկական պատմութեան մէջ,—ահա որոնք հող և մըթնոլորդ պատրաստեցին հայ յեղափոխականների երևալու համար, ահա որտեղ է խսկապէս պատճառը հայերի մէջ տեղի ունեցող խաղաղ—կրաւոր յեղափոխութեան հետ միասին և խսկական գործող յեղափոխականների երեսումը: Ասկայն սոքա գործում են առանց հայերի գիտութեան և համաձայնութեան և մինչև անգամ յաճախ նոցա ցանկութեան հակառակ, բայց իրենց հասակով և տէմպէրամէնսով ներկայանում են աւելի գիւրագրգիռ և զիւարազգաց գէպի ակներեւ արհամարանք իրենց անվեճելի իրաւունքին և ցոյց են տալիս թոյլի նկատմամբ զօրեղի կոպիտ բոնութիւնը և ճնշումը:

Խսկ ինչ վերաբերում է ամենամերձաւոր առիթին, անմիջական զարկին, որ տուաջ բերին Երգըումի և Պոլսի վերջին յուղումները, այդ հօ բաւականին պարզ յայտնի է, որ նորից հարկ լինի նոցա մասին ևս խօսել: Մուսա-բէյի հռչակաւոր դատավարութեան ելքը որը վըզովեց Եւրոպից հասարակական խիղճը, տաճկահայերի նկատմամբ գոյացրեց այն համոզմունքը, որ տաճկական դատարանում արդարութեան ձայնը լսելու կարելիութեան մասին ունեցած բռլոր հաւատը վերջնականապէս օդն է ցնդում: Նոքա լաւ հասկացել էին, որ այնպիսի մի խոշոր չարագործին արդարացնելը անպատճառ կրացարուեր նորա հայրենակիցների կողմից (քուրդերից), որպէս մի բացարձակ հրաման ապագայում ևս անպատիժ մնալու

Հայերի հետ որև ընդհարումներ ունենալիս: Այսպիսի մի անել վիճակի մէջ անպատճառ սպասելու էր անբաւականութեան յուղումներ: Եթէ այս դէպքում զարմանալու տեղիք կայ, այդ էլ նորանից չէ, որ տեղի են ունեցել այդպիսի յուղումներ, այլ զարմանալու է այն երեսյթի վերայ, որ այդ յուղումները բարեբաղդաբար աւելի մեծ տարածում չստացան:

Dixit... Ես ասացի իմս...

Այժմ ձեզնից է կախուած, Պարո՞ն, օրդանիզմի արմատական բժշկութեան եղանակը ընտրելու՝ կամ հեռացնելով տեսդային վիճակ և բորբոքումներ առաջացնող պատճառները և կամ թէ բաւականանալ սովորական չնչին ու անօգուտ միջոցներով: Խստութեան և վարչական դատի տեսակէտից ձեզ հեռուն գնալը այլ ևս անկարելի է: Զեր վարչութիւնը բռնում բանտարկում է բոլորին առանց քննութեան: Զեր դատաւորները լուելեայն մեղադրում են ամենին, որին միայն վարչութիւնը ուղում է դատարանի ենթարկելը: Զեր դատարանները հասան մինչև անգամ այն կէտին, որ որևէ մէկի մօտ արգելեալ թերժ գտնելը հաւասարեցնում են յեղափոխական ընկերութեան մասնակցութեան աստիճանին և առանց շօշափելի ապացոյցներ տեսնելու, միակ լրտեսի յուցմաւնքի վերայ, դատապարտում են: — Այս բոլորը փաստեր են, որոնք ապացուցուած են ձեր սեփական պաշտօնական հաշիւներով: Եւելի հեռու գնալ այս ուղղութեամբ անհնար է:

Ժամանակը չէ արդեօք հոգալ բժշկութեան մի այլ եղանակ, խաղաղ և աշխատասէր հայ ժողովրդի մէջ յեղափոխութեան շարժման պատճառները հեռացնելու մասին:

Կերեցէք, իթէ ես ի չարք գործ դրի Զեր համբերութիւնը իմ խօսակցութեամբ և մանաւանդ բացարձակ խօսելովս: Ես սիայում ընդունուած չէ ծշմարտութիւնը ասել իթէ նա դուրեկան չէ: Բայց դուք, շատ վաղուց է, որ յաւակնութիւն էք ցոյց տալիս Եւրոպացի լինելու և ամեն բանի մէջ գործել à la francesa. իսկ Եւրոպացում ընդունուած է բարոյապէս հասուն ճանաչել այն ազգը, որն ընդունակ է արդարութիւնը լսելու:

Գ. Յ.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

1888 թուականի վերջերին Բակվիացի հռչակաւոր հրապարակախօս և միանգամայն յայտնի անտեսագէտ Պ. Եմիլ գը Լավէլէ հրատարակած էր բելդիական «Բէլ Մշէլ Գաղէթի» մէջ մի խիստ կարևոր և հետաքրքրական գրութիւն հայկական խնդրի առիթով, որ մենք նպատակայարմար գտանք առաջ բերել դորա թարգմանութիւնը «Ծրաքսում»։ Եհա այդ յօդուածը։

«Ենդղերէն և ֆրանսերէն թերթերի մէջ սկսել են պարապել հայկական խնդրով։ Լուս Սալզպրի Լուսոտոնի հայկական մասնաժողովին թոյլատրած է իրեն մի տեղեկագիր ներկայացնել հայաստանի ներկայ վեճակի վերայ, և խոստացած է միանգամայն՝ այս խնդրի նկատմամբ իրեն ներկայացած բոլոր գրութիւնները Ա. Պոլսոյ անդղեական դեսպանին ուղարկել և որ աւելին է, անդղեական դեսպանն՝ Պ. Վ. Ակիլիս Վայթ այս խնդրի մասին մի ծանուցագիր յղած է Բարձ. Դռանը, որը պէտք եղածին պէս ընդունուած է, սակայն առանց որևէ մի փոփոխութիւն յառաջ բերելու։

Զարմանալի է, որ Եւրոպան և Թուրքիան—նամանաւանդ Թուրքիան—այս խնդրի նկատմամբ էրենց իրական շահն վնահանում։ Եւրոպիոյ համար սա մի մարդասիրական և միանգամայն քաղաքական հաւասարակշռութեան խնդիր է. իսկ Թուրքիոյ համար կենսական մի հարց է։ հայաստան՝ Միջերկրականի, Աև ծովու, Կասպից լճի և Պարսկական ծովածոցի մէջ միջանկեալ ընդարձակ մի լեռնագաշտ է. չորս մեծ գետեր են բղխում այնտեղից. Տիգրիս, Եփրատ, Ծրաքս և Կուր։ հայ ազգն առ նու աղը բաղկանումէ; Հինգ միլիոն ժողովուրդից, որի գաղթականութիւնները գտնվումէն Եւրոպիոյ, Բալկանեան թերակղզոյ, Ոռումանիոյ և Թուրանսիլվանիոյ մէջ։ Ա.

Պոլսոյ մէջ հայերը բազմաթիւ են, որտեղ հրէից նման մասնաւորապէս վաճառականութեամբ և սեղանաւորութեամբ են պարապում իրենց մեծ հանձարն և արեւելեան լեզուների ծանօթութիւնն՝ կառավարական պաշտօններու մատչումն զիւրացնումէ, որտեղ հակառակ իրենց օտարակրօնութեան ամենաբարձր վարչական պաշտօններու կը համանն. մինչև այժմ Եզիպտոսի ունեցած ամենաբարձր նախարարն՝ “Սուլպար փաշա” հայ է:

Հայ ժողովուրդն՝ որ Երեաց ցեղին է վերաբերում, առաջին անգամ՝ քրիստոնէութիւն ընդունող ազգն է եղած: Հարուստ և հին զրականութիւն ունի, յայտնի է փիլիսոփաներով պատմագրերով, և բանաստեղծներով: Խաչակրաց պատերազմի ժամանակ՝ իւր արևմտեան եղբայրների համար պատերազմած է: Աշխատասէր և անտեսագէտ է. լաւ մշակումէ հողն, երբ չի վախում իր վաստակի կեղեքումից: Եւրոպից մեր պըտղատու ծառերի և ծաղկանց մեծամասնութիւնն Հայտառանից եղած էն:

Դժբաղգաբար իւր պատմութիւնն ծայրէ ի ծայր մարտիրոսաբանութիւն է. արշաւանքների անցքի վրայ գտնուելով զրեթէ միշտ յազթահարներից հարուածուած, ջարդուած և կեղեքուած է. բայց զրեթէ երբէք այնչափ չէ տանջուած՝ որչափ այս վերջին տարիները, և Ճիշտ այն պատճառաւ՝ որ Եւրոպա մասնաւոր իրաշխաւորութիւններ սահմանած է նորանկատմամբ: Իւր քրիստոնէական հաւատքն անարատ պահելու պնդութիւնն միայն ներած է նորան պահել իւր ազգութիւնն մահմետականների մէջ, որոնց լծի տակ է գտնվում:

Եյսօր Հայաստան երեք մասի է բաժանուած, հիւսիսայինն, որտեղ կրօնի գերազոյն պետան կաթողիկոսն կը դանուի, Հայկական Հռոմում-Եղմիածնում, ոռուսաց է վերաբերում: Հարաւային արեւելեան մասն՝ որտեղ ամէնից քիչ հայ կայ—պարսից, իսկ Հաւային արևմտեան մասն Թուրքիային է վերաբերում: Եյժմ իննդիրն միայն Թուրքա-Հայաստանի վրայ է, և որի մասին Եւրոպա իրաւունք և պարտք ունի զբաղուելու:

Ելդէն 1839-ի Աիւլհանէի դաշնագիրն և 1856 Խատար Հիւմայունն՝ Փարիզի գաշնազրից արձանազրեալ խոստանում էին հայոց՝ որպէս նաև Օսմաննեան կայսրութեան այլ քրիստոնեաներին՝ մահմետականների հաւասար իրաւասութիւնն,

միջազգային օրինաց պաշտպանութեան ներքոյ: Ոռուսաստանը՝ որ մինչև այժմ Վրեւելքի հարատահարեալ ժողովրդների դատի պաշտպանն է և լած Թոռուրքիոյ գէմ վերջին պատերազմից յետոյ Սան-Ստէֆանոի գաշնագրի 16-րդ յօդուածովն՝ հայոց պաշտպանութիւնը ստանձնած է:

Ենդղիա չափազանց յուղուեցաւ այս գաշնի նկատմամբ, որ Զարին էր չնորհում իւր կայսրութեան սահմանակին մի թուրք նահանգի վարչութեան մասին միջամտութեան մշտրնջնական իրաւասութիւնն. սակայն վերջը, 1878-ի մայիսի 30-ին մի պայմանագրութիւն կնքուեցաւ Ոռուսաստանի և Ենդղիոյ մէջ, որի հիման վերայ Հայաստանի պաշտպանութիւնն այդ երկու տէրութիւններին էր միանգամայն վերաբերում:

Մի փոքր ժամանակ յետոյ, նոյն տարւոյ յունիսի 4-ին, Ենդղիա Թոռուրքիոյ հետ կնքեց Արքուսի պայմանագիրն, որի մէջ խոստանում էր Օսմանեան կայսրութեան Փոքի-Ասիայում ունեցած ստացուածոց ամբողջութեան պահպանումն պաշտպանել և Հայաստանի մէջ բարենորոգմանց մորից երաշխաւորութիւնն էր ստաձնում: Ի՞էրլինի գաշնագրոյն 61-րդ յօդուածն՝ յարդելով միանգամայն Արքուսի պայմանագիրն, Հայաստանի պաշտպանութիւնն փօխանակ Ոռուսաստանի և Ենդղիոյ թողնելով յօդուտ իրենց շահերի, մեծ տէրութիւններին յանձնեց: Ահաւասիկ այդ յօդուածն. «Բայց, Դուքն յանց է առենո՞ճ, անյառաղ չըտրնծել Հայաբնակ նահանգաց մէջ՝ բեղական պէտոյից պահանջած բարցուո՞ն-հներն և բարշնորդո՞ն-հներն, և երաշխաւորուո՞ճ է նոյս աղակովո՞ն-նի-նն որդերն և զեր-էղներն դէճ և պարզերաբար պէտո՞ն-նւանց հայուրելու-է առ այս յեւ-+ առ-նո-ած մշջոցներն՝ որոնտ նոյս գործադրո՞ն-նւանը ակտու է հանվա»: Ուրեմն Ի՞էրլինի գաշնագիրն իրաւումք տուեց հայոց, ստորագրող տէրութեանց միջամտութիւնը պահանջել, և նամանաւանդ Ենդղիայի և Ոռուսաստանի:

Հայաստանի վեճակն այժմ՝ աւելի վասէ քան երբէք, նոյն իսկ աւելի գէշէ քան Մակեդոնիայինն, որովհետեւ երկիրն աւելի հեռու է եւրոպական քննութիւնից. և թէ՛ բնակիչները բոլորովին անպաշտպան են քրդերի աւարառութիւնների գէմ: որոնք իբրև մահմետական՝ անիմայօրէն կարող են կեղեցել քրիստոնեաներին, որի իբրև հետեանք՝ սոքա թողնում են

հողի մշակութիւնն և գաղթում: Վանի մօտակայ երբեմն լաւ մշակեալ բազմաթիւ գաւառներն այժմ բոլորովին անապահի են վերածուած: Երկրագործները չ'կարենալով այլ ևս վճարել իրենց տուրքն՝ որ արքունի գանձուց պաշտօնեայք՝ ապօրինաբար և անդժօրէն պահանջումնեն, ստիպուած են ծախել իրենց եղներն, երկրագործական գործիները և մուրացկութեան գիմել: Թշուառութիւնն մինչ այն աստիճան հասած է որ բազմաթիւ ընսանկյուներ անօթութեամբ են մեռնում:

Ինքն ըստ ինքեան պատուական օրէնքներն, տարաբաղդ հայերն էլ առաւել Ճնշելու են ծառայեցնում: Պօր օրինակ, կրթութեան վերակազմութեան համար մի մասնաւոր տուրք հաստատուած է, բայց նորա հասոյթն միայն մահմետական վարժարանաց յատկացուած է, և ընդհակառակն շատ անգամ հայ վարժարաններն կառավարութեան կողմանէ փակվում են յեղափոխական կեզդրուսվայրից պատրուակով:

Պաշտօնեաները և նոյն իսկ կառավարիչները՝ պաքշեշի միջոցաւ ընդունում են իրենց պաշտօններն, որոնք ընդհանրապէս կարծատե են. իրենանց կանխավճարն իրկին ձեռք ձգելու՝ և իրենց անպաշտօն ժամանակամիջոցում Ա. Պոլիս կարենալ ապրելու գրամագլուխ պատրաստելու համար՝ անդժօրէն կեղեքում են խեղճ հարկատու ժողովուրդը:

Առանց դադարո՞ւնքը կայառելու արդիար դատ վաստակելու անկարելի է: Երեակայական գաւառանութեան պատրուակով տուներն են այցելում, զգելու զրաւում և բազմաթիւ խեղճեր առանց դատաստանի և առանց որևէ պատճառի դարշահոտ բանտելն են նետում: Նորու Ալբզարիի յանձնուած յիշատակազին՝ այսպէս ըստ հաճոյից մի քանի բանտարկեալների անուները կը պարունակէ: Հայ ազդութեան հաւատարիմ մնալն ոճիր է համարուած: Կեդրոնական կառավարութիւնն անշուշտ անտեղեակէ այս եղելութիւնների մեծամասնութեան, որովհետեւ նա՝ ով յանդքնի բողոքել կամ մի բողոքագիր յղել Ա. Պոլիս, տեղական իշխանութեան կողմանէ կը պատժուի:

Աը կարծուի՝ թէ թուրքերի նպատակն է քրիստոնեայ ժողովուրդն բոլորովին ննջել, և իրենց երկիրն միայն մահմետականներին յատկացնել:

Այս սոսկալի կացութեան միահ արմաքական դաշտանն է, Հայաստանին մի վարչական և տեղական ինքնօրինութիւն շնորհել Նիբանանի նմանն, որ այնչափ ընտիր հատկանք է յառաջ բերում: Հայաստան ասելով պէտք է հասկանալ՝ Կարնոյ, Վանայ և Տիգրանակերտի նահանգներն, հանդերձ Երդանայի և Աղերդի սանձագներովն և Որիշէի նաւահանգստովն՝ որ Առծովի վրայ է գտնվում:

Տարիձ.. Դուռան մեծ շահ ունի իրականացնել այս բարենողութիւններին: Հայաստան եթէ լաւ վարչութիւն ունենայ, շնորհիւ իւր հարստութեան մեծամեծ աղքերներուն՝ քիչ ժամանակից յետոյ անչափ պիտի բարգաւաճի, և ժողովրդի հաջոթը համեմատաբար պիտի աւելանայ:

Հայերին այսպէս եթէ չգոհացնի ու հակառակ իր երկրի շահերին շարունակէ շարչարելու, այն ժամանակ նոքա ստիպուած զիմելու են Ոռուսիոյ մեծազօր կայսրի հովանաւորութեան: Ոռուսիոյ անցած երկիրների մէջ հայ ժողովուրդն՝ օրէցօր զարգանումէ բարեկեցութեամբ և քաղաքակրթութեամբ. օրինակը բաւականէ այս հաստատելու համար. իրենց զրականութիւնն՝ բաղդատամամբ իրենց թուղյն՝ աւելի զարգացեալ է քան Ոռուսիոյ այլ մասին մէջ, բացի Ա. Պետերբուրգ և Մոսկուա:

Միջերկրականի տէրութիւնք մաննաւանդ, Անդղիա, Փրանսա, Իտալիա և Աւստրիա մեծ շահ ունեն, հայոց շնորհել տալ լաւ կառավարութիւն՝ որ ի նպաստ նոցա սահմանեալ է Ինկրինի գանձագրով. քանի որ ոսներից առան այն պաշտպանութեան իրաւասութիւնն՝ որ Ան-Աթէֆանօսի ընտիր դաշնագիրը նոցա էր յատկացնում, միջամտութեան իրաւասութիւնն այլ տէրութեանց թողնելով:

Եթէ սորա համաձայն զօրաւոր գիմումներ լինեն Սուլթանին, Թուրքիան կ'աղատուի հակառակ թուրքերի մտակուրութեան:





Սիվասիոյ տեսարանը

Городъ Сивасъ въ Малой Азии.

Հրատ. «Արար» Հանդիսի:



— 1 —

# ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

## ԱՄԱՍԻԱ

Փոքր Ասից Հիւսիսային արևելքան կողմը կ'ինայ այս քաշաք. ծովէն գրեթէ 1200 տոք բարձր՝ շրջապատեալէ նեղ և ժայռոտ ձորերով։ Ամասիոյ շուրջը կը գտնուին 5000-ի մօտ այդիներ և պարտէղներ, որոնք մասնաւորապէս կը մատակարարեն խաղող և խնձոր. շրջակայները կը գտնուին 500 տաճիկ գիւղեր և դունուրեք յոյն, որոնք մեծաւ մասամբ կ'ապրին երկրագործութեամբ։ Ամասիա ունի 6520 տուն բնակիչ, որոց 1210 հայ, 5030 թուրք, 108 յոյն և մնացեալքն հրէայք ու եւրոպացիք։ Հայերն ունին 3 եկեղեցի, 3 նախակրթային վարժարաններ, հայ բողոքականք գրեթէ 10 տուն, ունին մի ժողովարան և մի երկսեռ վարժարան, ողքա երբէք քաջալերութիւն գտած չեն աստ։ Դժբաղդաբարքադաքիս հայ երկսեռ մանկուոյն դաստիարակութիւնը շատ երեսի վրայ է թողուած. վերոյիշեալ երեք նախակրթային վարժարանները շատ հեռի ժողովրդեան պէտքերն գէթ մասամբ հոգալէ և չունին որևէ կանոնաւոր լնթացք։ Հայ հասարակութիւնն աստ երբէք պարտաճանաչութիւն չունի, ժողովներն ամփաներով լուծեալ կը մնան ի չգոյէ անդամոց, քաղաքին մէջ միայն մի հայ, անձնական բոլոր զբաղումներն զոհելով օրինակելի անձնուիրութեամբ կաշ-խատի ազդին համար. ինքն ամեն ինչ է միանդամայն, թէ դաստիարակ, թէ տեսուչ, թէ թաղական և թէ ժողովոյ անդամ։ Կարապետ Արածեան է այս աղնիւ հայի անուն։ Ըստ սահմանադրութեան, տեղւոյս ազգայիններն ունին մի երեսինական ժողով, մի վարչութիւն և մի ուսումնական խորհուրդ. այս վերջին միայն անուանական։ Եկեղեցեաց կալուածներն 200 օսմաննեան ուրի տարեկան հասոյթ կը մատակարարեն։

Ամասիոյ մէջ թուրքերն ունին երեսունի չափ մեծ և փոքր մզկիթներ, մէկ բարձրագոյն նախակրթարան, տասնուհինգ թաղային վարժարաններ, յշնք ունին մի եկեղեցի Ա. Գէորգ անուամբ և մէկ դպրոց. Յիսուսեանք 5 տուն, ունին եկեղեցի և դպրոց. Երբէք կարող եղած չ'են հայ-լուսաւորչականաց վրայ որևէ ազգեցութիւն բանեցնել: Գերմանացիք երկու, երեք ընտանիք, ունին հիւպատոս մը, Պ. Քրիւք անուամբ. կան նաև երկու ընտանիք ֆրանսացիք: Խմէ գերմանացիք և թէ ֆրանսացիք ալիւրի մեծ գործարաններ ունին քաղաքին մէջ: Վաղաքիս հայերն մեծաւ մասամբ կը պարապեն վաճառականութեամբ և արհեստիւք. նմանապէս յոյներն. այս վերջինք հոս ալ Եւդոկիայի նման, իրենց մայրենի լեզուն չեն գիտեր, այլ կը խօսին հայերէն և թուրքերէն. Թուրքերն կ'ապրին երկրագործութեամբ:

Ամասիա ընդարձակ վաճառականութիւն ունի ցորենի և տեսսակ մը տեղական կտաւի, զոր «Բէրէ» կ'անուանեն: Իացի բազմաթիւ երկրորդական աղօրիքներէ, կան քսան հատ եւրոպական ոճով շինուած ալիւրի գործարաններ, որոց մէջ կ'աշխատին բազմաթիւ հայեր: Ամեն տարի առատ քանակութեամբ ալիւր կը ճամբուի այս գործարաններէ ի Ամսուն: Յ. Էւագեան և Խ. Պէկեան կտաւի մեծ գործարան ունին, որոնք օրը 1000 ծրար կը նանամատակարարել: Իացի այս գործարանէն հազար հայոց տանց մէջ, հազար ճախարակ անդուլ կը գործեն, այնպէս որ իւրաքանչիւր հայ կին կամ հայ աղջիկ կրնայ այդ զբաղմամբ օրը 5—6 դշշահ ընել, որ գաւառաց համար մեծ բան ըսելէ: Մանիքաթուրայի վաճառականութիւնն գրեթէ ամբողջովին հայոց ձեռքն է. գլխաւոր վաճառականներն են Խպրիանոսեան և Պարոնեան: Իացի ցորենէ ու տեղական կտաւէն Ամասիա կը մատակարարէ տարեկան 30000 օխա Ճէհրի—տեսակ մը գեղին ներկ—ավիոն 1000 օխա, գանազան բանջարեղէնք 1500 պարկ: Ճամանակաւ շերամն ալ կը մշակէին, բայց այժմ քաջալերութիւն չը գտնելուն դատրեցուցած են: Այժմ քաղաքն ամեն տարի կը մտնէ 100,000 սոկոյ գումար մը, իսկ դուրս կենէ 70,000 սոկի, այնպէս որ իւրաքանչիւր տարեգլխոյ 30,000 սոկիի յաւելում մը կը գոյանայ, կը հետևի ուրեմն թէ քաղաքն օր քան զօր հարատանալու վրայ է: Պալսաւոր ներածութիւնքն են մանիքաթուրա և ուրիշ ամեն տեսակ եւրոպական ապրանք, շաբաթն հարիւր հակ:

Ա Ր Հ Ե Ս Տ Ք

Երկաթագործութիւն.—Երեսուն խանութ, ամենն հայ.

Մատաղագործութիւն.—Տասը խանութ, ամենը հայ, որոց մէջ ինքնաբոյս հանձար կրնայ նկատուիլ Յովհաննէս Աժտէրեան որ մեքենադէտ ալ է միանդամայն:

Կոշկակարութիւն—50 խանութ, 35 հայ և 15 յօյն:

Կերձակութիւն—20 խանութ, որք եւրոպական կարի մեքենայ կը գործածեն, 15 հայ, 5 յօյն:

Ոչիթեղագործութիւն, 5 խանութ ամբողջն ալ հայ.

Վանիֆաթուրայի կրտակներուն թիւը կը հասնի 300ի, որոց 290ը հայոց են և մատցեալ 10 յունաց:

Մէ երկու խօս+ ալ ժողովրդին ընկերական վեճակին վրայ:

Մստ ամեն հասարակութիւն աշխատասէր է, զբօսանաց նախամեծար կը գասէ գործն, բան մը, որ կը պակսիյլշւգոկիա: Հայերն գուն ուրեք կ'երթան իրենց այգիներն, և եթէ երթան, շատ շուտ կը վերադառնան քաղաք. քաղաքին մէջ զբօսարաններ չկան: Հայ կանայք ալ աշխատասէր են, գրեթէ ամենքն ալ կտաւ կը գործ են. սակայն հոս հայութիւնը մարած է, կեանք չկայ, աշխոյժ չկայ, միով բանին «Հայ—երիտասարդութիւն» չկայ, չափազանց անձնասէր ժողովուրդ մ'են, միայն իրենց անձնական շահն կը մտածեն, դեռ ցարդ ունեցած չեն աղջկանց վարժարան մը, զի վերոյիշեալ երեք վարժարաններ միայն մանչ տղայոց սահմանեալ են. կը նաք երեաւ կայել թէ կանայք չափազանց տղէտ են: Հոս ալ, Եւդոկիոյ նման, քրիստոնեայ կանայք դէմքերնին կը քողածածկեն երբ փողոց ելնեն: Ուուրքերն իրենց բարձրագոյն նախակըթարանով և 15 թաղային վարժարաններով հայոցմէ ալ աւելի յետագէմ են քաղաքակրթութեան մէջ, զի նոցա վարժարաններն ալ անուանական են սոսկ, ոչ նուազ ցաւալի և յունաց վիճակը, արդէն Փոքր-Ասիոյ այս մասերուն մէջ, ամեն տեղյոյներ շատ ընկած են, և այն տեսակ տարօրինակ գաղափարներ կը տածեն կրթութեան և ազգին վրայ, որ գէթ երկար տարիներու պէտք կայ, զանոնք յօյն ազգին քիչ. կամ շատ օդտակար ընելու համար: Չեմ գիտեր թէ Ամասիոյ ժողովուրդն ո՛ր աստիճանի բարդականութեան տէր է, սակայն մեր կարծիքով ուր որ կատարեալ խաւար, կատարեալ տղիտութիւն կը տիրէ՝ անդ կայ նաև անբարոյականութիւն բարոին ընդարձակ նշանակութեամբ:

Լուծակ:

\*

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա

## ԵՐԳ

Երբ տրտում ես, բարեկամ,  
Չախորդութեան օրելըդ,  
Խող ամեն ինչ, երգարան  
Ըղղային դու առ ձեռըդ.

Երգէ՛, երգէ՛ դարան ազդիս,  
Երգէ՛ ամուր, անգագրում,  
Հոգւով մըաքով կըսփոփուիս,  
Հաւատան ինձ, մէկ պահում:

Երբ իննդում ես, բարեկամ,  
Յաջողութեան ժամերուն,  
Երգէ՛ երդ դու ցնծութեան  
Մեր պաշտելի պապերուն:

Քու իննդութեան իննդակից,  
Ըղիւ գործիդ քաջալեր  
Կլինին հողի խոր տակից  
Մեր պանծալի նախորդներ:

Երգէ՛ հարսին քո զրկում,  
Երգէ՛ իննջըքի միջին,  
Ե՛ւ սուրբ աշեղ ճակատում,  
Ե՛ւ բանդումը խաւարտչին.

Երգովյիշէ՛ մեր նախնեաց,  
Երգով թող քնէ քո որդին,  
Երգն է մարդուս անդին դանձ,—  
Լոկ չար մարդիկ երդ չունին:

Բ

### ՄԱՐԳԱՐԻՏ

Գաղտակուրի ծոց մի օր ընկել էլ աւաղի հատիկ,  
Որ հետ ժժմակին կը բել էր տալիս չարչարանք սաստիկ.  
Եւաղը օրէ օր մեծանալով, մարդարիտ դարձաւ,  
Եւ մարդարիտը արքայի թագի վըրայ փայլեցաւ:

Ի անսատեղծ, ի՞նչ փոյթ որ քու սրտի մէջ կան վշտեր հաղար,  
Զէ՞ որ քու վրշտից պիտ ծագի պատգամ քու ազգի համար:

Գ

### ՌԱՖՖԻԻ ԴԱԳԱՂԻ ՎԵՐԱՅ

Քանի դու մեր մէջ կեանքովլի էիր,  
Դու միշտ հալածուած, ատելի էիր.  
Բայց հէնց առ Հարս գնացիր, հեռացար,  
Դու մեր աղքային հանձնարը դարձար:  
Հայքս, որ հոգւով վազուց ենք մեռած,  
Միշտ զիակներ ենք մեր կեանքում սիրած.  
Սուտ չէր խօսքը մեր ասած պապերէն—  
Գնա դու մեռի՛ր, արի՛ քեզ սիրեմ:

Գաճառ Քանինդաս:



### ԱՍՏԻԿ

Մարդոյ որպէս խոսոյ են աւուրք իւր: Խաղմ:

Սատղեկ, գուն էիր, մինչ ես երեխայ,  
Դեռ նոր ոտք ելած, քայլով դող և դող  
Սոաջին անգամ տանից դուրս եկայ՝  
Դուն աչքերիս մէջ կաթեցիր քո շող:  
Եւ ես ժըպտացի անմեղ ժըպիտով,  
Վարդ այտերիս մէջ փոսիկներ ելան,  
Եւ փափուկ ձեռներս պարզեցի յուսով,  
Որ քեղե բըռնեմ, աստղեկ՝ աննըմնան:


Սատղեկ, գուն էիր, երբ ես պատանի—  
Դեռ նոր դուրս եկած մաղեր երեսիս—  
Սոաջին անգամ ուժգին սիրեցի՝  
Դու ինձ կարեկից, դու ինձ յոյս տալիս  
Քո եթերական շողերիդ թելին  
Երբ հեռազըրի քանից եմ դիմել,  
Սիրոյ բարեներս, համբոյր կաթոզին  
Վեղանով, աստղեկ, սիրեկնիս զըրկել:

Սատղեկ, գուն էիր, երբ զով զիշերին  
Ընձկալի սիրով միմեանց փաթմաթուած,  
Խաղաղ պարտիզում սոխակի տաղին  
Լըսում էինք մենք հոգւով ըզմայլած՝  
Դուն ականատես եղար համբոյրին,  
Որով զուգուեցանք երկուքս յաւիտեան.  
Դու եղար վըկայ մեր սուրբ երդումին,  
Սատղեկ, մեր աննենդ սիրոյ միութեան:

Ո՛հ աստղեկ անմահ, աստղեկ մըշտավառ,  
Դարձեալ պիտի դու լինիս մեղ ընկեր,  
Երբ զիշերային ժամերում խաղաղ  
Երկու թումբ տեսնես միմեանց առընթեր:  
Զէ լըսում մի ձայն, չէ շընչում հողմիկ,  
Համակ լըսութիւն տիրումէ չորս զին—  
Երկնային կանթեղդ կըվառես, աստղեկ,  
Երկնուց լոյս կըտաս մեր գերեզմանին:

ՍՊ. Մ.





Ոլլարիչ Էմին

Н. О. ЭМИНЪ.

Հրատ. «Երաքս» Հանդիսի:

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

(Ծն. 25 Նոյեմբ. 1815. † 13 Դեկտ. 1890):

Անցեալ դեկտեմբերի 13-ին վախճանուեց Մոսկուայում 76 տարեկան հասակում հանրածանօթ հայագէտ Մկրտիչ Էմին, որ երկար և արդիւնաւէտ ծառայելէ զիտութեան ասպարիզում՝ հայագիտութեան գորոշի գլուխ հանդիսանալով՝ Ուռաստանում և Եւրոպական զիտութեան մէջ ևս պատուաւոր անուն վասարելով՝ իւր ծանրակշիռ և հմատլից գրուածներով՝ հայ պատմութեան, հնագիտութեան և աղբագրութեան վերաբերեալ:

Էմինը ծնելէ 1815 թ. 25-ին նոյեմբերի Պալսկաստանի Սովահան քաղաքի արուարձան՝ Նոր-Ջուղայում։ Խննը տարեկան հասակում, երբ որ նա զրկուել էր իւր մօրից, նորան ուղարկումնեն Հնդկաստանի Վալկաթա քաղաքը նորա մօրական տատի մօտ, որը և տալիսէ մանուկ Մկրտչին Մարդասիրական Շեմարան ուսանելով՝ յայտնի մանկավարժ և մատենագիր Եւգալեանի և Թաղիազեանի մօտ։ Եջողութեամբ աւարտելով՝ իւր ուսման ընթացքը սյս ուսանարանում, երիտասարդ Էմինը, որ գեռ առաջ շատ բան լսած և կարգացած էր Մոսկուայի Լազարեան Շեմարանի մասին, ցանկանումէ որեւէ միջոցով Մոսկուա ողեռուի՝ սյնաեղի՝ հայկական Շեմարանում շարունակելու իւր ուսումը, չնայելով մեծամեծ գժուարութիւնների անգամ և վաճառների, որ կարող էր առաջացնել ծովային ճանապարհորդութիւնը։ Շոգենսաւայն ժամանակ գեռ չկար։ Տատը յայտնի բանէ լսել անգամ չըր ուղում երիտասարդ Մկրտչի վասնդաւոր ձեռնարկութեան մասին։ բայց վերջապէս մի քանի բարեգէպ հանգամանքներ և մտնաւանդ Եւգալեանի միջամտութիւնը վճռում էն իսրու-

գիրը յօդուտ երիտասարդի: 1829թ. գարնանը Եմինը նստում է շուեղական նաւ, որ գնում էր Սատկար: Նրկար նեղութիւններից և հօթեամսեայ նաւարկութենից յետոյ, որոյ ընթացքում նա ի միջի այլոց այցելեց Ա. Հեղինէ կղզին, երբ Մեծ Կայսեր մարմինը տակաւին փոխադրուած չէր Նրոպա, — հասաւ վերջապէս Շուեգաց մայրաքաղաքը, որտեղից Փինլանդիայի և Պետերբուրգի վերայով — Մոսկուա: Նոյն տարում նա մոտաւ Լազարեան Շեմալան, ուր սկսեց մանաւանդ ուսումնասիրէլ ուսւերէն և ֆրանսերէն իսկ անգլիերէն և Հնդկաստանի բարբառը նա սովորէլ էր զեռ. Կալկաթա եղածին: Արդէն առաջին տարիներից Եմին զարմանալի ընդունակութիւն ցցց տուեց. նա մեծ առաջադիմութիւն արաւ ուսման մէջ, իսկ պարապ ժամերում զբաղվում էր զրականութեամբ, թարգմաննելով ուռւ և եւրոպայի ընտիր բանաստեղծներին հայերէն: — Աւարտելով 1834թ. ուսման ընթացքը Շեմարանում մեծ աջողութեամբ (նորա անունը արձանագրուած է ոսկէ տախտակի վերայ), նոյն իսկ թուականին նա մոտաւ Մոսկուայի համալսարանի բանասիրական բաժինը, ուր նորա ընկերներն էին Սամարին, Կավելին, Ռուսլանվ և այլք:

Եմինի ուսումնական գործունէութիւնը սկսվումէ դեռ երիտասարդական հասակից՝ համալսարաննական նաստարանից — 1836թ.— նոյն ժամանակի հոչակաւոր Վիլմէն Գրանսիացու Միջին Գարուց գրականութեան պատմութեան վերաբերեալ եռահատոր զրուածի թարգմանութեամբ՝ ուսւերէնից հայերէն:

Համալսարանը աւարտելով՝ Եմին հրատիրուեցաւ 1838թ. Լազարեան Շեմարան իբրև ուսուցիչ հայոց լեզուի և զրականութեան, ուր կարծ միջոցում՝ կարողացաւ լուրջ, կանոնաւոր և ժամանակի պահանջներին համապատասխան դասաւանդութիւն մասնել նպաստելով թէ կենդանի բարբառով և թէ մի քանի կարեւոր ձեռնարկների հրատարակութեամբ, որ մինչեւ այժմ ևս՝ մոտ 50 տարի յետոյ, զեռ կորցրած չեն իրենց նշանակութիւնը: Իւր գործունէութեան յաջորդ շնչաններում իբրև Տեսուչ Շեմարանի, վարժապետ և ուսուցչապետ՝ երկար տարիներ անընդհատ եռամնդեան և բազմագիրան ջաների շնորհիւ յաջողեցաւ նորան հայոց հնագոյն գպրոցներից մէկում հիմք դնել այն ուղղութեան, որ հին

զրականութեան կատարեալ ուսումնասիրութիւնը, ակնածու սպատկառանքը ընտիր հեղինակների առաջ և Ոսկեղինիկ Դարու Հանձաբեղ ճարտարսպեաների ոճին և օրինակներին ընտելանալը և հետեւելը իւր զիւսաւոր նպատակներից մէկն էր Համարում:

Խմբնի անունը միանդամյն կապուած է Լազարեան Շեմարանի հետ, մօտ 30 տարի նա տեսչական պաշտօն էր վարում այնտեղ այգքան միջոց ևս նա ուսուցչապետ էր: Միայն չորս տարով ընդհատուեց նորա գործունէութիւնը Լազարեան Շեմարանում, երբ որ նա նշանակուեց Վաղիմիրեան նահանդի ուսումնարանների վերատեսուչ 1866—1871 թ.: Վաղիմիրից վերադառնալով՝ նա անմիջապէս նշանակուեց Մոսկուայի հինգերուգ գիմնազիայի վերատեսուչ որ նոր էր բացուել, վարելով այդ պաշտօնը մինչեւ 1876 թ., երբ ինքն իւր յատուկ յանկութեամբ հրաժարական տուեց, պահելով միայն հայոց լեզուի և զրականութեան ամբիոնը Լազարեան Լիկէօնում: 1882 թ. այդ վերջին պարապմունքն ևս նա թողեց, կամենալով բոլորովին նույիրել իրեն ուսումնական զբաղմունքների: Եւ արդարև, այդ միջոցին նա շատ աշխատում էր, նա բաւական դրեց և հրատարակեց՝ մանաւանդ ջերմ մասնակցելով Մոսկուայի Կայսերական Հանգիտական ընկերութեան զեազմունքներին: Բայց վերջին տարիները նորս առողջութիւնը բաւականին խախտուեցաւ, իսկ ձեռքի գոզոցը արգելք էր լինում նորան կանոնաւորապէս պարապելու, թէև նա միշտ և անդադար կարդում էր և հետեւում իրեն հետաքրքրող գիտութեանը: Վերջապէս անցեալ դեկտեմբերի 13-ին առ միշտ հրաժեշտ տուեց բաղմավաստակ ծերունին...:

Բազմաթիւ են Խմբնի աշխատութիւնները և բազմատեսակ: Առաջին գրուածներից էր նորա հօչակաւոր քննութիւնը «Վեպք հնոյն Հայաստանի» (1850 թ.), ուր առաջին անգամ յարուցուեց և այնպէս փայլուն կերպով լուծուեց հին հայոց աղդային երգերի խնդիրը և որ անկեան վէմ դարձաւ, որի հիման վերայ լոյս տեսան յետոյ բազմաթիւ հետազոտութիւններ, թարգմանութիւններ և մեկնութիւններ ֆրանսերէն, ուսւսերէն և հայերէն: Եյս գործը արգարե գարապլուխ կարողէ համարուել մեր պատմական-քննական զրականութեան մէջ:

Եյնուհետեւ յիշելու է նորա ինքնուրոյն հետազօտութիւն-

ներից ոռւսերէն լեզուով—հայ նշանագրերի (1858) մասին,  
հայոց հեթանոսական կրօնի (1864), Վահագն Ախշապաքաղի  
(1873), Սժգահակի աւանդութեան (1881), Մար-Լրասի  
քննադատութեան (1881), Հայկազունեաց հարստութեան  
(1884) մասին են, ուր առաջին անգամ հաւաքուած էր դոցա  
յատկացեալ նիւթը, ենթարկուած քննադատութեան բովին և  
գիտնական կերպով լուսաբանուած: Եյս՝ առաջին և աջող  
փորձեր էին մինչ այն ժամանակ դեռ անմշակելի խնդիրների:

Բայց միայն քննական երկասիրութիւնների մէջ չէ, որ  
տեսնուամ ենք Եմինի սկզբնաւորութիւնը: Խորին և բազմա-  
մասն ուսումնասիրած լինելով մայրէնի գրականութեան յի-  
շատակարանները, որոց հմտութեան գաղտնիքին խելամուտ  
էր նա ինչպէս հազիւ թէ մէկ այլ ոք,—նա արժանապէս  
գնահատեց նոցա կարեւորութիւնը զիտութեան և ազգային  
ինքնաճանաչութեան համար և գեղեցիկ թարգմանութիւն-  
ներով ծանօթացրեց մեր ընտիր պատմական և զրականական  
դրուածները ուսումնական աշխարհին—այն ձշմտութեամբ,  
այն անհամեմատ թափանցելով հայկազն մատենագրի խորին  
խորհուրդների մէջ, այն գեղարուեստ ոճով ու գրութեամբ և  
վերջապէս այն կարեւոր յաւելուածնելով ու լուսաբանութիւն-  
ներով որ միշտ նորա բոլոր աշխատութիւնների յատկանիշ-  
ներն են: Եյսպէս՝ օրինակ Վարդան Բարձրբերդեցու (1861)  
և Ասողիկի (1864) պատմական ստուար գլուածները, որ  
մեծ կարեւորութիւն ունին Ռուբիննեանց և Բազրատունեաց  
հարստութեան պատմութեան համար, Լամբրոնայու հոչա-  
կաւոր ատենաբանութիւնը (1864), սոքա ոռւսերէն. Փաւս-  
տոս Բիւզանդի հետաքրքրաշարժ պատմութիւնը՝ ֆրանսե-  
րէն (1867) ևայն: Սոյս շարքում Խորնոյ Մեծ Շահունու  
հանրածանօթ մատենի թարգմանութիւնը (1858) կմնայ միշտ  
օրինակ գեղարուեստական վերաստեղծութեամբ:

Բացի թարգմանութիւններից Եմինը մէծ ջանքով և  
հմտութեամբ հրատարակեց մի շարք հայ պատմագիլների  
քնադիրները, որոնցից մեծագոյն մասը առաջին անգամ էին լոյս  
տեսնուամ. այսպէս՝ Յովհաննէս Աաթողիկոսից (1853) և Ստե-  
փանոս Օրբէլեանից (1861) զատ՝ մնայեալ—Պաղար Փար-  
պեցու թուղթը (1853), Մ. Աաղանկաստուացու Կղուանից

Պատմութիւնը (1860), Միսիթար Այրիվանցու (1860) և Վարդան Շարձրբերգեցու (1861) պատմութիւնները առաջին անգամ լցոյ տեսան, վաստակելով բազմութան հրատարակչին այն տևենի երախտաղիտութիւնը, որոց համար թանգ է հայագիտութեան առաջադիմութիւնը թէ՛ ներկայումն և թէ՛ ապագայում:

Վերջապէս հայ եկեղեցական գրականութեան մէջ նա ձեռք զարկից վերին ասախճանի հետաքրքրական մի խնդրի այն է անվաստէր գրուածների (առօրին) ուսումնասիրութեան, որոց դիտնական կարևորութեան մասին ոչ ոք մեր ուսումնականներից չէր կասկածում անդամ: Կարճ միջոցում նա ճոխացրեց եկեղեցական-պատմական զրականութիւնը մի շարք այգափիսի միշտակարանների թարգմանութեամբ հայերէնից ուուսերէն, որոնք մեծ համակրութեամբ ընդունուեցան գիտնական մասնագիտաներից: Այսպէս՝ Փոխումն Սատուածածնի, Հայաստանի Ծագուղիմէոս առաքեալների Պատմութիւնը, Հանդիսա Յովհաննու Եւետարանչի և այլն (1874—1880 թթ.): Իւր երկասիրութիւնների շաղքը այս մասին Խմին պատկեց հոչակաւոր Ծարսկանի ուուսերէն ընտիր թարգմանութեամբ, այն հրաշակերտ կրօնական երգերի, որոնք իրենց աստուածաբանական նրբութեամբ և մանաւանդ վսկերանատեղծական ոճով և բովանդակութեամբ ըւնին իրենց հաւասար հոգեոր մատենագրութեան մէջ:

Խմինի բոլոր երկասիրութիւնների թիւը 35-ի է հասնում:

Ծագներով յիշել յօդուտ դիտութեան և հասարակութեան վաստակած Խմինի այլ ծառայութիւնները, պէտք է ասել որ շատ սակաւ գործիչներին այնպիսի նախանձելի վիճակ է վեճակում—վայելելու այն ընդհանուր յարգանքը և համակրութիւնը, որ ուներ նա ամեն տեղ: Աւ այս յարգանքը նա ձեռք էր բերել անխոնջ, եռանդուն և անաշտո. սպասաւորութեամբ գիտութեան և լրւաւորութեան գործին: Խմինի անունը հաւասարապէս հոչակուած էր թէ՛ Ոռուսաստան, թէ՛ արևելք և թէ՛ արևմտեան Խւրուպա: Դեռ նորերս՝ 1886 թ., երբ որ Լավարեան Շեմարանի նախաձեռնութեամբ տօնվում էր նորա գիտնական և մանկավարժական գործունէութեան յէս-նախայ Յորեկեանը, նորա կարեւորութիւնը արժանի կերպով գնահատուեց թէ՛ Ոռուսաստան և թէ՛ օտար երկիրներ: Մո-

կուայի համալսարանը և բնագիտական, մարդաբանական և աղքապրական ընկերութիւնը Եմինի ծառայութիւնների վոխարէն պատուաւոր անդամ ընտրեցին նորան։ Ընօրհաւարական ուղերձները, նամակներն ու հետազուերը ուսումնական ընկերութիւններից, նորա բազմաթիւ աշակերտներից և յարգողներից աշազին քանակութեամբ ստացուեցան արևելքից և արեմուտքից. Առվկասից, Վրիմից, Պարսկաստանից, Տաճկաստանից, Առուսաստանի և Խւրուպայի բազմաթիւ քաղաքներից— Վենետիկից, Վիեննայից, Փարիզից, Ստրավուրդից, Մարբուրգից, Լուվինից ևն։ (Տես Մ. Եմինի 50 ամեայ յոբելեանն)։

Միայն գիտական երկասիրութիւնները չեն, որով Եմինը ձեռք էր բերել ընդհանուրի յարգանքը, նա արժանացել էր գորան նաև իւր բարձր բարցյական յատկութիւններով—համոզունքների շխտակութեամբ, հայեացքների ու կարծիքների անկախութեամբ ու լիջմտութեամբ, խիստ և բարեխիղջ վերաբերութեամբ գէպի իւր սպարտականութիւնները և իւր ծառայութիւնների գնահատութեան համեստութեամբ։ Պատիւ, պարտականութիւն, արդարութիւն—պատարկ խօսքիր չեն նորա համար. և այս նա տպացուցեց դործքով։ Նորան արդարե պատահել էր իւր կեանքում զոհ բերել բոլոր նիւթական հաշիւներ՝ համոզմունքների անկախութիւնը պաշտպանելու նապատակով։ Եյս գէպքում նա վարվում էր իւր խղճմանքի թելագրութեամբ՝ առանց իրե և իցէ տառանելու կամ փոշմանելու։ Եյս պատճառով բոլորկեան, ով որ ճանաչում էր Եմինին ոչ միայն իբրև գիտական, այլ և իբրե բարձր բարցյական անձնաւորութիւն, խորին պատկանանօք պիտի յիշն միշտ նորա անունը։

Եմինը՝ բայցի իւր երկասիրութիւններից, որ մ.ծ նշանակութիւն ունին մեր ինքնածանաչութեան համար, թողեց մի այլ՝ նիւթական ժառանգութիւն։ Փորձով ծանօթ լինելով, թէ որքան գժուարութիւններ կան մեր մէջ զուտ գիտնական զրուածների տպագրութեան համար անհրաժեշտ գրամական միջոցներ գտնելու և դիւրին կերպով այդ զրուածները աղջի մէջ տարածելու, նա իւր ուսուցչական չափաւոր ոռձիկից կոպէկ-կոպէկ յետ ձգելով՝ բասն հապալ բուրլի է կտակել ինչ պէս իմանում ենք հաստատ աղքիւրներից, իբրև անձեռնմխելի

մայր-դումար. դորա տոկոսիքով Լաղարեան Շեմարանի Լի-  
կէօնի խորհրդի անօրինութեամբ պէտք է հրատարակուին  
ասարէցտարի ժիշտական գրուածներ (թէ՛ նիւթեր և թէ՛ հե-  
տազօտութիւններ) Հայ Պատմութեան, հին ու նոր գրակա-  
նութեան, հնագիտութեան և աղջագրութեան վերաբերեալ:  
“Նոյն գումարով երբեմն-երբեմն աղջագրական և հնագիտական  
ուղերութիւններ ևս պէտք է հաղմուեն Ուուսաց, Պարսից  
և Տաճկական Հայաստանում: Լառումնք, որ մի գումար ևս նոյն  
նախատակով Էմինը յատկացրել է Աշենետկի Միկթարեան-  
ներին՝ վերաբերութեամբ մանաւանդ հին գրականութեան:

Եյս յօդուածը վերջացնում ենք մեր հանձարեղ բանաս-  
տեղձ՝ Գամառ Վաթիսպայի գողարիկ տողերով, որ նուիրել էր  
իւր մեծանուն և բազմերախտ ուսուցչն՝ նորա Յիսնամեայ  
Յորելինի օրը՝ Խոր-Խախիջեանի Արուեստական Դպրոցի կող-  
մից մասուցած գեղեցիկ արծաթեայ դրչն հետ միասին:


Վըսանութամեայ ժիր երիտասարդ,  
Բանիբուն, անխոնջ, և յաւէտ զըւարթ,  
Գիտակ շատ լեզուաց, սիրող պատմութեան  
Իմաստասիրող հայկաբանութեան,—  
Վելձանում էիր միշտ Խորենացի.  
«Բարի յոյսերով լի ես», — ասացի:

\* \* \*

Սրբուն տարիքիդ երբոր դու հասար,  
Գերգաստանի հօր բազդը չի տեսար,—  
Բայց ի՞նչ փոյթ. մինչ Դու երջանիկ էիր,  
Որ հոգեպարար զրադմունք ունէիր.—  
Զեռքումըդ դարձեալ կար Խորենացի.  
«Օգտաբեր գիտուն Հայ ես», — ասացի:

\* \* \*

Վըրուեցան ուղեղքատառուն հինդ տարի  
Վու զլիսէն անցան շատ չար ու բարի,  
Սմեւը մընացիր Դու քո համազման  
Վու իդէալն էր վիճակ Հայկազնեան.—  
Զեռքէդ վայր ընկած չէր Խորենացի.  
«Խնկելի հայ-մարտ ես զու», — ասացի:



## ԽԱԶԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ

ԹԱՎԱՐ 1803, ՎԱԽԱՏՈՒՆԵՑԸ 1891 թ. ՄԵՐՏԻ 15-ԻՆ.

Ազգային նեղ և լարուած դրութեան միջոցներում՝ ժամանակ առ ժամանակ երեան են գալիս հասարակական ասպարէդ այսպիսի անձնաւորութիւններ, որոնք տոգորուած ժողովրդեան իղձերով և զրդուած նորա տառապանքներով, իւրենց կեանքը մեծ եռանդով ու համակրելի անձնութիւնութեամբ նուիրում են աղջի ընկճուած իրաւունքների պաշտպանութեան և նորա դոյութեանը սպառնող խոչընդոտների դէմ մաքառման սուրբ դործին:

Ահա սյապիսի անձնաւորութիւններից մինն է ներկայանում և նորեկս Պոլսի Ակիւտար արուարձանում իր կեանքը կնքող, երբեմն համբաւաւոր, Խաչատուր Միսաքեանը, որը բաւականին նշանաւոր գերէ խաղացել տաճկահայերի մէջ յիսուն տարուց ի վեր: «Նա յայանի է որպէս հրապարակախօս, զրադէտ և ուսուցիչ: Ժամանակին Տերոյենց Պատուելիի տեսչութեան օրով Ակիւտարու երբեմն հռչակուած Շեմարանի փոխառութեանուրէնը մեծ գործունէութիւն է ցըց տուելի միջի այլոց կաթողիկութեան վարդապետութեան դէմ մարտնչելով որ այն ժամանակները մանաւանդ՝ հայ աղջի մէջ երկապառակութիւն յարուցանող այդ կրօնական վէճերը ու կոխները իրենց դադամինակէտին հասած՝ օրու այ ամենայուղիչ խնդիրների առաջինն էին հանդիսանում:

Պոլսում հայ հասարակական կեանքի զանազան ասպարէդներում մեծ արդիւնաւետութեամբ և եռանդով գործելուց յետոց, Միսաքեան գիմնումէ Փարիզ ուր այդ ժամանակ Պրանսիսյի մայրաքաղաքը հայ լուսաւորութեան կենզդուններից մինն էր ներկայանում, չնորհիւ Մուրատեան և Հայկաղն անան ազգային վարժարանների, այդտեղ խմբուած անուանի հայ զրագէտների, գործիչների, մէծատունների և այնպիսի համակ-

բելի հայագէտների, որպէս էին Ամիկթոր-Լանգլուան, Պրիւդօմ և Դիմուրիէ: Եյդ ժամանակ այստեղ էին հրատարակում Եյվազովսկու և Գալֆայի համար իսմբազութեամբ «Մասեաց Եղանձնի», Ա. Ոսկանեանի «Երևանաց» կիսամսեայ լրագիրը, Ե. Մուրատեանի խմբազութեամբ «Փառչիլ կիսամսեայ լրագիրը և վերջագէս այստեղ էր գործում ու հրատարակում իր «Հար հայ պատմագրաց» անմոռանալի Կարապետ Շահնազարեան մեծ վարդապետ:

Պոլսից տեղափոխուելով Փարիզ, սկզբներում նա անձնատուր է լինում ֆրանսիական գասական գրականութեան և բաւական գրուածներ է թարգմանում հայերէնի: Միևնույն ժամանակ նա գասախօսում է հայ մեծատունների երեխայոց: Եյս ժամանակ Միսաքեան նորից գիմում է գրականական բանակը-ռուին Միթմարեան հարց հետ, որոնց մեջ գրում են ի միջի այլոց հայր Բագրատունին և Հիւրմիւղեանը:

Սոհասարակ Միսաքեանի գերը բանակովութեան մեջ կաթոլիկ ազգայնոց հակածառութիւնների առիթով բաւականին նշանաւոր է: Նորա գրուածները տապօռմ էին Փարիզում հրատարակուող «Փարիզ լրագրի մեջ, որը վաթսունական թուակունների սկզբում շատ տարածուած էր: Եյս բանակուուական զրուածները թէ ոճի և թէ դատողութեան կողմից այնքան ազդուեն եղած, (մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ Միսաքեան ոչ մի դպրոց տեսած չէ), որ և ժամանակին ի միջի այլոց նա և հանդ Միքայէլ Նալբանդեանցին մեծ սքանչացում են պատճառած:

Իբր կարգագրիչ աշխարհաբար լեզուի, նոյն իսկ Միթմարեանց վկայութեամբ, սա միակ գրագէտն է, որ զրական աշխարհաբարին կազմաւորութեան մեծ մղում տուած է, մասնաւոնդ գիտակտական և բանակուուական (պոլսիկական) տեսակէտով: Եյնպէս որ մինչեւ այն ժամանակ Միթմարեանք տատանում էին կոկիկ աշխարհաբար զրել իրենց ամսապերն և առհասարակի գալրոցական դասագրգիրն, այլ Միսաքեանի այս ձեռնարկից քաջալելուած այն ժամանակից սկսան աշխարհաբար զրել թէկւ նոյն միջոցին՝ Նալբարեանց իր «Հայախօսութեան» ձեռնարկով ոռւասհայոց մեջ յայտնի յեղափոխութիւն հանած էր, սակայն այդ յեղափոխութիւնը, ոչ արձագանք


զտած էր և ոչ աղմուկ անգամ հանած տաճկահայերի մէջ։  
Հայց պատմութեան առաջ արդար լինելու համար, պէտք է  
ասել որ շերազաբնակ մեծ հայ վտարանզին՝ անմահ Մելովը  
թաղիագեանց, համարեա երեք քառորդ դար առաջ կարա-  
պետ եղած էր այս շարժումներին։

Մեր մանուկ զբականութեան համար շատ ցաւալի եղաւ,  
որ Խաչատուր Միսաքեան չկարողացաւ իրագործել իր փայ-  
փայած ծրագիրն՝ «Օտակացայոց անուամբ պարբերական հրա-  
տարակութիւնը, որի ատաղձները—նիւթերը և նմուշները  
տեսնվում էին Մուրատեանի «Փարիզ լրագրում», որ մի քանի  
տարի միայն կեսնք ունեցաւ։

Գալով Խաչատուր Միսաքեանի երկրորդ դերին, որը նո-  
կատարած է հայութեան վերաբերմամբ, այն է, որ խեղճ երի-  
տասարդ Միսաքեանը՝ պաշարուած մուսուլմանական թանձր  
մտաւոր խաւարով և ենիշարական կովիտ ոյժով, ոչ թէ չէ  
Ճնշվում գոյա ծանր լծից, այլ ընդհակառակը՝ ներշնչվում  
է ընազդական զիտակցութեամբ և անդադար գոյա դէմ մա-  
քառելով այնպիսի հոգեկան զօրութիւն է արտայայտում, որ  
գուցէ չկարողանային երեւան բերել մինչև անգամ եւրոպա-  
կան համալսարաններում ուսում առած ընդունակ երիտա-  
սարդներ։ Ուրիմն այս հոգեբանական երեսոյթին պէտք է վե-  
րազրել այն տարօրինակ զեղմունքն, որ արտաթորվում էն  
Միսաքեանի զբչից, երբ նա այլազաւանների յարձակումներին  
զիմազրելու պատրուակաւ ընդնշմարել է տալիս Ճնշեալ հայի  
տառապանքները։

Եւելորդ չենք համարում յիշել որ մեր հանգիսի կենա-  
զրական բաժինը մամուլին էր յանձնուած տպագրութեան հա-  
մար, երբոր մէնք արտասահմանի մի լրագրից տեղեկացանք Խա-  
չատուր Միսաքեանի տիտուր մահուան մասին։ Ուստի սո-  
րանով վերջացնում էնք շտագրով զրուած այս տողերը, ներո-  
ղութիւն խնդրելով հանդերձ, որ ժամանակի սղութեան պատ-  
ճառով կարող չեղանք մանրումանօրէն կանգ առնել այս նշա-  
նաւոր հայ գործիչի վերսց, մանաւանդ որ Պետերբուրգում  
մեր ձեռքի տակ չունենք դորա համար որ և է նիւթեր։








**Ղազար, Յովհաննէս, Յովակիմ և Խոստուք  
Լազարիննք**

Лазарь, Иванъ, Иоакимъ и Христофоръ  
ЛАЗАРЕВЫ.



**Լազարեան Շեմարանի շենքը**  
Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ.

*Հրատ. «Արարու» Հանդիսի:*

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ԺԵՄԱՐՄԱՆԻ ԽՈԹԱՆԱՍՈՒՆՉԻՆԳԱՍԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ:

Հոկտեմբերի 24-ը հայ մարդու փառաւոր օրերից միննէ:  
Սորանից ճիշտ հօժանասուն և հինգ տարի առաջ, Ո՞ուսաս-  
տանի կենդրոնում բացվում է զիտութեան մի կաձառ, թէ և  
յառաջագոյն շատ համեստ ծրագրով, ուր կրթուել է և կրթ-  
վում է մի ամբողջ լէդէն հայ մանուկների, որոնք դուրս  
դալով կեանքի տատասկուտ ասպարէզը, մեծ մասամբ գործել  
են յօգուտ հայ ժողովրդի բարոյական և մտաւոր վերածնու-  
թեան: Որովհիտե անցեալ 1890 թ. հոկտեմբերի 24-ին մեծ  
հանդիսիւ տօնուեցաւ այդ բարձրագոյն դպրանոցի հօժանա-  
սուն և հինգամեակը, ուստի և մենք կարեւոր գտանք գէթ  
մի քանի տողերով ծանօթայնել մեր ընթերցողներին թէ Շե-  
մարանի և թէ նորա հիմնագիրների զործունէութեան հետ:

Լազարեան տոհմը, որ այնքան հոչակ ունեցաւ ամենու-  
րիք տարածուած հայերի մէջ, Պարսկաստանի Նոր-Ցուզայ  
քաղաքի ամենաապատուաւոր և հարուստ ընտանիքներից է ա-  
ռաջ գալիս: ԴՊ գարում, երբ հայկական թագաւորութիւնը  
բարբարոս ազգերի յարձակումների պատճառով քայլ առ քայլ  
մերձենում էր իր անկմանը, մի քանի իշխաններ գեռ ևս պահ-  
պանում էին իրենց անկախութիւնը: Մեր մատենագրերից մի  
քանիսը յիշում են, որ հայոց թագաւորութեան վերջնական  
անկումից յետոյ, Եմմանուել Մանուկ Խղիազարեան անունով  
մելը իշխում էր հայ երկրի մի որոշ մասին և բազմաթիւ  
պատերազմն էր մղում վերջերը փառասէր Շահ-Երբասի գէմ:  
Խրկարատե մղած կոիւներից յոդնած՝ Մանուկ Խղիազարեանը  
վերջապէս ընդունում է Շահի առաջարկութիւնը և զինաթափ  
լինելուց յետոյ տեղափոխվում է Պարսկաստան, ուր Իրանի  
իշխովը նորան զանազան պատուաւոր տիտղոսներ է շնորհում:

Խրկորդ Շահ-Երբասի օրով նշանաւոր էր Մանուկի որդի  
Պաղարը, որը արքունի գանձի ոստիկան և միանդամյն փո-

զերանոցի տևուց էր կարգուած: Պազարի թոռը Պազար ա-  
նունով Յուղայի կառավարիչ էր նշանակուած:

1747 թ. Նազլ-Շահի մահից յետոյ, ներքին և արտա-  
քին խոռվութիւնների պատճառով, շատ նշանաւոր հայեր ի-  
րենց կեանքը և կարողութիւնը վտանգի մեջ տեսնելով ստի-  
պուած էին հեռանալ Պարսկաստանից և գաղթել մի այլ եր-  
կիր: Եյսպէս վարուեցաւ և Պազար Կղիազարեանը (որ յե-  
տոյ այս ազգանունը Լազարեանի փոխուեցաւ), որը 1749 թ.  
անցաւ Ոռուսաստան իր չորս որդիներով հետք բերելով և մեծ  
հարստութիւն ու հազուագիւտ թանկագին իրեր ու ակներ:

Լազարեան սկզբներում բնակութիւն է հաստատում Աստ-  
րախանում, իսկ յետոյ Մոսկուայում: Եյստեղ նա կերպասի  
և կտաւի գործարան է հիմնում և Սահայից ու արևմտեան  
Խւրուպայից Ճարտարագէտ արուեստաւորներ բերել տալով, այն  
աստիճան ծաղկեցնում է գործարանը, որ արքունիքի մասնա-  
ւոր ուշադրութեանն է արժանանում:

1776 թ. Եկատերինէ թագուհին Պազար Լազարեանին  
և նորա որդոց ազնուականութիւն և այլ պատիւներ է շնոր-  
հում: Պազար Լազարեանի մեծ որդին Յովհաննէսը՝ իր  
խելքով, կրթութեամբ և զանազան ծառայութիւններով օր  
է օր փառաւորվում է և բարձրագոյն պատիւների արժանա-  
նում: Նորա միւս երեք եղբայրները՝ Մինաս, Խաչատուր և  
Յովակիմ գործակից և օժանդակ են լինում Յովհաննէսին նորա  
գործունէութեան մեջ թէյօգուտ ազդի և թէ կառավարութեան:

Բաւական հետու կաանէր մեզ Լազարեանց տոհմի սրխ-  
րագործութիւնների պատմութիւնը, եթէ «Ծրաքսի» սուզ է-  
ջերը ներէին մեզ մանրամասնորէն կանգ առնել այս պատկա-  
ռելի տոհմի գործունէութեան վերայ Ոռուսաստանում, թէ  
յօգուտ իրենց փայփայած և սիրեցեալ ազդին և թէ ոռւս  
կառավարութեան: Աակայն յիշելու է, որ Յովհաննէս Լազա-  
րեանը իր ընդունակութիւնովը և արդիւնաւոր գործունէ-  
ութեամբ այնքան սիրելի գարձաւ արքունիքին, որ Պողոս  
կայսրը յաճախ սեղանակից էր անում նորան արքունեաց մեջ:  
Վերմանիոյ կայսեր Յովհաննէսի հողմից Յովհաննէս Լազա-  
րեան իր որդոց հետ նախ արժանացաւ բարօնութեան, և  
յետոյ 1788-ին հռովմէական կայսրութեան կոմսի պատուաւոր

տիտղոսներին, իսկ Պողոս կայսրը մեծ սիրով բարեհանդեցաւ թշոլատրել Լազարեաններին կրել այս բարձր ախտղոսները:

Գործակցութեամբ ի Տէր հանդ, Յովսէփ Արդութեան-Երիայնաբագուկ արքեպիսկոպոսի, որը մեծ պատիւ էր վայելում Ոռուսից արքունիքում, Յովհաննէս Լազարեան յաջողեցաւ ձեռք բերել զանազան առանձնաշնորհութիւններ Պաղարու, Սոտրախաննի, Մողդոկի, Գրիգորուպոլիսի, Վրիմի, Նոր-Նախիջևանի, Գէրբէնդի և Մորոքուր քաղաքների հայ աղքակիցների բարեկեցութեան համար:

Ահանձն Յովհաննէս Լազարեան, որպէս յատուկ է մեծ անձերին, գոհ չմնաց միայն այն մեծամեծ ծառայութիւններով, որ նա անդադար անումէր իր ազգի և աղքակիցների բարօրութեան համար, այլ շարունակ մտածումէր և իր մահուանից յետոյ օգտակար գտնուել իր սիրեցեալ աղքակիցներին:

Ուստի ի նշան իր անսահման սիրոյ և հոգատածութեան գէպի իր աղքակիցները, որպէս մի յաւերժ զբաւտկան, Յովհաննէս Լազարեան 1800 թ. յունուարի 4-ին կտակով թողնումէ 200,000 ռուբլի մի գումար ժամանակին մի օրինաւոր հոյկական գոլրատուն հիմնելու հայ ազգի չքաւոր երիխանների գաստիարակութեան և կրթութեան համար: Որդի չունենալով, իրեն ժառանդէ նշանակում կրտսեր եղբօրը՝ Յովակիմին, որին և անցնումէ նորա մեծագումար հարստութիւնը և որին պատկանումէ Լազարեան Շեմսրանի բայման մեծ պատիւր:

Ի մեծ ցաւ իր բազմակարօտ աղքակիցների, այս մեծագործ և յաւերժ յիշատակաց արժանի հայկաղն, 1801 թ. հոկտեմբերի 24-ին, Պետերբուրգի մէջ, կնքումէ իր մահկանացուն վաթսուն վեց տարեկան հասակում:

Յովակիմ Լազարեանը ցանկանալով օր առաջ բաց անել վարժարանը, ստկայն կտակած գումարը բաւարար չգտնելով իր կողմից ևս աւելացնումէ մտաւորապէս մի հարիւր հաղար, որով ընդ ամենը գտնումէ 300,000 ռուբլի:

1813 թ. զրվումէ հայ մանկանց լուսաւորութեան տաճարի շինութեան առաջին քարը: 1814-ի մայիսի 10-ին շինութիւնը և գպրոցական պէտքերի համար կտրեւր մտար արդէն պատրաստ լինելով մեծ հանդիսով և շքով տեղի է

ունենում շինութեան բացումը: Նետեեալ 1815 թ. մայիսի 12-ին սկսում է ուսման ընթացքը Յովակիմ Լազարեանի անմիջական հսկողութեան և հովանաւորութեան ներքոյ:

Լազարեան Շեմարանը իր այժմեան վեճակին միանգամից չհասաւ: Նա յաջորդաբար այլ և այլ ժամանակներում աձնով ու զարդանալով թէ արտաքին և թէ ներքին կողմից հասած է ներկայ թարեկեցիկ վիճակին, մանաւանդ շնորհիւ այն պատկառելի նուիրաբերութիւններին, որ արած է Լազարեան տոհմը: Յովակիմ Լազարեանի ամուսինը և որդին՝ Յարութիւնը, 1816 և 1817 թ. նուիրել են Շեմարանին յիմնական հաղար ոռոքի, այնուհետեւ Յովկիաննէս և Խաչատուր Լազարեանները միասին աւելի են նուիրած, քան առաջին հիմնադիրները:

Եւ այսպէս 300,000 ոռոքի դրամագլխով բացվում է մի համեստ գոլոց ջրս գասարանով, ուր սկզբում կրթվում են ձրիավարժ 30 որբ հայ մանուկներ: Տարրական առարկաների հետ սոցա աւանդում էին հայերէն, ոռուսերէն, ֆրանսերէն, գերմաններէն և լատիններէն լեզուները: Եյս երեսուն աշակերտների մէջ կային մինչեւ անդամ Հնդկաստանից և այլ հեռու երկրներից ուղարկած երեխաններ: Արձ ժամանակից յիտոյ աշակերտաների թիւն աւելանումէ և ընդունվումէն մինչեւ անդամ թոշակաւոր և երթեւեկ աշակերտաններ: 1825 թ., այս հոյն հական գիմնազիոնը որպիսի անուն կրում էր նա այն ժամանակ, մեծ հռչակ ունեցաւ: Եյս թուից Շեմարանը զիմնազիյի աստիճանի հասաւ որ և տեսեց մինչեւ 1837 թիւը: Այս ժամանակ ցանկացողների համար աւանդվում էին նաև արտօրերէն, պարսկերէն և տաճկերէն լեզուները: 1837 թուից զիմնազիօնական ծրագիրը կրատավումէ, իսկ արևելիան լեզուները ընդհակառակը պարտազիր են գառնում բոլոր աշակերտների համար: 1848 թ. Շեմարանի ծրագիրը փոխվում է: զիմնազիօնական վեց գասարանները նորից հաստատվում են, իսկ արևելիան լեզուների համար բացվում է երկու մասնագիտական դասարաններ: 1871 թուից սկսեալ Շեմարանի ծրագիրը նորից բարեփոխուեց, զիմնազիօնական դասարանների թիւն աւելացաւ երկուսով որով իրաւունքի և ծրագրի կողմից հաւասարուեցան պետական զիմնազիօններին, իսկ մասնագիտական դասարանները փոխուեցին Նիկէօնի երեք լսարաննե-

ըի համալսորանական իրաւունքով։ Այժմ Լեկօնում դասախոսում են Հայոց, արաբաց, պարսից և վրաց լեզուները ու գրականութիւնը, արևելքից և ոռւսաց գրականութեան պատմութիւնը, նոյնպէս և ֆրանսերէն, բայց ոչ պարտազիր։

1823 թ. Լազարեան Շեմարանում հաստատվումէ «Հայ Հնասէրների ընկերութիւնը» որի նախակն էր Հայաստանի ուսումնասիրութիւնը։ 1829 թ. բացվումէ տպարան, որտեղ բազմաթիւ կարեոր երկասիրութիւններ են ապուել սակայն ցաւօք 1867 թ. Բազմա վերատեսչի օրով փակվումէ։

Յովհաննէս կաթողիկոսի առաջարկութեան համաձայն՝ 1841 թ. Պետերբուրգի և Մոսկուայի Հայ եկեղեցիների արդիւնքից՝ սահմանվումէ եկեղեցական կոչուած սաների համար 20 թոշակ։ 1850 թ. Խաչատուր Լազարեան իր միակ ժառանգ Յովհաննէս որդու մահուան պատճառով, 14 թոշակ է հիմնում իր զաւակի յիշտակին։

Երկու թոշակ ևս հիմնվումէ Խաչատուր Դեկեննեսնցի յիշտակին։ Խաչատուր Լազարեանի ամուսին՝ տիկին Կատարինէ Լազարեանի կատակի համաձայն ևս հիմնվումէ 5 թոշակ։ Այժմ էս այժմ Լազարեանցների սաների թիւը հասնում է 60, առանց եկեղեցական կոչուած 20 սաների։

Լազարեան Շեմարանում հայոց լեզուի և կրօնի դասաւանդութիւնը միշտ խնամքով է առաջ տարուած։ Այս կողմից Շեմարանի նախկին գասախօսներից մանաւանդ յիշելու է Ալամզարեանին, Ալանթեանին, Էմինին, Սազարեանցին և Վ. Մուրեանցին, որոնք նշանաւոր ծառայութիւններ են արած Շեմարանի կրթական գործին։

Քառասնական թուականներից մինչև այժմ եղել են և մասնաւոր նուիրաբերութիւններ, որոնց տոկոսներով մօտաւորապէս 20 սաներ են կրթվում Շեմարանում։ Այդ նուիրաբերներն են՝ Գասպարեան, Մնացականեան, Իշխան, Արդութեան-Երկայնաբաղուկ, Թամամշեան, Հայրապետեան, Ամիրեան, Էզիլսամեան, Գաբրիէլ Քանանեան և գորեցի Տէր-Յակոբեան։

Երեք հարիւր հազարով բացած զպրոցը, որ սկզբում կրթում էր 30 հայ որբ մանուկներ, այժմն ունի 900,000 ոռոբլի գրամագլուխ և մօտաւորապէս 300 աշակերտ, որոնցից 200 դիշերօթիկ է, իսկ 100-ը երթևեկ։ 75 տարուայ

ընթացքում աւարտել էն 1,500 հոգի, որոնց սառւար մեծա-  
մասնութիւնը անտարակոյս հայեր էն և ոչ միայն Ոռուսաստա-  
նից, այլ նաև Պարսկաստանի, Տաճկաստանի և Հնդկաստանի  
սահմաններից: Առցանից առաջացել էն յայտնի հայ զբաղէտ-  
ներ, մատենապիրներ, եկեղեցականներ. նցն իսկ այժմ մեր հա-  
սարակական և կրթական ասպարիզներում գործողների մէջ  
պատուաւոր թիւ էն կազմում Ղաղարեան Շեմարանում  
ուսումնաւարտները: Ուստի ինքնին պարզ է, որ Ղաղարեանց  
տոհմի տուած օգուտները հայ աղջին բաւականին մեծ և  
պատկառելի են: Ղաղարեան Շեմարանը բաց արեց հայ մա-  
տազ սերունդի տուաջ զիտութեան մի ընդարձակ ասպարէզ  
աղջի համար պիտանի և օգտակար անդամներ պատրաստե-  
լով. նա հետաքրքրութիւն զարթեցրեց գէպի հայ լեզուի,  
հայ պատմութեան և զրականութեան ուսումնասիրութիւնը,  
մեծապէս նպաստեց ազգային կրթութեան և լրւսաւորութեան  
գործին, և վերջապէս նա բարձրացրեց հայ մարզու արժա-  
նի և գովելի յատկութիւնները օտարների առաջ:

Մոսկուայում անցեալ հրկո. 24-ին կայացաւ մեծ շքով  
Ղաղարեան Շեմարանի հօթանատուն հինգտմեակի հանդէսը:

Շեմարանի այժմեան վերատեսուչ՝ Մեծ. Պ. Գէորգ Քա-  
նանիանը՝ իր ընդարձակ ճառի մէջ, որը նա կարգաց այդ  
օրը, նկարագրեց Շեմարանի 75 ամեայ դործունէութիւնը,  
յաջող կերպով ցոյց տալով Շեմարանի այն ահաղին բարոյա-  
կան նշանակութիւնը, որ նա ունեցել է և ունի այժմ: Սորա-  
նից յետոյ խօսեց Շեմարանի հայ լեզուի ուսուցչապետ Պ.  
Գր. Խալաթեանը և յայտնեց, ի միջի այլոց որ Ղաղարանի ուսա-  
նողների թիւը յանգում է 27-ի և թէ Շեմարանի Ղիկէօնում տե-  
ղի է ունենում երեկոյեանները գասախօսութիւններ, որոնց նպա-  
տակն է միջոց տալ անխտիր ամեն մի մասնաւոր մարզու լսել  
և սովորել արևելեան լեզուները և զրականութիւնը:

Շեմարանի 75 ամեակի մասին ստացուել էր զանազան շնոր-  
հաւորական ուղերձներ և հեռագիրներ, ամենուրեք գտնուող  
Շեմարանի հայ և ոռւս սաներից, Պ. Բուրգի համալսարանից,  
Եջմիածնի Շեմարանից, Խոր. Խախիջեանից և այլ հայաբնակ  
քաղաքներից ու բարձրաստիճան անձերից և հիմնարկութիւնն-  
երից:

# ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա

## ԱԴԵՂԻ ԵՐԳԸ

Բարձր, ձիւնոտ սար կայ դաշտում,  
 Դաշտի միջին—սիրուն աղջեկ:  
 Երբ լուսնեակը ծագաւ սարում՝  
 Վաջը հեծաւ ձին զեղեցիկ:  
 Սփսոն աչեր՝ ինչպէս երկինք,  
 Սփսոն հասակ՝ ինչպէս եղնիկ:  
 Վըշեց եկաւ դաշտին հասաւ.  
 Հայ աղջրկան թամբին առաւ,—  
 Սստղոտ գիշեր՝ ինչպէս աչեր,  
 Սնուշ հովեր—կուսի մաղեր:  
 Սփսոն աչեր՝ ինչպէս երկինք,  
 Սփսոն հասակ՝ ինչպէս եղնիկ:  
 Բարձր ձիւնոտ սար կայ դաշտում,  
 Դաշտի միջին—սիրուն աղջեկ,  
 Սռաւօտը մայրն է զարթնում,—  
 Զկայ իրան սիրուն Սստղեկ...  
 Սփսոն աչեր՝ ինչպէս երկինք,  
 Սփսոն հասակ՝ ինչպէս եղնիկ:

1890. Մոռկվա.

Բ

## ԳԵՂՉԿՈՒՅՈՒ ԵՐԳԸ

Բարձր սարին հաւ չի հասնում,  
 Սիայն անուշ հով է փշում;  
 Իսկ այն բարձրում աստղերու հետ  
 Լուսաւորչայ վառ է կանթեղ <sup>\*)</sup>):

<sup>\*)</sup> Ժողովրդական աւանդութիւն կայ, որ Արագածի վերայ  
 միշտ լառ կախուած է Ա. Գրիգոր Լուսաւորչի կանթեղը:

Մատաղ հոգուդ, սրտոտ աղբէր,  
Այն կանթեղը՝ քեզ թուր ու թե  
Սարի կրծքում լիքն է ակներ,  
Այդ ակները—աղբիւրներն են.  
Ակն ու աղբիւր՝ իմ քաղցր աղբեր  
Փափադ պատիս շողն ու ցողն են:  
Երնէ՛կ, աղբէր, քեզ սիրողին,—  
Վ'րբ կըհասնիս քո մուրաղին:

Հարաւ կողմից ամպ է դալիս,  
Ամպ է գալիս, տերև դողում,  
Խըփուելով է զանգակ—ծաղիկ,  
Աքաղաղն էլ շատ է կանչում \*)  
Ենձրև կուգայ—ոսկի կուգայ,—  
Իմ աղբէրս նւր է չկայ:

Լուսոյ աստղը հէնց դուրս եկաւ—  
Սրտոտ քաջը ալ ձին հեծաւ.  
Օարկեց քաշեց,—իախտւ տաք ձին,  
Կռուի գնաց կէս զիշերին:  
Երնէ՛կ, աղբէր, քեզ սիրողին,—  
Վ'րբ կըհասնիս քո մուրաղին:

Խաղար չկայ հեռու տեղից,—  
Քաջի սրտում դադար չկայ,  
Վաղուց է որ կտրայ քնից,—  
Մեր թշնամուց հանգիստ չկայ.  
Վաղուց է որ կտրայ քնից,  
Խաղար չկայ հեռու տեղից:::

Թուկվա. 1890. Հոկտեմբեր.

Յովհաննէս Կոստանէտանց.

\*) Այդ բոլոր նշանները ժողովրդի հասկացողութեամբ անձրէն գուշակում:

# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ԼԵԶՈՒ ԿՏՐՈՂ

(ՃՇԴԻՑ ԱՆՑՔ ԺԳ ԴԱՐՈՒ)

Մուֆարղինը \*) Փոքր Սսիայի մէջ էր, իսկ Փոքր Սսիան տաճիկների ՝նոյինի \*\*) իշխանութեան ներքոյ էր: Որովհեաւ նոքը ՝նոյինը անձամբ կարող չէր իւր բազմաթիւ դաւառները, քաղաքները և աւանները կառավարելու, այդ պատճառաւ ամեն տեղ նա խաներ \*\*\*): Էր կարգել: Խաների պարտաւորութիւնն էր ամեն տեղ արթուն հսկել ժողովրդի անդորրութիւնն և բարի վարքի վրայ. իսկ ժողովրդի բարի վարքը կայանում էր մի թեթև պարտաճանաչութեան մէջ, որ է ճանաչել ՝նոյինին իրեւ մի անմեղանչական արարած և քննութեան առարկայ չգարձնել ոչ նորա տուած օրէնքները, ոչ նորա կենցաղը և ոչ գաւանած կրօնը: Հասկանալի է, որ այսպիսի կառավարութեան ներքոյ, ուր սակաւ էր հպատակների պարտաւորութիւնը, շատ դիւրին էր նոյցա երջանիկ օրեր վայելելը: Եւ իլոււ որ որի՞ն ինչ հարկաւորութիւն ՝նոյինի օրէնքի և կրօնի մէջ խառնուել թուղ իւր համար, սիրաը ուղածի պէս, կենայ իւր հարէմում և օր ու գիշեր աղօթք անէ իւր մզկիթում, միայն թէ հպատակների կեանքը և ապրուսոր ապահով լինի ամեն տեսակ վտանգներէ:

Մուֆարղինի խանը, ՝նոյինի հրամանը ճշգիւ կատարելու համար, մի քանի խելօք մարդիկ իւր մօտ հրաւիրեց և կամեցաւ նոյցա մէջից ընալիկ մի վերակացու, որն ամեն ծակ ու

\*) Առ-Քարղանդան Հայաստանի բազմամարդ քաղաքներից մինն էր. այժմ աւերակ է.

\*\*) ՝Նոյին մուղալների (մօնդոլ) կայսր է նշանակում: Տաճիկ ասելով հայ ժողովուրդը միշտ հասկացել է մահմետականութիւն դաւանող ժողովուրդ:

\*\*\*) Խան ասելով մօտաւորապէս պիտի հասկանալ այն, ինչ որ մէնք գուրեն աթօռ ենք ճանաչում:

ծուկ մանելով, արթնութեամբ հսկէ Նոյինի օրէնքի ձիշտ կատարման վրայ: Եւկան Ելին, Մուսթաֆան, Եազուբը, Երդիւլահը և նոցա հետ միասին եկաւ նաև Կարապետը: Խանը նայեցաւ նոցա երեսը, աչքերը (իրեկ մի փոքր հողեբան էր նա), ի՞նչ տսես զրոյցներ ու կատախներ արաւ. նոցա հետ և վերջ ի վերջոյ Կարապետին յարմար գտաւ վերակացութեան պաշտօնին, վստահ լինելով՝ որ նա ծշդիւ կ'կատարէ նորա հրամանը, այսինքն՝ Նոյինի պատուին և գաւանած կրօնին ամրակուռ ասպար կ'լինի երեւելի և աներեցիթ թշնամեաց նետերի դէմ:

Եմենքը ուրախ էին Կարապետի ընտրութեանը, և իրանց մէջ այսպէս էին խորհում՝ «Ի՞նչ կուղէ լինի, Կարապետը մեր ազգակիցն է, մեր հաւատակիցն է, մեր եղբայրն է. ի՞նչպէս կարելի է որ նա մեզ նեղացնէ, մեզ հալածէ և կամ մեր անգիտութեամբ կատարած սխալները երբեմն չվարագուրէ և մեզ փորձանքէ չազատէ»:

Իայց այս պարզամիտաների հաշիւները և յօյսերը փշրուեցան այնպէս, ինչպէս որ խարխուլ մակոյկը, ժայռին դիպչելիս, փշրվում ու վլատակվումէ:

Հէնց պաշտօն ստացած օրից Կարապետը այսպիսի օրէնք հրատարակեց, — «Ով որ ուղղապէս կամ անուղղապէս մեր վեհափառ Նոյինի տուած օրէնքների, դաւանած կրօնի և մասնաւոր կեանքի վրայ բան խօսէ, խորհէ կամ գործէ խսկոյն նորա լեզուն կ'կտրուի»:

Ըուածին նուագ հայերի վրայ սարսափ եկաւ այսպիսի խիստ և անդութ օրէնքէն: Իայց յետոյ կամաց կամաց հանգստացան նոքա, ասելով իրանց մէջ՝ «որի՞ս ինչ հարկաւորութիւն Նոյինի օրէնքի և գաւանած կրօնի վրայ խօսելու. մի՛թէ խօսելու ուրիշ բան չըւնինք»: Վասցին և իրար խօսք տուին Նոյինի մասին ամենելին խօսք չբանալ, և հանգստացան:

Իայց, աւաղլ նոցա անդորրութիւնը գորանով չապահովուեցաւ. վասն զի Նոյինի հաւատարիմ ծառայ Կարապետը իւր ջերմեռանդութիւնը այն աստիճանի հասցուց, որ 1290 թուին ամբողջ Մուֆարղինում ոչ մի մարդ չի կար, որի բերանի մէջ լիզու լինէր, բոլորինը կտրած էր:

Իանը այսպէս էր պատահել: Խռանդոտ Կարապետը փողցներում ու հրապարակներում շրջելիս և կամ ընտանիքների

և եկեղեցիների մէջ մանելիս, միով բանիւ՝ ուր և կամեցելէ, բռնելէ մարդոց օձիկը և այսպէս դատաստան է կատարել:

— Մարկոս, ինչո՞ւ հս ուրախ և ծիծաղում ես. երեխ լսել ես, որ վեհափառ Նոյինի քաջ զօրքը յաղթելէ թշնամիներին, և այդ ընդհանուր յնծութիւնը ուրախութիւնով լցնումէ քու սիրտը: Դահի՛ճ, կտրէ՛ Մարկոսի լեզուն:

— Կիրակոս, ինչո՞ւ հս տրումած. երեխ լսել ես, որ վեհափառ Նոյինի քաջ զօրքը յաղթելէ թշնամիներին, և այդ ընդհանուր յնծութիւնը քեզ վեշտ է պատճառում: Դահի՛ճ, կտրէ՛ Կիրակոսի լեզուն:

— Սիմեօն, ինչո՞ւ հս տաղեր կրկրացնում և բլբուլի կարուը վարդէն երգում ես. երեխ բլբուլ ասելով գու քու ազգն ևս ճանաչում և վարդ ասելով՝ քու հայրինի հողն ես ենթագրում: Դահի՛ճ, կտրէ՛ Սիմեօնի լեզուն:

— Տիրացն Դաղար, ինչո՞ւ ձեռքումկ թուղթ ու գրիչ ունիս, երեխ մեր վեհափառ Նոյինի վրայ վատ բաներ պիտի զրիս: Դահի՛ճ, կտրէ տիրացն Դաղարի լեզուն՝

— Օմրուխտ, ինչո՞ւ երեխայիդ հայի տաղերով ևս քնեցնում երեխ նորա ականջին փսխում ես վեհափառ. Նոյինի դէմ ապստամբական խորհուրդներ: Դահի՛ճ, կտրէ՛ Օմրուխտի լեզուն:

— Պատունիկ (ութը տարեկան մանուկ) ծտի վրայ ինչո՞ւ քար ևս ձգում. երեխ այժմէն իսկ վարժվում ես վեհափառ. Նոյինի վրայ նետ ու տէզ արձակելու: Դահի՛ճ, կտրէ՛ Պատունիկի լեզուն:

— Գրիգոր, ինչո՞ւ ալաման Միլէոի և ինզիլ Սիւալսնի հետ խօսում ես. երեխ նոցա համակրութիւնն ուզում ես որսալ որ նոքա քեզ օգնեն Նոյինի դէմ նշկահելու: Դահի՛ճ, կտրէ՛ Գրիգորի լեզուն ևայլն, ևայլն, ևայլն:

“Նոյինի ականջին հասաւ Կարտապետի ծայրայեզ ջերմեռանդութիւնը Կարտապետի կուրծքը զարդարուեցաւ տեսակտեսակ նիշաններով և նորա թոշակը շատացաւ:

Լեղու կարող Կարտապետի ապրուստը թէ՛ ներկայումն և թէ ապագային ճոխ ու ապահով դարձաւ. նորան ի՞նչ փոյթ, որ Մուֆարդինի քնակիներու լեզուն կտրած էր:

ՈՒ-ԼԵ-Լ:

## ԱՆՑԱԾ ԳՆԱՑԱԾԻՑ

ՄԱԿԱԿԱՆ ՅԱՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՊԱՏՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԹԻւրքահայերի կեանքից):

Ի հարկե, շատ տարիներ չեն անցել այն օրերից, բայց որքան հեռաւոր, Տէր Աստուած, որքան հին է թվում ինձ այն ամենը, և որքան փոքր էի ես այն ժամանակ, — այնքան փոքր, որ հիմայ երեակայել անդամ չեմ կարող...

— «Իմ խեղճ, խեղճ փոքրիկս, կրկնում էր միշտ մայրս, սիրով սեղմելով ինձ իւր կրծքին, և հս զգում էի, որ խսկ որ խեղճ եմ:

Տանեցիք բոլորը, տատս էլ մայրիկս էլ Վանէս էմին էլ, բոլորն էլ սիրում և փայփայում էին ինձ, ամեն մէկը իւր տեսակ: Տատս ամեն օր զբաններս լիքը լցնում ուղնում էր ընկուղով և չորացրած տանձ—խնձորով՝ կրկնելով միշտ միենցն խրառը.

— Խելօք եղիք, մանչս, մայրիկիդ մի՛ նեղացնիր:

Խսկ կիրակի օրերը, առաւօտ վաղ, արեգակը չը ծագած, նա վեր էր կացնում տեղիցս, երեսս մի լաւ լուանում, մազերս սանրում, կոկում, նոր («պատարոց», ինչպէս նա ասում էր) շորերս հաղցնում և ձեռիցս բռնած, իւր հիտ եկեղեցի էր տանում: Խս էլ զբաղով այգալիսի գէպքերի բոլոր հանդիսաւորութիւնը, աշխատաւում էի ինձ պահել ամենայն համեստութեամբ: Ես հանդիսաւ գնում էի տատիս կշաից, պինդ բոնած նրա ձեռքը, զբացիների շներին տնալ չէի անում, ճանապարհին պատահած ցելսի լջակների մէջ մաքուր կօշիկ-ներս չէի լուանում, այլ զգուշութիւնով չոր տեղ էի որոնում ուս զնելու համար և երբ եկեղեցու բակում մեզ պատահում էին մեր բարեկամները ու մի բոպէ կանգնեցնում էին

տատիս, նորան բարի լըս ցանկալու և առողջութեան ինչպէս լինելը իմանալու, —ամենքն էլ կարծես առաջուց խօսք արած, աւելացնում էին.

— Կազմու խաթուն, այդ ի՞նչ «աղա» մանչ ունիս դու:

Մայրիկս, երեկոները, երբ պառկեցնում էր ինձ քնելու, ինքն էլ մտնում էր ինձ հետ իմ փոքրիկ վերմակիս տակ, սեղմում էր երեսս իւր երիսին, և մեղմ ձայնով երկար, շատ երկար, երդում էր հին, տխուր երգեր: Եւ ես այնքան հանդիստ, այնքան խաղաղ քնում էի այդ՝ մայրական ջերմ սիրով լի օրօրի տակ:

Դսկ Վանէս էմին ինձ համար փայտից սուրեր և դաշյններ էր շնուռմ, և խոստանում էր, որ երբ ես մեծանամ, նա կառնի մի լաւ խէնջար ուստայ Արմօնի խանութում և այդ խէնջարով ես կ'սպաննեմ թուլքերին: Ես մեծ անհամբերութիւնով սպասում էի այդ ժամանակին և ամեն անդամ հարցնում էի, թէ արդեօք շատ է մնացել ինձ մեծանալու: Վանէս էմին ոչինչ չէր պատասխանում:

Պէտք է ասած, որ Վանէս էմին երկար խօսել չէր սիրում և հարկաւոր եղածին մի երկու բառով յայտնում էր իւր միտքը ու գարձեալ լուռմ, իսկ շատախօսներին ցաւի պէս ատում էր, ասելով, որ երկար լեզուն ինելքի կարծութեան նշան է: «Նորա սեփական լեզուն մի քիչ բացվում էր, երբ սկսում էր պատմել «անպիտան» թուլքերի չարագործութիւնների մասին...»

Ես շատ լաւ յիշում եմ Վանէս էմուն, նրա կարճ հասակը, պինդ, կոշտ «քութուր» կազմուածքը, լայն ուսերը, գուլս ցցուած մաղոտ կուրծքը, որ կիսով չափ բաց էր լինում դարուն և ձեռո, ես յիշում եմ նորա քամուց և արևից այրուած երեսը նորա խիստ ունկները, որ կարծես մնայլ ամպերի նման իջել կիսուել էին նորա կրակոտ աչքերի վրայ, յիշում եմ նրա պինդ սեղմած շրթոնքները, որոնց վերայ ոչ ոք ոչ մի ժամանակ ժպիտ չէր տեսած, յիշում եմ ճակատի և հաստ վզի խոր կնճիսները և մի աշազին սպի, որ տարածվում էր լայն ճակատից մինչեւ ձախ ականջը և կորչում էր «քիւլէցի ծալքերի տակ: Յիշում եմ նոյնպէս նորա կարծ, ծուխից և ժամանակից սեացած չերտուսը, որ նա երբէք չէր զցում ձեռքից և անդադար լցնում էր կծու թութունով:

Վենք սիրում և յարգում էինք Պանէս Էմուն, թէև մի քաղցր խօսք լսած չէինք նորանից, ընդհակառակը, նա ունէր շատ ընտիր հայհյանքներ և տեղը եկածին ամենենին չէր խնայում և մեծ վարպետութիւնով գործէր ածում իւր պինդ պինդ խօսքերը: Պանէս էմին ծնուել և մեծացել էր մեր տան մէջ. պապիս ծառան և միւնցն ժամանակ տուածին բարեկամն ու խորհրդակիցն էր եղել: Պապիս մահից յետոյ, նա մհացել էր լիակատար տէր մեր այն ժամանակուայ ահագին հարսառութեան և տամնամեսյ հօրս միակ դաստիարակ: Եյս վերջին զործը նա կատարել էր ամենայն սրբութեամբ ինչպէս ինքը միշտ կրկնում էր, բեկոր ոլորելով: «Նորա խօսքով, իւր փոքրիկ աղայից նա կատարեալ «հայքրիստոնեայ» էր շինել: Նոհնք, կրօնի մասին ինքն էլ շատ խոր տեղեկութիւններ չուներ և բաւականացել էր նորանով միայն, որ «այր մեր»ը առանց կանդ տռնելու սկզբից մինչեւ վերջը կարող էր ասել և հաստատ գիտէր, որ Քրիստոս հայ էր, իսկ նորան հալածողները «անհաւաս» թուրքերն էին: Երբ եկեղեցու կոչ նակի ձայնը լսում էր, աչքերը երկինք էր բարձրացնում և ջերմեւանդութեամբ խաչակնքում երեսը, տէրտէրին տեսնելուս, վեր էր կենում ուրքի և «օրհնեան, տէր» էր ասում, իսկ մահմեդականին պատահելիս, երեսը շուռ էր տալիս և թքում: Եհան նորա բոլոր կրօնը: Խսկ «հայքրիստոնեայ» ասելով նա մի քիչ ուրիշ բան էր հասկանում: Նորա խորին համոզունքով—քրիստոնեայ՝ ասելէ թուրքին ատող և որքան մի մարդ աւելի է ատում թուրքին, այնքան մէծ է նորա քրիստոնէական ջերմեռանդութիւնը: Եյս կողմից, հայրս դուցէ Պանէսից յետոյ միայն իրան էր առածին քրիստոնէան համարում աշխարհիս երեսին:

— Ի՞նչպէս ես կարծում, Պանէս, մենք գեռ երկար պիտի ծառայենք այս անհաւատներին, հարցնում էր միշտ հայրս և ոչնչ պատասխան չտանալով, աւելացնում էր՝ թէ ինձ հարցնելու լինիս, ես զգում եմ, որ այլ ես համբերելու ոյժ չունիմ և մի գեղեցիկ առաւօտ սուրբ ձեռիս կերթամ աղասութիւն ճարելու... միտդ պահիր ասածս, մարդ չեմ լինի, եթէ չանեմ: Եյս, կը տեսնիս...

Բայց Պանէսը գարձեալ ոչինչ չէր պատասխանում և

լուռ ծծումէր չեթուիր: Իսկ հայրս միշտ նոյնն էր կրկնում:  
Վարչապէս Վանէսը մի անդամ ասումէ.

— Սպասենք մինչև գարուն:

Դեռ ձիւնը չէր վերացել դաշտերից, երբ հայրս նստումէ ձին և ուր որ է գնումէ: Եմբողջ վեց շաբաթ նա չէ երեսում վերջապէս մի մաւթ զիշեր վերադառնումէ տուն և հետք բերում խուրջնի մէջ պահած ամեն տեսակ զէնքեր. միւս առաւօտ վաղ նա գարձեալ գնումէ և զիշերը դարձեալ զէնք բերում, այսպէս կրկնվումէ շարունակ մի քանի օր: Օչէնքերը նա Վանէսի հետ միասին թաքցնումէ մեր մեծ մարտգում առաջի տարուանից մնացած խոտերի մէջ: Վանէս էմին էլ իւր կողմից լուռ և մունջ պատրաստվումէ մի խորհրդաւոր բանի. նորա մօտ գալիս գնումէն շրջակայ զիւղերից անձանօթ մարդիկ. Վանէս էմին փակվումէ նորանց հետ մի ջոկ սենեակում և ոչ ոք չը դիտէ, թէ՛ ինչը էին խօսում նորանք այնտեղ երկար ժամերով...

Յանկարծ մի կիրակի առաւօտ քաղաքից գալիսէ մի ձիւաւոր, բերումէ փաշայից մի թուղթ, որով նա հրամայումէ հօրս խոյն գնալ քաղաք իր մօտ: Հայրս դուրսէ գալիս եկեղեցու հրապարակը, հրամայումէ տալ կոչեակը և երբ բոլոր զիւղը դուրսէ թափում հրապարակ, նա ճղում՝ երկու կէս է անում փաշայի հրամանադիրը, նետում թղթի կտորները բերողի երեսին և ասումէ.

— Վանա և ասա՞ քո փաշային, որ այս օրից սկսած ես չեմ ճանազում նորա իշխանութիւնը և թքումէմ նորա հրամանների վերայ:

‘Նոյն խիկ օրը տասն և երկու շրջակայ հայ զիւղերում ասպստամբում են թուրք կառավարութեան դէմ: Գիւղացիք չորս կողմից հաւաքվում են մեր զիւղը, ամրանում մեր տան մէջ, զինուորուած՝ ով ինչով կարողացել է: ’Նրանց մէջ եղել են նոյնապէս և կանչըք, մի քանիսը շորերը փոխած, միւսները իրանց շորերով: Վանէս էմին ամենքին տալիս է զէնք և վառօդ, նա լուռ էր ամբողջ օրը և իր անհրաժեշտ չերուիր ատամներում պինդ սեղմած, շրջումէր ապստամբողների շարքերում: Մի անդամ միայն, երբ նա անցէ կենում մի մասաղահաս կնոջ մօտով, որ սրումէ եղել հասարակ քարի

վերայ իր խէնջարը, նա կանգէ առնում և տրտասանումէ այդ օրը առաջին և վերջին բառը.

— Եպրիւ:

Իրինապահին հասնումէ քաղաքից ուղարկուած ձիաւոր զօրքի գունդը և սկսվումէ սարսափելի կոտորածը: Սպասամբուոնիրը կոռւել են այնպէս, ինչպէս կարող են կոռւել միայն նրանք, որոնք կեանքի, պատուի և սեփականութեան իրաւունքները պաշտպանելու համար են դիմում զէնքի: Առոտորածը շարունակվումէ ամբողջ գիշերը: Դիւզացիք սպանուել են առաջինից մինչեւ վերջինը: Ճօրս, որ արգէն կիսամեռ արիւնի մէջ կորած էր անթիւ վերքերից, կախում են մեր դարբասի տուաջ բուռնող բարդիի ճիւղերից: Անէս էմին մի խումբ տղամարդոց հետ միասին մինչեւ առաւօտ պաշտպանումէ տան զիսաւոր գուռը. լուռ և մունջ, շրթունքները պինդ սեղմած՝ աջ և ձախ հասցնումէ նա մահացու հարուածներ և նորա արիւնաշաղաղ սուրի իջած տեղը զետին է զլորվում թուրքի զլուխը և նա աւելի ևս սինդ սեղմումէ շրթունքները և նորից բարձրացնում սուրը, որ նորից գետին զլորէ մի անօրէնի զլուխ: Նա տեղից չէ շարժվում մինչեւ անզամ այն ժամանակ, երբ դարբասի կողմից հասնում են նորան հօրս կախող թուրքերի վայրենի աղաղակները: Աերջապէս, նա ևս ընկնումէ: Խուրքերը կոարում են գուռը ներս են լցվում տուն, թալանում են, ինչ որ կարողանում են թալանել իսկ մնացածը կրակ են տալիս, վառում:

Ես, որ մի քանի ամսական երեխայ էի, շատ հեռու էի այդ ժամանակ մեր տանից: Խնձ տատիս հետ միասին ուղարկել էին մի հեռու դիւղ մեր բարեկամների մօտ: Մօրս էլ աշխատել էին հեռացնել մեզ հետ, բայց նա անպատճառ ուղեցել էր մնալ տանը, իւր մարդու մօտ, և այդ գիշերուայ բոլոր զարհուրանքներին ականատես էր եղել: Միւս օրն, տուաւօտ վաղ մեր ծեր տէրտէրը, որը ով զիտէ ինչ հրաշքով աղատ էր մնացել այդ գիշեր թուրքի սրից, որ ոչ տարիք և ոչ կարգի սրբութիւն է ճանաչում, թաղել էր հօրս մարմինը և զիւղացիների դիակների տակ գտել էր վերքերով ծածկուած, բայց զեռ կինդանի, Անէս էմուն:

Եյս ամենը ինձ յայտնի եղաւ շատ տարիներ անցած:

Վարջը ես իմացայ նոյնպէս, որ Պոլիս գտնուող մեր ինչ  
որ է նշանաւոր բարեկամների օգնութիւնով, մեզ յաջողուել էր  
իրաւունք ստանալ նորից բնակուելու մեր աւերտած և կո-  
ղոպտուած պապական տան մէջ առողջացած Վանէս էմու  
հետ միասին: Խոկ այն ժամանակ, որի մասին պատմում եմ,  
ես ոչինչ չը զիտէի: Գիտէի միայն, որ մի ժամանակ մենք  
հարուստ ենք եղել շատ հարուստ, որ այդ հարստութիւնը  
թուրքերն են խլել զիտէի, որ ես հայր եմ ունեցել, որի ա-  
նունը մայրս առանց արտասուքի չէ կարող յիշել զիտէի որ  
թուրքերը «անօրէն» են, և ինչքան որ ոյժ ունէր իմ փոք-  
րիկ սիրոս, առում էի նրանց:

Մեր կեանքը շատ անշուք էր: Մայրս առաւօտները խո-  
հանցումն էր զբաղուած, իսկ էրեկոները մեր շորերն էր կար-  
կատում: Տատս ամենքիս համար ձմեռուայ տաք գուլըայ էր  
գործում: Վանէս Էմին աշխատում էր այդում: Նրեկոները  
նա վեր էր առնում իւր սե մահուտից մաշուած թութունի  
քիսան, գուրս էր գալիս փողոց, նստում էր քարէ նստարանի  
վերայ, որ մեր տան առաջ բուսնող մեծ բարդիի տակին էր  
զրած և լուս ծխում էր: «Նորա մօտ հաւաքվում էին զիւղա-  
ցիները, գանգատվում էին իրանց հարևաններից, պատմում  
էին իրանց ցաւերն ու գարդերը, խորհուրդ էին հարցնում:  
Վանէս Էմին կամ լուսում էր, կամ կարճ, միավանկ պատաս-  
խաններ տալիս: Իսյց, զարմանալի բան, նորանից ամենքը  
հեռանում էին հանգստացած, բաւականութիւն առած և եր-  
բէք չէին նեղանում ծերունու կոպտութիւնից: Երբ բոլորո-  
վին մթնում էր, Վանէս Էմին հաւաքում էր իր թութու-  
նը, ներս էր գալիս, կողպում էր դուռը և մենք նստում էինք  
ընթրիք անելու: Ընթրիքի ժամանակ տատս, որ շատ սի-  
լում էր երկար ու բարակ զրցյաներ անել պատմում էր իւր  
անվերջ պատմութիւնները հին բարի ժամանակներից: Իսյց  
Վանէս Էմին մէծ մասամբ լուռ էր լինում: «Նա ժամանակ  
առ ժամանակ աչքերը բարձրացնում էր ինձ վերաց և յետոյ  
կամաց շարժում զլուխը:

— Եյդ ի՞նչ մոքերի ես գու միշտ, Ոռոքէն, հարցնում  
էր նա ինձ:

Ես ոչինչ չէի կարողանում պատասխանել, որովհետեւ ինքս  
«Արաքս»

էլ ըստ գիտէի, թէ ինչ մոռքերի եմ: Ես մի տարօրինակ տղայ էի: Միշտ լուռ, միշտ լուրջ, մտածկոտ, հիւանդոտ և զգայուն ի բնէ—ես չէի սիրում խաղեր անել ինձ հասակակից երեխաների հետ, ես աւելի սիրում էի մեծերի խօսակցութիւնները լսել: Երբ մեր տունը հիւրեր էին հաւաքվում և անսովոր աղմուկ և շարժում էր բարձրանում մեր միշտ լուռ բնակարանում, ես փախչում էի տանից և աշխատում էի մի տեղ թաք կենալ. իսկ եթէ գտնում ու բերում էին ինձ հիւրերի մօտ, սկսում էի լաց լնել: Ես քիչ էի խօսում և ձայնս մեղմ և խղճալի էր: Ես սիրում էի թափառել մեր աշագին, ժամանակից և հրդէհից քանուուած աւերուած տան անվերջ անհամար (ինչպէս ինձ այն ժամանակ թվում էր) սենեակներում: Կյդ սենեակները զարմանալի կերպով շինուած էին. մինը բարձր, միւսը ցածր, ամեն մի քայլափոխին մի քանի սանդուխտ վերև կամ ներքև, երկար և նեղ անցքերով, խորհրդաւոր խուցերով, մուլթ մուլթ անկիւններով, և այս ամենը այնպէս յարմարեցրած, որ ոչ վերջ կայ, ոչ սկիզբ: Կարելի էր ամբողջ օր անցնել սենեակից սենեակ և ըստնել ծայրը, որովհետեւ բոլոր սենեակները միմեանց հետ կից էին և մի անվերջ շրջան էին կազմում: Կյդ տունը ինձ համար մի հասարակ տուն, մի անշունչ առարկայ չէր, նա կենդանի էակ էր, մտածող հասկացող զգացող: Նորա ամեն մի անկիւնը ունէր իւր սեփական գէմքը, իւր առանձին բնաւորութիւնը: Ես նորա հետ խօսակցութիւններ էի անում, ես հասկանում էի նորա լեզուն, ես սիրում էի նորան:

Ես ամբողջ ժամերով մնում էի նստած մի որեւէ անկիւնում, հետեւելով, թէ ինչպէս ճանճը լնինում է սարդուկի ոստայնը, ինչպէս յուսահատ բզզում է այնտեղ և ինչպէս յարձակվում է նորա վերայ աւաղակ սարդուկը... Ես սկսում էի մտարերել այն բազմաթիւ պատմութիւնները, որ լսած էի թուրքերի մասին, որոնք Վանէսի ասելով «մեր արիւնը ջրի տեղ էն խմում» և սիրտս ձմբվում էր ցաւից:

Ես հետեւում էի, ինչպէս արեգակի շեղ ճառագայթները ներս են մտնում երկաթէ վանդակով պատած նեղ պատուհանից, պառկում են քարէ յատակի լայն սալերի վերայ և ինչպէս պայծառ քառակուսին քիչքիչ երկարանալով աւելի և

աւելի մօտենումէ դիմացի պատին և ինչպէս սկսումէ սողալ նորա վերայովք Խս նայումէի թէ ինչպէս լոյսի սիւների մէջ լողումէն բիւրաւոր, անվերջ փոքր, բայց պիծագծեղ փոշիներ, մէկ վեր բարձրանալով մինչեւ այն զիծը, որտեղ լոյսը բաժանվումէ խաւարից և մէկ էլ նորից սուղուելով լուսաւոր ծովի մէջ և ինչպէս նրանք յանկարծ խառնվում, տակն և վրայ են լինում ճանճից, որ մի բոպէ պտոյտէ տալիս լոյսի մէջ և խսկոյն անշետանում... Յետոյ ես փակում էի աչքերս: «Օտածկած աչքերիս առաջև ծանր սահելով անցնում էին պայծառ, հազար ու մէկ զոյնի՝ կարմիր, կապոյտ, գեղին, վարդագոյն բոլորակներ, շարք-շալպ, մինը միւսի հուեից: Նրանք խառնվում են միմեանց հետ, նորից բաժանվում աւելի ևս փոքրերի, շողշողում, փոփոխվում են մի նուրբ, մի անասելի նուրբ զոյներով... Եւ գարձեալ անցնում են անվերջ կարգերով, մինը միւսից գեղեցիկ, մինը միւսից հրաշալի, անցնում են հարիւրներով, հազարներով են անցնում և կարծես թիւ ու համար ըստ կայ նրանց...»

«Իշերները, երբ ամեն բան ընկղմուած էի լինում խոր քնի մէջ, սեփական երեակայութեանս ծնունդները, խառնուելով տատիցս լսած անթիւ հեքեաթների առասպելական հերոսների և վայրենի մուտուլմանների չարագործութիւնների տեսարանների հետ, մանկական ուղեղիս մէջ ստեղծում էին սարսափելի երաղներ: Խսյանկարծ արթնանում էի զիշերուայ միջին, սարսափած վեր էի թուզում տեղիցս, վազում էի տապահիս մօտ, որի հետ միասին մի սենեակում էի քնում և գեռ երկար ժամանակ չէի կարողանում հանգստանալ, երկար ժամանակ, սեղմուած բոլոր ուժովս նորա չորացած կրծքին, խուլ կցկտուր հեկեկում էի:

«Այց երեխն երազներս բոլորովին ուրիշ բնութիւնն էին ստանում: Խս տեսնում էի մի հրաշալի երկիր, արեգակի պարզ ճառագայթներով լցուած, տեսնում էի ամբողջ սարեր մարջանից և բիւրեղից, խոխոջուն աղբիւրներ, պարզ և մաքուր, որպէս մանկական առաջին արցունք: Տեսնում էի առասպելական ծառեր, վարդարուած կարմիր ոսկուց և գեղին սաղից ամենանուրբ պտուղներով... Եւ յանկարծ ինձ թվաւմ է, թէ ոտիս տակ բացվում է մի փայլուն, թափանցիկ անդունդ,

որի տակ, խոր, շատ խոր, երևումէ կապցա մաքուր երկնակամալը իւր անթիւ աստղերով, և ես ընկնում եմ, զլիսակոր ընկնում այդ պապղուն աարածութեան մէջ... Ես ամբողջ մարմնով լցում եմ մի հարբեցուցիչ գգուանքով, ամեն մի երակս զարկումէ մի ինչ որ է երկնային սիրով...

Ընցնումէին օրեր, ամիսներ և ես աւելի խոր կլանվում էի այս երազական աշխարհի ալիքներով:

Սովորական թմրութիւնիցս կարող էր հանել ինձ միայն Աշնէս էմին: Երբ ականջումն հնջում էր նորա խրոխա, ուժգին ձայնը, երբ ես լսում էի նորա կրակոտ խօսքերը, նորա անվերջ ատելութիւնով լի պատմութիւնները «անօրէնների» մասին, ես կարծես կեանք էի առնում; ես բորբոքվում էի նորա ատելութիւնով, զօրանում էի նորա զօրութիւնով և զգում էի ինչպէս սրտիս մէջ արթնանում և աճում էր վրէժ, արիւնալի վրէժ գէսվի հալածողները...

— Նանի, հարցնում էի ես մօրս, ի՞նչու Աշնէս էմին միշտ հայհօյումէ թուրքերին:

— «Որովհետեւ նրանք չար մարդիկ են: «Նրանք սպանեցին քո հօրը, երբ գու դեռ բոլորովին փոքր էիր:

— Ի՞նչու ուրեմն Ըստուած ստեղծելէ թուրքերին, եթէ նրանք այդքան վատ են:

— «Ըստուած նրանց ստեղծելէ մեր մեղքերը պատժելու համար:

Մի փոքր ժամանակ ես լուռ եմ մնում: Երեխայական զլիսումն վճռվում էն ծանր հարցեր: Ես չեմ կարող ըմբռնել որ Ըստուած, բարի, ողբրմած Ըստուած կամեցելէ մեզ այդպէս ծանր պատժել:

— Նանի, ասում եմ ես յանկարծ և պինդ սեղմում նորա ձեռքը, երբ ես մեծանամ և ուժեղ, շատ ուժեղ գառնամ, ես կսպանեմ բոլոր թուրքերին:

— «Եյո, այո, երբ մեծանաս... ուժեղ գառնաս, ասում է մայրս սաստիկ յուղուած ձայնով և սեղմում է ինձ իւր կրծքին:

— Դու լաց ես լինում, նանի, հարցնում եմ ես, զգալով երեսիս վերայ արտասուքի ջերմ կաթիներ, և աշխատում եմ բարձրացնել նորա երեսը, որ տեսնեմ աչքերը:

Բայց նա աւելի խոր թաղումէ երեսը շորերիս մէջ և  
այլ ևս չէ կարող զսպել արտասուքները, այն արտասուքները,  
որ երկար ու գառն տարիներով կաթել կաթել հաւաքուել  
դիզուել էին նորա սրտում:

— “Նանի՞”, խեղջ նանի, բացականչում եմ ես, դարդից և յուսահատութիւնից չը գիտենալով ինչ ասեմ, —ի՞նչու ես լալիս... մի՛ լար...

Եւ ես հազար համբոյներով ծածկում եմ նորա թաց երեսը, նորա չորացած ձեռքերը, ես խառնում եմ իմ արտասուրքները՝ նորա արտասուրքների հետ...

Բայց որտեղ գտնել այնքան արտասուբք, որ միանդամբց  
թափելով, կարելի լինէր հետացնել, հանգստացնել բազմա-  
միլիօն ժողովուրդի դարեւոր վիշտը. . . . .

Ես մօտ տասը տարեկան էի երբ մի նոր անբաղդութիւն  
պատահեց մեզ: Խօսքս Վանէս էմու մաշի մասին է: Նորա  
մաշը կարծես կայծակի հարուած էր մեր ընտանիքի համար:   
Թահպէտ նա վաղուց անցել կացրել հօթանասունը, բայց ժիր  
և առողջ էր: Մահից միայն մի երկու շաբաթ առաջ մենք  
սկսեցինք նկատել մի փոքր փոփոխութիւն նորա սովորու-  
թիւնների մէջ: Նա ամենայն առաւօտ և ամենայն երեկոյ  
գնումներ եկեղեցի և ծունկ չոքած աղօթումներ այնտեղ: Ե-  
րեկոնները գուրս չեր զալիս փողոց, այլ տանը նստած տիսուր  
արտում քաշումներ իւր չերուխսը, ոչ-ոքի չեր հայհոյում, չեր  
բարկանում և սովորականից աւելի լուռ էր: Եյս ամենը մեզ  
շատ զարմացնում ու վախեննումներ: Մենք զդում էինք, որ  
մօտենում է մի մեծ, հանդիսաւոր ժամ:

Վերջապէս, մի տաք, խաղաղ կրեկոյ—աշուն էր,—Վանէս էմին բռնեց ձեռից, դուրս բերեց զիւղից և մենք միասին դնացինք դաշտով:

— Ուուրէն, ասաց նա, երբ բաւականին արգէն հեռացել  
էինք զիւղից, լսու լսիր և աշխատիր միտոդ պահել այն, ինչ  
որ ես քեզ ասելու եմ այսօր: Դու փոքր չես: Քո տարողոց՝  
ես ինձ բոլորովին տղամարդէի զգում: Ուղիղէ ես քեզանից  
երկու անգամ հաստ և տասն անգամ ուժեղ էի: բայց այն ժա-

մանակ և գեռ ոչինչ չեի հասկանում, իսկ դու արդէն մեծ  
մարդու խելք ունիս:

‘Նա լռեց և սկսեց լընել չերուխը:

— Ես շուտով կը մեռնիմ, շարունակեց նա մի քիչ յետոյ,  
նշան+ ինձ այդ ասացին, իսկ նշան+ երբէք սուտ չեն ասում:  
Մահկց ես չեմ վախենում: Յաւում եմ միայն, որ չը կարո-  
ղացայ այս աշխարհում մի կտոր ազատ հող ձեռք բերել որ-  
տեղ թաղուէր մեղաւոր մարմինս և որտեղ թուրքի պիղծ  
ուար չը կարողանար խանգարել յաւխտենական քունս: Դու  
գեռ քիչ ես ապրել քիչ ես տեսել չես կարող լաւ հասկա-  
նալ ասածս: Ես չը զիտեմ, քանի ատրեկան եմ Մեր տէր-  
տէրը ասումէ, որ ութսունի մօտ եմ, և ես էլ կարծում եմ,  
որ այդ այդպէս պիտի լինի: Ութսուն տարուայ կեանքումն  
ես մի բան միայն սովորեցայ՝ ատել թուրքին: Ես ցանկանում  
էի ապրել զարձեալ ութսուն տարի, որ աւելի ես ատէի նո-  
րան: Եթէ ինձ կարելի լինէր Ճղել կուրծքդ և գնել քո սիր-  
ութ բոլոր ատելութիւնս,—ես այդ կանէի, թէպէտ և դորա  
համար ինձ հարկաւոր լինէր հրաժարուիլիմ տեղեցս երկնաւոր  
թագաւորութիւնում:

‘Նա պինդ խփեց պողպատը կայծաքարին, կրակ արեց և  
վառեց չերուխը:

— Լաւ լսիր, Ուուրէն, սկսեց նա նորից, և նորա ձայնը  
պղնձեայ փողի պէս հնչում էր ականջումն. այս երկիրը մի  
ժամանակ մեղ էր պատկանում: Զը կար այն ժամանակ ոչ  
սուլթան, ոչ փաշայ, ոչ նիզամ, ոչ զափտիայ և ոչ քուրդ:  
Նզատ մարդիկը վարում էին երկիրը և ազատ վայելում էին  
իրանց աշխատանքը: Միշտ առողջ, միշտ ազատ, երգերով  
գուրս էին դալիս նրանք դաշտը աշխատելու, երգերով առւն  
էին դառնում: Պազերը ասում էն, որ այն ժամանակ մարդիկ  
չը գիտէին, թէ ինչ է գարդը: ‘Իրանց տէրտէրնելը առանց  
երկիւղի բացարձակ աղօթում էին տաճարներում Ճշմարիտ  
Աստծուն և անհաւատների բերանը չը պղծում այն ժամա-  
նակ նորա սուրբ անունը: Իսկ եթէ անհանգիստ գրացիները  
միտք էին անում խլել նրանց ազատութիւնը, այն ժամանակ  
տղամարդիկ հեծնում էին ձիերը, գուրս էին գալիս դաշտ և  
իրանց կուրծքերով պաշտպանում էին ժողովուրդի իրաւունք-

ները: Եւ մեծ երջանկութիւն տիրումէր մեր երկրում... Բայց  
ուրիշ ժամանակներ եկան, սատանան նախանձեց մեր բարե-  
բախութեանը, իսկ Աստուծոյ սուրբ աջը վերցուեց մեր  
վրայից: Մուսուլմանների կատաղի խումբերը սրով և կրտ-  
կով անցան մեր երկիրը, մի ծայրից մինչև միւսը: Կրանք  
այրումէին, կոտորում թալանում... Պանաչ դաշտերը անա-  
պատ դարձան, շնչ քաղաքների և գիւղերի տեղ աւերակներ  
մնացին: Քաջերի սերունդը արդէն անցել անհետացելէր:  
Եւից և սարսափից ցնորուած մարդիկ մոռացան հայրերի ա-  
զատ կեանքը և անօրէն թուրքին նորայ դարձան:

Պանէս էմին կորեց խօսքը և սկսեց այնպէս սաստիկ  
քաշել չերուխը, որ կծու ծուխը ամպի պէս դուրս դալով  
բերանից պատեց նորա գլուխը:

— Կնքը Աստուած, շարունակեց նա, օրհնելէ մեր եր-  
կիրը: Երեն էլ մեզ տաքացնումէ, հօղն էլ մեզ տալիս է այն-  
քան, ինչքան ոչ մի տեղ, ոչ ոքին նա չի տալիս: Մենք ամ-  
բողջ կեանքերս լծու եզի պէս աշխատում ենք, և միենոյն  
ժամանակ մենք մեռնում ենք սովից, մեր երեխաները և կնիկ-  
ները շոր չունին, որ մարմինները ծածկեն, նոքա փթում են  
աշխատանքի և հիւանդութեան մէջ: Եւ աշխանում ես սյս  
արտը, նա արդէն հասած է, ժամանակ է վերցնելու: Եյս արտի  
վերայ է գիւղացու բոլոր յօյսը: Երած ըս լինի և նա կորած  
է: Եւ ահա վաղը սարից կը դայ քուրզը, կը վառէ նորա ար-  
տը, կը քչէ նորա եզն ու ոչխարը, կը փախցնէ նորա աղջեկը  
և մի քանի ոսկիով իւր փաշային կը ծախէ:...

Պանէս էմին նորից լրեց: Նորա խիտ ունքերը աւելի  
և ցած իջան, քաշուեցան խոր աչքերի վերայ, նրա քարի  
պէս պինգ ձեռքը սաստիկ սեղմեց իմը...

Մենք այդ ժամանակ բարձրանում էինք մի փոքրիկ րլուրի  
վերայ: Երբ հասանք գագաթը, Պանէս էմին կանգնեց, գար-  
ձաւ պիտի արեւմուտ, որտեղ արիւնաշաղաղ արեգակը ծանր  
իջնումէր ծիրանի ամպերի տակ և շարունակեց մի առան-  
ձին մարդարէական ձայնով.

— Բայց վրէժինդրութեան ժամը կը դայ, և զգում է  
հոգիս, որ այդ ժամը հեռու չէ... և վայ այն ժամանակ յադ-  
թուղին, վայ ձեղ, գողեր և թալանիչներ...

Եւ նա սպառնալիքով մեկնեց բռունցքը.

— Յաւում եմ միայն, որ ևս չարժանացայ այդ մեծ օրուան, բայց զու, Ո՞ուբէն, զու պիտի աղատ մեռնիս, եթէ ոչ իմ հին ոսկորները երբէք չեն հանգստանայ գիրեղմանում:

Մենք նստեցինք և նա նորից սկսեց լցնել չերուխը:

— Վո՞ հայրը և ուրիշ շատերը նորա հետ սպանուեցան, որովհետեւ ուզում էին աղատ լինել բայց վայ մեզ որ մնացինք ապրելու, որովհետեւ լաւէ մեռնել քան թէ ապրել այնպէս, ինչպէս մենք ենք ապրում...

‘Նա յանկարծ բռնեց ուսերիցս և մօտեցրեց իրեն.

— Դու զիտե՞ս արդեօք, բացականչեց նա և նորա ձայնը դողաց, զիտե՞ս արդեօք, խեղջ տղայ, թէ ինչպէս ենք մենք ապրում... Մենք ապրում ենք ու զիտենք, որ ամեն լոպէ, ամեն մի աւազակ փաշայ կարող է ցցի հանել մեզ: Մենք քը նում ենք երեկոյեան, և ըստ զիտենք, թէ միւս զիշեր պիտի ունենանք մեր զլիսին մեր կտուրը: Մենք անիծում ենք մեր բաղդր, եթէ Կատուած մեզ գեղեցիկ կին կամ աղջիկ է տուել որովհետեւ զիտենք, որ վաղ թէ ուշ թուրքի աչքը կը նկատէ նորան: Մենք հաւատում ենք Ճշմարիտ Կատծուն և չենք համարձակվում նորա անունը յիշել մենք ժպտում ենք, երբ թքում են մեր երեսին, մեզ ապահովում են և մենք լզում ենք ապահով ձեռքը... Տղայ, տղայ, աւելի լաւ էր քեզ համար ոչնչանալ ջուր կարել մօրդ փորում, քան թէ տեսնել այս ամենը...

Վանէս էմին գուցէ առաջին անգամ իւր կեանքում խօսում էր այսպէս երկար: ‘Նա դողդոջուն ձեռքերով բռնեց զլուխս, մօտեցրուց իրան, սեղմեց մազա կուրծքին.

— Կատուած մի նոր, երջանիկ կեանք տայ քեզ, տղայ, ասաց նա կցկտուր ձայնով, իսկ ես այլ ևս բնակիչ չեմ այս աշխարհում:

Եւ նա երկար, անձոյն համբոյրով համբուրեց զլուխս:

Եյս առաջին համբոյրն էր, որ ես տեսայ նորանից: Ես այլ ևս չեմ կարողացայ զսպել արտասուքներս, որ վաղուց եկել հաւաքուել էին բողազումս և խեղդում էին ինձ: Ես հեկեկալով ընկայ նորա զիրկը և փոքրիկ թևերովս պինդ փաթաթուեցայ նորա զօրեղ զզով:

— Վանէս էմի, ասում էի ես հեկեկալով, մեր լաւ, բարի, սիրելի Վանէս էմի, դու ի՞նչու մեռնում ես:

— Պէտք է, իմ տղաս, պէտք է, բալաս, մի մեղմ, մի անասելի մեղմ ձայնով կրկնում էր այդ կոպիտ ծերունին, — ես բաւականին ապրեցի, ինձ էլ ժամանակ է հանգստանալու։ Ահա մի քանի զիշերներ է, որ հոգիները գալիս են ինձ մօտ, նրանք ինձ կանչում են, նրանք անդադար կրկնում են, ժամանակը հասել է... Եւ ես պատրաստ եմ... թող ինքը Աստուած պաշտպան լինի ձեզ ամենքիդ, աւելացրեց նա արդէն բոլորովին ցածր ձայնով և երբ ես բարձրացրի աչքերս, ես տեսայ, հաստատ կարող եմ ասել որ տեսայ, ինչպէս արտասուքի պայծառ կաթիլը դողաց մի վայրկեան նորա թերթեռնիքի վերայ, գլորուեց երեսին և կամաց կամաց տարածուեց խոր սպիի մէջ.

Երկու օրից յետոյ Վանէս էմին մեռաւ։ Նորան առաւտօտ մեռած դտան իւր անկողնի մէջ։ Յիշում եմ, երբ ես մօտեցաց նայելու նորա երեսին, ինձ թուեց, թէ նա մեռել չէ, այլ միայն քնած է և ահա կը բանայ աչքերը. այնքան հանդիստ էր նորա երեսը։

Նորան թաղեցին մեր հին գերեզմանում։ Օելունիները կամաց շարժում էին ալեխառն դլուխները.

— Հէյ զիտի ժամանակ, ասում էին նրանք և աշխատանքի մէջ կոշտացած ձեռներով սրբում էին պղողած աչքերը։

Յանէս Վելէջ:

Ա. Գետերբուրգ.



## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԳԵՐ


Ա

Աստղերն զիշերում ինձ երգ ասացին,  
Ենյայտ սրտերից —անհաս տեղերից.  
‘Նոցա երգի մէջ չըկար երկրային—  
‘Նոցա երգածն էր սրբազան կեանքից:  
Միայն մի աստղեկ մըռայլ ու տիսուր  
‘Ներդաշնակ երգին ձայնը չէր խառնում;  
‘Նա մըտածում էր ու լալիս էր լուռ.  
Չլինի՛ երկիրն էր նա միտը բերում...:

Բ

Ե՛կ սըրախս միջից հանէ՛ վարդերը՝  
‘Նոքա պէտք չեն ինձ,  
Ե՛կ հանէ՛ ու տար —նոցա վառ սէրը  
Թառամաւ նորից.  
Մընացին տժգին, թալուկ թերթիկներ  
Առանց բուրմունքի,  
Մընացին նոցա լայող աչիկներ  
Առանց հրապուրքի:  
Եւ անպատում փրշտաւ բիւրեղը  
Մօտագայ յցսիս,—  
Հանէ՛ վարդերը —նոր նոր կնճիռներ  
Բարդուան Ճակատիս...:

Յովհաննէս Կոստանեանց.



# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՄՈՎԱԿԻՍ ԽՈՐԵՆԱՑՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՑՆ ՄԷՀ ՊԱՏԱՀՈՂ

## ,,ԿՈՒՆԴ ԱՐԱՄԱՋԴԻ” ԲԱՌԵՐԻ ԱՌԻԹՈՎ

‘Խորենս կունդ բառի վերաբերմամբ «Ծրարատի մէջ հրատարակուած (1890, № 10) Միաբանի սրամիտ փորձը կարգադիս՝ մեր զլխումը ծագեց մի նոր կարծիք, որը և մտադիր ենք հաղորդելու Մովսէս Խորենացու պատմութիւնով զըադուղ անձանց:

Հայկական հին մատենագրութեան մէջ կունդ բառը պատահում է միայն մի տեղ. Մովսէս Խորենացու պատմութեան Ա զլքում, զլք 1.Ը: Այժմ ցանկութիւն ունենալով ինչպէս ասացինք, բացատրել այդ նշանաւոր բառի իմաստը, մենք մեր այս յօդուածում կաշխատենք առաջ բերել այն մեկնութիւնները, որոնք, մեր համեստ կարծիքով, պէտք է որ պարզեն այդ բառի բուն իմաստը. սակայն պէտք է նաև յիշենք որ մենք այստեղ հարկաւոր էլ չենք գտնում առաջ բերելու զանազան ժամանակներում զանազան հայագէտներից արած այլ և այլ փորձերը և յայտնած կարծիքները այս բառի իմաստը բացատրելու իննդրում, քանի որ մինչև օրս հեղինակի բառին անկարող լինելով մի որևէ ճիշտ բացատրութիւն տալու, նոցայայտնած բոլոր մեկնութիւնները անօգուտ են եղել:

Դժուար չէ գտնել կունդ բառի նշանակութիւնը հայերէն կամ մի այլ լեզուի մէջ. բայց միայն սրանից գոհ մնալ անկարելի է. անհրաժեշտ է որ գտնուած նշանակութիւնը բաւականութիւն տայ գոնէ երկու պայմանների, նախ կունդ բառը կարողանայ Ծրամազդ անունի մօտ մականունի գեր կատարել և յետոյ կարեոր է, որ նրա օդնութեամբ Մովսէս Խորենացու ակնարկած խօսքերը (Ա, գիրք, զլուխ 1.Ը) ստա-

նան հասկանալի, մի որոշ միտք: Կարեոր ենք գտնում առաջ բերել այստեղ երեկի պատմահօր նոյն հատուածը:

«Ու Երանաց ո՛տ, այլի համեցովն լինել Երանազդ, չորս ևս այլց անուանեցել Երանազդ, յորոց մէկ և Առանդ ոճ Երանազդ. այսովու և բառում անուանեալ Տէֆրանդ, մէկ և մայնակ է հայ- իսպանց, որ ևն»:

«Նկատելով որ յառաջ բերած հատուածը ներկայացնումէ մի համեմատութիւն, որը իսկ և իսկ համեմատումէ հոչա- կաւոր հայկան Տիգրանի և Տիգրան անուն կրողների ա- ռընչութիւնը Երամազդ աստուծոյ և Երամազդ անուն կրող- ների առընչութեան հետ, և այս համեմատութիւնը բաղկա- նումէ երկու բաղադրող մասից, որոնցից երկրորդը սկսում է այսովու մասնիկով, ուստի և մենք լրացնում ենք առաջին մասը՝ աւելացնելով սկզբից այսովու մասնիկին զուղընթացա- բար ինչու մասնիկը և ամբողջ դասաւորութիւնը փոխադր- րում ենք աշխարհաբար այս օրինակ.

«Ի՞նչեւ, բայց Երանազդ մէժ ասուծուց իան և այլ լոր Երանազդ անուն կրողներ, որոնց մէջ յայտնիէ մէկ Առանդ Երանազդ՝ անկայն ու ու (հրանցից) Երանազդ (իսկական ասպուտձ) չէ, այլ (իրենց ա- նունով չեն ցոյց դալիս, որ նրանք) մասն ուղարձ են Երանազդ դաս- նալ նոյնովու բառապես լինելով Տէֆրանի անունը իրողներ, մէկ և մայնակ (իսկական Տէֆրան) Հայկան, որ ևն»:

Երապէս Մ. Խորենացու խօսքերից ակներե երեսումէ, որ և ոչ մէկը չորսից, որոնք Երամազդ էին կոչվում, և ոչ մինչեւ անդամ Առանդ Երամազդ՝ հաւասար չէ Երամազդ մեծ աստծուն: Բայց ի՞նչ էակներ պէտք է լինին այս չորս Երա- մազդները, որոնցից մէկը Առանդ մականունովէ որոշուած: Մինչեւ այժմ մեկնիչները կամենում էին նրանց մէջ տեսնել հեթանոսութեան երկրորդական չաստուածներ, սակայն մենք առաջարկում ենք ենթագրել, որ նրանք սոսկ մարդկային էակ- ներ են, պարզապէս յայտնի զիւցազն մարդիկ կամ իշխան- ներ: Իրաւ մենք ձանաչում ենք պարսիկների հինդ Սասա- նեան թագաւորները, որոնք երեկի կամենալով Երամազդ աս- տուծոյ փառակից դառնալ կամ, ինչպէս ինքն պատմապիլին է ասում, ուղղակի Երանազդ լինել Երամազդի անունն էին կրում Երանազդ, Պրմբոց կամ Հըմբոց: Դ հարկէ, հինգերորդ դարի

Հեղենակը չէր կարող ճանաչել բոլոր հինգ Սասանեան Երամազդներին, որոնցից հինգերորդը թագաւորում էր եօթներորդ գարում, իսկ չորրորդը վեցերորդում, բայց Երամազդ կոչուողների թիւ պարունակող դասաւորութիւնը առից՝ և այլց անուանեցելց Երամազդ—երեխ, ենթարկուելէ փոփոխութեան. գոնքա անուանեցելց ձեւը անտեղի է և գարի գրուածներին մէջ, գտ մեր կարծիքով իմաստակ զրիների ուղղազբութիւնն է և նորից ուղղազբելու է. անուանելց. ընդ սմին ներկեի է կարծել որ և չընց թիւը յետին ժամանակի լրացումն է. իսկ և իսկ ոչ վեցերորդ գալուց առաջ երբ Զորբորդ Երամազդ Սասանեան երեան է գալիս. սակայն զիցուք, պատմազիրն ինքն է զրել «որից»\*) բառը. նրա ժամանակը կարող էին յայտնի լինել իրեն անուանակից Երամազդ անունով ոչ միայն Սասանեան հարսաւութեան անդամները, այլ և ուրիշ ներկայումս անծանօթ իշխաններ. երկու դէպքում ևս թէ ակնարկելով զանազան ցեղից Երամազդ Սատուծոյ անուանակից չորս իշխանները, թէ ի նկատի ունենալով միայն երեք կամ երկու Սասանեան Երամազդները, Ա. Խորենացին իրաւունք ուներ ասել որ այս Երամազդները Երամազդ Սատուածը չեն, այլ ի կամցողն Երամազդ լինել այսինքն գտնվում են Երամազդ դարեւալ ցանկացողների նուուն:

Մեր առաջարկեալ մեկնութեան մի այլ նեցուկը ևս այն է, որ պատմահօր ծանօթ Երամազդ կոչուած Սասանեան թագաւորներից մէկը կարող էր կրել Կունդ մականունը: Երամազդ Ա (Գ. Դ.) յայտնի է պարսկական պատմաւթեան մէջ իւր ժաջ տիտղոսով. արևելեան պատմազիրներն ասում են նրան արաբերէն ալջարէ կամ ալբանալ և պարսկերէն Շիւեր կամ Տարդանա (Shiu Th. Nöldeke, Geschichte der Persen und Araben zur Zeit der Sasaniden ևն, Leyden 1879, էր. 43, ծան. 2), սակայն վերջիներս, այսինքն Շիւեր և Տարդանա, պարսկական բառեր լինելով, արաբական ալջարէի և ալբանալի յետին թարդմաննութիւններն են համարուելու և ոչ հին ազգային աւանդու-

\*) Վելորդ չենք համարում ենթադրել և այն, որ թերեւ արեց թուի փոխարէն գրուած լիներ եւից, բայց գիր-թուանշանով նշանակուած, այսինքն Գոռվ, որ յետոյ, ինչպէս սովորական է, շփոթած լինեն Գո-ի հետ:

թիւնից պահուած խօսքեր, մինչդեռ մեր կունո՞ւ բառը մեր կարծիքով պէտք է լինի Սասանեան թագաւորի խսկական հին պարսկական տիտղօսն, քանի որ այս բառը պարսկերէն նշանակում է +աջ\*), իսկ հինգերորդ գարի հայոց պատմութեան մէջ, մենք տեսնում ենք, գործածուած է ինչպէս Արամազդ թագաւորի մասկանունը:

Կունդ Արամազդի առիթով ասածներս ամփոփում ենք այսպէս. Արամազդ (մեծ աստուած) լինել կամեցողների անուան ներքց հասկանում ենք լոկ իշխաններ կամ Սասանեան թագաւորները, որոնք զբագաշտական բարի աստուծոյ անուանակից էին, իսկ Կունո՞ւ Արամազդ մեկնում ենք պարսկերէնի միջոցով +աջ\* Արամազդ և վերջապէս մատնանիշ ենք անում այն պատմական փաստին վրայ, որ Գորդ գարում կար խսկապէս Սասանեան թագաւոր Արամազդ +աջ (Կունո՞ւ) մականունով:

Керопэ Петровичъ Паткановъ. Биографический очеркъ. Составилъ П. Веселовскій. С.-Петербургъ, 1890, եր. 21 (Отдѣльный отискъ изъ Записокъ Восточн. Отдѣл. Имп. Русск. Археолог. Общ. Томъ V, եր. 243—263).

Պ. Կ. Վեսելյովսկի, որ Պետերբուրգի համալսարանի արեւելեան բաժնում «Երևելքի» պատմութեան ուսուցչապետն է, գրել է հանդուցեալ Քերովը Պատկանեանի կենսագրութիւնը, որի մէջ առանձին ուշադրութիւն է գարձրել նորա արտաքին կեանքի վրայ. ուստի և բաւական հարուստ է հանդուցեալ հայագէտի թէ նախնիքի և թէ նորա անձի վերաբերեալ հետաքրքրական տեղեկութիւններով:

Պատկանեանների սկիզբը սկսում է Տէր Պետրոս Մինասիրից, որը ծնուել է 1678-ին և քահանայ է եղել Պոլսի Պալաթա կոչուած թաղում: Տէր Պետրոս Մինասիր Օղլու համանուն որդին մեծ ծառայութիւն է մատուցած ազգային գործին, եռանդուն օժանդակ հանդիսանալով Անրուս վարդապետին,


\*.) Վիաբան (Հրատ. 1890 ձ, երես 572) կասկածում է Կունդի այդ մեկնութեանը, բայց ի զուր. Կունդ բառը գործ է ածում քաջի իմաստով, օրինակի համար. Պարսից յայտնի բանաստեղծ Հակիմ Ուղէնին (Vullers, Lex Pers.-lat.).

յետոյ անուանի կաթողիկոսին, երբ սա 1800 թուականին Խջմիածնից Պոլիս է գնացել կաթողիկոսի ընտրութեան հակառակ կուսակցութիւններին հաշտեցնելու: Տեր Պետրոս ունեցել է երեք որդի՝ Միքայէլ, Գաբրիէլ և Սելովէչ, որոնք ուսումն առել Վենետիկում Մխիթարեանների մօտ, որոնք և հայացրել են նրանց ազգանունը, արարական Միքայէլ (Մանուսիչ) օղլը բառը հայերէն թարգմանելով՝ Պատրիանէան: Միքայէլ Պատրիանէան Խժշկարան Ուկապէնի (երեք հատոր, Վենետիկ 1832) հեղինակն է. Ահետէն՝ իտալացի հարուստ վաճառական՝ Միքայէլին պաշտպան և մեկնաս է եղել. նոյն անունն է, որ հանգուցեալ Ք. Պատրիանէանը երբեմն գործ է ածել իրուել կեղծանուն:

Սերովէ Պատրիանէան պատրիանէանը, մեր ուսուցչապետին պապը, հաստատել է Տփիսիսում հայոց առաջին գպրոցը և ժողովրդից ստացել է Հարժապէտ մականունը: Սա իր ժամանակը հոչակուել է, որպէս երգիչ, յայտնի է Մոսկուայում լոյս տեսած (1857) նորա Երգի Սերովէ Հարժապէտի Պատրիանէան վերնագրով գիլքը: Պիտրոս Սերովը Պատրիանէան, Վերովը էի հայրն, (1808—1879) գործունեայ քահանայ է եղել Ստավրոպոլում:

Հանգուցեալ Վերովէ Պատրիանէանի կենսագրութիւնը բաւականին մանրամասն է կազմուած. անշուշտ մոռացուած չէ նրա կեանքի և այն փաստը, որ հանգուցեալ հայագէար մէկ ժամանակ բանաստեղծութիւններ էր զրում: յիշուած է թէ Վերովէի զլուխն ինչ արկածներ են եկել երբ զեռ մանուկ լինելով ծննդավայրից ծանապարհորդել է գէպի Մոսկուա Լազարեան Շեմարանը մտնելու նպատակաւ: Եյս և սորա նման բաւականին հետաքրթական տեղեկութիւններ է պարունակում կենսագրութիւնը, որի զերծը (եր. 17—21) զրած է Ք. Պ. Պատրիանէանի աշխատասիրութիւնների ցուցակը ժամանակագրական կարգով, իսկ սկզբում նորա պատկերը:

Պէտք է նկատենք, որ կենսագրութեան կազմողը զովելով ընդհանրապէս Ք. Պատրիանէանի գիտնական գործունէութիւնը, ի մասնաւորի չէ քննադատում և չէ զնահատում նրա աշխատութիւնների արժէքը և ձեռնամուշն չէ լինում պարզելու հանգուցեալ հայագէարի գիտնական մեթօդը:




## ԱԶԳԱՅԻՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

### Սիրելի բարեկամ:

Կերեցէք քիչ մը պարապել այստեղի հայոց պանդխտութեան պատմութեան մի ինդրոյն վրայ, որ «Ղըաքսի» մէջ հրատարակուած «Հայոց մեծ գաղթականութիւն Ճ.Դ. դարում» յօդուածին հետ յարաբերութիւն ունի:

Իօմանիոյ համալսարանի պրոֆեսօր պ. Յ. Ս. Հայդես, «Կոր հանդէս» անուանեալ հրատարակութեան մէջ, անցած օգոստոս ամսի 4-5 թիւերուն մէջ, «Հայք ի Իօմանիոյ» վերնագրով երկասիրութիւն մը ունի: Իր կարծիքով կը հաստատուի, որ Իօմանիա հայեր կային նաև Ճ.Դ. դարու մէջ, արքեպիսկոպոսութիւն, և գեղեցիկ եկեղեցի ունենալով Արմենի կոչուած գաւառի մէջ: Այս եկեղեցին, որ հեղինակը «Հրաշալի» կ'անուանէ, այժմ Իօման եկեղեցի դարձրած է:—Ուրիշ հայ եկեղեցիներ ալ կան Պօթօշան (Յօտօզան), Եաշ (Jassy) ևն, քաղաքներուն մէջ Ճ.Դ. դարում շինուած, որոնց համար պատմութիւնը աւելի ստոյգ է: Ըստ արձանագրութեանց՝ առաջինը շինուած է 1395 թուականին, իսկ երկրորդը 1350 թուականին: Իօմանիոյ գիտուն խուզարկուններու անհամաձայնութիւնը այն արձանագրութեանց մէջ հայոց թուոյն գործածուելուն կամ չգործածուելուն վրայ է: Կը հաղորդեմ ձեզ այս անհամաձայնութիւններ, որ կարելի է կուզեք յիշեալ եկեղեցիներուն քահանաներէն այն արձանագրութիւններուն facsimile-ն, և կը նետէք ձեր գաղափարն ալ կշիռին մէկ կողմը կամ մէկ ալ կողմը: Պ. պրօֆեսօր Հայդես հայոց թուոյն այն արձանագրութեանց մէջ չգործածուելուն կը հուատայ:—Եթէ կը հաստատուի այս կարծիք, հետեանքը այն է որ, Իօմանիոյ հայերը՝ եթէ ոչ Իօմաններէն աւելի հին, առնուազն մի և նոյն ժամանակի բնակիչներն են:—Այս պրօֆեսօրը՝ որ կարելի է կը ճանաչէք Արևելագիտաց ժողովոյն անդամ՝ ըլլալով, ուրիշ երկասիրութիւններ ալ ունի դրուած Իօմանիոյ հին հայ գաղթականութեան մասին: Եթէ կարեոր կը համարիք մի առ մի կը հաղորդեմ ձեզ զանոնք:





Մասիս, Ներսիսեան տնառու և Ա. Գոյսնեի վանքը: ՀՅ ՀՅանցիոյ նշառէց

Видъ Аарата, Эчміадзинской рощи и монастыря во имя Св. Гаянс.

Съ литографированнаго оригинала пятидесятыхъ годовъ.

Հրատ. «Արտգր» հանդիսի:



## ԼՐԱԳՐԱՑ ՇՈՒՐԶԸ

«Երաքսի» նախորդ գլուխում մենք զրած էինք մանրամասնորէն Տաճկահայտատանում տեղի ունեցած հայկական յայտնի դէպերի մասին։ Եյս ժամանակուանից մինչև այսօր համեմատաբար խօստ մէծ ժամանակամիջոց է անցել որ մենք կարող լինէինք, ինչպէս որ պարտ էր, բոլորը արձանագրել «Երաքսի» սուղ էջերում։ Եյս երկար ամիսների ընթացքում հայոց յուղումները մերթ ընդ մերթ այն աստիճան հետաքրքրական նորանոր կերպարանքներ առան և մէծ կարեւորութիւն ստացան, որ թէ եւրոպական մամուլում և հասարակական կարծիքի առաջ և թէ զանազան պետութիւնների դիւանագիտական շըջաններում, օրուան ամենազբարիչ և յուղիչ խրնդիրներից գլխաւորը, եթէ չասենք առաջներ, դարձաւ այսկան ինսդիրը։ Եւրոպական բազմալեզու մամուլին առատ նիւթ մատակարարող հայկական յուղումների առիթով անցած դարձանները, մենք ցանկութիւն ունեինք արձանագրել «Երաքսում» ժամանակագրական կարգով, ստկայն բարոյական պարտականութիւն նոր համարում յայտնել մեր ընթերցողներին, որ մեր ստհմանափակ նիւթական միջոցների պատճառով, քանի որ «Երաքսը» դեռ շարունակվում է վնասներով հրատարակուել որի միակ պատճառն է և անկանոն լցու տեսնելը, մենք այդ անկարողներ գտնվում անել, նոյն իսկ և հենց ոռւս մամուլի նկատմամբ։ ըստ որում եթէ փոքր ի շատ է բարեխղճօրէն արձանագրեինք հայկական շարժման առիթով ոռւս մամուլի մէջ զրածները, այն ժամանակ ստիպուած կ'լինէինք «Երաքսի» այս զրբի ծաւալը ընդարձակել երեք անդամ։ Եյսպէս մենք «Երաքսում» առայժմ քաղուած կանենք միայն մի լրագրից։

«Русскія Вѣдомости» առաջնակարգ առւս ազատամիտ լրւրջ թերթը, որ ոռւս մամուլի մէջ նշանաւոր դիրք ունի բոնած, անցեալ աշնան տպագրում էր իր տաղանդաւոր և յայտնի զրագէտ աշխատակցի պոլսական թղթակցութիւնները, որոնք իրենց հետաքրքրութեամբ և նուրբ նկարագրութեամբ ժամանակին կարտացվում էին մէծ աղահութեամբ։ Մենք մեր

սյս գրքից սկսած կաշխատենք մէջ բերել այն բոլոր թղթակցութիւնները, որոնք զլսաւորապէս նույիրուած են տաճկահայոց վերջին անցքերին և որոնք այժմ էլ և միշտ կարող են հետաքրքրական լինել:

Կ. Պոլիս, Հոկտ. 18.

Նեռագիրը, անշուշտ, ձեղ հաղորդել է արդէն տեղիս եղեռանադատ ատենի վճիռը, որով ամբաստանեալներից չորսը Առոքիաս քահանայի վրայ ատրճանակ պարպելու և յեղափոխական վարդապետութիւնը հայերի մէջ տարածելու գործի պատճառով մահուան են գատապարտուած, իսկ միւսներն ենթարկուած են կարճ ու երկար ժամանակներով բանտարկութեան։ Տաճկաց բոլոր լրագիրները այս դատավարութիւնը հետօրէն անուանում են ոչ այլ կերպ, եթէ ոչ «Հայաստանի անկախութեան վերականգման» գործը—և այս վերնագիրը նոքա միշտ տպում են խոշոր տառերով... Իաւական դժուարէ հասկանալ այս խիստ շեշտման միտքը։ Մի կողմից թուրք կառավարութիւնը, ինչպէս ես լսեցի ոստիկանութեան նախարար՝ “Աազիմ բէյից, ընդունում է ու բացարձակ յայտնում թէ յեղափոխական վարդապետութիւնը ոչինչ կապ չունի հայ ժողովրդի հետ, իսկ միւս կողմից, ըստ երեսյմին, նա շատ ուրախ կը լինէր այդ դէպքը բաց չմողնել, այլ կարելոյն չափ օգտուի գորանով, ինչպէս մի շահաւետ հնարք՝ ուրիշ տէրութիւնների պահանջներին դէմ՝ հայկական գաւառներում բարենորոգումներ մտցնելու մասին... Ե հարկէ շատ դժուարէ այսպիսի նախնական միջոցներով խարել եւրոպական հասարակական կարծիքը։ Վելորդ եմ համարում այս քաղաքական դատավարութեան մանրամասնութիւնները հաղորդել քանի որ լրագիրներում լոյս տեսածները պաշտօնական զեկուցումներից են քաղուած և մշակուած են կառավարական շահերի համաձայն։ Հաղորդեմ միայն դատարանի արտաքին ձևակերպութիւնը, բայց նախ և առաջ ասեմ, թէ ինչպէս ես կարողացայ դատարանը գնալ։

Եմ մի բարեկամի շնորհիւ ես կարողացայ ծանօթանալ տաճկաց բիւրօկրատիայի մի նոր ծագող աստղի—պաշտօնական շրջանի, persona grata, “Աազիմ-բէյի հետ։ Եթէ գա բարված-ստոր վիճակ է յանկարծ բարձրացած չէ, բայց յամենայն դէպս (նա դեռ փաշաէլ չէ) homo novus-նորեկ մարդէ, որ շնորհիւ իր ընդունակութեան բարձր աստիճանների է հասել։

‘Երկայումն ‘Վաղիմ-բէյը վարումէ տաճկաց համար այժմեան գժուար ժամանակներում ոստիկանութեան նախարարի յայտնի բայց շատ ծանր պատասխանատուութիւն ունեցող պաշտօնը։ Այս պաշտօնը անցաւ նորան նորա նախորդին Գրում-գափուի հայոց ցոյցի առիթով փոխելուց յետոյ, որը այնպէս սարսափիեցրեց թուրքերին իր անսպասելիութեամբ։ Երեկի պալատական շրջաներում ‘Վաղիմ-բէյի գործունէութիւնը մեծ համակրութիւն է վայելում, որով հետև նա շարունակ արժանանում է շնորհակալութիւնների և պատիւնների և կարծեօք հենց այցելութեան օրս նա արժանացած էր ոսկեայ «Խմբէյազ» շքանշանի, որ այստեղ խիստ մեծ յարկի է։

Ես շատ էի լսել թուրք նախարարների զարմանալի ձարպիկութեան և քնքոյց քաղաքավարութեան մասին, թէ ինչպէս նոռքա ձկտումն և յաճախ մեծ յաջողութեամբ—իրենց ձեռքը ձգել արեւելեան քաղաքավարութիւնների միջոցով եւրոպական թղթակիցներին, բայց այն, ինչ որ ես ինքս տեսայ, այդ իմ լսածններիցս ամենիցը անցաւ։

Խիստ սիրելի նախարարը ամենազգայուն խօսքերով հաւատացրեց ինձ ֆրանսերէն լեզուով, որ նա ամբողջովին (և այդ րոպէին շնորհալի կերպով ձեռքը շարժեց ոտից ցգլուխ) իրեն իր կարգադրութեանն է յանձնում և թէ պատրաստ է հաղորդել այն բոլոր տեղեկութիւնները, որ նա գիտէ և այլն և այլն։

Դեռ ես կարող չեղայ ոչ մի բան արտասանել, ինչ ‘Վաղիմ-բէյի նշանով ներս բերին մի երիտասարդ, որը հենց նոր էր բռնուած, մեղադրուելով փաստաբան Խաչիկի սպանութեան մէջ։ Սորա վերայ իմ խօսակիցս բացատրեց և այն միջոցը, որով յաջողուել էր բաց անել այս սպանութիւնը։ Ոստիկանական պաշտօնեան երեխային շաբաթութեամբ, որ նա անմիջապէս խոստովանուեց։ Երեխային հարցրին իմ ներկայութեամբ, և ինձ հաճոյք ցոյց տալու նպատակով, նախարարը թոյլ տուեց և ինձ հարցեր առաջարկել։ Ինչպէս երեաց, երեխան շատ պարզ, բայց դրեկանապէս պատասխանեց, որ նա է սպանել «գաւաճանին»։ Հարցմունքից յետոյ սուրճ պատրաստուեցաւ և այնուհետև բաւականին սիրալիր խօսքեր ու շնորհներ շռայլելուց յետոյ, նախարարը ինձ մի առաջնորդ կարգեց արդարագատութեան նախարարութիւնը առաջնորդելու համար որտեղ գտնվում է եղեռնական ատեանը։

Երբ ես պատրաստ էի արդէն գուրս գալու, նախարարը սեղած է ձեռքս և վերցնելով իմ այցետոմսը, սաստիկ յուղուած ձայնով ասաց. «Je garderai bien ce cher souvenir!». (Լաւ պիտի յիշես այս թանկագին յիշատակը):

Այն անձինք, որոնք շատ լաւ գիտեն այստեղի պաշտօնական հաճոյականութեանց արժէքը, հաւատացնումէին ինձ, որ նախարարը թերեւս, միջոցներէ ձեռք առել, որ յամենայն դէպս «նենդամիտ մոսկովից» աչք չը հեռացնեն: Խողճով խօսելով, ես մինչեւ անդամ մի թոյլ յաւակնութիւն էլ չէի կարող ունենալ նախարարի կողմից ցոյց տուած այս նոր ուշագրութեան վերայ և աւելի շուտ հակուած կլինէի տեսնելու նորա կարգագրութեան մէջ նախազգուշութեան նորա ապացոյցներ, և իսկապէս երեկոյեան 10 ժամից յետոյ, ինչպէս ասում են, այնքան էլ աներկիւզալի չէ մինչեւ անդամ յներայի մօտի թաղերում:

«Կաղիր-Շէյի պաշտօնեայից աւաջնորդուելով, ես մտայ արդարագատութեան նախարարութեան շէնքը: Կմուար է ասել, որտեղ աւելի գարշահոտութիւն և աղտոտութիւն կայ, ոստիկանական կան թէ արդարագատութեան նախարարութեան շինութեան մէջ: Կոյն գարշահոտ սանդուխտները, նոյն անաւել յատակները: Առանց քաշուելու, հասարակութեանը այս և այն կողմը յարելով, անուշագիր թողնելով մինչեւ անդամ պահապան ղինուորների նկատողութիւնը, որոնք պահպանումէին ատեանի գոները, իմ առաջնորդս ոստիկանական նշանազգեստի հագուստով բաց արաւ ինձ համար տեղ գատաւորների բազկաթոռների յետեւը:

Կատարանի կահաւորութիւնը նոյնն է, ինչ որ է և մեր եղեռանադատ գատարաններում, ի հարկէ առանց մասնակցութեան երդուեալ անդամների, բայց չքաւորութիւնը և աղտոտութիւնը այստեղ աչքի է ընկնում: Կիսակոլով սեղանի յետեւը, որը ծածկուած է մաշուած կանաչ մահուտով, գրուած են հինգ ձենձուտած թէկ փափուկ ցածրագկաթոռներ ճղուած մէջքերով: Վամբողջ գահլիճի միջով ձգուած է կեղտոտ աղիքի նման վաւարանի երկաթէ ծինելոյզը: Վապայլ, աղտոտ, մութ և անդրաւիչ է այս հեղձուցիչ գահլիճում, ուր ժամանակ առ ժամանակ ամենասուր գարշահոտութեան ալիքներն են թափանցում: Վահասարակ, թրքական զանազան գոյնի, ուսմիկ իսառնաձնիչ ամբոխը այստեղ մի տեսակ տիսուր կերպարանք է ընդունում: Որ կողմը չես նայում, զանազան գոյնի ֆասեր ես միայն տեսնում,

սկսած խիստ կարմիր գոյնից մինչև մութ պալի գոյնը, ոչ մի արտաքին զանազանութիւն։ Այսած դատաւորներից, դատախազից և փաստաբաններից վերջանալով հասարակութիւնով և դատապարտեաներով, բոլորն էլ հագնուած են միատեսակ ֆասերը, գլխներին։ Դատաւորները գեռ ու հագուստ էին հագած, փաստաբանները գունաւոր սերթուկներում էին, իսկ նոցանից մէկը մինչեւ անգամ խալատում և չալմէն գլխին։ Նթէ սուլթանի թուղրան չլինէր, որը փոխարինումէ պետական զինադրոշը, ճշմարիտ, կարելի էր կարծել, որ դատարանում չէք գտնվում, այլ հրապարակում։

Դատաւորի սեղանի մօտ նստած էին նախագահը և դատարանի հինգ անդամները։ 1 յոյն, 1 հայ, այնպէս որ երեք թուրքին գալիս էր 2 քրիստոնեայ։ Փայտէ մշաջարքի յետելը կանգնած էին 10 ամբաստաննեալները, որոնք բոլորն էլ հայ արհեստաւորներ էին, նոցանից մեծը մեղադրական արձանագրութեանը նայելով 28 տարեկան էր, փոքր 21։ իսկապէս տարիքը դիտակցաբար կամ անդիտակցաբար մեծացրած էին։ Ամբաստաննեալներից չորսը բոլորովին երեխայ էին և հագիւ 16—17 տարեկան հասակից մեծ լինէին։

Ես հասայ դատավալարութեան այն ժամանակը, երբ հարցաքննում էին ամբաստաննեալներին։ «Կախագահը կարծառու հարցեր էր առաջարկում, ամբաստաննեալները բոլորովին հանգիստ և աղատ պատմում էին գործի հանդամանքները։ Պատասխանների բովանդակութիւնը ինձ յայտնի եղաւ միայն մասամբ, շնորհիւ հարեւնիս թարգմանութեանը։ Բայց հօ ես կարող եղայ բաւականաչափ մտիկ տալ հասարակութեանը և ամբաստաննեալներին։ նոցա անհսուլութիւնը և իրենց զսպելը ճշմարիտն ասած զարմանալի էր։ Տաճկական մոլեռանդութիւնը արդեօք այս անգամ՝ անցաւքրիստոնեաններին, թէ<sup>o</sup> մոլեռանդական համոզմունքը գէպի իրենց վեհանձն զոհաբերութիւնը, միայն թէ ոչ ոք կողմակի մարդկանցից չէր կարծի։ Թէ այս շնորհքով հագնուած կիսակիրթ արհեստաւորները իրենց գլուխը զոհում են յեղափոխական վարդապետութեանը ։ Այսաստանի վերակենդանութեան համար... Նըրէք կեանքից զրկուելու սարսափելի հաւանականութիւնը չպէտք է թուեր այնքան ծանր, որքան այս դահլիճում, որտեղից բացվում էր Առափորի գեղածիծաղ տեսարանը և այստեղ հէնց կողմդ գոռոզութեամբ ամբանումէ Ար. Առփիայի մզկիթի օդային գմբէթը կապոյտ երկնքի բարձրութեան մէջ։ Օգո՞ւմ էին արդեօք և մահուան

սպասող ամբաստանեալները և մահ դատապարտող դատաւորները  
այս պատկերի հրաշափառ վեհութիւնը, չգիտեմ, միայն արտաքին  
անդորրութեան ներքոյ դժուար էր իմանալ իսկական զգացմունքը:  
Ի՞այց նախագահի և դատաւորների հանգստութիւնը աւելի շուտ  
նմանումէր թեթև վերաբերուելիք անտարբերութեան քան գիտակ-  
ցական գթասրտութեան և անկեղծ ցաւակցութեան ամբաստանեալ-  
ների վիճակին: || Ի անգամ գոնէ այս լուրջ և սպիտակահեր, առ-  
երես բարեհոգի նախագահը, ցոյց տուեց իր իսկական բնութիւնը,  
համարեա ամբողջ դահլիճը իր ձայնով դղրդեցնելով, այն ինչ  
բոլոր յանձանքը նորանումէր, որ փաստաբանները փոքր ինչ ու-  
շացել էին: Պէտք էր տեսնել այն ցածր և շողոքորթ խոնարհու-  
թիւնը, որով նոքա շտափեցին բոնել իրենց տեղերը:

Հեղութեամբ ձեռքները գնելով սրտի վերայ, գլուխը ներքե-  
խոնարհելով, փաստաբանները լուելեայն թողութիւն էին ինդրում:  
‘Նախագահը, նոցա վերայ ահեղ, արհամարելի հայեացք ձգելով՝  
լորէն իրեն ճպուոտ աչքերով նայեց բոլորի վերայ և այս անգամ  
ներեց, երբէք չէի ցանկանալ ընկնել այսպիսի դատաւորի ձեռը:  
|| Ի հարարի ժամանակ նախագահը շատ փափուկ սրութիւն արեց  
հայ յեղափոխականների նկատմամբ, և երբ հայ դատաւորը հեռ-  
ուցաւ, այն ժամանակ բաւական նա ինդաց նորա յուզմունքի  
վերայ, բացատրելով այդ հայերի կողմից վրիժառութեան երկիւղով:

Ժամի Յ-ի և Կ-ի մէջ, երեք ժամ դատելուց յետոյ, նիստը յե-  
տաձգուեցաւ մինչև հետեւեալ օրը տաճկական նախարանի համա-  
ձայն—եւաւաշ, եւաւաշ, կամաց կամաց:

‘Դատավարութիւնը շարունակուեցաւ չորս օր, բայց ես այլ  
ևս դատարան չկնացի և հետեւում էի դատին «ստենօդրաֆիական»  
հաշուից: Ի՞այց պէտք է յիշեմ, որ դահլիճումը ես սղագրողի չտեսայ  
և եթէ թրքական սղագրութիւնը գաղտնիքով չէ թափանցուած  
դատավարութիւնը մտքով ի գիր աւնելու նպատակով, այն ժա-  
մանակ այս հաշիւների ստուգութիւնը խիստ կասկածելի է, արդէն  
էլ չխօսելով խմբագրական «ուղղագրութիւնների» վերայ: Արքան  
կարելի է ենթագրել, Աթւքիաս քահանային սպանել ուզեցող ամ-  
բաստանեալ Յակովի յանձաւորութիւնը ապացուցուած է, թէ և  
ինքը Յակովի բացատրեց, որ նա ատրճանակը օդի մէջ արձակեց,  
միւս ամբաստանեալները քիչ թէ շատ մեղադրվում են Յակովին,  
ծածկելու մէջ:

Վնչ վերաբերում է յեղափոխական ընկերակցութեան մասնակցութեանը, որի նպատակն էր բաժանել շայաստանը թուրքիայից, որպիսի մասնակցութեան մէջ մեղադրուած են բոլոր ամբաստանեալները, հաշիւը այս մասին ոչ մի փաստեր առաջ չէ բերում խորհելու համար, թէ արդեօք Ճիշտ գոյութիւն ունէ՞ր այսպիսի մի ընկերութիւն, ի՞նչ էր նորա նպատակները և ամբաստանեալները գիտութեամբ այդ ընկերութեան անդամների թվումն էին թէ ոչ \*):

Որ ցոյց տամ ձեզ, թէ մեղադրութիւնը ինչ ծուռ միջոցների էր դիմում այս գործում, մէջ կրերեմ մի կտոր ամբաստանիչ ատենի տեղեկագրից և դատարանում դատախաղի արած վերջաբառնից: Ամբաստանեալ Յովակիմ և Ա արդանի դէմ, որպէս ապացոյց նոցա մասնակցութեան յեղափոխական ընկերութեան մէջ, մէջ էր բերուած այն հանգամանքը, որ նոցա մօտ գտնուել են արտասահմանում հրատարակուող և թուրքիայ արգելեալ «Արմենակ» \*\*) և այլն լրագրների համարները, և մէկի կրպակում գտնուել է անստորագիր մի նամակ որի մէջ խնդրումնեն բաժանորդ գրուել այս լրագրին: Ամբաստանեալները՝ Խեղճ արհեստաւորներ, մերժում էին այս փաստը, առարկելով որ նոցա նիւթական միջոցը չէր ներիլ բաժանորդ գրուելու: Ի՞այց իթէ մինչև անդամ ապացուցուած լիներ արգելեալ թերթերի ստանալը ամբաստանեալների կողմից, այդ գէպքում ևս ի՞նչ խելացի դատաւոր այդ փաստի վերայ հիմնուելով պետական դաւաճանութեան կամ յեղափոխական ընկերութեան մասնակցութեան մէջ կ' ամբաստանէր: Ի՞այց, ի հարկէ, ոչ այստեղի ընկած փաստաբանութիւնը կարող էր երեան հանել մեր

\*): Դատարանական բոլոր հարցաքննութիւնը պարփակվում էր ամբաստանեալներին քննելով գոկումենտների ընթերցանութիւնով, որոնց բովանդակութիւնը հաշում մէջ չէ բերվում և երկու սոտիկանականների հարցաքննութիւնով, որոնք խուզարկութեան ժամանակ գուել էին այս գոկումենտները Խուզարկութեան ոչ մի արձանագրութիւն չկայ, կողմանակի վկաների մասին գաղափար անդամ չունին: Թէ մինչև որ աստիճանի պարզութեանն է հասցրած այստեղ քաղաքական խնդիրների մասին հարցաքնութիւնները, որոնք առաջ են բերում մահուան պատիժ, երեսում է վերոյիշեալ սոտիկանականների քննութիւնից: Նոքա միեւնոց հակառակում էին ամեն մի քայլում և ոչ մի կերպ չէին կարողանում պարզ և ճիշտ հաղորդել, թէ ի՞նչ է խելազօտ գլուխուել Խուզարկութեան ժամանակ: Զնայելով նախագահի զիմադրութեանը, Ասսիլակի էֆէնտիյցն փաստաբանը փոքր ինչ կարողացաւ բարձրացնել այս մուժ գործի վարագոյրը:

\*\*): Թըքական դատարանների սովորական անհոգութեան պատճառով թերեւ, լրագրի անունը շինոթուած է: Մեղ յայտնի է, որ գոյութիւն ունի «Արմենիա», անունով լրագրի, բայց ոչ «Արմենակ»: Այստեղի հայոց լրագրերը հաշուի թարգմանութեան մէջ յիշումն միայն «Արմենիա»:

դադրանքի յայտնի կերպիւ քաշքշելը և չափազանցութիւնը: Պաշտապան փաստաբաններից մինը, Խզգէթ էֆէնտին, աւելի շատ իրեն էր արդարացնում և աշխատումէր հասարակական կարծիքի առաջբացարել այսպիսի «ոչ մաքուր» գործ յանձն առնելու շարժառիթը):

Ունէ որքան անհիմն էր մեղադրանքը, կարելի է դատել նորանով, որ չորս ամբաստանեալների մահավճիռը և մնացեալների ծանր աքսորումը կայացաւ միայն ձայների մեծամասնութեամբ \*):

Եթէ մինչև անգամ տաճկաց դատաւորները, որոնք աւելի շատ իրենց գլուխը փորձանքի տակ չգցելու համար են գողգողում, նոյնքան անդժութիւն չունեցան մեղադրելու ամբաստանեալներին մեղադրանքի բոլոր փաստերի հիման վերայ, այդ էլ ինքն ըստ ինքնին պարզումէ շատ բան: Խսկ թրքական փաստաբանները, որոնք պատրաստ են մի փարայի ծախել իրենց հօգին, ամաչկոտութեամբ ներողութիւն էին խնդրում, որ համարձակուել են անպատուել հասարակական բարոյականութիւնը յանձն առնելով այն անօրինակ չարագործների պաշտպանութիւնը, որոնք կարգացել են ամեն ուրեք ազատ մուտք գտնող, բացի թուրքիայից, Աքմենիա լրագիրը:

Եւ սա կոչվում է դատաստան, պաշտպանութիւն, հրապարակական դատ. ի՞նչի համար է այս բոլոր կատակերգութիւնը: Ո՞րին նա կարող է խաբել և ո՞վ կընդունի եւրոպական դատաստանի այս կեղծ նմանութիւնը իսկական դատաստանի փոխարէն, որը գործը պարզումէ բազմակողմանի կերպիւ շնորհիւ անկախ պաշտպանութեան և հրապարակօրէն կատարուելուն, բայց ոչ միայն դատարանի կնիքով ծառայօրէն գրոշմումէ մեղադրական վճիռները:

Ենդութ դատավճիռը բոլորին ապշեցրեց, մինչև անգամ իրենց թուրքերին: Պատավվճիռը, երեխ, Առութանը կմեղմացնէ, բայց և այնպէս նա վերջին օրերի բաղմաթիւ բանտարկութիւնների հետ միատեղ ամենածանր ազդեցութիւն թողեց այստեղի հայ հասարակութեան վերայ: Բաւական է փոքր ինչ չարախօսութիւն չարակամի կողմից, ինչ առանց քննութեան բռնում բանտարկումէն, և որ գլուխաւորն է գիշերով: «Երբերս բանտարկել են յայտնի հայ վարչական պաշտօնեայի-արտաքին գործոց նախարարի օգնական

\* ) Պաշտօնական գեկուցումից երեսումէ որ մեղադրողները կազմում էին մեծամասնութիւն՝  $\frac{2}{3}$ , թէև դժուար է հասկանալ, թէ ինչպէս 5 անդամներից կարելի է այսպիսի  $\frac{2}{3}$  մեծամասնութիւն ստանալ:

Արթին Կատեանի ազգականներից մինին, որը մեղադրվում է այն յանցանքի մէջ, որ նա է տուել փաստաբան Խաչիկի սպանութեան համար դանակ: Խնչպէս ասում են, այս մեղադրանքը ոչ մի բանով ապացուցուած չէ և յօրինուած է այս բարձրաստիճան անձի թշնամիներից, որին վաղուց է որ պալատումը ուզում են պաշտօնից ձգել տալու:

Ի գէպս նկատելու է, որ հէնց նոր վերջացած դատավարութիւնը պարզ ցոյց տուեց, թէ որքան քիչ է հաւատում թրքական կառավարութիւնը այն հետաքրքրական բացատրութեանը, որը մէջ է բերուած նորա «պաշտօնական զեկուցման մէջ» և որով հայկական յեղափոխութեան վարդապետութեան բոլոր գործը հաւասարուեցաւ... զրոպարտութեան:

(Ըստունավէլի):

Գ. Յ.

Միւս երեսում տպադրումնք հայկական յուզումների առիթով Պոլսում բանտարկուած հայ արհեստաւորների դատավարութեան պաշտօնական հաշիւը, որը մենք արտատպեցինք «Երևելք» լրագրից:

Խօսք չկայ, որ այս արձանագրական հաշիւը կաղմուած է պետական շահերի համաձայն. ուստի ամբաստանների աստծները կամ առհասարակ դատավարութեան մէջ անցած դարձաները, որոնք այլ տեսակէտից պարզաբանելու էին խրնդիրը դուրս է ձգուած. բայց և այնպէս այս կերպ հրատարակուած հաշիւը ևս իր հետաքրքրութիւնը ունենալով մենք նպատակայարմար գտանք զետեղելու «Երագսում»:

Եյս դատավարութիւնից յետոյ տեղի ունեցան և երկու դատավարութիւններ. Վանենցի Պաղպասարի դատը առանձին և Երևահամ, Մելքոն և Համբարձում խոհարարների դատը առանձին, որոնք նոյնպէս հինգամեայ բերդարդելութեան դատավարութեան: Յետոյ կայանալու էր Պ. Վարդ-Պատրիկեանի դատը, որը սակայն տեղի չունեցաւ: Եյժմ լրագրներից տեղեկանում ենք որ նորերս Ուուսից դեսպան, Պ. Նելլիդովը, ետպահանջեց թուլքից կառավարութիւնից Պ. Վարդ-Պատրիկեանին, որը և դեսպանատան կարգադրութեամբ ուղարկուեցաւ Ուուսաստան:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ Տ. ՍՈՒՔԻԱՍ ՔԱՅԱՆԱՅԻ ՎՐԱՅ ԱՏՐՋԱՆԱԿ  
ՊԱՐՊՈՂ ՅԱԿՈԲԻ ԵՒ ԻՒՐ 9 ԸՆԿԵՐԱՑ

1890 ՀՈԿՏ. 8/20 ԲՇ. ՆԻՄ Ա.

Երեկ, եղեռնադատ ատենին առջև տեղի ունեցաւ մայր եկեղեցւոյ աւագերէց Տ. Սուքիաս քահանայն սպանել փորձող Յակոբի և իւր ընկերաց դատավարութիւնը: Դատարանի դրան առջև 400 հոգւոյ մօտ բազմութիւն մը խոնուած՝ դրան բացուելուն կը սպասէր անհամբեր: Ժամ 7-ին բացուեցաւ դատարանն և ժողովուրդը ներս խուժելով՝ բազմեցաւ ունկնդրաց յատուկ նստարաններուն վրայ: Ամբաստանելոց յատուկ նստարանին վրայ շարուած էին 20-25 տարեկան երիտասարդներ իրենց յանցանաց աստիճանին կարգով. ամենուն գլուխը կը գտնուէր պարտիզակցի կառապան Յակոբ, որ եկեղեցւոյ մէջ՝ Տ. Սուքիաս քահանայի վրայ ատրճանակ պարպած էր: Առաջ քովը կեցած էր ակնցի Փիլիպպոս փերեզակ, 22 ամեայ անձ մը, որ Յակոբին զէնք, դրամ ևայլն հայթայթած էր. ապա կուգար Մինաս թեփավաճառ, 22 տարեկան, սա ալ ոճրագործը պահած էր, վանեցի Վարդան 22 տարեկան պատանին ևս Մինասի մեղսակից էր. իսկ սերաստացի ատաղձագործ Համբարձում 22 տարեկան, տիվրիկցի հացագործ Վաշան 25 տարեկան, սերաստացի դարբին Յովակիմ 22 տարեկան, ճաշարանի սպասաւոր դարահիսարցի Արթին 24 տարեկան, այն ժամացի ջուլհակ Վւետիս 27-28 տարեկան և պարտիզակցի ձիապան 21 տարեկան Պետրոս, ուղղակի կամ անուղղակի քիչ թէ շատ գործակցութիւն ունեցած էին Յակոբի և Փիլիպպոսի հետ և վրանին վնասակար ու գրգռիչ թղթեր գտնուած էին: Ոճրագործին գէմքը շատ տժգոյն էր և վտիտ. յայտնի է որ գեռ հեւանդ էր. միւսներն առանց բացառութեան դրեթէ կայտառ և առոյգ, հազիւ տխուր մելամաղձոտութիւն մը կը նշմարուէր նոցադիմաց վրայ:

Ունկնդրաց մէջ կը նշմարուէին ռուսական դեսպանատան առաջին թարգման Պ. Մակսիմով և այլք, որք նախագահական աթոռին ետին մասնաւոր տեղ մը նստած էին:

Ժամը 8-ին քառորդ մնալով դատասրահի խորի գոները բացուելով երևեցան նախագահ Ասորֆ պէյ և անդամք Եզմին է-ֆէնտի, Հաղգը էֆէնտի, Խանքօ և Առոստիչեան Յարութիւն էֆէնտիք, արդէն իրենց տեղերը գրաւած էին ընդհանուր դատա-խաղ Առէմուլչ պէյ և քարտուղար Ազմի պէյ: Փաստաբանաց շար-քը կը կազմէին Շ էջրի էֆէնտի, Խզգէթ պէյ, Համտի, Հասան Ռիզա և Գէորգ Ալիքսանեան էֆէնտիներն:

Առաջին անգամ խօսք առաւ վսեմ. նախագահն և ամբաստա-նելոց կարգաւ անունը, տարիքն և արհեստն հարցունելէ վերջ հետևեալ կերպով աւարտեց. (Պատկ, (Օսմանեան երկրէն մաս մը զատելով Հայաստան անուամբ զատ և անկախ կառավարու-թիւն մը կազմելու նպատակաւ ուզած էք հայ հաւատարիմ հպատակներ ապստամբեցնել, որու համար ալ ընկերութիւն մը կազմուած է և դուք ալ անոր անդամակիցներէն գտնուած էք: Այս ընկերութիւնը տեղւոյս մէջ զինուորագրութեան կաշխատի և իւր նպատակին խոչընդուռ եղողները սպանել կը փորձէ, ինչպէս ասոր մէկ օրինակն ալ արուած է անցեալներն ի Գումգաբու եկե-ղեցւոյն մէջ Տ. Առոքիսա անուն աւագ քահանային վրայ հրազէն պարզուելով. (բարեբաղդապէս ոչ մէկ վեսս պատճառելով գըն-դակը վրիպեր է): Առքա իրենց այս գործին արգելք եղողները վախցնելու համար միջոցներ ի գործ գրած են: «Լոյնպէս Հայաս-տան մը կազմելու գաղափարով սոյն խոռվարար ընկերութեան անդամներէն մի քանին, ի Առէրձան խանի մը մէջ ատենարանու-թիւն ըրած ատենին, ձեզմէ մէկ քանին հոն ներկայ գտնուած են, մէկ քանիներնուուր վրայ ալ դրուիչ թուղթ և լրագիրներ գտնուած են. ահա այս բաներուն համար ամբաստանուած և հոս բերուած էք, և այժմ թղթերնիդ պիտի կարգացուին, մտիկ ըրէք»: «Դա-տարանի քարտուղար Ազմի պէյ կըսկսի կարդալ ամբաստանից ա-տենի տեղեկագիրն որ է հետևեալն.

ՊԱՏՃԱԿՆ ԱՄԲԱՍՏԱՆԱԳՐԻ

Կառապան պարտիզակցի Յակոբ «Կաղարեան, վերեղակ Փի-լիպպոս, երիշացի թեփալաձառ Ահնաս, Ապուտ էֆէնտի խանի սրձագործ վանեցի Ա արդան, ատաղձագործ սեբաստացի Համ-բարձում, տիվրիկցի հացագործ Կ աշան, սերաստացի գարբին Յո-վակիմ, դարահիսարցի ջուլհակ խոհարար Քարութիւն, այնթապցի

ջուլհակ Աւետիս մուձակարար Պետրոս Գէորգեան, ամբաստանեալ  
են իբրև անդամ խոռվարար ընկերութեան մը, որ կազմուած է  
(Ս)ամանեան Տէրութեան մէկ մասն ամբողջէն բաժնելով Հայաս-  
տան անուամբ անկախ կառավարութիւն մը կազմելու չարանիւթ  
նպատակաւ հայ ժողովուրդը կայսերական կառավարութեան դէմ  
ապստամբեցնելու, և այն հաւատարիմ հպատակներ, որոնք իրենց  
խօսքերէն չխարուին՝ սպանելու և անհետացունելու համար: Վայս  
մարդիկ ամբաստանեալ են նաև իբրև մեղսակից Տ. Առաքիաս քա-  
հանային վրայ ատրճանակաձգութեամբ սպանութեան փորձին, որ  
սեպտ. 14-ին շաբաթ օրը Գումգաբուի հայոց եկեղեցւոյն մէջ  
տեղի ունեցաւ կրօնական արարութեանց միջոցին:

Ա. Պոլսոյ նախնական գատարանի հարցաքննիչ գատաւորին կող-  
մէ կատարուած քննութեանց և օրինական գործողութեանց վրայ,  
ամբաստանիչ ատենին կողմէ հոկտ. 2 թուով հաղորդուած տեղե-  
կագրոյն համեմատ, Յակոբի, Փիլիպպոսի, Մինասի, Յարութիւ-  
նի, Աւետիսի և Պետրոսի խոստովանութեամբ ապացուցուած է  
թէ Յակոբ, Փիլիպպոս, Մինաս, Արդան, Համբարձում, Կշան,  
Յովակիմ, Յարութիւն, Աւետիս և Պետրոս անդամեն դայաս-  
տան կազմակերպելու երեակայական նպատակաւ կազմուած խոռո-  
վարար ընկերութեան, որ հայ ժողովուրդեան միտքը գրգռելով,  
զորք գրելով, մարդ սպանելով և այլ կարգ մը հանրային բարե-  
կարգութեան խանգարիչ արարքներով յեղափոխական ընթացքի  
մէջ գտնուած է:

Ա արդանի ձերբակալման պահուն իւր վրայէն բունուած են  
հայ ժողովուրդը յապստամբութիւն յորդորելու նպատակաւ ի Վար-  
սիլիա և ի Լոնտոն հրատարակուող «Արմենիա» և «Հնչակ»  
լրագրաց թիւեր, որոց ի ծմիւրքիա մուտք արգիլեալէ, ինչպէս  
նաև ուրիշ վկասակար թուղթեր:

Դարբին Յովակիմի խանութին մէջ ալ խուզարկութիւն կա-  
տարուելով, գտնուած են «Արմենիա» լրագրոյն բաժանորդ գրուե-  
լու համար յիշեալ լրագրոյն խմբագրութեանն ուղղուած նամակ  
մը՝ որոյ ստորագրութիւնը անձանօթէ, նաև Գումգաբուի դէպ-  
քերուն մասնակցող խոռվարաբներէ միոյն՝ «Արարէթի» վիճակին  
վերաբերեալ թղթակցութեան սեագրութիւնք, որ սպարապետի  
Գրան զինուորական ատենին առջեւ գատապարտուած էր:

Հացագործ Կշան և Համբարձում միջնորդած էին Վաճառ թա-

Դը բնակող Տիգրանին տունը զրկելու և պահելու զբակոր, որ  
Տ. Առաքիսա քահանային վրայ հրազեն պարպած է: «Կան՝ յիշեալ  
Յակոբին պահութանած տունը մտնելով գիշերն հոն անցուցած է,  
ըստ խոստովանութեան «Կանի և Համբարձումի:

Կոյն տան մէջ Տ. Առաքիսա քահանային վրայ հրազեն պար-  
պուելուն վրայ խօսուելով, «Կան ըսած է թէ «Տաճատ վարդա-  
պետը վիրաւորող Աահակն ալ երեք օր պահելէն յետոյ Պուլկա-  
րիա զրկեցինք», ինչպէս իմաց տուած է Յակոբ:

Միբաստանութիւնն այս ամեն ապացոյցներով հաստատուած  
լինելով, յիշեալ անձինք ի դատ կը քաշուին, իրրև հեղինակ վե-  
րոնշանակեալ ոճրին:

Այս պաշտօնագրոյ ընթերցումէն յետոյ, վսեմ. նախագահը  
դարձեալ խօսքն ամբաստանելոց ուղղելով ըսաւ. «Լսեցի՞ք ինչ  
որ կարդացուեցաւ. կարծեմ կրկնելու պէտք չկայ, ամենքդ ալ  
հասկցաք». ամբաստանեալք իրենց հաւանութիւնը յայտնեցին.  
այժմ կարգն եկած էր ընդհանուր դատախալին, ոտք ելաւ Մէմ-  
տուհ պէջ և դրաւոր պատրաստած իւր հակիրճ տեսութիւնը պար-  
զեց հետեւեալ կերպով.

«Տէր նախագահ. Միբաստանելոց աթոռներու վրայ նստող այս  
անձինք ամբաստանագրոյ մէջ ըսուածին պէս Հայաստան կազմելու  
նպատակաւ հայ ժողովուրդը օսմանեան կայսերական կառավարու-  
թեան դէմ գրգռած և հաւատարիմ հպատակներն օր իրենց սուտ  
և պատիր խօսքերէն չեն խարուած, զանոնք ևս սպանելու հա-  
մար կաղմուած խովովարար ընկերութեան մը անհատներէն են. ա-  
սոնք են օր անցեալ սեպտ. ամսոյ 14-րդ ուրբաթ օրը ի Գում-  
գարու, հայոց եկեղեցւոյն մէջ եկեղեցական արարողութեան մի-  
ջոցին Տ. Առաքիսա քահանային վրայ սպանելու նպատակաւ ատըր-  
ձանակ արձակելու ոճրին մէջ գործակցութիւն ունեցած են, որոյ  
համար պէտք եղած քննութիւնները կատարուելով ամբաստանուած  
և դատաստանին տեսնուելու համար հոս զրկուած են. սոցա ամ-  
բաստանութեանց պատճառներն հետեւեալ կերպով կը բացատրուին:

Յակոբ խօստովանած է թիֆլիս երթալու համար զինուոր  
գրուած ըլլալը, լուսանկարը հանել տալու համար մի քանի ըն-  
կերներու հետ «Կարլըգափուի եկեղեցին երթալը, Փիլիպպոսին  
տուած ատրձանակն ու տասն և վեց կտոր յայտարարութիւնն  
առնելով՝ նորա հրահանգին համեմատ Առաքիսա քահանայի վրայ

ատրճանակ պարպելը, թէպէտ գնդակը չէ հանդիպած, և յայտարարութիւնները մէկ կողմ նետելն. ոճիրը գործելէ վերջը Փիլիպպոս զայն ամբաստանեալներէն Ո՞ինասին Ե՞թ-Ե՞յտանի տունը տարած է և վերջէն ալ Փիլիպպոս, Ո՞ինաս և Ա արդան զի՞նքը Շէրայի կողմը տարած են, խոստովանած է նաև թէ Փիլիպպոս տասնապետ էր և ի՞նքը պարզ զի՞նուոր:

1890 Հուն. 8|20 ԲՇ. ՆԻՍ. Ա.

Փիլիպպոս ըսած է թէ Տ. Առոքիասը սպանելու համար արթինին զրկած Յակոբ անուն անձին զէնք, դրամ տուեր է և ցրուելու համար ալ «Ղստ պատժական օրինաց, սուրբ գործին արգելք եղողներուն վարձատրութիւնը մահէ» տողերը նշանակուած և ի ստորև «Պոլսոյ հայ ապստամբական ժողովք» բաւերով ստորագրուած հայ տառերով, և լեզուով 16 կտոր յայտարարութիւն յանձնած է և թէ Յակոբ Տ. Առոքիաս քահանային ձեռք մը ատըրձանակ պարպելէ վերջ իւր խանութը եկեր ապաստաներ, ինքն ալ զայն առնելով Ո՞ինասին յանձներ, վերջը, Ո՞ինաս և Ա արդան Յակոբն ալ միասին Շէրայի ծառքսիմ կողմերը տարեր են:

Փիլիպպոսի մէկ ուրիշ յայտարարութեանը համեմատ, Տ. Առոքիասի խնդրէն մէկ երկու շաբաթ առաջ, Արթին, Ո՞ինաս և գեռ չի ձերբակալուածներէն Պաղտասար, Հովանոցավաճառ Վրիգիոր, միասին, Խեդրակին և դպրոցական Վրիգորին քով գնացեր են, հոն դպրոցական Վրիգոր իրենց ըսեր է թէ «Եթէ կողէք ընկերութեան մէջ մտնել և գործ մը տեսնել, մէջերնէդ մէկն ընտրեցէք, ես անոր հետ կը տեսնուիմ և եթէ ընկերութեան մէկ հրամանը կը լլայ կամ լրադիրը կուգայ, ձեզ կը զրկեմ»։ ասոր վրայ Փիլիպպոսի ընկերները զի՞նք կը նորեն և դպրոցական Վրիգորն ալ կը սէ. «Ո՞նկերութեանս կանոնագիրը կը տրամադրէ որ լրտեսներն սպանուին. Տ. Առոքիասն ալ պիտի մեոցունենք, մարդ մը գտէք այս գործը գլուխ հանենք։ Զուիցերիոյ մէջ եղածին պէս ամեն մարդ մէկ պիսի ըլլայ, հարուստ, աղքատ, գիւղացի ամենքն ալ հաւասար պիսի ըլլան», այն ատեն իրենք կը հարցունեն թէ «Խաչիկ էֆէնտի՞ն ալ լրտես է, ա՞յն ալ պէտք է սպանել»։ Վրիգորը կը պատասխանէ թէ «Պուք անոր մի խառնուիք, Տ. Առոքիասը զարնելու աշխատեցէք»։

Ասոր վրայ Փիլիպպոս Արթինը կը գտնէ և զայն Յակոբին

կը ներկայացունէ, ան ալ Տ. Առւքիասը սպանելու համար իւր ատրճանակը Յակոբին կուտայ, Աեղբակէն առած մէկ ուրիշ ատրք-ճանակն ալ կուտայ որպէս զի Աւետիսին տայ:

Այնաս ալ կը խոստովանի թէ երբ Փիլիպպոս, զՅակոր իւր խանութը բերելով «այս մարդը Տ. Առւքիասը սպանեց, ասիկա տեղ մը պահէ» կըսէ, զայն կառնէ տունը կը տանի. վերջէն, Փիլիպպոս և Ա արդան, զայն պահէլու համար անկէ առնելով ի Տերա Ծագսիմի մօտերը կը տանին. Ա արդանի համար Փիլիպ-պոսի և Յակոբի ըստաներէն զատ, ձերբակալուած միջոցին վրան, Լոնտոն և Ա արսիլիա հրատարսկուող և հայ ժողովուրդը գործ-ոող և արդելեալ հյայտառ «Արմէնիա» և «Հնչակ» լրագիրները գտնուած են որոց երկուքին վրայ «Հնչակեան հայ ընկերութեան ժողով ի Պոլիս» բառերով և զինանշանով կնիք մը զարնուած է. Նաև ուրիշ խել մը գրգռիչ թուղթեր գտնուած են, որոնք իրեն խորվար մէկը ըլլալը կապացուցանեն:

Համբարձում և «Խան ոճրագործ Յակոբը ի Աաճառ Տիգրա-նին տունը տանելով պահուելուն օգնած են: «Խան գիշեր մ'ալ Յակոբին հետ Տիգրանին տունը պառկեր է և հոն Տէր Առւքիա-սի խնդրոյն վրայ խօսք եղած ժամանակ նշան ըսեր է թէ Տ. Տա-ճառան Արմինը և վիրաւորող Աահակն Յօր պահէլէն վերջ Պուլ-կարիա զրկած են: Ասոնք Յակոբի խոստովանութեամբ հաստա-տուած են:

Դալով Յովակիմին, ասոր խանութին մէջ «Արմէնիա» լրագ-րոյն բաժանորդագրուելու նպատակաւ, անընթեռնլի ստորագրու-թեամբ լրագրոյն խմբագրին ուղղեալ նամակ մը գտնուած է, և Դումկաբուի դէպքին առթիւ զինուորական ատենին առջեւ գա-տապարտուող «Աազարէթին վիճակը տեղեկացնող թղթակցութեանց ընդօրինակութիւն մը, որով իրեն ալ միւսներուն ընկեր եղած ըլլալը ապացուցուած է:

Կաև Արմին, գեռ չերբակալուող քանի մը խոռվարանե-րուն անունները իմացուցեր և Ա. Պոլսէն Խջմիածին զրկելէ և հոն զինելէ վերջ, Ա անայ կողմերը ապահովութիւնը խախտելու նպատակաւ հայ ժողովուրդէն մի քանիները գրգռեր և ասոնք զրկելու համար խոռվարար ընկերութեան անդամներուն հետ քա-նի մ'անդամ տեսակցերէ: «Կաև ընկերութեան կողմէ իմաց տը-րուած անձերը սպանելու համար մարդիկ պատրաստերէ և Աէր-

Ճանի մէջ ներկայ գտնուած և մոխկ ըրած է անկախ Հայաստան մը հաստատելու նպատակաւ ատենաբանութեան մը, զոր խռովարարներուն գլխաւորներէն մին ի ներկայութեան Փիլիպպոսի, Արենասի և այլոց արտասաններ է։ Վւետիս ալ յայտարարած է թէ Վրթինի առաջարկութեամք զինուոր գրուելով, Տէր Սուքիասը սպանելու պաշտօն ունեցող Յակոբի հետ շրջելու համար պարտաւորութիւն ստանձներ է։ Յակոբ իրեն դաշոյն մը տուեր է, և նորա հետ Փիլիպպոսի խանութը գացած ժամանակ, Փիլիպպոս ալ ատըրճանակ մը յանձներ ու պատուիրեր որ Տ. Սուքիասը սպանելու համար Յակոբին օգնէ, սակայն ինք կըսէ թէ քահանային վրայ ատրճանակ պարպուած միջոցին ներկայ գտնուած չէ։

Պետրոս ալ կըսէ թէ Վրթիստակէս անուն անձ մը, որ գեռ չէ ձերբակալուած, զինք համոզեր որ Վրթինի քով երթայ, նա զինք Պաթում երթալու համար զինուոր պիտի գրէ։ ի վերջոյ ինքն ալ անունը արձանագրել տալու համար, Վրթինի հետ Կարլը գաբարուի եկեղեցին գնացեր և հոն գեռ մի քանի հոգի ևս գտեր են որոնք յայտներ են թէ Պաթում երթալնին յետաձգուած է։

Ընկէ ելնելով Պալաթիս եկեր են և հոն քիչ պեխերով պատանի մը զոր Վրթիստակէս ճանչցուցած էր իրեն, կըսէ թէ «այսօր քուէ քաշեցինք, քահանան սպանելու քուէն ինձ ելաւ, գուն ալ միասին պիտի գտա» և ատրճանակ մը կը յանձնէ։ կել նեն այդ պատանին հետ Պոլսոյ կողմը կանցնին և երեք օր Սամաթիա, Գումգաբարուի կողմբը շրջելէ վերջ, պատանին «քահանան ուրիշը պիտի զարնէ եղեր» կըսէ և ատրճանակն ետ կառնէ։

Հետեւաբար, Տէր Կախագահ, կը պահանջեմ որ սոքա հարցաքնուին և դատավարութիւններին տեղի ունենայ»։

Ընդհ. դատախազի այս տեսութեան վրայ կարգն եկած էր ամբաստանելոց հանցաքննութեանց, ուստի Ասեմ։ «Կախագահն առաջին ամբաստանեալէն սկսելով հետեւալ եերպիւ հարցաքննեց։

«Կախագահ. — Յակոբ, պատմէ աեսնենք, ինչպէ՞ս եղաւ։

Յակոբ. — Վտեն մը հիւանդութիւն մը եկաւ վրաս, չէի կընար աշխատիլ տեղս մարդ մը զնելով գործ է դադրեցայ. օր մը Աիրքէճիի սրճարաններէն մին նստած ատենս, Վրթիստակէս առուն անձը եկաւ և զիս գաղտնաբար գուրս կանչելով բսաւ թէ ասանկ կօմիթէ մը կայ, զինուոր պիտի զրկեն, շատ զրկեցին. և գեռ պիտի զրկեն, գուն ալ կը գրուի՞ս։ Ես ալ «եթէ իրօք այդպէս

բան մը կայ, շատ աղէկ» ըսի և անունս գրեց. Նաև Համիտիյէս ալ ուզեց առաւ և միասին Արթինի քով գնացինք: Արթին ըսաւ թէ երեքշաբթի օր քեզի պիտի զրկենք. երեքշաբթի եղաւ գացի, միւս շաբթուան յետաձգեցին. օր մ'ալ ըսին թէ քեզ տեղ մը պիտի տանինք հոն մեր մեծերը պիտի տեսնեն և պատկերդ պիտի հանենք: Ուստի Արթինի հետ որոշեալ տեղը գացինք. Գումա գարու սրճարան մը նստեցանք, սպասեցինք, ոչ եկող կար, ոչ գացող. մէկ մ'ալ Ահարօն անունով մէկը եկաւ, կէս ժամ վերջ ուրիշ մ'ալ, ժամէ մը վերջ Պետրոսը եկաւ. ժամանակը կանցնէր, երեկոյ եղած էր, մենք պիտի երթայինք, մեղ ըսին որ քանի որ այսափ սպասեցիք, քիչ մ'ալ համրերեցէք, կարելի է սպասած անձերնիդ կուգան. վերջապէս քիչ մ'ալ սպասեցինք մարդ չեր կաւ և ահա ոտք ելանք երթալու, ես, Արթին, Պետրոս և Յակով (Ահարօն իր գործին գացած էր). սոքա մեղ գինետուն մ'առաջնորդեցին, ես չէի խմեր, իրենք սկսան խմել, անկէ ելանք ուրիշ գինետուն մը մտանք, հոն ալ խմեցինք, իրարու հետ խել մը խօսակցեցան. վերջապէս ես գործ ունիմ պիտի երթամ ըսի. Արթին ալ երթամ էքինտին հարցնեմ քու գործիդ համոր, ըսաւ, և անկէ իրարմէ զատուեցան. հետևեալ օրը Արթին երեցաւ և «գործը փոխուեցաւ, դուն տեղ մը չպիտի կրնաս երթալ» ըսաւ. իրեն հարցուցի, ինչո՞ւ այդպէս, պատասխանեց թէ այսպէս որոշուած է, մինչև որ հրաման չի գայ տեղէդ չի պիտի շարժիս, և վերջապէս... դուն Պումգարուի եկեղեցւոյն քահանայն՝ §. Առուքիասը պիտի զարնե՞ս. այսպէս որոշուած է. որչափ որ այս գաղափարին հակառակեցայ, անկարելի եղաւ վերենք համոզել որոշուած է պէտք է ընես, ապա թէ ոչ քեզ կըսպանենք, ըսին. ի՞նչ կրնայի ըսել, համակերպեցայ: Արթին զիս փերեզակ Փիլիպպոսին քով տարաւ, Փիլիպպոս ըսաւ թէ քեզի ստակ կուտանք կը փախցնենք, մի՛ վախնար, պէտք է այս գործը ընես, վազը եկուր դէնք տամ, ըսաւ. հետևեալ օրը գացի, վեցհարուածեան ատրճանակ մը և 16 հատ ալ գրուած թղթեր տուաւ, կերեայ թէ ինքը գրեր է, քահանան զարնելէդ վերջ այս թղթերն ալ հոն ցրուէ, ըսաւ. 4-5 օր թափառեցայ առանց համարձակելու քահանան զարնել, թէպէտ մէկ երկու անգամ իրեն պատահեցայ. իրիկուն մը նստած կը մտածէի, հայրս տեսայ և իրեն ըսի թէ «հայր, եկեղեցին թուղթ փակցուցեր են, քահանան պիտի զար-

նեն, իմացա՞ր»։ Հայրս բարկացաւ և ըսաւ թէ չըլլայ որ այդ տես սակ գործերու մէջ գտնուիս, քու գլուխդ կը կտրեմ։ Վրթին դարձեալ զիս եկաւ գըտաւ և եթէ քահանան չզարնես, մենք քեզ կ'սպաննենք ըսաւ։ Վրետիսն ալ ինձ ընկեր տուաւ, հետը միաւ սին մէկ երկու օր պտըտեցանք. մտածեցի թէ անկարելի պիտի ըլլայ օձիքս աղատել չէի ուզեր ալ մարդասպանութիւն ընել. քանի անգամ քահանայն տեսած էի բայց բան մը չէի ըրած. մտածեցի կեղծ բան մ'ընել գացի եկեղեցի և ատրճանակը բարձրէն օդին մէջ պարպեցի, այնպիսի ձեռվ մը որ մէկու մը չպատահի։

«Եախ. — Եկեղեցին մարդ չկա՞ր»։

Յակոբ. — Կար, բայց ես այնպիս մը ըրի որ պարապը գնաց։

«Եախ. — Դուն ըսէ տեսնենք, Փիլիպպոս, ի՞նչպէս եղաւ։

Փիլիպպոս. — Ո՞էկը եկաւ ինձ ըսաւ թէ դուն Տաճկաց թաղը բնակելուդ համար կը կասկածին թէ մի՛ գուցէ լրտես ըլլաս. գնա՛ (Օդ-Ո՞էյտանը Վրթին մը կայ գտիր, իրեն ըսէ որ գրամ, թուղթ և զէնք պիտի բերեմ քահանան սպաննելու համար և այս պիտոյքները քու քովդ պիտի ձգեմ. ես չեմ կրնար երթալ ըսի, զիս վախցուցին քեզ կըսպաննենք ըսելով. անկարելի եղաւ ինձ դիմադրել, գացի Վրթինը գտայ, պէտք եղածը ըսի. Վրթինը ըսաւ. քահանան սպաննելու մարդ կայ, գրամ, զէնք և թղթերը իմ խանութս բերին և ինձ յայտարարեցին որ Յակոբ անունով սա պէս մարդ մը պիտի գայ այս զէնքը անոր տուր. ես զէնք չտուի, առաւօտ մը կանուխ Յակոբ եկաւ և զէնք ուզեց, ես ալ ըսի թէ քահանան Երուսաղէմ փախեր է. ո՛չ, պատասխանեց Յակոբ: Ես անոր տեղը գիտեմ, ան տեղ մը գացած չէ՛, դուն գրամ ու զէնք տուր ես անոր գործը կը չնեն: Ա երջապէս ուրբաթ առաւօտ մ'էր տեսայ որ Յակոբ հեւալով եկաւ. «քահանան զարկի, ե՛լ ինչ պիտի ընես ըսէ զիս պահէ» ըսաւ, ելանք ճարահատեալ, գահվէճի Ա արդանը կը ճանչնայի, անոր տարի, հայրենիքէն նոր եկած է քանի մ'օր պահէ լսի. շատ աղէկ. բայց մեր խանը գիշերը մարդ չպառկիր, բայց ատոր տեղ մը կը գտնամ, ըսաւ և առաւ մեղ «Եշանին տարաւ. «Եշան պահէլու համար գրամ ուղեց, մենք հաւանեցանք տալու. 40 մէջիտ ձգած էին ծախքի համար, 120 զըրուշը ատոր ծախք ըրի. հետեւալ օրը զիս ձերբակալեցին. եղածը այս է, միայն թէ ամբաստանագրի մէջ գրուածին պէս իմ մօտ խոռվիչ թուղթեր չկան, ես խոռվութիւն չեմ ընդունիր,

զիս այնչափ համոզեցին քահանան զարնելու, չընդունեցի. վերջը սպառնացան իրենց ըսածը ընելու և ակամայ խոնարհեցայ:

Ա ասիլաքի էֆ. — Ո՞վ էր որ զինքը համոզած էր, արդեօք կը ճանչէ:

Յակոբ. — Ա' չեմ ճանչնար, եթէ գիտնայի առաջուլնէ իմաց կուտայի:

Կախու. — Դուն ըսէ տեսնենք, Մինաս, դուն ի՞նչ ըրիր.

Մինաս. — Օր մը Փիլիպպոս ինձ եկաւ, ըսաւ որ մէկը կայ որ առանց նաւուն վարձքը վճարելու փախեր եկեր է, աղքատ է, պէտք է քանի մ'օր պահենք մինչեւ գործ մը գտնայ, ասիկա թող հոս կենայ քիչ մը. ես ալ հաւանութիւն տուի, օր մը կեցաւ. Հետեւեալ օր միասին կերակուր կերած ատեննիս, այս մարդը, Փիլիպպոսը ինձի կանչէ ըսաւ, ես ալ գացի կանչեցի. գրամ ուզեց և առաւ, նոյն միջոցին Փիլիպպոսին հարցուցի թէ այս մարդ մինչեւ ե՞րբ քովս պիտի կենայ. Հիմա պիտի տանիմ ըսաւ և նոյն միջոցին ես, Փիլիպպոս, Ա արդան դէպի Ծագուիմ գացինք, վերջը եկան զիս բանեցին, ուրիշ բան մը չեմ գիտեր:

Կախու. — Դուն պատմէ տեսնենք, Ա արդան:

Ա արդան. — Եմիս մ'առաջ Փիլիպպոս ինձմէ սենեակ մ'ուղեց. ըսի թէ մեր խանը մարդ չի պառկիր, բայց ես ուրիշ տեղ սենեակ մը կը գտնամ, միասին դուրս ելան, վերջը Փիլիպպոս եկաւ ինձ խմացուց թէ սենեակ գտած է, ալ պէտք չկայ: Օր մը Յակոբ եկաւ, եկուր միասին տեղ մը երթանք ըսաւ, ելանք, զիս փողոցի մը մէջ տարաւ. «Հիմա ետեկս մարդ մը պիտի գայ և մեզ տանի» ըսաւ, իրօք ալ մէկը եկաւ և մեզ պահականոց տարաւ. ուրիշ բան մը չեմ գիտեր, բանէ մ'ալ տեղեկութիւն չունիմ:

Կախու. — Դուն ըսէ տեսնենք, Համբարձում:

Համբ. — Կշան ինձ ըսաւ թէ սա մարդը (Յակոբին համար) հիւր է, Տիգրանին տունը տար, ես ալ հետը միասին գացի, տանը մօտեցանքն գուռը զարկի, ներսը մարդ չկար, պատասխան տուող չեղաւ, վերադարձանք, ճանբան Տիգրանին եղբայրը տեսայ, ըսի որ այս ձեր հիւրն է և անոր յանձնելով ես վերադարձայ. այսափի, ուրիշ ոչինչ:

Կախու. — Ա յնպէս եղաւ, Կշան:

Կշան. — Ուրբաթ օր մը ժամ կ-ին 5-ին ատենները Փիլիպպոս խանութս եկաւ և ըսաւ թէ զինքը կը ճանչնայի, պատաս-

Խանեցի թէ կը ճանչնամ. ըսելէ յետոյ թէ մօրս ազգականներէն է, յարեց որ բան մը պիտի խնդրէր ինձմէ:

Հարցուցի թէ ի՞նչ էր. պատասխանեց թէ հայրենակիցներէն մին մէկու մը վրայ զէնք պարպած, սակայն գնտակը վրիպած էր, և թէ մարդը գատ բացած է, Փիլիպպոս ըսելով նաև թէ մէղք էր այդ մարդուն, կը խնդրէր որ նոյն գիշերը զանի պահէի: Պատասխանեցի թէ տեղ չունիմ, երկու հարիւր զրուշ տուաւ: Ըսի թէ ստակի համար չէր, բայց քանի որ բան մը չկայ և գիպուած մը պատահած էր, թող գայ գիշեր մը մնայ: Փիլիպպոս մեկնեցաւ և իրիկուան Ա արդանի հետ Յակոբը զրկեց: Տեսայ որ տեղ չունէի և Տիգրանին տունը հիւր զրկեցի, որովհետեւ այդ Տիգրանին հաց կուտայի:

Փիլիպ. — Ըսի թէ մէկ քանի զրուշ կուտամ և ոչ թէ երկու հարիւր զրուշ: Օ էնքի խօսք ալ չըրի:

«Աշան. — Ճամ կ-ին Տիգրանին տունը գնացի և «անցեալ ըլլայ» ըսի այդ Յակոբին, զոր չէի ճանչեր: Պատասխանեց թէ բան մը չկար և թէ ի Գումգաբու Տ. Առւքիսա քահանայի վրայ ըէվլվը պարպած էր:

Յակոբ. — Պովս եկաւ և ըսաւ. «ի՞նչ օգուտ, պարպեր ես, բայց չես կրցեր զարնել. ուր էր թէ զարնուէր և դուն ալ ձեր բակալուէիր»: Այս ըսելով փամփուշտը գրպանը դրաւ և յարեց թէ Աահակ ալ մարդ զարկած և Պուլգարիս զրկած էր:

«Աախ. — Գուն ալ ըսէ տեսնենք, Յովակիմ:

Յովակիմ. — Դարբին մը ինձ ըսաւ թէ կատարուելիք գործ մը կար և առաջարկեց ինձ որ զինքն ալ շահակից ընեմ և ժամ մը յետոյ իւր խանութն երթամ: Ճամ մը յետոյ գացի և չկրցայ տեսնել: Դարբինը պատասխանեց թէ գալիք մարդը Շիշլիի կողմերը կը պտըտի և եթէ հանդիպի, ինձ ցոյց պիտի տայ: Ես ալ մինչև ժամ 12 թօնագսիմի կողմերը պտըտեցայ և շատ ծխած ըլլալով, գլուխս դարձաւ: «Աշանի խանութը գնացի և նստեցայ: Պաշտօնեայ մը զիս կանչեց, խանութիս մէջ խուզարկութիւններ պիտի կատարեն եղեր. գայինք, խուզարկեցին և բաժնորդագործ թեան նամակ մը գտնուեցաւ, սակայն իմս չէր: Ծնկերս ամիս մը առաջ հայրենիք գացած էր, արդէն ես զինքը վոնտած էի. այդ նամակի գիրն ընկերովս Ահնասին գիրն էր. ինձ հետ սրդողած ըլլալով մեկնեցաւ, ես մեծ մարդ մը չեմ որ լրագրի բաժանորդ ըլլալով

լամ. գտնուած նամակները մեծ մարդոց յատուկ նամակներ են. ինչի կը վայլե՞ս:

‘Ասիւ.—Այդ թուղթը դու կարդացի՞ր:

Յովակիմ: —Լարդացի:

‘Ասիւ.—Այն թուղթը, որուն մէջ գրուած էր թէ «գործին կատարման համար կազօթե՞ք»:

Յովակիմ: —Ամեն կողմը չկարդացի:

‘Ախտագահը հարցուց միւս ամբաստանելոց թէ Յովակիմը կը ճանչնային: Ամենքն ի միասին պատասխանեցին. թէ չեմ ճանչնար:

Յովակիմ: —‘Աազարէթ անուն հայրենակից մը ունեինք, որ մաքսատան մէջ կաշխատէր. հօրս հետ աղէկ կտեսնուէր և առուտուր կընէինք: Կս ալ այդ պատճառաւ կը տեսնուէի: Դումզարուի դէպքը պատահած միջոցին այդ ‘Աազարէթն ալ մէջն է եղեր: Հարցաքննութեանց ատեն՝ ‘Աազարէթ իւր հօրեղբօրը՝ Անքայէլին ըսեր է. հայրս իմանալով, Անքայէլին ըսեր է, Անքայէլ ալ հօրս աղաչեր է և ըսեր է թէ ինչ լուր որ առնէ իմաց տայ որպէս զի հօրը գրէ. հայրս ալ ինձի գրեց աղաչեց: Յետոյ լրագրոյն մէջ հրատարակեալ լուրը զրկելու համար այս նամակը թէե գրեցի, սակայն կէսը չաւարտած ձգեցի, չվերջացուցի. սակայն պատռելն ալ միտքս չեկաւ:

‘Ասիւ.—Խօսէ տեսնենք, Յարութիւն:

Յարութիւն.—Հիւանդացայ և մէկ քանի օր անգործ մնացի: Այդ միջոցին օր մը սրճարանը նստած էի, ընկերս՝ սերաստացի Անդրանիկ, առաջարկեց Լյմիածին զրկել Յովհաննէս անուն մարդ մը, զոր կըճանչնայի ի Աամաթիա աշխատած ատենս: Յովհաննէս Անդրանիկի հետ մէկ քանի անգամ սրճարանին մէջ տեսնուելէ յետոյ մէկ քանի հոգի գացեր են, տիարպէքիրցի Հայրապետի, Անցի Աարդանի, Անդրանիկի և Աւետիսի անունները գրեցի և Անդրանիկին տուի: Լցօթը տարին մէկ անգամ Լյմիածնայ մէջ գումարումներ կըլլան և արարողութիւնք կը կատարուին և ասոնք բարի գործ մը ընելու համար ստակ տալով այդ մարդիկը կը զրկէին: Ասոնց մէ զատ Աւետիսի ընկերոջ ակնեցի Անիկողոսի համար խօսեր են Աարդանին և Աիկողոս ալ յանձն առերէ երթալ: Անէկ քանի օր յետոյ Եկէնի Շամփ գնացի, ուր ամեն ատեն կերթայի հայրենակիցս տեսնելու և նամակ առնելու համար: Անէր գրացին Յակով, որուն տունը ի Աամաթիա է, ինձ ըսաւ: «Աարդ կը զրկեն եղեր, երեք մարդեր ալ իմ քովս կան.

աղաչեցին որ իրենք ալ զրկուին»։ Պատասխանեցի թէ պիտի ընդունի՞ն կամ ոչ, չեմ գիտեր, և այդ մարդոց անուանց ցանկն ուղեցի. մէկ քանի մարդոց անունները գրեցին տուին։ Հետոյ սրճագործ Արիստակէս այս գործը կատարեր է Արթին Շ'հանկիրեանի հետ, որ Վումգարուի գէպքին մէջ գտնուած էր։ Օխս ալ տարին ու «այս ալ պիտի երթայ» ըսին։ Այդ մարդոց մէկ մասն, որոյ մէջ կան նաև անոնց գրածները, Օմիւռնիա դրկեր են։ Ասոնք գացինք և եկան։ Այն մարդերն, որոց անունները գրած էր, ինձ ըսին թէ զիրենք գրած ու զրկած չէի։ Ես ալ պատասխանեցի թէ զրկողները վաղը կամ միւս օրը կըսեն և թէ կարծեմ ետ մնացողներու հետ պիտի զրկեն։ Միւս կողմէ կը կարծէի թէ շոգենաւան ուխտաւորներով լեցուելու համար կսպասէին։ Յովհաննէսին գացի և տեղեկութիւն ուզեցի. պատասխանեց թէ երեքշարժի օր պիտի երթան։ Ասոնք ալ գիտնալով որ պիտի երթան, գործերին ձգեր են։ Շաբաթ և մինչև իսկ երկուշարժի գիշեր բան մը չկայ։ Յովհաննէսին հարցուցի թէ անցագիր հանել հարկ էր, մէկ օրուան մէջ ի՞նչ չափէս կարելի էր այդ գործերը կատարել։ Յովհաննէս պատասխանեց թէ մարդ մ'ըսած էր իրեն և առաջարկեց այդ մարդն ինձ ցոյց տալ որպէս զի ինչ որ պէտք է ընէ։ Այս միջոցին Արիստակէս եկաւ և ինձ ըսաւ. «այս մարդոց գործէն ըլլալուն պատճառ եղանք. եթէ չըրկես, զքեզ պիտի զարնեն»։ Ես ալ կէս գիշերուն Ամամթիա գնացի և չովհաննէսը փնտընելով չգտայ։ Այս գործին մեծը Ամամթիոյ գինետան խոհարարն է։ Յովհաննէս ինձ նկատմամբ տեղեկութիւն տուած էր այդ մարդուն։ Խոհարարն երբ զիս տեսաւ, առաջարկեց որ ինչ որ պիտի ըսէի իրեն ըսեմ։ Ես ալ ինդիրն իրեն պատմեցի և ըսի թէ զիս պիտի զարնէին։ Խոհարարը պատասխանեց թէ Վումգարուի գիտարացին ի վեր կրօնականներն անգամ այդ կողմերը դրկելը գժուարացած է, հետեւաբար առաջարկեց որ հետեւեալ օրը երթամ տեսնեմ։ Հետեւեալ օրը գնացի։ Այդ խոհարարը՝ Ատեփան, զիս առաւ և շուկային մէջ Ատեփան աղայի խանութին առջևէն անցուց։ Պարտէզ ունեցող սրճարան մը տարաւ զիս և գնաց տեսնուիլ Ատեփան աղայի հետ, յետոյ վերադարձաւ ձեռքն ունենալով ջուրի խողովակի նման երեք խողովակներ։ «Կայեցայ որ անկեղծութիւնը վերցաւ, մտածեցի թէ ի՞նչ պիտի ըլլար։ ըսի թէ այսչափ ատեն է կաշխատէի. Յովհակիմ (հաւաքիչ) որ շաբաթն

երեք չորս անդամ կուգար, հիմա չգար, ի՞նչպէս պիտի ըլլայ:

Պատասխանեցին ինձ ըսելով. «Այսօր գնա. կարելի է Հովհաննէս վաղը կուգայ քեզ տեսնել»: Նետեեալ օրը Ատեփան աղայի 22 թիւ Խանութը գացի և ըսի թէ «վերջապէս ի՞նչ պիտի ըլլամ. գլուխս փորձանքի հանդիպուցիք. գուք հանդիստ էք, ես տասնեհինդ օրէ ի վեր անօթի եմ»: Պատասխանեց թէ ուրիշ տեղ մը կար, հոն պիտի երթար. գնաց, վերադարձաւ ըսաւ թէ անոնց քով ստակ չկար: Ուրիշ տեղ մ'ալ գնաց, անկից ալ ետ դարձաւ: Ըստ թէ այժմ հարիւրին ութսուն յոյս մը կար: Խնդրեցի որ ինչ որ պէտք էր ընէին, որովհետեւ կեանքս վտանգի մէջ էր: Անկից յետոյ մէկ քանի անդամ անոր Խանութը գնացի, սառ կայն չկրցայ տեսնել: այլ և այլ պատրուակաւ ժամանակ անցուց և ես ալ չկրցայ ազատիլ այն մարդոց ձեռքէն, որոց անունները գրած էի: Իմ Խօսքերուս չհաւատացին և պահանջեցին ինձ հետ երթալ: Ես ալ զանոնք Ատեփան աղայի ցոյց տուած Վէկրփիչ Խանը տարի, ասոնք դրան առջև կեցան: Ատեփան աղա երբ դրան մօտենալով զանոնք տեսաւ, անմիջապէս փախաւ: Իրեն Խանութը գացի և չգտայ, սակայն քիչ յետոյ կրցայ գտնել: Ատեփան աղա ըսաւ որ ես իմ այս լնթացքովս զինքը ձեռք ձգել պիտի տայի և ըսաւ ինձ Խանութս երթալ, ուր կարձահասակ դեղին պեխերով Ապատուտ անուն ժամանործ մը պիտի գար: Նետեեալ օրը Ատեփան աղայի ըսած մարդն եկաւ և ըսաւ թէ ընկերութիւնն ստակ չունէր: Ասոր վրայ նորէն Ատեփան աղայի Խանութը գնացի և ըսի թէ այս էր ըսելիքը: Ատեփան աղա պատասխանեց թէ իւր գերեզմանը բաց էր և թէ ամենքնիս ալ ձեռք պիտի տար: Ես երբ թուղթերն առնելու համար Հովհաննէսը գտնելու գնացեր էի, մարդ մը իմ Խանութս եկեր և զիս փնտուեր է: Փերեզակ Վիշրանին քովը եղող Արգիս անուն մարդ մը Ճանչցեր է այդ մարդն և միասին զիս փնտուեր են, սակայն չկրնալով գտնել զիս հարցնող մարդը ըսեր է թէ հետեեալ օրը պիտի գայ և մեկներ է: Արգիս ինձ իմաց տուաւ այդ մարդուն գալը և հետեեալ օրը մէկտեղ Խաքէնտէր Պօղազի անուն տեղը Խան մը գացինք: Արգիս ինձ պատուիրեց հոն կենալ և ինք գնաց մարդ մը կանչելու, այդ մարդ եկաւ և ըսաւ թէ մարդեր կը զրկենք եղեր. պատասխանեցի թէ զիս Խաբած էին և թէ ես չէի զրկողը: Ասոր վրայ այդ մարդ դուն հետ որոշեցինք կիրակի օրը գտնուիլ Կապը գուգաբուի եկե-

զեցւոյն մօտ գտնուած պարտէզ ունեցող սրճարանը և նոյն օրը  
հոն իրար գտանքք: Այդ մարդն ինձ ըսաւ թէ Արթին Շ'իհան-  
կիրեան, որ ընկերութենէն էր, մեկնած ըլլալով անոր տեղ Ա ա-  
նեցի Ա արդանը կարգուած էր:

Ա արդան.—Նազար հատ Ա անեցի Ա արդան կայ:

Յարութիւն.—Ա արդանին հետ պիտի տեսնուէինք, Յովհան-  
նէս եկաւ և ըսաւ որ իրեն նամակ եկած էր թէ ուրիշ տեղ մը  
պիտի զրկեն: Ասոր վրայ զիս առաւ և կառապան Ահարօնին մօտ  
տարաւ: Ահարօնի մարդն ըսաւ որ հետևեալ օրը Աամաթիս ե-  
կեղցին երթանք և ամենքնիս ալ հետևեալ օրը Աամաթիս գնա-  
ցինք: Իքի գափուլու սրճարանին մէջ Ահարօն մեզ կըսպասէ ե-  
զեր: Ոսի թէ տակաւին այդ մարդը եկած չէ, ըսելիքդ ըսէ, այս  
մարդիկ կսպասե՞ն: Ահարօն մեզի մէկ քանի գաւաթ խմցնելով  
ճամբու դրաւ: Հետևեալ օրն ալ բան մը չեղաւ: Օր մը Աեգ-  
րակ անուն մարդ մ'եկաւ Կ'թ Մ'կտանին և ինձ ըսաւ, «Պնկե-  
րութիւնն ամիսէ մ'ի վեր քեզ կը փնտուէ, Յարութիւնը դու-  
ես». «այս» պատասխանեցի: Աեգրակ ըսաւ թէ ես ալ իրենց ըն-  
կերութեան մէջ կը գտնուիմ: Ես ալ իրեն ըսի թէ թուղթերը  
չէի կրցած առնուլ, «Խմ մեծիս իմաց տամ» ըսելով մեկնեցաւ:  
Աեգրակ դարձեալ եկաւ և ըսաւ թէ խօսած էր մեծին հետ, որ  
պատասխանած էր թէ այդ մարդերը իւր տրամադրութեան ներ-  
քեւ պիտի առնուլ զիս ազատելու համար: Փերեզակ Փիլիպպոսին  
քով գացի և ըսաւ թէ ով որ մատնութիւն ընէ և ընկերութեան  
արդելք ըլլայ, պիտի սպաննուի: Ես ալ պատասխանեցի թէ եր-  
թամ իմ մարդոցս այս հրահանգն հաղորդեմ: տեսնեմ պիտի ըն-  
դունի՞ն թէ ոչ: Յակոբին, Պետրոսին և այլոց հարցուցի: Պետ-  
րոս «Ձեմ ուզեր» ըսաւ, իսկ Յակոբ ըսաւ թէ զիրենք այսչափ  
խաբած էր և թէ մինչև որ բէվոլվէրով չզինուէր, չպիտի հաւա-  
տար: Յետոյ Փիլիպպոսի աղդարարութեամբ իմ տրամադրութեանս  
ներքեւ գտնուած երկու Յակոբներն առնելով, իրեն՝ Փիլիպպոսին  
տարի: Փիլիպպոս ըսաւ թէ իրեն մեծին ցոյց պիտի տար, թէ սոքա եր-  
դում պիտի ընէին և թէ իրենց զէնք և օրական պիտի՝ տրուէր: Ես ալ ի-  
րենց հաղորդեցի. ընդունեցին և դացին: Յետոյ Փիլիպպոսը տեսնելով  
հարցուցի թէ ի՞նչ եղած էր. պատասխանեց թէ Աուքիս Յրուսաղէմ  
փախած էր, թէ պիտի հասկնային և եթէ հոս է՝ պէտք եղածը ի  
գործ պիտի դնէին: Յետոյ Փիլիպպոս բէվոլվէր ու փամիուշտ

տուեր է, քահանայն ցոյց տուեր և այլն ըրեր է, ասոնց վրայ տեղեկութիւն չունիմ: Փիլիպպոս յետոյ մարդ մ'կա ուղեց. Աւետիսը ցոյց տուի և պատուիրեցի իրեն Փիլիպպոսի խանութը երթաւ հետը տեսնուելու համար: «Իիշեր մը յետոյ Վնդրանիկ, Փիլիպպոս ու ես Վհերձան գնացինք և հոն Պաղչէլի սրճարանին կից խանէ մը ներս մտանք: Ա երի յարկը սենեակ մը մտանք, հոն կային Սեդրակ և ուրիշ մի քանի մարդեր. մէջտեղը խազի թուղթեր կային. կաւիճով գետնին վրայ դիծ մը գծեցին: Փիլիպպոս իւր խօսքն հոն գտնուող Գրիգոր էֆէնտիին ուղղելով ըսաւ. «Լարդը քուկդ է, խօսէ':»: Գրիգոր էֆէնտի, որ մեծերնին էր, սկսաւ քարող խօսիլ հետևեալ կերպիւ:

«Ո՛վ որ մեր ընկերութեան դէմ կը գնէ, պիտի սպաննուի. Հայաստան տասնևինգ օրէն պիտի ազատի. Հարուստ ու աղքատ, ամեն ոք հաւասար պիտի ըլլայ, ամեն ոք պիտի օգտի ջուրէն, հողէն ու արեէն. ի Ա ոնտոն և ի Գրանսա այսչափ մարդիկ անօթութենէ կը մեռնին. Եւրոպայի մէջ ժողովոյ մահը մար ընտրուած նախագահն առնուազն հինգ տարի կը մնայ. այն նախագահն որ օրինաց դէմ կը շարժի, պէտք է վար առնուի: Ով որ ալ ըլլայ, այն որ աղքատը նեղելով հանգստութեանը կը նայի, պէտք է վար առնուի: Գրանսայի մէջ այսչափ զինուորներ և թառոքիոյ մէջ այսչափ պահականոցներ ու ստիկաններ կան. անոնք ինչո՞ւ ըլլան. պահպանութեան համար մէկ պահականոցը բաւական է»:

Վայս միջոցին դատաւորք պահ մը հանգստանալու համար սրահէն մեկնեցան և քառորդ մը յետոյ վերագառնալվս, դատավարութիւնը վերըսկսաւ:

«Լախ. — Խօսէ', Աւետիս:

Աւետիս. — Փիլիպպոս ինձ ըսաւ որ Գումգաբու երթամ և հոն պտըտիմ Յակոր անուն մարդու մը հետ. գացի Յակորը գտայ և մինչև իրիկուն պտըտեցանք: Յակոր նոյն օրն ինձ երեք քառորդ մէծիտ տուաւ և խանութս գարձայ: Աետևեալ օրը Յակորին միացայ և դանակ մը տուաւ ինձ. հարցուցի թէ ի՞նչ էր. պատասխանեց թէ քահանայն պիտի զարնէ և թէ այդ դանակն ալ պէտք էր իմ քովս մնար: «Լայինք ի՞նչ պիտի ըլլաս» ըսելով ի Գրամգաբու սրճարան մը գնացինք: «Քահանայն նոյն միջոցին կանցնի եղեր. Յակոր ըսաւ թէ այն քահանան է: Իրիկուան խանութ

եկայ, բէվոլվէր մը բերին. հետեւեալ օր Յակոբ եկաւ և ստակ տուաւ, ուրբաթ օրը արշալոյսին ելայ. մարդ մ'եկաւ և քովս գտնուած դաշոյն ու բէվոլվէր ուղեց, տուի և առաւ գնաց: Ուրիշ բանէ տեղեկութիւն չունիմ. այսափը միայն գիտեմ:

Պետրոս, — Ա էզիր խանի մէջ կաշխատիմ: (Օր մը թաշլուդ բազար գացի և Վրիտակէս անուն մարդու մը հանդիպեցայ. հարցուց ինձ թէ հայ ես, հաստատական պատասխան տուի. ըսաւ թէ ինք մեծ մ'ունէր և զիս անոր պիտի ներկայացնէր. ի Եւնի Շամի սրճարան մը գացինք և իւր մեծն Վրթին եկաւ: Ինձ ըսաւ թէ այս մարդը զիս զինուոր պիտի զրէ. ասոր վրայ արթինի հետ ձանրայ ելանք: Շանրան Վրթին մեզմէ բաժնուեց ըսելով որ իւր մեծէն ստակ պիտի առնուր անցադրերը պատրաստելու համար և միանգամայն յարեց որ կիրակի առաւօտ Կարլը գաբուի եկեղեցւոյն շրջակայքն երթանք ուր իւր մեծը մեր լուսանկարները պիտի հանէ և զմեզ պիտի արձանագրէ տումարին մէջ:

Կոյն աւաւաւոտուն երբ եկաւ զիս առաւ և կերթայինք, ձանքան ուրիշ մարդեր ևս երեան ելան. Կարլը գարու գնացինք, Վրթին տեղ մը գնաց ու վերադառնալով մէկ քանի մարդոց հետ տեսնուեցաւ. յետոյ մէկ քանի մարդոց հետ ի Ասմաթիա զինետուն մը գացինք. սակայն չեմ գիտեր թէ ինչէր. իրիկուն եղաւ և մեր տեղերը գարձանք. հետեւեալ օրն Վրիտակէս եկաւ և ըսաւ թէ գուրսը տղայ մը կար. զոր գտնելէ յետոյ մեր երկուքը պիտի զրկէին. մէկտեղ ի Պալաթիա Եւնի Տիւնեա գիւնետունը գնացինք, սպասեցինք և այդ տղան չեկաւ և երբ վերադառնալու վրայ էինք, այդ տղուն հանդիպեցանք. տղան ըսաւ թէ ինք չը պիտի երթար, որով ինձ ալ ըսին թէ իմ տեղս գտանամ: Երբ ես տեղս կերթայի, տղան ետեէս եկաւ և զիս տարաւ Պալաթիոյ մաքսատան մօտ գինետուն մը: Հոն երբ կը տեսնուէինք, տղան ըսաւ թէ քուէն իրեն ինկած էր և թէ քահանան ինք պիտի սպանէր և առաջարկեց ինձ մէկտեղ երթալ թէն ես չուղեցի երթալ, սակայն սպառնացաւ զիս սպանել եթէ զինքը ձերբակալել տամ: վախցայ. տղան բռնութեամբ վեց հարուածեան մը ինձ տուաւ և միասին Գումգաբու գնացինք: Շամբան ես բացէն կերթայի, վաս չգալու համար: Գումգաբուէն վերադառնք առանց բան մ'ընելու: Ոչէ քանի օր յետոյ տղան տեսսաւ և ինձ ըսաւ թէ ինք այդ գործէն ազատած էր և թէ քա-

Հանան ուրիշի կողմէ պիտի սպանուէր, ասոր վրայ ես ալ իմ գործիս գացի:

Յարութիւն. — Աւետիս ու Արդիս մէկ տեղ եկան և Յակոբին սենեակը միասին գացինք: Արիստակէս հոն ինձ ըսաւ թէ ասոնք պէտք էր զրկել որովհետեւ թէ զինքն և թէ զիս պիտի զարնէին: Ոչ էզիր խան գացինք, հոն ըսի այդ մարդոց, որոց խօսք տրուած էր, թէ ես յանցանք մը չունէի, ինչ որ ինձ ըսած էին, ես զայն հաղորդած էի իրենց: Անկից Պալաթիոյ մաքսատան մօտ գտնուած գինետունը գնացինք: Ճռ ասոնք ըսին որ եթէ իրենցմէ երաշխաւոր կուղէին, պատրաստ էին տալ, այսչափ սենեկապաշներ կը ճանչնային և միանգամայն ըսին թէ նախապէս Շանկիրեանի մասնակումբին մէջ ևս գտնուած էին:

Աւետիս. — Չեմ ընդունիր:

Յարութիւն. — Աւետիս ըսաւ թէ դանակն ոսկորին դպաւ և եթէ պիտի մեռնէին, օր առաջ մեռնելով աղատէին, ես պատասխանեցի թէ այդ տեսակ բան մը չըլլար, թէ իմ ձեռքս բան մը չկար և թէ եթէ ստակ ունենայի, հայրենիքս կերթայի:

Աւետիս. — Արձարանէն գինետուն գացինք, ուրիշ մարդ չտեսայ, բանէ մը տեղեկութիւն չունիմ: միայն Արիստակէս զիս այս Արթինին ցոյց տուաւ:

Յարութիւն. — Եւնի Շամիի մօտ ես ասոր հետ չտեսակցեցայ:

Փիլիպպոս. — Աւետիս Յակոբին հետ չէր. չեմ գիտեր թէ նախապէս ընկերութեան մէջն էր թէ ոչ:

Աւետիս. — (Ճարցման մը պատասխանելով) չեմ գիտեր թէ ըէվլվէրն ովկ տուաւ, մանաւանդ չեմ գիտեր թէ ինչու տուին, ստակը Փիլիպպոս վճարեց:

Փիլիպպոս. — Մտակն ինչպէս օր առի այնպէս տուի:

Աւետիս. — Յակոբ երբ ինձ ստակ տուաւ չընդունեցայ, որովհետեւ այդ գործին փափաքող չէի:

Ասոր վրայ 16 թուղթերէ մին կարդալ տրուեցաւ ամբաստանեալներէ Այնասի և բառ առ բառ թարգմանել տրուեցաւ: Ժառագթին վրայ իբրև որոշում գրուած էր. «Պատ տրամադրութեան պատժական օրինաց, սուրբ գործին արգելք եղող լրտեսներու պատիմը մահ է»:

Արդանի սենեակը գտնուած թուղթերը Այնասի ցոյց տրուելով, թէև ուրացաւ, սակայն՝ դատարանի քարտուղարը կարդալով

սորա ձերբակալման վերաբերեալ ոստիկանական օրագիրը, հաստատուեցաւ թէ Արքաս, ձերբակալուած պահուն, խանի նկուղին մէջ ծրար մը նետած էր և թէ այդ ծրար առնուելով տեսն ուած էր թէ վերոգրեալ նամակներն ու լրագիրները կը պարունակէ: Ասոր վրայ Աարդան շարունակեց ուրանալ:

(Օրը տարաժամած ըլլալով դատն ուրիշ օրուան յետաձգուեցաւ:

Ամբաստանեալներէ Յակոբի, Յարութիւնի և Վւետիսի փաստաբան Շէհրի էֆէնտի անձնական տկարութեան պատճառով հրաժարած ըլլալով, հարցուեցաւ ամբաստանելոց թէ իրենք մէկը ու նի՞ն որ իրենց փոխանորդութիւնն ստանձնէ. մերժողական պատասխան տուին: Ասոր վրայ այդ ամբաստանելոց փոխանորդ կարգուեցան Հասան Իիզա, Աասիլաքի ու Վալիքսանեան Գէորգ էֆէնտիները:

1890 ՀՈԿՏԵՄԲԵՐ 10/22 ԴՇ. ԿԻՍ Բ

Դատն սկսաւ ժամ՝ 8<sup>1</sup>/<sub>2</sub>-ին: Դատարանը կը կազմէին նախադահ Աասըֆ էֆէնտի, անդամք Լիմին պէջ, Աէհմէտ պէջ, Աիրքուաքի էֆէնտի և օգնական անդամ՝ Աստուշեան Յարութիւն էֆէնտի: Քարտուղարի պաշտօնը կը վարէր Վզմի պէջ և Աերաքնիչ ատենի ընդհ. դատախազին կողմէ ներկայ էր օգնական Աէմտուհի պէջ:

Ամբաստանեալք կը գտնուէին իրենց յատուկ տեղը: Իաց ի Շէհրի էֆէնտիէ որ հիւանդութեան պատճառաւ հրաժարած էր, ամբաստանելոց միւս փաստաբանք ներկայ էին: Ամբաստանեալներէն Յարութիւնի և Վւետիսի փոխանորդութիւնն ստանձնած էր Հասան Իիզա էֆէնտի, փոխանորդ պարտիզակցի Յակոբի:

Դատարանին ունկնդրաց յատուկ մասը լցուած էր ստուար բազմութեամբ:

Աախագահ Աասըֆ էֆէնտի իւր խօսքն ընդհ. դատախազի օգնական Աէմտուհի պէջի ուղղելով՝ ըսաւ:

— Վնցեալ օր նամակներ ու լրագրեր կային. որոշուեցաւ թարգմանել զայնս և միանգամայն Աարդանի կողմէ սանդուխէն վար նետուած թուղթերու խնդրոյն առթիւ վկայներ կոչել: Աայդ գրութեանց թարգմանութիւնք բերուած էն: (Խօսքը քարտուղարին ուղղելով) կարգացէք:

Ասոր վրայ քարտուղարը կարդաց Հնալով լրագրոյ և կարմիր թուղթին վրայ գրուածին թարգմանութիւնը:

Կախու. — (Լիոսպը Մէմտուհ պէջի ուղելով), միւս նամակը անձնական գործերու կը վերաբերի եղեր: (Առ Արդան): Այս թուղթերը ուրկից գտնուեցան:

Արդան. — Կառավարութեան պաշտօնեայք եկան և ձերմաշ կեղինաց ծրարին մէջէն երկու թուղթեր գտան:

Կախու. — Երբ զձեզ ձերբակալէր են, դու այդ թուղթերը սանե դուխին տակը նետեր ես:

Արդան. — Ո՞չ:

Կախու. — (Լիոսպը ոստիկան զինուորաց ուղելով). Ոստիկան Շապան էֆէնտին չէ եկած:

Ոստիկան զինուորք. — Եկած է:

Շապան էֆէնտի դատարան բերուեցաւ, ուր օրինական հարցումներն եղան իրեն և հարկ եղած երդումը կատարելէ յետոյ տեղեկութիւն ուզուեցաւ իրմէ ամբաստանեալներէ Արդանի ձերբակալման վրայ:

Շապան էֆէնտի. — Կիշեր մը ժամ՝  $1\frac{1}{2}$ -ին ատենները ոստիկանաց ժողովոյ նախագահ Հիւսնի էֆէնտի զիս կանչեց և պատուիրեց որ Եէնի Ռ'ամիի շրջակայքը գտնուած խան մը, որուն անունը չէր գիտեր, երթամ և հոն խահուէճի Յարութիւնի եղբար Արդանի սենեակը խուզարկեմ: Անմիջապէս գացի և ստուգելով որ խահուէճի Յարութիւնի եղբայրը Արդան այս խանին մէջ կը գտնուի, խանին դուռը բանալ տալով ներս մոայ: Խանին սենեկապահը փնտուեցի, սակայն ըսին թէ հոն չէր: Մէկ քանի մարդեր ոտքի վրայ կը գտնուէին, այս միջոցին ատոնցմէ մին, չեմ գիտեր թէ որը, դէպի խանին աջ կողմը գնաց, ուր դուռի պէս բան մը կար. գործը կարեռ ըլլալով իրեն հետեւեցայ, այդ դուռ սրճարանի մը մուտքն է. երբ հոն մտաւ, ես ալ իրեն հետեւեցայ: Սրճարանին մէջ գտնուողները դուռը ելան իրեւ թէ զիս պատուելու նպատակաւ բարեկի կենալու համար. Արդան անուն մարդը նոյն միջոցին սրճարանին քովէն գէպի վար գնացող սանդուկի նման տեղէ մը սպիտակ բան մը վար ներեց. ընկերու Աալիհ էֆէնտի անմիջապէս վար իջնելով այդ նետուած իրն առաւ, կարմիր և սպիտակ գոյնով թուղթեր էին, որոց վրայ գիրեր կը գըտ-

Նուէին: Ընկերս այդ թուղթերն ինձ յանձնելէ յետոյ սենեակ-  
ները խուզարկեցինք:

Ա,ախ.—(Ա արդանը ցոյց տալով). Ա,յդ Ա արդանը եթէ տես-  
նէք կը ճանչնաք:

Հ ապան էֆ.—(Ա արդանը ցոյց տալով). Վ,ւասիկ, այս մարդն է:

Ա արդան.—(Չեռքովը սրճարանին տեղը բացատրելով). Ալբ-  
ճարանն այս կողմն է և սանդուխն այս կողմը, գացած ատենս թես  
բռնեց և անունս հարցուց, վրաս խուզարկեց, մեկ քանի թուղ-  
թեր գտաւ և առաւ: Յետոյ սենեակն ելաւ, ճերմակեղէնի փոքր  
ծրար մը կար. խուզարկեց և մէջէն գտնուած թուղթն առաւ:

Հ ապան էֆ.—(Թուղթերն իրեն ցոյց տրուած պահուն).  
Սանդուխէն վար նետուած թուղթերն ասոնք են. լրադրի նման  
բան մը ևս կար:

Ա,ախ.—Օրարէն առնուածը ՞ըն է.

Հ ապան էֆ.—Ա,յդ թուղթերը գտանք իր վրայէն, ծրարին  
մէջէն և գետնէն, չեմ կրնար որոշել թէ ՞ըն է, ասոնցմէ մէկն էր:

Ա ասիլաքի էֆ.—Ա,երեցէք որ ըսեմ: Իրենց վկայութեանց  
մէջ կըսեն թէ Ա արդան թուղթերը սանդուխէն վար նետեց:  
Խաներու մէջ այդ տեսակ սանդուխներ փոշիէ ու տիղմէ զերծ  
չեն: Եթէ հոն նետուած է, պէտք է որ այդ թուղթերու վրայ  
փոշի և այլն գտնուի: Ալ այդ տեսակ բան մը:

Ա,ախ.—Ա,յդ միջոցին անձրև չէր գար, մանաւանդ խանին  
մէջ կը գտնուի:

Հ ապան էֆ.—Ա,յդ թուղթերուն վրայ պարզ թուղթ մը  
փաթթուած էր:

Վոր վրայ միւս վկայն լսուեցաւ, որ է թահմա գալէի պա-  
հականոցին մէջ ծառայող երրորդ կարգի ոստիկան Տաղիստանցի  
Ալիհէ էֆէնտի, քառասուն տարեկան: Ալիհէ էֆէնտի ըսաւ թէ  
ինք ի Առութան ամամ նոտած պահուն Հ ապան էֆէնտին ե-  
կեր և այդ կողմերը գտնուած Արարի մը խանին անունը հար-  
ցուցերէ: Ալիհէ էֆէնտի պատասխաներ է թէ այդ խանին անունն  
է Ապուտ էֆէնտի խան: Հ ապան էֆէնտի ըսելէ յետոյ թէ Յա-  
րութիւնի եղբօր Ա արդանի սենեակը պիտի խուզարկեն, երկուքն  
ի միասին այդ խանը գնացեր և գուռը բանալ տալով, գուռը  
բացող վէճճին հարցուցեր են թէ սենեկապահն ՞ւր է. պատաս-  
խան ընդուներ են թէ հոն չէ: Ալիհէ էֆէնտի յետոյ կրկնեց ինչ

որ յայտարարած էր Շապան էֆէնտին, յարելով որ այս վերջնոյն հրամանաւ գետնէն առած էր Աարդանի կողմէ նետուած կարմիր թուղթեր պարունակող ծրարը:

Այդ թուղթեր Աալիհ էֆէնտիի ցոյց տրուելով, ըսաւ.

— Օրարը չբացի, սակայն գուրսէն յայտնի էր թէ այդ թուղթերու վրայ գրեր կը գտնուէին: (Հարցման մը պատասխան ելով) Աենեակը խուզարկեցինք և խել մը թուղթեր ու պատկերներ գտանք: Կաւ խուզարկեցինք ձերմակեղինաց ծրարն ինչպէս նաև ուրիշ կասկածելի տեղեր:

Կախ. — (Խօսքը Աարդանին ուղղելով) Ի՞նչ պիտի ըսես: Աւասիկ նետեր ես

Աարդան կրկնեց իւր նախապէս ըրած յայտարարութիւնը:

Աասիլաքի էֆ. — Աալիհ էֆէնտի կարմիր թուղթ մը կըսէ. միւսը կըսէ թէ լրագիր մըն էր կամ ուրիշ բան մըն էր: Անգամ մը հարցուցի, Աալիհ էֆէնտի միանդամայն ըսաւ թէ թուղթերը փաթթուած չէին:

Աալիհ էֆ. — (Հարցման մը պատասխան ելով) Ճմրթկուած և բոլորուած թուղթեր էին, փաթթուած չէին: Առանց բանալու Շապան էֆէնտիին յանձնեցի:

Կախ. — Շապան էֆէնտի, բոլորուած ճմրթկած էին:

Շապան էֆ. — Աարը մուժ էր. Աալիհ էֆէնտին առաւ բերաւ, այդ թուղթեր փաթթուածի պէս էին: Կապոյտ պահարան մալ կար, որուն մէջ զրի այդ թուղթերը: Արձարանին մէջ լցուին առջև ստուգեցինք թէ նետուածները խել մը թուղթեր էին: Գրպանը գտնուած թուղթերուն ծայրերը գրպանէն կերևէին:

Աասիլաքի էֆ. — Աալիհ էֆէնտի լրագրին համար բան մը չըսաւ:

Աալիհ էֆ. — Չբացի:

Աէմտուհ պէյ. — Ինչո՞ւ չէ բացեր:

Աալիհ էֆ. — Բոլորուած էին. առի և Շապան էֆէնտիի յանձնեցի:

Աէմտուհ պէյ. — Աքայէ վրայ բոլորուած են եղեր:

Աալիհ էֆ. — (Ժուղթերու իւրաքանչիւրը բարակ ծալլուած և ամենքն ի միասին ձեռքով ճմրթկուած ու բոլորուած էին:

Կախ. — (Խօսքը Աասիլաքի էֆ-ի ուղղելով) Եթէ փաթթուած չըլլար ձեռքին մէջ կը բացուէր:

Աստիլաքի էֆ. — Եթէ ձմլուած ըլլար, կարմիր թուղթը  
բարակ ըլլալուն պատճառաւ կոտրուած պիտի ըլլար: Ա կային  
այս յայտարարութեան մէջ հակասութիւն մը կայ: Այդ կէտը լու-  
ծելու համար կըսեմ:

Ա,ախ. — (Առ Աալիհ էֆ.) Ըսիր թէ Շապան էֆէնտիին ե-  
տին կայնած էիր: Ա արդանի կողմէ այդ տեսակ բան մը նետուած  
ըլլալը տեսա՞ր:

Աալիհ էֆ. — Օ,ևն երեցնելը տեսայ, սակայն նետելը չտե-  
սայ: Շապան էֆէնտիին իմաց տուաւ:

Համտի էֆ. — (Ոտքի վրայ ելնելով) դատի հիմը կազմող  
լրագրոյն անունն Հնալակ է, ի՞նչ նշանակութիւն ունի:

Ա,ախ. — Հայերէն զանգակ (չընդրտաք) ըսելէ եղեր:

Ա ասիլաքի էֆ. — Երժենակ մըն ալ կայ, այն ի՞նչ ըսելէ:

Ա,ախ. — Ինչ կուզէ նէ ըլլայ. հոգ լնելու բան չէ. (Խօսքն  
ամբաստանելոց ուղղելով) Երժենակ ի՞նչ ըսելէ:

Եմբաստանեալներէ մին. — Ենուն է.

Ա,ախ. — (Առ Աէմտուհ պէյ) Քննաւթիւնք այսչափ են: Ի՞նչ  
պիտի ըսէք:

Աէմտուհ պէյ, — (Ոտքի ելնելով) Կը խնդրեմ որ ամբաստա-  
նելոց ոճրագործ ըլլալն որուշուի, որովհետեւ իրենց գէմ եղած  
ամբաստանութիւնք թէ իրենք անդամներն են այն խոռվարաց  
խումբին, որ հայկական կատավարութիւն մը կազմելու ցնորական  
գաղափարն ի գլուխ հանելու համար հայ հասարակութեան մաքերը  
գրգուած են և թէ հանրային անդորրութիւնը խանգարելու բնու-  
թիւն ունեցող խոռվայոյզ ընթացից մէջ գտնուած են զինուոր գրե-  
լու ելնելով և մարդեր սպաննելով, տպացուցուած են, ինչպէս նա-  
խորդ դատավարութեան մէջ բացատրեցի, ամբաստանելոց կրկնակի  
յայտարարութեամբ, Ա արդանի վրայէն ու Յովակիմի խանութէն  
գտնուած վնասակար թուղթերով, Ա արդանի վրայ եղած թուղթե-  
րու գտնուելուն վերաբերեալ անցեալ նստին մէջ կարդացուած  
տեղեկագրով և այժմ ոստիկանաց այս առթիւ տուած տեղեկու-  
թիւններով:

Եսկից վերջը կարգը եկաւ ամբաստանելոց փաստաբաններուն:  
Հասան Իիզա էֆէնտի, փաստաբան Պարտիկակցի Յակոբի, Խոռ  
հարար Յարութիւնի և դարբին Եւետիսի, ոտք ելաւ և դատա-

կանձեռնհասութեան վրայ յառաջաբանութիւն մ' ընելէ յետոյ, ըսաւ.

Ամբաստանեալներէ Յակոբի ընթացքն երկու մասի կը բաժանուի, մին կամովին և միւսն Ճնշման ներքեւ: Յակոբի կամովին ընթացքն է զինուոր գրուիլ, խոռվարարաց խումբին մասնակցիլ և Տ. Առւքիս Աւագ քահանայն\*) սպաննելու համար գործի ձեռնարկելէ յետոյ իւր այդ չար գիտաւորութեան ծանր հետեւանքն զգալով, իւր ընկերաց ըսելն. Իսկ Յակոբի անկից ետքը ունեցած ընթացքն, որ քահանային վրայ հրազէն պարպելով վերջացած է, Ճնշման ներքեւ եղած է, այսինքն իւր տխմարութեամբ խոռվարարական գրգռմանց խաբուած և միւս կողմէ իւր կենաց գէմեղած սպանալեաց վրայ ստիպուած է այդ ոճիրը գործել: Յակոբի ընթացից առաջին մասը կը բաղկանայ կարգ մը կամովին խօսքերէ ու գործերէ և պէտք չէ որ գատապարտելի ըլլայ, որովհետեւ նիւթական ազգեցութիւն մը չէ ունեցած: Եթէ իր երկրորդ ընթացքին համար ալ գատապարտելի ըլլալը հարկ դատուի, դարձեալ զինք պատժէ զերծ կը կացուցանէ, որովհետեւ Յակոբի թէւ խօստովանած է քահանային վրայ հրազէն պարպելը, սակայն բուն իսկ ոճրագործն անոնք են որ զինքն ստիպած են: Յարութիւնի և Պետրոսի համար միենայնը կը սեմ ինչ որ ըսի Յակոբի համար. Դալով Աւետիսի զինուոր գրուիլն ու քահանայն սպաննելու համար Յակոբին ընկերանալը, մերժման և ընդունելութեան մէջ եղած պարագայ մըն է, հետեւաբար ոճրի ձեռնարկութիւն չամարուիր: Ուստի կը պահանջեմ որ փոխանորդեալներս ազատ արձակուին:

Ալիքսանեան Գէորգ էֆ.—(փաստաբան փերեզակ Փիլիպպոսի) Տէ՛ր Կախագահ, ինչպէս յայտնի է ձեզ, այս խնդրոյ մէկ մասը կը պատկանի հանրային վեասուց վերաբերեալ ոճիրներու, իսկ միւս մասը Տ. Առւքիս աւագ քահանայի գէմ եղած յարձակման: Փոխանորդեալս Փիլիպպոս, որ ամբաստանելոց մէջ կը դատնուի, հանրային վեասուց պատկանող ոճրի դասակարգէն է, իսկ խօսովարարաց հետ մասնակցութիւն ունենալը, զոր խօստովանած է, և բէվոլվէր ու ստակ տալը, երկրորդ մասին կը պատկանի: Փոխանորդեալս բէվոլվէր մը և մաս մը դրամ տուած է Յակոբին, սակայն ի՞նչ կերպով տուեր է:

Կախ. — Բիչ մը բարձր խօսեցէ՛ք:

\*) Աերջերս գախանեցաւ: Խմբ:

«Արաբա».

Ալիքսանեան Գէորգ Էֆ. — Տէ՛ր նախագահ, յայտնի է ձեզ  
թէ ըստ Մէջէլէի ամեն գործ գործողին կը յատկացուի, սակայն  
օրինաց այս տրամադրութիւնն այն պարագային համար է, երբ հրա-  
մայող մը, ստիպող մը ըըլլայ:

Յայտնի է թէ փոխանորդեալս իրեն բէվոլվէր և դրամ՝ տրուած  
ըլլալով որևէ օրինական պատասխանատութեան չենթարկուիր,  
որովհետեւ եթէ մարդ մը ուրիշ մարդու մը հատու գործի մը տա-  
լով ուրիշին տուր ըսէ և այս վերջինն ալ տայ, այս վերջինին հա-  
մար որևէ պատասխանատութիւն չկայ: Պատժական օրինաց 27-րդ  
յօդուածը կը տրամադրէ թէ (Յօդուածը բառ առ բառ կարդա-  
լով) ով որ հանրութեան վեասող բան մը տեսնէ, պարտաւոր է  
իմաց տալ տեղական կառավարութեան: Աակայն այս յօդուած չէ  
ըսած որ եթէ իմաց չտայ, այն ինչ պատժոյն կենթարկի: Այս  
պարտաւորութիւն բարոյական է: Ասկից զատ փոխանորդեալս ստիպ-  
ման ներքեւ գտնուելով Յակոբին տուած է այդ բէվոլվէրն ու  
ստակը և միանգամայն ինք Յակոբը բնաւ չէր ճանչնար: Այս ստիպ-  
ման կէտը քննելու համար Մէջէլէի այդ առթիւ ունեցած մաս-  
նաւոր տրամադրութեան պէտք է դիմել: (Յօդուածները թուելով  
պարունակութիւնը կըսէ): Ահաւասիկ յայտնի կերեկ թէ փոխա-  
նորդեալս ստիպման տակ տուած է բէվոլվէրն ու դրամն և արդէն  
հարցաքննութեանց պահուն ալ ըսած է թէ անծանօթ մարդ մը  
տուած էր իրեն: «Ոյնպէս իմ փոխանորդելոյս ստիպման տակ գտնուած  
ըլլալուն հրապարակային ապացոյց մ'է երեկի լրագրաց այն հրա-  
տարակութիւնը թէ Պօլսոյ մէջ եղեռնական ընկերութիւն մը կազ-  
մող պետերը ձերբարալուած են շնորհիւ Ա Եհ. Աուլթանին և  
ջանիւք Աստիկանութեան Ա սեմ. նախարարին: Ճ՞նշման ներքե-  
ապրող մարդ մը իւր կամքին տէրը չէ: Աարդուս քով երեք  
բան պէտք է գտնուի, հաւանութիւն, կամք և նպատակ: Ճ՞նշման  
ներքեւ մարդն հաւանութիւն և կամք չունի, հետեւար նպատակն  
ալ անորոշ է: Աւստի, փոխանորդելոյս կողմէ Յակոբի տրուած բէ-  
վոլվէրին ու դրամին պատճառաւ փոխանորդեալս որևէ օրինական  
պասխանատութեան չենթարկիր: Պալով հանրային վեաս պատ-  
ճառող խոռվարարութեան՝ փոխանորդեալս սկիզբէն մինչեւ վերջը  
կուրանայ զայդ: Խանութը խոռվարկուեցաւ, տումարները գրաւ-  
ուեցան, բան մը չգտնուեցաւ: Բնաւ տեղեկութիւն չունի ու-  
րիշներէ գտնուած Հնալու է և այլ վեասակար գրութիւններէ: Լուրջ

Ն պարկեցտ մարդ մը երբ յանկարծ աւազակաց խումբի մը հանգիպի, կամ անոնց պիտի ընկերանայ և կամ կեանքէն պիտի հրաժարի: Փոխարորդեալս ալ միենոյն դիրքին մէջն է: Խնչպէս որ մարդ մը պատասխանատու չէ այն վտանգին համար որ առաջ կուգայ իւր կամքէն անկախ պատճառներու համար: Փոխանորդեալս Եղնեցի ուղղամիտ և պատուաւոր մարդ մըն է և իբրև այն ծանօթ իւր քաղաքի իսլամ և ոչիսլամ բնակչաց:

Ա երջացունելով խօսքս յանուն արդարութեան կը խնդրեմ անպարտ արձակել փոխանորդեալս:

Մէմտուհ պէյ.—Փաստաբան էֆէնտիին ըսածներէն կը հասկցուի թէ սպառնալիք մը կայ: Արդ, քանի որ այդ տեսակ սպառնալիք մ'եղած է, պէտք էր ուղղակի խնդիրն իմաց տալ կայսերական կառավարութեան:

Գէորգ էֆ.—Լայսերական կառավարութեան չդիմելէն ալ կը հասկցուի թէ իրեն յանձնուած բէվոլվէրն ու դրամն իբրև աւանդ մը տրուած էին:

Խղզէթ էֆ.—Տէ՛ր նախագահ, յայտնի է թէ ո՛քափ փափուկ և կարեոր է այս դատն, որ այս գատարանիս առջև կը տեսնուի: Չեմ ուղեր մանրամասնութեանց մտնել ու բացատրել այս դատին տեղի տուող պարագաներն ու պատճառներն, որովհետեւ անհամ բան մըն է: Միայն կը խնդրեմ որ յետ քննութեան արդարութիւնն ու ճշմարտութիւնն երեան հանուին և այս առթիւ մեծ վստահութիւն ունինք դատարանիդ վրայ: Վմբաստանեալներէ թեփավաճառ Վինսաս ինձ դիմելով խնդրեց որ ստանձնեմ իւր փոխանորդութիւնը: Վուաչին անգամ մտաբերելով այդ դատին տեղի տուող պարագաներու ու պատճառներու տգեղութիւնը, պահ մը վարանեցայ ընդունիլ այդ դատին պատճառաւ ամբաստանեալ մարդու մը փոխանորդութիւնը. սակայն նկատելով որ քանի որ այդ դատը վարչական շրջանակին մէջ տեսնել բաւական չը համարուելով, դատական իշխանութեան յանձնուած և մինչեւ դատարանիդ եկած է, նկատելով որ ըստ տրամադրութեան օրինաց ամբաստանեալք պէտք է պաշտպան փաստաբաններ ունենան, նկատելով որ կարելի է թէ իբրև ամբաստանեալ դատարանի առջև բերուողներուն մէջ կը գտնուի այնպիսի մէկն որուն անմեղ ըլլալը հաստատուի և ատոր իրաւունքը պաշտպանել հարկ ըլլայ և նկատելով որ ճշմարտութիւնն ամեն բանէ բարձր է և անկարելի է

զայն ոտնակոխ ընել, նոյն իսկ եթէ ամբողջ մարդկային ընկերութիւնը միանայ, ընդունեցի Մինասի փոխանորդութիւնը: Այս տեսութեամբ վատահ եմ թէ հանրային խիզը զիս չպիտի դատապարտէ: Գալով ինդրոյն հիմնական կէտին, կատարուած հարցաքննութիւններէ, ամբաստանիչ ատենին ամբաստանագրէն, դատարանիդ առջև կատարուած քննութիւններէ և ընդհանուր դատախազնին դատագրէն կերեկ թէ փոխանորդեալս Մինաս իւր սենեկին մէջ ընդունած և պահած է Տ. Սուքիս աւագ քահանայի վրայ հրազէն պարզող Յակոբը: Փոխանորդելոյս ամբաստենուելուն պատճառ եղած է իւր այն յայտարարութիւնը թէ ամբաստանեալներէ Փիլիպպոսի և Ա արդանի հետ մինչև ի հերա թագսիմարուելով, հոն Ա արդանի յանձներ է: Ա ակայն Մինասի այս յայտարարութիւնը չկրնար պատճառ մը համարուիլ իրեն իրը ամբաստանեալ և իրեւ ոճրագործ նկատուելուն: Փոխանորդեալս հազիւ 15-16 տակերան երիտասարդ մըն է: Այս երիտասարդ եթէ յայտնի գործ մը և ընթացք մը ունի, այն ալ Յակոբն իւր սենեակին մէջ ընդունելն է, պարագայ մը որ օրինաց առջև ոճիր մը չէ: Յակոբ՝ Փիլիպպոսի միջոցաւ բերուած է փոխանորդելոյս խանութը ըսուելով թէ Յակոբ հայրենիքէն նոր եկած է և թէ ստակ չունենալով վճարել փախած է: Փիլիպպոս ինդրած է Մինասէն որ ժամանակի մը համար այդ Յակոբն իւր խանութիւն մէջ ընդունի ու պահէ և Մինաս ալ ընդունած է: Փոխանորդեալս ասկից զատ ուրիշ բան մը ըրած չէ և միանգամայն չգիտեր թէ Յակոբ խուլարարաց խումբի մը կը պատկանի և այս վերջոյն կողմէ դրդուելով քահանային վրայ հրազէն պարպած է և թէ Յակոբ իւր այս ոճրին ծանր հետեւանքէն վախնալով եկած է իւր խանութիւն կամ սենեակին մէջ պահուըտիլ: Ուեւ ապացոյց ալ չկայ թէ փոխանորդեալս այս պարագայներէն տեղեկութիւն ունենայ: Հետևաբար փոխանորդեալս Մինաս, այդ ոճրէն զերծ ըլլալով, յանուն արդարութեան կը ինդրեմ որ անպարտ արձակուի:

Մէմտուհ պէյ.—Փիլիպպոս, Յարութիւն ու Մինաս Կանի քով գնացեր են միասին: Այս մասին բան մը ըսուեցաւ: Անդամ մը Փիլիպպոսին հարցուի:

Եզզէթ պէյ.—Փիլիպպոս արդէն ամբաստանեալ է, անոր յայտարարութիւնն ի՞նչպէս ընդունելի կըլլայ:

Յակոբու Փիլիպպոսեթէ Կանը չճանչնար, զիսի՞նչպէս կը տանէր:

Իզգեթ պէյ. — Յակոբին խօսքերը Փիլիպպոսին համար են:

Այս միջոցին դատարանին առաջին քարտուղարը Ասեմ. նա-  
խագահին բերաւ պաշտօնագիր մը: Ասութ էֆէնտի այդ գիրը  
քարտուղարին յանձնեց կարգալու համար: Այդ գիր եկած էր ոս-  
տիկանութեան նախարարութենէն, որով կը զբկէր հացագործ՝ Աշանի  
եղեռնական ընթացից նկատմամբ առնուած տեղեկութիւններն և  
անոր յայտարարութիւնները: Յայտարարութեան գիրը կարդացուե-  
լով հասկցուեցաւ թէ Աերովբէ Յակոբեան՝ իւր ընկերը, բան-  
տարկեալ խահուէձի՝ Աազարէթ՝ Աիկողոսեանը, զինուոր գրելու  
պատրուակաւ՝ Աշանի քովը տարած էր և այս վերջինը պատասխա-  
նած էր թէ զինուոր պիտի գրէր, թէ վախնալու բան չկար և  
թէ իրենց բէվոլվէր պիտի տար Աելքոն էֆէնտին զարնելու հա-  
մար: Աազարէթ վախնալով ետ գարձած էր: Աերովբէ Ասյայտա-  
րարած էր թէ երկու ամիս առաջ՝ Աշան, զոր չէր ճանչնար, զինքն  
ու՝ Աազարէթը գտնելով գործի մը համար ի Տերա իւր խանութը  
կանչած էր, թէ երբ հոն գնացեր են, Աշան առաջարկեր է իրենց  
որ իրեն տալիք բէվոլվէրով Աելքոն էֆէնտին սպաննեն և թէ  
ասոնք չեն ընդուներ: Աերովբէ իւր մէկ յայտարարութեան մէջ  
ըսաւ է թէ Աշան զինքը կանչած չէր, այլ սրճարանին մէջ զիրար  
տեսած էին:

‘Աախ. — (Խօսքը՝ Աշանին ուղղելով) Ասոնց համար ի՞նչ պիտի  
ըսես:

‘Աշան. — Ասոնց և ոչ մի կը ճանչնամ:

Ա ասիլաքի էֆ. — Փոխանորդելոյս Ա արդանին վերադրեալ  
ոճիրն երկու մասի կը բաժնուի, առաջինը խոռվարաց խումբին  
մասնակցելն և երկրորդ վնասակար գրութեանց ներածումը: (Օ-  
րինական տեսակէտով ապացոյց մը չկայ թէ Ա արդան մասնակցու-  
թիւն մը ունենայ խոռվարաց խումբին: Փիլիպպոս փոխանոր-  
դեալէս կը խնդրէ պարապ սենեակ մը վարձել երեն: Ա արդան,  
որ զՓիլիպպոսն իբրև փերեզակ և պատուաւոր մարդ մը կը ճանչ-  
նար, առանց գիտնալու թէ խոռվարաց խումբի մը կը պատ-  
կանի, կըսէ թէ իրենց խանին մէջ պարապ սենեակ չկայ: Աէկ  
քանի օր յետոյ Փիլիպպոս, ինչպէս որ Աինասը խաբելով այն  
մարդը իւր սենեակին մէջ պառկեցնել տուած էր, փոխանորդեալ-  
կը գտնէ և կառաջարկէ անոր Տերա երթալ: Ա արդան ևս առանց  
կասկածելու կերթայ, հոն Փիլիպպոս իւր քովը գտնուած մարդը

ուրիշ տեղ մը տանելով պահել կուտայ: Փոխանորդեալս բնաւ տեղեկութիւն չունի և ապացոյց մը ալ չկայ թէ տեղեկութիւն ուռնեցած ըլլայ: Վալով վասակար դրութեանց խնդրոյն, Ա արդան, ինչպէս վրայէն կերևայ, կարողութիւն չունի կարդալու և հասկընալու այդ լրագիրը: Տգետ մարդ մըն է: Ոստիկանք կըսեն թէ այդ թուղթեր սանդուղի նման տեղ մը նետուեցան, խաներու սանդուղները փոշոտ են, եթէ ամառ է, և տղմոտ՝ եթէ ձմեռ է: Կոր ի պատասխանի Շ ապան էֆ. ըսաւ թէ ուրիշ թուղթի մը մէջ փաթթուած էին: Ո՞իւս վկայն՝ Աալիհ էֆ. ըսաւ որ կոտրտած կարմիր թուղթ մըն էր: Կոյս պարագայն դատարանիդ ուշադրութիւնը հրաւիրեց և երբ հարցուեցաւ՝ Աալիհ էֆէնտի պատասխանեց թէ նետելը չէր տեսած: Հոն՝ խանի մը մէկ անկիւնն է և հաւանական է որ ուրիշի մը կողմէ նետուած ըլլայ: Չեմ կընար ըսել թէ ոստիկանք կը զրպարտեն, միայն կըսեմ թէ խանին մէջ շատ մարդ կը մտնէ կելլէ: Ա արդանի պէս մարդ մը կարողութիւն չունի Ո՞արսիլիայէն լրագիր բերել տալու, ըսել է որ լրագրոյն հոն գտնուիլն ապացոյց մըն է թէ հոն կարողութեան տէր մարդ մը կայ: Կըսեն թէ միւս նամակներն իւր անձին կը վերաբերին և թէ միւսներն ալ ծրաբին մէջէն գտնուած են: Խոիզն ապահովցունելու համար որևէ նշան և տեղեկութիւն չկայ: Ոստիկանաց յայտարարութիւններուն մէջ մեծ հակասութիւն կայ. հետեւաբար թէ՝ ասոր և թէ՝ Պետրոսի այս գործին մասնակցութեանը համար որևէ ապացոյց չըլլալով, կը խնդրեմ որ այդ երկուքն, Ա արդան ու Պետրոս, անպարտ արձակուին:

Համտի էֆ.—(Փաստարան՝ Կանի, Համբարձումի և Յովակիմի). Կանին համար կըսուի թէ Յակոբը Տիգրանին տունը զրկելու համար միջնորդած է: Ընդհանուր գտանազը միայն այս կը յայտարարէ, յանուն հանրային իրաւանց: Ինքը գատավարութեան միջոցին գործը սա կերպիւ պատմած է թէ Փիլիպպոս գալով իւրեն ըսեր է, «Յակոբին ձեռքէն վտանգ մ'ելաւ, ատրճանակը պայթեցաւ և գնտակը վրիպեցաւ: Կոյն մարդը որուն վրայ հրազնը պարզուած էր, դատ կը բանայ, հոս թող մնայ»:

Կաստիկ այս է փոխանորդելոյս ըրածը: «Կախս և առաջ Յակոբին խոռոչաբար մը ըլլալը գիտնալ հարկ է, որպէս զի կասկած ըլլայ թէ անոր ընկերն է: Կոյս բանս մինակ տեղնկութիւն ուռնենալը կապացուցանէ: Կապացոյց չկայ: Ո՞ինակ, ձեռքէն վտանգ

մը ելաւ ըսուած և նա ալ հաւատացեր է, և վտանգ մըն է ըսելով օդներ է: Այս ալ բաւական չէ դատապարտել իբրև տէր այն ոճրին որ յառաջ կը բերուի:

Եթէ նախապէս դիտնար թէ եկեղեցի գնացեր և քահանային վրայ հրազէն պարպեր է, և զայս դիտնալով հանդերձ պահէր, մինչեւ մէկ աստիճան յանցանք մը կրնար համարուիլ. ասոր հետ մէկտեղ դարձեալ չէր կրնար պատշաճուիլ յառաջ բերուած օրինաց յօդուածին, Կպատակն իրենց համար ծանօթ չէ:

Նրկրորդ փոխանորդեալս է Համբարձում: Այս ալ կամբաստանուի թէ Յակոբը Տիգրանին տունը զրկուած պահուն Կանի հետ մասնակցած է, պարզայ մը զոր Յակոբ իմաց կուտայ: Համբարձում կըսէ թէ ‘Եշան’ Յակոբն իրեն յանձնած էր Տիգրանին տունը տանելու համար, թէ ինքն սիսալ տուն մը գնացած էր և թէ վերադառնալուն Տիգրանի եղբօր հանդիպելով անոր յանձնած էր: Իւր այս յայտարարութիւնք բաւական չեն վճռելու թէ մասնակցութիւն մը ունեցած ըլլայ, որովհետեւ նախ տեղեկութիւն ունենալ հարկ է: Եթէ Համբարձում տեղեկութիւն ունեցած ըլլար, հարկ էր որ դիտնար այդ Տիգրանին տունը, սակայն իւր ըսածներէն կերեկի թէ տեղեկութիւն չունի: Հետեւարար այդ կարգի պարագայներ բաւական չեն զայն իրեւ ոճրագործ ձանչնալու:

Գալով Յովակիմի, ասոր համար ալ կըսուի թէ քովէն ստորագրութիւնն անձանօթ նամակ մը գտնուած է, որ բաժանորդ գրուելու համար լրագրոյն խմբագրին ուղղուած էր: Յովակիմ կըսէ թէ այդ նամակը իրը չէ այլ իւր ընկերոջն է, որ հայրենիք գնացած է: Կպացոյց մը չկայ չկայ թէ այս նամակ իրեն եղած ըլլայ: Ոչ իրեն գիր գրել տրուած, ոչ գիրն հասկցուած և ոչ ստորագրութեան որուն ըլլալն հաստատուած է: Ենթադրելով որ նամակն իրեն եղած ըլլայ, տեղը զրկուած չըլլալով, պարզ ձեռնարկ մըն է և ոչ գործ մը: Վասաց որ այս տեսակ մարդ մը խըմբագրի մը հետ թղթակցելու աստիճանին մէջ չկրնար գտնուիլ:

Կալարէթի ընթացքին նկատմամբ թղթակցութիւն մը պարունակող նամակի մը սկագրութիւնը գտնուեր է: Ասոր համար ալ կըսէ թէ ‘Կաղարէթին հօրեղբօր աղաւանաց և իրեն հօրը յանձնարարութեանը վրայ գրեր է լրագիրներու մէջ հրատարակեալ ըուրերը, սակայն չէ դրկած: Կպացոյց մը չկայ որ այս այս յայտարարութեան հակառակը հաստատէ: Վիայն այս վիճակին

մէջ մնալն ալ խղճով վճռելու բաւական չէ թէ խոռվարնելք մին եղած ըլլայ:

‘Աշանի մասին եկած հիմակուան քննութիւնք կարդացուեցան: Վայ տեսակ քննութիւնք դատավարութեան պահուն միայն կը կատարուին և այն ալ օրինաց շրջանակին մէջ: Աակայն այս դատավարութեան պահուն, պաշտպանութենէն աւաշ ներկայացուած ըլլալով...

‘Եախ. — (Խօսքն ընդմիջելով) դատը տակաւին չաւարտեցաւ: Վէմտուհ պէյ. — (Ծա՛ղ շարունակէ:

Համտի էֆ. — Ինչպէս ըսի դատարանի առջև իրեւ վկայութիւն չը համարուիր: Եթէ ըլլայ իսկ, փոխանորդեալս կուրանայ ‘Լազարէթի յայտարարութիւնները: Վայ պարագային մէջ քննութեանց այդ տեղեկագիրն, որ լոկ նախական քննութիւն մըն է, ոճրագործութիւնը վճռելու օրինաւոր պատճառ մը չէ: Հետեւաբար կը ինդրեմ որ փոխանորդեալներս անպարտ արձակուին:

Վէմտուհ պէյ. — Կարծեմ թէ ասոնց յայտարարութիւնք ամբաստանեալ վիճակի մէջ արձանագրուած են:

Քարտուղարը. — Բացատրուած չէ: Վիայն օրինակները հաներ ու զբկեր են:

Վայ վրայ նախագահը պատուիրեց ոստիկան Շապան էֆէնտին, որ դատարանին մէջ ներկայ էր, անմիջապէս բերել ‘Լազարէթն ու Աերովքէն, և դատաւորք ժամը 10 քառորդ անցած խորհրդակցութեան սենեակը քաշուեցան:

Յետոյ ‘Լազարէթ և Աերովքէ բերուած ըլլալով, դատաւորք ժամը  $10^1/2$ -ին դատասրահը դարձան:

‘Եախ. — (Խօսքը ‘Լազարէթին ուղղելով) Վնունդ ի՞նչ է:

‘Լազարէթ. — ‘Լազարէթ:

‘Եախ. — Քանի՞ տարեկան ես:

‘Եախ. — Քսան:

‘Եախ. — Ո՞ւր տեղացի ես:

‘Եազարէթ. — Շապին Գարահիսարցի:

‘Եախ. — Ի՞նչ գործով կը զբաղիս:

‘Եազարէթ. — Ե Պէշիկթաշ խահուէճի եմ:

‘Եախ. — Օքեզ ո՞ւրկից բերին:

‘Եազարէթ. — Ոստիկանութեան դուռը բանտարկուած եմ:

‘Աախու. — Հոն հացագործ Կաշանի համար բան մը ըսեր ես: Այդ ըսածներդ հոս ալ ըսի:

‘Աազարէթ. — Ընկեր մը կար հիւսն, զմեզ ուզերէ էր, առտունի Պէշիկթաշ ուրիշ սրճարան մը գացինք այդ հիւսնին հետ, յետոյ Ծագսիմ անցանք: Հիւսնը կըճանչնայ եղեր Ծագսիմ գտնուող ‘Աշանը. զիրար բարեկցին, շատ մը խօսքերէ յետոյ, ձեզի գործի մը վրայ գնենք ըսին. հարցուցի թէ ի՞նչ գործ էր. գրենք ըսին. ի՞նչ պիտի գրէք ըսի. զինուոր պիտի գրենք ըսին. երբ հարցուցի թէ յետոյ ի՞նչ պիտի ընկին, պատասխանեց թէ քեզ գրովը հարկաւ բան մը կընէ:

‘Աախու. — Ո՞վ ըսաւ:

‘Աազարէթ. — Կաշանը ըսաւ: Յետոյ գրել ուզեց. հասկցայ որ վեցհարուածեան մը պիտի տար և մէկը կայ եղեր զոր ես չեմ ճանչնար և զոր ընկերս կը ճանչնայ, զարնել հարկ է եղեր: Ես ըսի թէ արդեօք այս մարդը յիմար է, որ այս տեսակ խօսքեր կընէ: Յետոյ այդ տեսակ բաներէն կը վախնանք ըսելով, ձգեցինք գացինք.

‘Աախու. — Կաշանը թէ որ տեսնես, հարկաւ կը ճանչնաս:

‘Աազարէթ. — Ծէ որ տեսնեմ կը ճանչնամ:

‘Աախու. — Պարողն ո՞վ էր և ըելովէրն ո՞վ պիտի տար: Օարշնուելիք մարդն այս ինչն է ըսողն ո՞վ էր:

‘Աազարէթ. — Կաշանն էր:

‘Աախու. — Յոյց տուր ինձ:

‘Աազարէթ. — Ահաւասիկ (ամբաստանեալներէն Կաշանը ցոյց կուտայ):

‘Աախու. — (Խօսքը Աերովբէի ուզելով) անունդ ի՞նչ է:

Աերովբէ. — Աերովբէ:

‘Աախու. — Քանի՞ տարեկան ես:

Աերովբէ. — Քսան և մէկ:

‘Աախու. — Ո՞ւր տեղացի ես:

Աերովբէ. — Բարերդցի:

‘Աախու. — Ի՞նչ գործով կը զբաղիս:

Աերովբէ. — Հիւսնութիւն կընեմ:

‘Աախու. — Պո՞ւ ալ բանտն ես.

Աերովբէ. — Այսո:

‘Աախու. — Հոն ինչ որ ըսիր, հոս ալ ըսէ:

Աերովբէ. — « Աշան զմեզ իւր խանութը տարաւ ի Տերա. նստեցանք, տեսնուեցանք և բանէ մը տեղեկութիւն չունէինք. » Աշան ըսաւ թէ բէվոլվէր մը պիտի տային և թէ այս ինչ մարդը մեղմէ կուզէին: ԱԵՆՔ ալ այդ տեսակ բան մը չենք կրնար ըսել ըսելով մեկնեցանք:

« Աաին. — Ո՞վ էր այդ զարնուելիք մարդը:

Աերովբէ. — Ի Պէշիկթաշ ՎԵԼՔոն անուն մարդ մը:

« Աաին. — Ո՞վ է եղեր. ի՞նչ գործ կընէ եղեր:

Աերովբէ. — Չեմ գիտեր:

« Աաին. — « Աշանը թէ որ տեսնես կը ճանչնաս:

Աերովբէ. — Ա, յօ:

« Աաին. — « Աայէ:

Աերովբէ. — Ա, յօ մարդն է (« Աշանը ցոյց տալով »):

« Աաին. — (Առ ՎԷմտուհ) Ի՞նչ պիտի ըսէք:

ՎԷմտուհ պէյ. — Համտի էֆէնտի եթէ ըսելիք մը ունի, թողըսէ:

Համտի էֆ. — Ա, յօ երկու վկայներէն մին « գացինք » կըսէ, իսկ միւսը « Աշան մեզ առնելով տարաւ »: Ա, յօ երկու յայտարարութեանց մէջ հակասութիւն կայ: Ա, յդ, ասոնք ընդհանուր դատախազին կողմէ կոչուած չեն, հետեւաբար ասոնց տուած վկայութիւնը բնաւ վերաբերութիւն չունի փոխանորդելոյս նկատմամբ տրուելիք որոշման:

« Աաին. — Ա, յդէն մենք ասոնք բերել տուինք միայն տեղեկութիւն մը առնելու համար:

« Բննութիւնք աւարտած էին, երբ ժամն ալ 11-ին մօտեցած էր: Հետեւաբար անկարելի ըլլալով խորհրդակցութիւն կատարել և վճիռ արձակել, խնդիրն յետաձգուեցաւ:

ՆԽԾ Գ. 11|25 Հոկտեմբեր, Եշ.

Երէկ ևս երրորդ և վերջին դատավարութիւնը տեղի ունեցաւ: Դատարանը կը կազմէին նախադահ՝ Ա ասլֆ էֆէնտի և անդամք Լյմին էֆ. ՎԷհմէտ էֆ. ու « Ակքոլաքի էֆ. և օգնական անդամ ՎՊոստիչեան Յարութիւն էֆ. : « Աերկայ էր ընդհանուր դատախազի օգնական ՎԷմտուհ պէյ: « Արյնակս ամրաստանեալք ու անոնց փաստաբաները:

Դատավարութիւնն սկսաւ ժամ 7<sup>1</sup>/<sub>2</sub>-ին:

Կախու.—(Խօսքն Յակոբի ուղղելով) Յակոբ, Փիլիպպոսի համար բան մը պիտի ըսես եղեր, ըսէ տեսնենք:

Յակոբ.—Փիլիպպոս կըսէ թէ մարդ մը իրեն սպառնացեր և թէ այդ մարդը չճանչնար: Կարելի՞ է որ մարդ մը չճանչնաց զայն որ իրեն կը սպառնայ և իւր չճանչցած մէկ մարդուն խօսքովը շարժի:

Փիլիպպոս.—Չեմ ճանչար:

Յակոբ.—Փիլիպպոս կը պնդէ թէ ես կը ճանչամ, բայց քանի որ ինձ սպառնացողը Փիլիպպոս է և ես Փիլիպպոսը կը ճանչնամ, Փիլիպպոս ի՞նչպէս իրեն սպառնալիքներ ընողը չը ճանչնար: Ասկից զատ այդ մարդը չը տեսայ որ ճանչնամ:

Փիլիպպոս.—Եսդ մարդն ինձ սպառնալիքներ ըրաւ. վախցուց. Խոհարար Յարութիւն ալ ներկայ էր:

Յակոբ.—Կա զքեղ վախցուց, գու ալ զիս: Ես զքեղ կը ճանչնամ և գու կըսես թէ այդ մարդը չես ճանչնար:

Կախու.—Աւասիկ Փիլիպպոս կըսէ. Յակո՛բ, եթէ գու ալ գիտես, ըսէ:

Յակոբ.—Ես չեմ գիտեր, սակայն Փիլիպպոս զիտէ և չըսելուն պատճառն ալ այն է թէ ամենքն ալ երդում ըրած են:

Յարութիւն.—Ես ամենքն ալ երդում ըրած են և չեն ըսեր: Ես երդում ըրած չեմ:

Յակոբ.—Ինձ ալ առաջարկեցին որ երդում ընեմ: Փիլիպպոս միայն անունս գրեց և տասնուվեց թուղթերը յանձնած պահուն պատուիրեց թէ իրեն տուած ըլլալը չըսեմ, այլ թէ Պիթ Բարզարէն առած էի: Ես ալ երդում ըրած ըլլալով ամենքն ալ ըսի: Եթէ ուրիշ բաներ ալ գիտնամ, կըսեմ:

Փաստաբան Գևորգ էֆ.—Յակոբ իւր ըսածները պէտք է ապացուցանէ:

Յակոբ.—Ի՞նչպէս կարելի է ապացուցանել գաղտնի գործ մը. գաղտնի տեսակցեցանք:

Գևորգ էֆ.—Փոխանորդելոյս սպառնալիքներ ըսեր են. այդ պատճառաւ պատասխանատու չկրնար նկատուիլ որովհետեւ գործին մէջ ճնշում կայ:

Աստիլաքի էֆ.—Յարութիւն կըսէ թէ ինք երդում ըրած չէ. եթէ ուրիշները գիտէ թող ըսէ:

Յարութիւն. — Ես անոնց հետ տասն օր գտնուեցայ. շաբաթուան մը մէջ տեղի ունեցած ամեն բան ըսի: Տակաւին կուրանան:

Կախ. — Եթէ Փիլիպպոսին սպառնացողը չես գիտեր, ուրիշ մէկը չե՞ս ձանչնար. ինչպէս օր միւս եղածները չպահեցիր, այս ալ ըսէ.

Յարութիւն. — Ուսանող Գրիգորը կը ձանչնամ. նոյն իրիկունը Գրիգոր հարցուց Փիլիպպոսին թէ գործն ի՞նչ վիճակի մէջ էր. Փիլիպպոս ալ պատասխանեց թէ երկու մարդ որոշուած էր և երկու մէջիտիէ ուղեց. Աեղլաք ու Անդրանիկ հոն էին, ձայն ըլ հանեցին. Գրիգոր մէջիտիէ մը տուաւ Փիլիպպոսին. Փիլիպպոս ըսաւ թէ բաւական չէր. Գրիգոր պատասխանեց թէ յետոյ պիտի կարդագրէր.

Կախ. — (Առ Փիլիպպոս) Գրիգորը կը ձանչնա՞ս:

Փիլիպպոս. — Այդ տեսակ մարդ մը չեմ ձանչնար:

Յարութիւն. — Ի՞նչպէս չես ձանչնար, գեղարանին մէջ իրաւ խօսք չտուի՞ք:

Գէորգ. — Ճշմարտութիւնն երևան հանելու համար...

Կախ. — (Բնդմիջելով) Համբերեցէք. (Առ Յարութիւն) Այդ գեղարանն ո՞ւր է.

Յարութիւն. — Ի կոսքա:

Կախ. — Այդ գեղարանն որո՞ւ կը վերաբերի:

Յարութիւն. — Չեր գիտեր. սակայն Անդրանիկ կը յաջախէր այդ գեղարանը:

Այս միջոցին փաստաբան Խզզէթ էֆէնտի ոտքի ելաւ և յայտարարելով որ թէւ իրաւունք չունի միջամտել Հակոբի ու Փիլիպպոսի խօսքերուն, սակայն իւր փօխանորգելոյն ալ վերաբերելով իւր պարտքն է ասոր իրաւունքը պաշտպանել. ըսաւ որ եթէ նախագահն ինչ ինչ խրատական խօսքեր ուղղէ ամբաստանելոց, պիտի համացուի թէ այն ոճիրներն, որք տակաւ երևան կելլեն, հրամանի մը ներքեւ գործուած են: Խզզէթ էֆ. յարեց թէ այս կերպիւ թէւ ամբաստանեալք բոլորովին անպարտ չեն արձակուիր, սակայն իրենց պատիժը կը թեթևենայ և միւս կողմէ բուն իսկ ոճրադործն երևան ելլելով արդարութիւնն ի գործ կը գրուի:

Կախագահն հարցուց ամբաստանելոց թէ ըսելիք մը ունէի՞ն. ամբաստանեալք լուռ կեցան: Անդհանուր գատախաղի օդնական Աէմտուհ պէյ կրկնեց իւր նախապէս ըրած պահանջումը. նա-

Խսագահն յայտարարեց թէ դատավարութիւնը վերջացած էր, ըստ որում քննութիւնք աւարտած էին:

Դատաւորք խորհրդակցութեան սենեակը քաշուեցան և ժամը 9,20-ին վերադարձան:

Վարտաւորք Ազմի պէյ կարդաց դատարանին հետևեալ որու շումն, որով ամբաստանելոց ոճրագործ ըլլալը վճռուած էր:

«Երկու կողման պահանջումներն ու անձնապաշտպանութեան համար եղած յայտարարութիւնները լսուելէ և այս խնդրոյ վերաբերեալ գրութիւնները քննուելէ ու կարդացուելէ յետոյ, դատավարութիւնը սկսուեցաւ։ Ասոնց մանքամասնութիւնը պիտի երեկի բոնուած ատենագրութեան և պատրաստուելիք վճռագրոյն մէջ։ Արդ, դատարանը նկատելով որ ամբաստանեալ պարտիզակցի Յակոբ, փերեղակ Փիլիպպոս, թեփավաճառ Մինաս, խաչուէճի Արդան, ատաղձագործ Համբարձում, հացագործ Աշան, դարբին Յովակիմ, խոհարար Յարութիւն, ջուլհակ Աւետիս և մուճակարգործ Պետրոս, տասն անձինք, կը վերաբերին այն խոռվարաց խումբին, որոյ նպատակն է օսմանեան երկիրներու մէկ մասը անջատելով՝ Հայաստան անուամբ անկախ վարչութիւն մը կազմել նկատելով որ խել մը յեղափոխական ընթացից մէջ գտնուած են հայ հասարակութեան մտքերը գրգռելով, զինուոր գրելով և մարդեր սպաննելով. և ի մէջ այլոց ասոնցմէ Յակոբ Փիլիպպոսի կողմէ տրուած բէվոլվէրը Գումբափուի եկեղեցւոյն մէջ կրօնական արարողութիւնք կատարուած պահուն Տ. Առւքիս աւագ Քահանայի վրայ պարպած է սպաննելու նպատակաւ, նկատելով որ այս վերջին պարագան հաստատուած է ամրաստանեալներ է ոմանց խոստովանութեամբք որք կը հաստատեն միմեանց խօսքերը, և նկատելով որ այս և ուրիշ պարագայներ հաստատած են Արդանի ձերբակալուած պահուն վրայէն նետած ու յետոյ առնուած վեսակար թուղթերը, պարագայ մը որ երդմամբ իմաց տրուած է, ինչպէս նաև Յովակիմի խանութէն գտնուած վեսակար գրութիւնները. մէկ ոճրին տեսակին ու աստիճանին վրայ կարծեաց անհամաձայնութիւն ծագած է, սակայն Յակոբի ոճրագործ ըլլալը միաձայնութեամբ և Փիլիպպոսի, Մինասի, Արդանի, Համբարձումի, Աշանի, Յովակիմի, Յարութիւնի, Աւետիսի և Պետրոսի ոճրագործ ըլլալն ալ որոշուած է երկու երրորդ մասին մեծամասնութեամբ»։

Յաւարտ ընթերցման, ընդհ. դատախազի օգնական ԱԿմտուչ  
պէջ պահանջեց որ ոճրագործք, որոց արարքը կը պատշաճի պատ-  
ժական օրինաց 54-րդ յօդուածի յաւելուածին, պատժուին ըստ  
արամագրութեան նոյն յաւելուածին:

Փաստաբանք ինդրեցին որ իրենց փոխանորդեալք, որք Ա եհ.  
Առութեանի գթութեան կարօտ էին, պատժուէին ըստ արամագրու-  
թեան նոյն յաւելուածի երկրորդ հատուածին:

Դատաւորք կրկին անգամ խորհրդակցութեանց սենեակը քա-  
շուեցան և ժամ  $10^1/2$ -ին վերադարձան:

#### Դ Ա Տ Ա Պ Ս Ր Տ Ո Ւ Թ Ւ Ւ Ն

Կայ. — (Խօսքն ամբաստանելոց ուղղելով) Ձեր արարքը կը  
պատշաճի պատժական օրինաց 54-րդ յօդուածի յաւելուածին. այդ  
յօդուածը պիտի կարդամ, մտիկ ըրէք.

«Եյն մարդիկ որք օմանեան երկիրներու մէկ մասը, կամ  
մէկ փոքր մասը և կամ առանձնաշնորհեալ նահանգներէ մին ամ-  
բողջովին կամ մասամբ ուրիշ առանձնաշնորհեալ նահանգի մը  
լանութեամբ միացնելու և կամ ընդհանուր կերպով օմանեան  
կայսրութեան երկիրներու մէկ մասը կառավարութեան վարչու-  
թենէն անջատելու ձեռնարկեն, մահուան կը դատապարտուին:


«Եթէ պատիժը թեթևունելու հանգամանք ունեցող պա-  
րագայ մը տեսնուի, յայնժամ առժամեայ բերդարգելութեան կը  
դատապարտուին, պայմանաւ որ հինգ տարիէն վար չըլլայ դա-  
տապարտութեան պայմանաժամը»:

Յակ'ը, Փէլպար'ս, Յարո-նի՛ւն, Կալուան դադա-  
պարագուածէն, ըստ պատամարտունիւն նոյն յօդուածի յա-ելուածի  
առաջին հայուածին:

Իսէ դուռ, Մինաս, Վարդան, Եօնիական պարուան բերդար-  
գելունիւն, ըստ պատամարտունիւն երկրորդ հայուածին:

Երդուռ, Հանդապյուն-էն, Յալալի՛ն, Ա-եւուն և Պէտրուն<sup>\*</sup>), հին-  
գական պարուան բերդարգելունիւն՝ ըստ պատամարտունիւն երկրորդ  
հայուածին:

Ժամի  $10^1/2$ -ին դատաւորք և ունկնդիրք մեկնեցան:



<sup>\*</sup>) Աերջերս սոքա, մի քանի ուրիշը և վերել յիշուածները ու մահուան տադա-  
պարառւածներն ևս աքսոր ուղարկուեցան Փէսան-Ափրիկէի խորքերը: Խմբ.

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ի Տէր Հանգուցեալ Տ. Տ. Մակար սրբազնագոյն կաթողիկոսի  
մահուան առիթով ոռուսաց բոլոր լրագրներում կենսագրական տե-  
ղեկութիւններ տպագրուեցան. սակայն «Новое Время» ազդեցիկ  
թերթի մէջ, Հոգելոյս կաթողիկոսի մահուան երկորդ օրը թէ  
կենսագրական տեղեկութիւններ հաղորդուեցաւ և թէ 5451 հա-  
մարում տպուեցաւ ի Տէր հանգուցեալ Հայրապետի գեղեցիկ լու-  
սանկարը հանդերձ փոքր ի շատ է ընդարձակ յօդուածով:

Անցեալ տարի Պոլսում պատահած Գումը Գափուի նշանաւոր  
գեղքից յետոյ՝ Կիլիկիոյ Ուլնիա (Օէյթուն) կոկիսն, Հաճին  
Շայաս գաւառների բաղմահայ քաղաքների և գիւղերի քաջազուն,  
բայց աղքատիկ, հայերը մէծ աղէտներ են կրած Խոռորդիոյ կա-  
ռավարութեան ձեւամբ: Այս բոլոր քաղաքների և բազում գիւ-  
ղերի կրնական և աշխարհական նշանաւոր մարդիկ տեղւոյն կա-  
ռավարութիւնների կասկածանքներին ենթարկեալ «ի խոնաւ բան-  
տունս հեծին. ի Մարաշ, ի Բայաս և յլուանա. և յաղթարազուկ  
հրացանակիրք նոցին յանաւիկ Երինս ապաստանեալ ինքնապաշտ-  
պանութեամբ ապրին զուրկ յամենաբաւական պաշարաց»... Շան-  
տարկելոց մէջ կան «Տ. Կարապետ Եպիսկոպոս առաջնորդ—վանա-  
հայր Ուլնիոյ, մի վարդապետ, մի քահանայ, երկու գասատու և  
բազում հայ յերեելի և ի հասարակ ժողովրդոց Ուլնիոյ բանտար-  
կեալ ի Մարաշ: Վոյնակս ի Աս կան բանտարկեալ Հաճնոյ հայոց  
յերեելեաց գասակարդէ և ի կրթական պաշտօնէից քառասունէն  
աւելի մարդիկ, յլուանա մի վարդապետ և եօթն կրթական պաշ-  
տօնեայ. և ի բերդն Շայասի հինգ ազգային երևելիք հայոց ի  
գիւղօրէից Շայասի»: Այս խեղձերի լնտանեաց օգնելու համար  
կամ ի մատակարարութիւն կարեորագունից հայոց Կիլիկիոյ չկայ  
մի ձեռք օգնութիւն կարկառելու գէթ մարդասիրական տեսակետից:


«Звезды» պատկերազարդ շաբաթաթերթի ներկայ տարուայ ա-  
ռաջին համարում հետաքրքրական և պատմական տեղեկութիւննե-  
րով յօդուած է տպուած «Празднование нового года у армянъ» վերնագրով:

«Северный Вестник» յայտնի ամսագրի մայիսի գրքում տպուած  
է «О Грузии» վերնագրով հետաքրքրական մի յօդուած:

Ինչպէս միշտ, այս տարի ևս Պետերբուրգում տեղի ունեցաւ սովորական հայկական երեկոյթը, որ բաւական յաջող անցաւ, միայն ցաւալի է, որ երեկոյթի ծրագրի մէջ հակառակ ընդունուած սովորութեան պիեսայի պակասութիւնը զգալի էր: «Այսպէս ցանկալի է մտցնել ծրագրի մէջ և հայերէն երգեցողութիւն:

Յաւօք սրտի հաղորդում ենք, որ այս թերթը տպագրելուս, հեռագիրը գուժեց ազգի սիրած տաղանդաւոր գերասանի մահը Պոլսում: Վագամեանի մահավ հայ թատրոնը անփոխարինելի կորուստ է ունենում:

Պետերբուրգի գիւղատնտեսական թանգարանում փետրուար և մարտ ամիսների միջոցում Պ. Վետիս Քալանթարը կարդաց միշարք դասախոսութիւններ, որոնց նիւթն էր կաթի ուսումնասիրութիւնը և նորանից սեր և իւղ պատրաստելը: Յարգելի դասախոսը առաջին երեք զրոյցների մէջ բացատրեց հասարակութեանը կաթի յատկութիւնները որոշելու ձևերը և ցոյց տուեց ամենահասարակ գործիքների հետ միասին և այն բոլոր նոր, թէ հին, զանազան ժամանակ գործ ածուած եղանակները (մետողները), որոնց միջոցով կարելի է հետազոտել կաթը և իմանալ նորա կեղծուած լինելը: Հետևեալ դասախոսութիւնները նուիրուած էին սերազատ (կենտրօնախոյս) մեքենաներին: Այս տեսակ մեքենաներ, որ այժմ ամբողջ Եւրոպայում և նոյն իսկ Ուսուսաստանում գործածական են դարձել, առաւել տաք երկրների համար այն մեծ առաւելութիւնը ունեն, որ աւելորդ են դարձնում մեծ քանակութեամբ սառոյց ունենալը, զանազան անօթեղէն գնելը և միենոյն ժամանակ միջոց են տալիս միշտ աւելի թարմ և համեղ սեր և իւղ ստանալու, քան հին ձևերով: Յարգելի դասախոսը հաւաքած էր այդ մեքենաներից ամենալաւերը և կաղմած էր մի ամբողջ ժողովածու, որի հետ ծանօթացրեց հասարակութեանը գործնականապէս: Իւղ պատրաստելու, աղելու և պահպանելու ամենանոր ձևերի մասին խօսալով, դասախոսը վերջացրեց իր դասախոսութիւնները իւղի կեղծելու և նորա դէմ մաքառելու զանազան գիտնական և գործնական մետողների հետծանօթացնելով: Այս հետաքրքրական դասախոսութիւնները մասամբ տպագրուելու են: Յանկալի էր, որ մեր դասախոսները իրենց աշխատութիւններից մի մաս հանէին և մեր հայ հասարակութեան համար:





Եշխանուհի Մերի, նկար Օլենի.

М. Зичи. — Княжна Мери.

Изъ романа «Герой нашего времени» Лермонтова.

Հրատ. «Արարա» Հանդիսի:

16 մայիսի

Երկու առուր ընթացքում իմ գործերս շատ առաջ գնացին: Իշխանադուսարը զրականապէս ինձ առում է, արդէն ինձ խմաց տուին երկու-երեք բաւական սուր երդիծաբանութիւններ իմ մասին, միենոյն ժամանակ բաւական պատուաբեր ինձ համար: “Նէրան խիստ տարօրինակ է թվում, որ ես վարժուած եմ լաւ շրջանի, որ սցապէս մտերիմ եմ նէրա պետերբուդի աղքականուհիների հետ, բայց և այնպէս չեմ աշխատում նէրա հետ ծանօթանալ:” Մենք ամեն օր ջրակի մօա ձեւմելիքում միմեանց հետ պատահում ենք. ես բոլոր իմ ոյժերս գործ եմ դնում, որ նէրանից բաժանեմ նէրա պաշտոներին, փայլուն աղիւտանտներին, աժգոյն մօսկվացիներին և ուրիշներին-և ինձ համարեա միշտ յաջողվում է: Ես երբեք չեմ սիրում հիւր ունենալ այժմս իմ տունս ամեն օր լիքն է. ճաշում են, ընթրում են, խաղում են և աւաղ, իմ շամբանեան զինիս յաղթում է նէրա մագնիսական աչքերի ոյժին:

Երեկ ես նէրան պատահեցի Զելիսօվի կրակակում, նէ սակարիում էր մի հրաշալի պարմական գորդ: Իշխանադուսարը ինդրում էր մօրը ժլատութիւն շանել այս գորդը այնպէս կզարդարէր նէրա առանձնասենեակր... Ես քառասուն բուրլի աւելի տուի և գորգը գնեցի. սորա համար ես վարձարուեցայ մի հայեացքով, որտեղ փայլում էր ամենահիանալի կտուազութիւն: Ճաշի ժամանակ ես հրամայեցի նէրա լրւսամուտների մօտով զիսմամբ անցկացնելիմ չէրքէղի ձիս, որ ծածկուած էր այդ գորգով: Ա երները այդ ժամանակ նէրանց մօտ էր և ասում էր ինձ, թէ այս տեսարանի տպաւորութիւնը բոլորովին ողբերգական էր: Իշխանուհին մտազիր է իմ դէմ պատերազմ հրատարակել ես մինչև անդամ նկատեցի, որ արդէն նէրա մօտի երկու աղիւնանաները շատ պաղ են վերաբերիքում ինձ, սակայն ամեն օր իմ մօսս ճաշում են:

Դրուշնիցին ընդունեց ծածկամիտ դրութիւն. ձեռները կոնսակին մանէ դալիս նա և ոչ ոքի չէ ճանաչում: Նորա ոտը յանկարծ լաւացաւ. նա շատ քիչ է կաղում: “Նա գտաւ առիթ իշխանուհու հետ խօսակցելու և իշխանակամստեր ինչ որ հաճոյական խօսք տակլու:” Աէ երեխ շատ ընտրողութիւն

անող չէ, որովհետեւ այն ժամանակից նորա բարեխն պատաս-  
խանում է ամենասիրալի ժպիտով:

— Դու դրականապէս չե՞ս ուզում ծանօթանալ Նե-  
գօվակաների հետ, երեկ ասաց նա ինձ:

— Եյ՞ն, դրականապէս:

— Զարմանիք, նէրանցը ամենալաւ տունն է այս ջրերում:  
Եյտեղի բոլոր լաւ հասարակութիւններն

էլ ինձ ձանձրալի են: Խսկ դու նէրանց մօտ լինում ես:

— Դեռ ոչ, ես երկու անդամից աւել խօսած չեմ լինի  
իշխանագատեր հետ: Խսկ նէրանց տունը երթևեկել եմ: իմ կող-  
մից ինիքրելն անվայել է, թէ և այտեղ անում են... Ուրիշ  
բան էր, եթէ ունենայի ուսալիքներ...

— Ի՞նչ ես ասում: դու այդ ձեռվ աւելի հետաքրքրա-  
կան ես: Պարզ, դու չես կարողանում օգտուել քո յարմար  
գիրքով... Եյ՞ն, զինուորի վերարկուն իւրաքանչեւր մի զգա-  
յուն օրիորդի աչքերում քեզ դարձնում է հերոս և մարտիրոս:

Պրուշնիցին ինքնագոհ կերպով ժպաց:

— Ի՞նչ ես դուքս տալիս, ասաց նա:

— Ես համոզուած եմ, շարունակեցի ես, որ իշխանա-  
գուստը քեզ վերայ արգեն սիրահարուած է:

‘Ես սաստիկ կարմիեց և ուռեցաւ:

Ինքնասիրութիւն, ինքնասիրութիւն, դու այն լծակն ես,  
ոլով Նըրիմեղէոր կամենում էր երկրագունդը շարժել...

— Դումիշտ կատակներ ես անում, ասաց նա, ցցց ապօվիբը  
թէրարկանում է, նախ որ նե, ինձ դեռ ես շատ քիչ է, ձանաչում...

— Կանայք սիրում են միմեայն նորանց, որոնց չեն ձա-  
նաչում:

— Իսյց ես բոլորովին յաւակնութիւն էլ չունեմ նէրան  
զիւր գալու. ես միայն ցանկանում եմ ծանօթանալ մի լու-  
րնտանիքի հետ. և շատ ծիծաղելի բան կլինէր, եթէ ես ու-  
նենայի որևէ ցյու...

... Այս, օրինակի համար, դուք բոլորովին ուրիշ բան էք.  
դուք Պետերբուրգի դաղթականներ էք, բաւական է, որ մի  
անդուր նայէք՝ որ կանանց խելքերը զլիսից գնայ... Իսյց զի-  
տե՞ս, Պետրին, իշխանագուստը քո մասին ի՞նչ ասաց...

— Ե՞նչպէս: “Նէ արդէն իմ մասին քեզը բան ասելէ...”

— Բայց գու մի՛ ուրախանայ: Խս, ինչպէս պատահեցաւ, մի անդամ նէրա հետ խօսակցութիւն ունեցայ ջրակի մօտ. նէրա երրորդ խօսքն եղաւ. անվէ այդ պարոնը, որ այսպէս անդիւր և ծանր հայեցք ունի. նա ձեզ հետ էր, այն ժամանակը... Նէ կարմիրց և չէր ուղղում օրն ասել մտարերելով իւր սիրուն խաղն այն ժամանակ: «Օրը հարկաւոր չէ ասել պատասխանեցի ես նէրան, նա միշտ կմնայ իմ յիշողութեանս մէջ»... Պէջրին, իմ բարեկամ, ես քեզ աչքի լցո չեմ տալիս, նէ քո մասին վատ կարծիք ունի... Իրաւ որ տիսոս, որով հետեւ Մերին շատ համարելի օրիսորդէ:

Պէտք է նկատել որ Գրուշնիցին այն տեսակ մարդկանցից է, որոնք խօսելով կանանց մասին, որոց հետ նորանք հաղեւ թէ ծանօթ են, նէրանց ասում են—իմ Մերի, իմ Sophie, եթէ նէ բաղդ է ունեցել նորանց զիւր գալու:

Ես լուրջ զիւրք ընդունեցի և նորան պատասխանեցի.

— Այո, նէ աղեղչէ... Միայն զգոյշ կաց Գրուշնիցիիյ: Ուուս օրիորդները մեծ մասամբ տաճում են միսյն պղատոնական սէր, որի հետ չկայ ամուսնութեան զիւրութիւն. իսկ պղատոնական սէրը տամենահանդիսան է: Իշխանագուռսորը կարծիս այն կանանցից է, որոնք սիրում են, որ իրենց զուարձացնես. եթէ երկու բոտէ նէ քո մօտք տխուր անցկայնէ՝ անդարձ կորած ես. քո լոռութիւնդ պէտք է նէրա հետաքրքրութիւնը զարթեցնէ. քո խօսակցութիւնդ—ոչ մի ժամանակ նէրան լիակատար բաւականութիւն չի տայ. դու պէտք է նէրան ամեն բոտէ յուզիս. նէ քեզ համար տասն անդամ պատրաստ է արհամարհել հասարակութեան կարծիքը. այդ կանուանէ զոհաբերութիւն, որպէս զի դորա փոխարէն իրեն վարձատրէ, կսկսէ քեզ տանջել իսկ յետոյ պարզ կասէ, որ նէ քեզ ատելով տառում է: Եթէ դու նէրան քո ազգեցութեան տակ չձգէս՝ նէրա մինչեւ անդամ առաջին համբոյը քեզ իրաւունք չի տայ երկրորդին. նէ քեզ հետ ալեվլիկ կոյ մինչեւ յագենայ, իսկ երկու տարուց յետոյ մօրը հնազանդելով կսկսակուի անձունի մէկի հետ, ինքն իրեն կհաւասարէնէ, որ նէ անբազդ է, որ նէ միայն մի մարդուն էր սիրում, այսինքն քեզ բայց երկինքը չէր կամեցել իրեն միացնել նորա հետ \*

որովհետև նա հաղնում էր զինուորի վերարկու, թէպէտ և այն հաստ, մոխրագոյն վերարկուի տակ բարախէր մի աղնիւ և տենչալի սիրտ...

Գրունիցին բռունցքով զարկեց սեղանին, և սկսեց սենեակում մանգալ: Ես մոքիս մէջ ծիծաղում էի և մինչև անգամ՝ ժպտացի, բայց նա բարեբաղդաբար այս չնիատեց: Պարզ է, որ նա սիրահարուած է, որովհետև առաջուանից աւելի մտերիմ էր ինձ հետ. նորա մօտ մինչև անգամ երեաց արծաթէ մատոնի սև մինայով, տեղական բանու ածքով, որը ինձ կասկածելի թուեց: Ես սկսեցի զննել և ի՞նչ էք կարծում: մանր զբերով Մերիի անունը փորագրուած էր ներսի կողմում, և մօտը ամսաթիւը, երբ նէ վերցրել էր նշանաւոր բաժակը: Ես իմ գիւտս գաղանի պահեցի. ես չեմ ուզում, որ բոնի նորան իւր գաղանիքը ասել տամ: ես ուզումեմ, որ նա ինձ ընտրէ իւր հաւատարմատարը, և այստեղ ես կզուարձանամ:

Եյսօր ես ուշ վերկացայ, մօտենում եմ ջրակին, ոչ ոք չկայ: Օրը սկսեց շոգել. սպիտակ թան ամպերը փոթորիկ սպառնալով մազվում էին ձիւնապաա լեռներից. Մաշուկի դադաթը ձխվում էր, ինչպէս մարած ջահ. նորա չորս կողմը ամպերի սև թուխպերը օձի նման սողում էին, և խուճուճվում, կարծես իրենց ընթացքի մէջ փշոտ մացառի փակչելով: Օդը լցուած էր էլեքտրականութեամբ: Ես մասյ խաղողի որդերով ծածկուած սրահը, որը տանում է արուեստական քարանձաւը: Ես մտածում էի այտի վերայ խալ ունեցող այն գեռահաս կնոջ վերայ, որի մասին ինձ պատմել էր բժիշկը... Եէ ինչո՞ւ համար է եկած այստեղ: Եւ նէ՞ է արգեօք: Եւ ինչո՞ւ ես կարծում եմ, որ նէ է: Եւ ինչո՞ւ համար ես այսպէս համոզուած եմ սորան: Միթէ քիչ կանայք կան, որ այտի վերայ խալ ունին: Եյսպէս խորհելով ես մօտեցայ քարանձաւին: Մէկ էլ աեսնեմ, նորա կամարի զով ստորոտի մէջ, քարէ նստարանի վերայ, սև շալում փաթաթուած, յարդեայ փեղցրով, զլուխը կրծքին նստած է մի կին. փեղցրը ծածկում էր նէրա երեսը: Ես արգէն ուզում էի վերադառնալ, որ չխանգարեմ նէրա լոռութիւնը, երբ նէ նայեց իմ վերայ:

— Վերայ, ակամայ գոչեցի ես:

“Եւ այլայլուեցաւ և գունաթափուեց:

— Ես գիտէի, որ դուք այստեղ էք, ասաց նէ:

Ես նստաց նէրա մօտ և բռնեցի ձեռը: Եյդ ձայնը լսելուս պէս վազուց մոռացուած ցնցումը անցկացաւ ջղերիս միջով: “Եւ նայում էր իմ աչքերիս իւր խորունի և հպարտ հայեացքով: “Եորանք արտայայտում էին կամկածանք և մի տեսակ յանդիմանութիւն:

— Մենք վազուց է, որ միմեանց հետ տեսնուած չենք, ասացի ես:

— Եյո, վազուց է, և երկուսս էլ շատ վոխուած ենք:

— Ուրիմն դու այլ ես ինձ չե՞ս սիրում:

— Ես պատկուած եմ... ասաց նէ:

— “Եորի՞ց: Աակայն, մի քանի տարի առաջ այդ պատճառը նոյնպէս կար, բայց և սցնպէս ..

“Եւ իւր ձեռը խնց իմ ձեռից, նէրա այտերը կարմիրցան:

— Գուցէ դու սիրում ես քո երկրորդ ամուսնուն...

“Եւ չպատասխանեց և երեսը դարձրեց:

— Թա՞ նա սաստիկ նախանձոտ է:

Լոռութիւն:

— Ի՞նչ: “Եա գեռաշահս է, գեղեցի՞կ է, մանաւանդ որ անշուշտ հարուստ է, և դու վախենում ես... Ես նայեցի նէրա վերայ և վախեցայ. նէրա գէմքը արտայայտում էր սաստիկ յուսահատութիւն: Նչքերտում փայլեց արտասուք:

— Եսա, վերջապէս մրմնջաց նէ, դու մեծ զուարձութիւն ես գտնում ինձ տանջելում. պէտք է, որ ես քեզ ատէի: Եյն օրից, երբ մենք ձանաչում ենք միմեանց, դու ինձ բացի տանջանքից ոչինչ տուած չես... “Եէրա ձայնը վողզողումէր. նէ ծոռւեց գէպի ինձ և զլուխը խոնարհեցրեց իմ կրծքիս վերայ:

«Գուցէ», մտածեցի ես, դու հենց գորա համար էլ ինձ սիրում էիր. ուրախութիւնները շուտով մոռացվում են, իսկ տըխութիւնները — երբէք»...

Ես նէրան ամուր գրկեցի, և այսպէս մենք երկար մնացինք: Վերջապէս մեր շրթունքները մօտեցան միմեանց և միացան ջերմ տինչալի համբոյրով. նէրա ձեւները սառողցի նման էին. զլուխը տաք էր: Մեր մէջ այստեղ տեղի ունեցաւ մի խօսակցութիւն, որը թղթի վերայ միտք չունի, և որը ոչ

կրկնել կարելի է և ոչ մինչև անդամ յիշել. հնչեւների նշառ-  
նակութիւնը փոխանակում և լրացնումէ խօսքերի նշանա-  
կութիւնը, ինչպէս խոտական օպերայում:

‘Եէ դրամանապէս չէ ուղղում, որ ես ծանօթանամ իւր  
ամուսնու հետ, այն կազ ծերունու հետ, որին ես հարեւանցի  
տեսայ ձեմելիքում:’ Եէ ամուսնացել էր նորա հետ իւր որ-  
դուն պատճառով. նա հարուստ է և տանջվումէ ոսկրացաւով:  
Ես ինձ թոյլ չտուի նորա մասին որեւէ ծաղրածութիւն ա-  
նել: ’Եէ նորան յարգումէ ինչպէս հօր և պիտի խաբէ ինչ-  
պէս ամուսնուն... Զարմանալի բան է մարդու սիրութ. մա-  
նաւանդ կնոջ...’

Վ էրայի ամուսինը Ախմէօն Վասիլեիչ Գ...օֆին է, Լե-  
զօվսկայեա իշխանուհու հեռաւոր ազգականը: ’Նորանց աները  
միմեանց կից են: Վ էրան յաձախ լինումէ իշխանուհու մօտ.  
և նէրան խօսք առեի ծանօթանալ Լեզօվսկայեաների հետ  
և հետեւ իշխանակատեր, որպէս զի իւր վերայ ուշադրու-  
թիւն գարձնող չինի: Եյդախով իմ ծրագիրս ամենեւին  
չխանդարուեցաւ և ես ուրախ կլինիմ...’

Ուրախ... Եյո, ես արդէն անց եմ կացրել հոգեկան ժա-  
մանակի այն շրջանը, երբ փնտուում են միայն երջանկութիւն,  
երբ սիրտը զգումէ կարիք սիրել մէկին, սիրել սասաիկ և  
խանդակառ. այժմ ես ուղում եմ, որ ինձ սիրեն, այն էլ ոչ  
շատերը մինչև անդամ ինձ թվումէ, թէ մի մշտական համակ-  
րութիւնն էլ ինձ բաւական է. սրտի խղճալի՛ սովորոյթ...

Մի բան ինձ միշտ տարօրինակ է թուել ևս ոչ մի ժա-  
մանակ որեւէ կնոջ գերին եղած չեմ, ընդհակառակին ես միշտ  
տիրապետել եմ նէրանց կամքին և սրտին մի անյաղթելի իշ-  
խանութեամբ, որի համար ամենեին չեմ աշխատել: Եյս ին-  
չի՞ց է:— ’Նորանի՞ց, որ ես երբէք մի բանի վերայ չեմ գոզում,  
իսկ կանայք ամեն բոպէ վախենում էին թէ ես իրենց ձեռից  
կերթամ: թէ՞ այս հզօր կաղմուածքի մի մաղնիսական զօ-  
րութիւնն է. թէ՞ լոկ, ինձ պատահել չէ յամառ բնաւորու-  
թեամբ կնոջ հանդիպել:

Պէտք է խոստովանուել, որ ես, խոկապէս, բնաւորութեան  
աէր կնոջ չեմ սիրում. այդ ինչ նէրանց գործն է...’

Ճշմարիտ է, այժմ յիշեցի՞ մի անդամ՝ ընդամենը միան-

գամ ես սիրել եմ հաստատուն կամքի տէր մի ինոջ, որին երբէք չէի կարողանում յաղթել

Մենք միմևանցից բաժանուեցանք իբրև բարեկամներ—և այն էլ եթէ ես ներան պատահէի հինդ տարի աւելի ուշ գուցէ բաժանուեինք մի ուրիշ տեսակ:

Ա ներան հիւանդ է, թէ չ ուղում խոստովանուել ես վախենում եմ թէ գուցէ նէ թոքախտ ունենայ, կամ այն հիւանդութիւնը, որին ասում են նկար լեռ—հիւանդութիւն, որ ոռւսական չէ և ոռւսերէն անուն չունի:

Փոթորիկը բարձրացաւ մեր քարանձաւում եղած ժամանակ, և կէս ժամից աւել արգելցից: “Նէ ինձ չափակց հաւատարմութեան երգում տալ չհարցրեց, թէ ես սիրում էի ուրիշներն միմևանցից բաժանուելուց յետոյ...” Նէ նորից հաւատաց ինձ նախկին անհօգութեամբ—իսկ ես ներան չպիտի խարեմ: Նէ միայնակ կինն է աշխարհիս երեսն, որին ես անկարող եմ խաբել: Խս զիտեմ, մենք շուտով նորից կրաժանուենք, և գուցէ յաւիտեան. մենք զանազան ճանապարհներով կդնանք մինչև գերեզման, բայց նէրա յիշատակը անջինջ կմնայ իմ հոգոյս մէջ. այս նէրան միշտ կրկնում էի, և նէ ինձ հաւատում է, թէ և միշտ հակառակ է խօսում...

Ա երջապէս մենք բաժանուեցանք, ես երկար ժամանակ աչքով հետեւում էի ներան, մինչև որ նէրա փեղյորը ծածկուեցաւ թուփերի և ժայռերի ետեւ: Իմ սիրտս սաստիկ Ճնշվում էր, ինչպէս առաջին անջատումից յետոյ: Օ-, ես որքան ուրախացայ այս զգացմունքին: Երգեօք երիտասարդութիւնս կամենում է վերագառնալ իւր ազնիւ կրքերով, թէ՞ աս միայն նէրա հրաժեշտի վերջին հայեացքն է, վերջին նուերը—յիշատակի համար... Խակայն ծիծաղելի է մոտածել որ ես գէմքով գեռ ևս երեխոյ եմ թվում: Երեսս թէ գժղոյն է, բայց մտադր մարմնիս մասերը ճկուն են և վայելստիազմ: Խիտ դանդուրներս խճճգում են, աչքերիս մէջ կրակ է վառվում, արինս եռ է գալիս...

Տուն վերադառնալուս պէս ձի նստայ և դաշտը գնացի: Խս սիրում եմ կատաղի ձիով անսապատի քամու գիմաց, բարձր խոտերի մէջ սլանալ ագահութեամբ և ծծում եմ անուշահոտ օդ և յառում եմ հայեացքս կտպոյա հեռաւորութեան:

վերայ, աշխատելով որոշել առարկաների մութ ձեերը, որոնք բոպէ առ բոպէ դառնում են աւելի որոշ Խոչքան էլ որ մարդ հպարտ լինի, ինչպէս հոգեկան հանդարութիւն էլ չունենայ— բոլորը մի բոպէում կցնդեն, մարդուն հոգին կհանդչի, մարմնի յոդնածութիւնը յաղթահարումէ մոքի անհանգստութեան։ Զկայ մի ինոջ հայեացք, որ ևս չմոռանամ երբ տեսնում եմ կանաչապարդ լեռներ, որոնք լուսաւորվում են հարաւային արեով կամ կապցայ երկինք, կամ երբ լսում եմ ջրվէժի աղմօւկը, որը թափվումէ ժայռից ժայռ։

Ես կարծում եմ, որ կօպակները, որոնք յօրանջում են իրենց գիտարաններում, տեսնելով ինձ, որ սլանում էի առանց նպատակի, երկար չարչապուեցան իրենց տեսածը հասկանալ, որովհետեւ շորերիս նայելով նորանք անշուշա ինձ չերքէզ համարեցին։ Ինձ, իրաւ, ասում էին, որ ևս չերքէզ շորերով ձիու վերայ աւելի նման եմ կարարդացու, քան թէ շատ կարարդացիներ։ Եւ իրաւ, ինչ վերաբերումէ այս պատերազմական վսեմ տարապին՝ ես բոլորովին կաարեալ ճաշակ ունեմ։ ոչ մի աւելորդ երիզ չկայ, թանկազին զէնքեր հասարակ բանուածքով զիսարդիս վերայի խաւը ոչ այնքան երկար, ոչ այնքան կարծ, զանկապասերս և «մէսերս» կարծես վերաս կապա լինին։ Թիկնոցս ճերմակ, չուխաս մուգ մոխրագոյն։ Ես երկար ուսումնասիրել եմ լեռնցիների ձի հեծուածքը. ոչ մի բանով չէ կարելի ինձ շողոքորթել բայց ճանաչելով իմ հրմտութիւնս կովկասցու նման ձի հեծնելուս մէջ։ Ես չորս ձի եմ պահում. մէկը ինձ համար, երեքը բարեկամներիս, որ մենակ դաշտեր չափչիել տխուր չլինի. նորանք ուրախութեամբ առնում են ձիերս և ոչ մի ժամանակ ինձ հետ չեն դալիս։ Արդէն ցերեկուայ ժամը վկյուն էր, երբ ես յիշեցի, որ ճաշելու ժամանակ է։ Իմ ձիս յոդնած էր, ես ելայ ճանապարհը, որը Պետարիգորսկից տանումէ գերմանական արուարձանը, ուր յաճախ զնումէ ջրային ընկերութիւնը կերուխում անելու։ Ճանապարհը ոլորապոյս անցնումէ թփերի միջով իջնումէ փոքր ձորեր, ուր հոսում են խոխոջուն առուակիները բարձր խոտերի հովանու տակ. չորս կողմդ անփիթէատրօնի պէս բարձրանում են կապցայ բարձրութիւնները Բեշտուի, Օձային, Երկաթէ և Ճաղատ լեռների։ Եյսպիսի մի ձորակ իջնելով,

ևս կանգ առայ, որ ձիս ջրեմ. այդ ժամանակ ճանապարհի վերայ երևեցաւ մի փայլուն և ուրախ ձիաւորուած ընկերութիւն. աիկինները հազած էին ու և երկնադօյն ամաղոնեան տարազներ. իսկ ասպետները—մի տարազ, որ բարելոնեան խառնակութիւն էր չէրքէզի և եւրոպական շորերի. առջեխց գնումէ էր Գրուշնիցին Մերի իշխանադատեր հետ:

Տիկինները այստեղ հաւատում են, որ յերեկով չէրքէզները յարձակում են գործում, և հաւանօրէն, գորա համար էլ Գրուշնիցին զինուորի վերարկուի վերայից կախել էր գտշոյն և մի զօյդ ատրճանակ. նա այդ հերոսական սպառազինութեատր բաւական ծաղքելի էր եղեւում: Բարձր թուփը ինձ ծածկում էր նորանցից. բայց տերեւների միջից ևս կարողանում էի տեսնել բոլորը, և նորանց երեսի արտայայտութիւնից գուշակել որ խօսակցութիւնը զգայական էր: Աներջապէս նորանկք մօտեցան զառիվայրին. Գրուշնիցին բունեց իշխանադատեր ձիու սանձը, և այն ժամանակ ևս լսեցի նորանց խօսակցութեան վերջաւորութիւնը.

— Եւ դուք կամենում էք ձեր բոլոր կեանքն անցկացնել Առվիասում, ասում էր իշխանադուստրը:

— Ի՞նչ կայ Ոռուսաստանում ինձ համար, պատասխանեց ներա ասպետը, մի երկրում, որտեղ հազարաւոր մարդիկ իմ վերայ պէտք է նայեն արհամարանքով, որովհետեւ ինձանից հարուստ են, մինչդեռ այստեղ այս հասարակ կողիտ վերարկուն ինձ չխանգարեց ձեզ հետ ծանօթանալ...

— Բնդհակառակը, ասաց իշխանադուստրը կարմրելով:

Գրուշնիցիու երեսը արտայայտեց բաւականութիւն: «Նա շարունակեց.

— Եյստեղ իմ կեանքս աղմկալի կերպով արագութեամբ կանցնի ընկերութեան մէջ, վայրենիների զնդակների տակ, և թէե Աստուած ինձ ամենայն տարի ուղարկէր մի կանացի պայծառ հայեացք, նման այն հայեացքին որ...

Եյդ ժամանակ նորանք ինձ հետ հաւասարուեցան. ևս մտրակեցի ձիուս և դուրս եկայ թիֆի ետելից...

— Mon Dien, un circassièn!.. (Աստուած իմ, չէրքէզը...) դուեց իշխանուհի օրիորդը:

Որպէս զի նէրան կատարեալ հանդստացնեմ, ևս մի քիչ խոնարհուելով ֆրանսերէն պատասխանեցի.

— Ne craignez rien, madame, je ne suis pas plus dangereux que votre cavalier... (Վաճառքին մի՛ վախենաք, օրիորդ, ևս ձեր ասպետից նուազ վահնգաւոր եմ)...

— Են շփոթուեց—բայց ինչո՞ւ. իւր սխալմունքից, թէ նորանից, իմ պատասխանս նէրան յանգուղն թուեց: Ես ցանկանում էի, որ իմ վերջին ենթագրութիւնս ձիշտ լինէր. Գրուշնիցին դժգոհութեամբ վերաս նայեց:

Երեկոյեան ուշ ժամի 11-ին ևս դնացի Ճեմելիք զքօննելու: Քաղաքը քնած էր. մի քանի լուսամուտներից միայն մըլ մըլում էին կրակները: Երեք կողմից սեին էին տալիս ժայռերի դադաթները, Մաշուկի ձիւզը, որի դադաթի վերայ տարածուած էր մի չարագուշակ ամպրոպ. լուսինը բարձրանում էր արեկլքում: Հեռուն արծաթեայ հիւստիների նման փայլում էին ձիւնապատ լեռները: Գիշերապահների կանչերը խառնվում էին եռացող ջրերի գոչեւնի հետ, որոնք գիշերը բաց էին թողուած: Երբեմնապէս ձիու բարձր արովիւնը նողացի սայլի ձուձուցի և թաթարական երզի հիտ տարածվում էր փողոցում: Ես նատայ նտարպանին վերայ և մտածմունքի մէջ ընկայ... Ես զգացի կարիք սիրտս բանալ մէկին մաերմական խօսակցութեամբ... Բայց ուշմասն է անում Վելրան, մտածում էի ես... այդ լուպէին նէրա ձեռը սեղմելու համար ամեն բան կտայի ես:

Յանկարծ լսում եմ անհաւասար և արագ քայլերի ձայն... Երեկի Գրուշնիցին է... “Եղն ի՞նքը:

— Եյդ ո՞րտեղից:

— Լեզովսկայեա իշխանուհու մօտից, ասաց նա շատ լուրջ կերպով—ինչպէս երգում է Մերին:

— Գիտէս, ասացի ես նորան զրազ կդամ, որ նէ չզիսէ թէ դու ենթասպայ ես, նէ կարծում է թէ յանցանքի համար քեղ զրկել են աստիճանիցդ:

— Գուցէ: Բայց իմ ի՞նչ գործս է... անուշագիլ ասաց նա:

— Ոչինչ ես այս այնպէս ասացի:

— Իսկ զիտէ՞ս, որ դու այսօր նէրան սաստիկ զայրացրիր: Են կարծիք յայտնից, որ դա մի անլսելի յանդգնութիւն

է. ևս գժուարութեամբ կարողացայ նէրան հասկացնել որ դու այնքան լու ես կրթուած, և այնպէս լաւ զիտես բարձր շրջանը, որ նէրան վերաւորելու դիտաւորութիւն չէիր կարող ունենալ: ‘Նէ ասումէ, որ դու ժպիլի՛ հայեացք ունիս, որ դու քո մասին շատ մեծ կարծիք ունես:

— ‘Նէ չէ սխալվում... Իսկ դու չէիր կամենայ նէրան պաշտպան հանդիսանալ...’

— Եփոսո, որ ես գեռ ևս այդ իրաւունքը չունեմ:

— Եշա, մտածեցի ես. ճառ երկում է, որ յօյմեր ունիք:

— Բայց հէնց քեզ համար վաս կլինի, շարունակեց Գրուշ նիցին. քեզ այժմ դժուար է նէրանց հետ ծանօթանալ—և ախտոս, որովհետեւ իմ զիտցած ամենալաւ գերդաստաններից մէկն է:

Ես մոքիս մէջ ծիծաղեցի:

— Ինձ համար ամենից ախորժելի տունը նէրկայումն իմ տունս է, ասացի ես յօւանջելով և վերկացի որ գնամ:

— Սակայն խոստովանուիր, որ դու զզջում ես:

— Ի՞նչ յիմար բան ես ասում: Եթէ ես ուղենամ հէնց էղուց երեկոյեան կլինեմ իշխանուհու մօտ:

— Տեսնենք...

— Եւ քեզ բաւականութիւն պատճառելու համար, ես մինչեւ անդամ իշխանադստեր ետեկցն կլնկնեմ...

— Եյո, եթէ միայն նէ կամենար քեզ հետ խօսել...

— Ես կապասեմ մինչեւ այն ժամանակ, երբ քո խօսակցութիւնդ նէրան կձանձրացնէ... մուաս բարով:

— Իսկ ես կդնամ փողաները շրջելու. իմ քունս չէ տանում... Լսիր, գնանք պանդոկ. այնտեղ խաղում են... այսօր ինձ հարկաւոր է սաստիկ յուզում...

— Ուրեմն ցանկանում եմ, որ դու լու տարուես:

Ես գնացի տուն:

Համարեա մի շաբաթ անցաւ, բայց ես տակաւին Լիզովսկայեաների հետ ծանօթացել չեմ: Յարմար դէպքի եմ սպասում: Գրուշնիցին ստուերի նման ամեն տեղ հետեւմ է իշխանադստեր. նորանց խօսակցութիւնը անվերջ է. Երբ

նա նէրան կճանճրացնէ... Մոյրը սորա վերայ ուշադրութիւն չէ դարձնում, որովհետև նա փեսացու չէ: Ե՞յ, քեզ մայրերի տրամաբանութիւնը: Ես նկատեցի երկու երեք քնպցշ հայեացքներ—պէտք է սորան վերջ տալ:

Երեկ ջրակի մօտ առաջին անգամ երեեցաւ Պէրան... Եյն ժամանակից, երբ մենք պատահեցանք քարանճաւում, նէտանից դուրս չէ դալիս: Մենք միասին կախեցինք բաժակներս և կրացանք. նէ իմ ականջիս ցածր մրմնջայ:

— Դու չե՞ս կառենում ծանօթանալ Նեղօվսկայեաների հետ... Մենք միայն այնտեղ կարող ենք տեսակցել...

Յիմարութիւն... Տխոր է: Բայց ևս գորան արժան էի: Ի գեա. էդուց ստորագրութեամբ պանդոկի դաշլիճում պարահանդէս կայ, և ևս իշխանադստեր հետ խաղալու եմ մազուրկայ:

29 մայիսի:

Պանդոկի դաշլիճը ակումբի դաշլիճ էր դարձել: Կոր ժամին բոլորը հաւաքուեցան, իշխանութիւն և դուստրը ուշ եկան, շատ տիկիններ նախանձում էին, և նէրա վերայ նայում էին չարակամութեամբ, որովհետև իշխանադուստր Միքին հագնվում է ճաշակով: Նէրանք, որոնք իրենց համարում էին տեղական ազնուականներ, նախանձը իրենց մէջ թաղյնելով մօտեցան նէրան: Վ՞նչ արած: Արտեղ կայ կանանց ընկերութիւն, այնտեղ կայ և բարձր ու ստորին հասարակութիւն: Լուսամուտի մօտ, ժողովրդեան մէջ, կանզնած էր Գրուշնիցին, որը զբուխը յենած ապակու վերայ աչք չէր հեռացնում իւր կուռքից. նէ նորա մօտով անցնելով հաղիւ նշմարելի կերպով զլուխը շարժեց: Նա փայլեց ինչպէս արե... Ըուած պարեցին պօլկայ, յետոյ վալա: Տղամարդկանց ոսների խթանները զնդզնդում էին, կանանց շորերի քղանցները բարձրանում էին և պտշտներ կազմում:

Ես կանդնած էի մի հաստ տիկնոջ հոտեւ, որ զարդարուած էր վարդագոյն փետուրներով. նէրա շորերի պերճութիւնը յիշեցնում էր ֆիժմի ժամանակը, իսկ նէրա անողորկ խստուտիկ կաշին—արհեստական սև խալերի ժամանակը: Նէրա

վղեցի ամենամեծ խալը սքողուած էր վկնոցով. նէ իւր ասպետին—Հիծելազօրի կապիտանին ասում էր.

— Այս, Լեգովսկայեա իշխանագուատը մի անտանելի աղջիկ է: Երեակայեցէք, ինձ զիսպաւ և ներողութիւն չինդրեց, մինչեւ անզամ յետ դարձաւ և իմ վերայ զրապանի ակնոցով նայեց: C'est impayable... (աններելի բան), նէ ինչով է հըպարտանում: Պէտք է նէրան սովորեցնել...

— Այդ իմ պարտքսէ, պատասխանեց հըռւ ասպետը և դիմեց միւս սէնսեալը:

Նս իսկոյն գնացի իշխանագուատէր մօտ, ինգրելու նէրան պարել տեղական սովորութեան ազատութիւնից օգտուելով, որ թոյլէ տալիս անձանօթ տիկիններին պարի հրաւիրել

“Նէ հաղիւ կարողացաւ զսպելիւր ժամկել իւրյաղթանակը. սակայն նէ շուտով կարողացաւ ընդունել բոլորովին անտարբեր և մինչեւ իսկ խիստ զիլք: “Նէ անհոգ կերպով դրեց թեր իմ ուսիս, զլուխը մեղմիկ խոնարհեցրեց մի կողմ, և մենք սկսեցինք պարել: Նս այդպիսի ձկուն և տարփալի մէջք տեսած չունեմ: “Նէրա թարմ շնջառութիւնը հպում էր իմ երեսիս, վալսի արագ շարժման ժամանակ նէրա խոպոպին բաժանուելով միւսներից շօշափում էր իմ այսա... Նս երեք շրջան կատարեցի. (նէ հիսնալի լու է պարում): “Նէրա հերքը բոնեց, աչքերը մթնտեցին, կիսաբաց շրթունքները հազիւ կարողացան շնչալ անհրաժեշտ բանաձեռ— merci monsieur (շնորհակալութիւն, պարուն):

Մի քանի բոպէ լոելուց յետոյ, ես նէրան ասացի, ընդունելով ամենախոնարհ զիլք.

— Ես լսել եմ, օրիորդ, որ ձեզ հետ բոլորովին անձանօթ լինելով, ես արդէն բազզ եմ ունեցել ձեր բարկութիւնը շարժելու... որ դուք ինձ համարել էք մի յանդուզն մարդ... Մի՞թէ սա ճշմարիտ է:

— Եւ դուք ուզում էք, որ ես այժմ հաստատուեմ այդ կարծիքի մէջ, պատասխանեց նէ հեղնական ծամածոռութեամբ, որը սակայն շատ յարմար է զալիս նէրա ձկուն կազմուածքին:

— Եթէ ես ունեցել եմ որևէ յանդգնութիւն ձեզ վերաւորելու՝ թոյլ տուէք ինձ մի աւելի մեծ յանդգնութիւն ես գործելու. ձեզանից ներողութիւն ինդուկուա... Եւ իրաւ ես

շատ ցանկանում էի ձեզ ապացուցանել, որ դուք իմ մասին  
սխալուած էք...

— Եյդ ձեզ համար բաւական գժուար կլինի...

— Ի՞նչու համար...

— Նորա համար, որ դուք մեզ մօտ չեք լինում, իսկ  
այս պարահանդեսները հաւանակօրէն յաճախ կրկնուելու չեն:  
«Եյս նշանակում է, մտածեցի ես, որ նէրանց դուռը ինձ  
համար յաւիտեանս փակէ»:

— Գիտէք, օրիորդ, ասացի ես մի տեսակ պրտայտու-  
թեամբ, զզջացող մեզապարտին երբէք հարկաւոր չէ մեր-  
ժել յուսահասութիւնից նա կարող է աւելի մեծ ոճիր դոր-  
ծել... և այն ժամանակի...

Մեզ շրջապատողների ծիծաղն ու շնչումը ինձ ստիպե-  
ցին գտոնալ և ընդհատել իմ նախադասութիւնս... Խնձանից  
մի քանի քայլ հեռու կանգնած էր տղամարդկանց մի խումբ,  
և նորանց թվում հեծելազօրի կապիտանը, որը թշնամա-  
կան մտերմութիւն էր յդացել նաղելի իշխանազստեր դէմ նա-  
մանաւանդ ինչ որ բանով շատ գոհ էր. շփում էր ձեռները,  
ծիծաղում էր և աչքով էր անում իւր ընկերներին: Յանկարծ  
նորանց միջից դուրս եկաւ ֆուակով երկար բեխերով և կար-  
միր ոեխով մի պարոն, և ուղղեց իւր անհաւասար քայլերը  
ուղիղ գէպի իշխանականերով. նա հարբած էր: Յուղուած օրի-  
որդի գիմանց կանգնելով ձեռները քամակին դրած նա յառեց  
նկատ վերայ իւր մուգ—մոխրագոյն աչքերը և կտրած սուր  
ձայնով ասաց ֆրանսերէն կոտրտելով.

— Պերմետէ... Էհ, ի՞նչ երկարացնեմ... հրաւիրում եմ  
ձեզ մաղուրկայի...

— Ի՞նչ էք ուզում, ասաց նէ գողգոջուն ձայնով, իւր  
չորս կողմը աղերտալի հայեացք ձգելով: Աւազ, նէրա մայրը  
հեռու էր, և մօտը իւր ծանօթ ասպետներից ոչ ոք չկար. մի  
աղիւտանստ, կործեմ, այս բոլորը տեսնում էր. բայց նա թագ-  
կացաւ խմբի ետեր, որ այս զործի մէջ խառն չլինի:

— Ի՞նչ ասաց հարբած պարոնը, աչքով անելով հեծելա-  
զօրի կապիտանին, որը նշաններով նորան խրախուսում էր—  
միթէ ձեզ անհաճոյէ... Իսյց ես նորից պատիւ ունեմ խընկ-  
րելու ձեզ քոր մաշուրկայի)... Գուցէ

գուք մտածում էք, թէ ես հարբած իմ: Այս ոչնչ... աւելի  
համարձակ կարելի է պարել—այնպէս չէ...

Ես ահսայ, որ նէ վախից և բարկութիւնից ուշաթափ-  
ուելու վերայ էր: Ես մօտեցայ հարբած պարոնին, ամուռ  
բոնեցի ձեռից և յառած նորա աչքերին նայելով ինդրեցի  
հետանող—որովհետեւ, աւելացրի ես, իշխանագուածութը վաղուց  
խոստացել է ինձ հետ մազուրկայ պարել:

— Ե՛հ, ի՞նչ արած... ուրիշ անգամ, ասաց նա ծիծաղե-  
լով և գնայ իւր ամօթով եղած ընկերների մօտ, որոնք իս-  
կոյն նորան տարան միւս սինեակը:

Ես վարձատրուեցայ խոր, պահչելի հայեացքով:

Իշխանագուածութը մօտեցաւ իշխանուհուն և բոլորը պատ-  
մեց նորան. նէ ինձ գտաւ ամբոխի մէջ և շնորհակալութիւն  
յայտնեց: ‘Ես ինձ յայտնեց, որ ճանազում է իմ մօրս և ծա-  
նօթ է եղել եմ բազմաթիւ մօրաքոյլերիս հետ:

Ես չգիտեմ, ի՞նչպէս է պատահել որ մենք մինչև այսօր  
միմեանց հետ ծանօթ չենք, աւելացրեց նէ.—բայց խոստավա-  
նուեցէք, որ սորանում մեղաւորը միայն գուք էք. գուք բո-  
լորից քաշվում էք, որը մի բանի նման չէ: Ես յօյս ունեմ  
որ իմ սենեակի օդը ձեր սրտնեղութիւնը կցրուէ... Այնպէս  
չէ...

Ես մի քանի խօսք ատացի, որոնք ամեն մարդ պէտք է  
գիտենայ այսպիսի դեպքերում գործածելու համար:

Վագրիները սաստիկ երկար տեսեցին:

Վերջապէս վերնատնից հնչեց նուագարսանը, ես և իշ-  
խանագուածութը նստանք: Ես ոչ մի անգամ շակնարկեցի հար-  
բած պարոնի մասին, ոչ իմ նախկին վարքիս մասին, ոչ էլ  
Դրուշնիցիու մասին: Ենախորժ դէպքի տպաւորութիւնը  
քիչքիչ ցրուեց. նէրա երեսը ծիծաղ եկաւ. նէ շատ սիրուն  
կատակ էր անում. նէրա խօսակցութիւնը կենդանի և սուր,  
թէպէտ և չէր նկատվում, որ նէ կամենար սրտխօսութիւն  
անել. նէրա նկատողութիւնները երբեմն շատ խելացի էին...  
Ես նէրան մի քանի խառն գարձուածքներով հասկացրի, որ  
նէ ինձ վաղուց գիւր է դալիս: ‘Ես զլուխը իտնարհեցրեց և  
թէթև կերպով կարմրեց:

— Դուք տարօրինակ մարդ էք. յետոյ ասաց նէ, իւր

մախմուր աչքերը վերաս զարձնելով և արտեստական կերպով  
ծիծաղելով:

— Ես չեմ ուզում ձեզ հետ ծանօթանալ շարունակեցի  
ես, — որովհետեւ ձեզ շրջապատումէ գնդապետների մի ահա-  
զին խումբ և ես վախենումէի նորա մէջ բոլորովին անհե-  
տանալ:

— Դուք ի զուր վախեցել եք, նորանք բոլորն էլ շատ  
ձանձրալի են...

— Բոլորը, մի՞թէ բոլորը:

‘Եւ ուղիղ երեսիս նայեց, աշխատելով կարծես մի բան  
յիշել յետոյ նորից մի քիչ կարմրեց և վերջապէս վճռողաբար  
ասաց — բոլորը:

— Մինչեւ անդամիմ բարեկամ Պետրինինն էր:

— Եա ձեր բարեկամն է, ասաց նէ, ցոյց տալով մի տե-  
սակ կասկածանք:

— Այս:

— Եա ի հարկէ, տիրութիւնն պատճառողների թվում  
չէ...

— Բայց անբաղների թվումն է, ասացի ծիծաղելով:

— Ի հարկէ, իսկ ձեզ ծիծաղելի է թվում: Ես ցանկա-  
նումէի, որ գուշ նորա տեղը լինէիք:

— Խնչ ես էլ ենթասպայ էի, և իրաւ, այն իմ կեանքիս  
ամենավառ ժամանակն է:

— Միթէ նա ենթասպայ է... արագ կերպով ասաց նէ,  
և յետոյ աւելացրեց. իսկ ես կարծումէր թէ..

— Դուք ինչ էիք կարծում..

— Ոչինչ... Ովէ է այս տիկինը:

Սյատեղ խօսակցութիւնը փոխուեցաւ, և ես այլ ես դո-  
րա մասին խօսք չքացի:

Վազուրկան վերջացաւ, և մենք միմեանցից բաժանուե-  
ցանք — ցտեսութիւն:

Տիկինները ցրուեցան: Ես գնացի ընթրելու և պատա-  
հեցաց Աերներին:

— Ե՛հէ, ասաց նա. ձեզ էլ ձանաշեցի: Դուք չէիք որ  
այլապէս չէիք ուզում իշխանապատեր հետ ծանօթանալ, բայց  
եթէ նէրան վերահաս մահից փրկելով:

— Ես աւելի լաւն արի, պատասխանեցի նորան. Նէրան փրկեցի խնջոյքի ժամանակ ուշաթափուելուց:

— Ի՞նչպէս, պատմեցէք:

— Ոչ, ինքներդ գուշակեցէք. դուք, որ աշխարհիս երեսին ամեն բան գուշակումէք:

Յօնանի:

Նրեկոյեան մօտ եօթը ժամին ևս ճեմելիքում զքօնում էին. Գրուշնիցին հեռուից տեսնելով մօտեցաւ ինձ. մի տեսակ ծաղրալի հրճուանք էր փայլում նորա աչքերում: Նա ամուր սեղմեց իմ ձեռս, և եղերերզական ձայնով ասաց.

— Շնորհակալ եմ քեզանից, Պէջորին... Հասկանում ես ինչ եմ ասում...

— Ոչ բայց և ոյնպէս չարժէ շնորհակալ լինել պատասխանեցի ես, որովհետեւ խսապէս զգում էի, որ ոչինչ բարերարութիւն չեմ արել նորան:

— Ի՞նչպէս, իսկ երէկ մի՞թէ մոռացել ես... Մէրին ինձ բոլորը պատմեց:

— Ի՞նչ, մի՞թէ շնորհակալութիւնն էլ ձեր մէջ հասարակաց է:

— Լամի՞ր, շատ լուրջ կերպով ասաց Գրուշնիցին.— Խնդրում եմ իմ սէրիս հետ կատակ մի' անիր, եթէ ուզում ես ինձ բարեկամ մնալ... Տեսնում ես, ես նէրա սէրից խելքս թոցնում եմ... և մասձում եմ, և յցս ունեմ, որ նէ նոյնպէս ինձ սիրում է... Ես քեզ մի խնդիլք ունեմ զու այս երեկոյ նէրանց մօտ ես լինելու խօսք տուր ինձ նկատել ամեն բան. ես գիտեմ, զու այսպէս բաների մէջ փորձուած ես, դու ինձանից աւելի լաւ ես ճանաչում կանանց... Կանայք, կանայք, ով նէրանց կհասկանայ: Նէրանց ժպիսը հակասում է նէրանց հայեացքին, նէրանց խօսքերը խօստանում են և գրաւում. իսկ նէրանց ձայնը հեռու է մղում... Երբեմն նէրանք մի բոպէում հասկանում են մեր մաքի միջի ամենազաղանի մտածմունքը, երբեմն էլ չեն հասկանում ամենապարզ ակնարկութիւնները... Այս, օրինակ իշխանադուստրը. երեք նէրա աչքերը իմ վերայ նայելիս վառվում էին աենչանքով այսօր նորանք սառն են և խաւար...

— Այդ գուցէ ջրի ազգեցութիւնիցն է, պատասխանեցի ես:  
— Դուք ամեն բանի մէջ վատ կողմն էք տեսնում... Նիւ-  
թապաշտ, արհամարհանքով աւելացրեց նա: — Ե՛, խօսակցու-  
թեան նիւթը փոխենք — և գոհ մնալով իւր անյաջող բառա-  
խաղից <sup>\*)</sup> նա ուրախացաւ:

Կնը ժամին միասին գնացինք իշխանուհու մօտ:  
Վերայի լուսամուտների մօտից անցնելիս, ես տեսայ նէ-  
րան լուսամուտի մօտ: Մենք միմեանց թռուցիկ հայեացքներ  
փոխարինեցինք: Մեզանից յետոյ նէ շուտով մտաւ Լեդով-  
սկայեաների ընդունարանը: Իշխանուհին ինձ նէրան այնպէս  
նէրկայացրեց, ինչպէս իւր ազգականուհուն: Թահյ խմեցինք.  
բառականին հիւրեր կային, խօսակցութիւնը ընդհանուր էր:  
Խս աշխատում էի իշխանուհուն դիւր գալ կատակ էի անում,  
նէրան մի քանի անդում սրտանց ծիծաղեցրի, իշխանադուտարը  
նոյնպէս մի քանի անդում ուզեղ ծիծաղեր, բայց իրեն զապում  
էր, որ իւր զիրքեց գուրս չգայ. նէ մտածում է, որ տիրութիւնը  
իրեն սազէ գալիս, գուցէ եւչ սխալվում: Դրուշնիցին, կարծես,  
շատ ուրախ է, որ իմ ուրախութիւնս նէրան չչ ազդում:

Թահյ խմելուց յետոյ բոլորս գնացինք ընդունարանը:  
— Վերայ, գու իմ հնալանդութիւնից գոհ ես, նէրա  
մօտով անցնելով ասացի ես: “Նէ իմ վերայ ձգեց մի հայեացք,  
որը լի էր սէրով և չնորհակալութեամբ: Խս սովոր եմ այդ-  
պիսի հայեացքների. նորանք մի ժամանակ կազմում էին իմ  
երջանկութիւնս: Իշխանուհին գտաերը նստեցրեց գաշնամուրի  
մօտ, բոլորը նէրան ինդուտմ էին մի բան երգել — ես լուսում  
էի. և իրարանցումից օգուտ քաղելով Վերայի հետ քաշուցայ  
լուսամուտի մօտ, նէ ինձ ուզում էր ասել մեղերկուսիս հա-  
մար մի ինչոր կարեւոր բան... մի յիմար բան դուրս եկաւ ա-  
սելեքք: Մինչդեռ իշխանադուտեր համար իմ սառնասրառութիւնս  
անտառնելի էր, ինչպէս ես կարողացայ նկատել նէրան բարկա-  
ցոտ և փայլուն հայեացքից... Օօ, ես լու եմ հասկանում  
այդ խօսակցութիւնը. համբ, բայց արտայայտիչ կտրՃ, բայց  
զօրեղ...

<sup>\*)</sup> Այդ «բառախաղը» ընագրում կայանում է մատերիալիստ և մատերիա բառերին  
մէջ, որ մենք փոխարեցնեք «նիւթապաշտ» և «խօսակցութեան նիւթ» բառերով:

“Նէ երգեց. նէրաւ ձայնը վատ չէ, բայց վատ է երգում... սակայն ես չէի լսում: Բայց Գրուշնիցկին նէրա հանդէպ դաշնամուրի վերայ՝ յենուելով աչքերը սեեռել էր նէրա վերայ, և երբեմն կիսաձայն ասում—charmant! délicieux! (հիսանալի է, սքանչելի է):

— Լսի՞ր, ասաց ինձ Վահրան—ես չեմ ուզում, որ դու ծանօթանաս իմ էրկանս հետ, բայց դու պէտք է անպատճառ դիւր գաս իշխանուցուն. քեզ համար այդ դիւրին է. դու բոլորը կարող ես, ինչ որ ուզենաս: Մինք միայն այստեղ կարող ենք տեսակցիլ...

— Միանն..

— “Նէ կարմիրեց և շարունակեց.—դու դիտես, որ ես քո գերիդ եմ: Ես ոչ մի ժամանակ չեմ կարողացել քեզ հասկանալ... և դորս համար էլ ես պիտի պատժուեմ: Դու ինձ կմուանաս: Ես ուզում եմ գոնէ իմ պատիւս պահպանել... ոչ թէ ինձ համար—դու այդ շատ լաւ զիտես... Օ՛, ես քեզ իննդրում եմ առաջուան պէս ինձ մի՛ չարչարիր դատարկ կասկածնկներով և կեղծ սառնութեամբ. գուցէ՛ ես շուտով մեռնեմ: Ես զգում եմ, որ օր աւուր թուլանում եմ, և չնայելով դրան ես չեմ կարող մոտածել ապագայ կեանքիս մնախն. Ես մոտածում եմ միայն քո վերայ... Գուք տղամարդիկդ չեք հասկանում հայեացքի դգուանքը, ձեռների սեղմումը... Իսկ ես երդգում եմ, ես լսելով քո ձայնը զգում եմ այնպէս խոր, օտարութիւն, որ ամենաջերմ համբոյրներն անզտու չեն կարող նորան փոխարինել:

Մերի իշխանագուստը այս ժամանակ դադարեց երգելուց. գովասանկի աղմուկ լսուեց նէրա շուրջը. ամենքից յետոյ ես մօտեցայ նէրան և բաւական անհոգ կերպով ինչ որ բան ասացի նէրա ձայնի մասին:

“Նէ երեսը ծամածուց, վարի շըթունքը ուռեցնելով, և ծաղրածութեամբ խոնարհութիւն արեց.

— Եյդ ինձ աւելի է շողոքորթում, նորս համար, որ դուք ինձ ամենեխն չէիք լսում: Բայց դուք դուցէ չէք սիրում երաժշտութիւն...

— Ընդհակառակը... մանաւանդ ճաշից յետոյ:

— Գրուշնիցկին ճշմարիտ է ասում, որ դուք ամենեխն

բանաստեղծական ճաշակ ըունէք... Բայց ես տեսնում եմ, որ դուք երաժշտութիւնը սիրում եք իբրև կերակրի համեմունք:

— Դուք սասափիկ սխալվում եք, ես կերակրի մէջ շատ բարակ բաներ չեմ փնտում և շատ վաստ ստամոքս ունեմ: Բայց երաժշտութիւնը ճաշից յետոյ քուն է բերում, իսկ ճաշից յետոյ քնիւը առողջարար է. հետեապէս, ես սիրում եմ երաժշտութիւնը բժշկական տեսակէտից: Երեկոները ընդհանառակը, երաժշտութիւնը զրդուում է իմ ջղերս. ես շատ արիստում եմ կամ շատ ուրախանում: Երկումն էլ անտանելի են, երբ մի յարգելի պատճառ չկայ տիրելու կամ ուրախանալու, և բացի դորանից տիրութիւնը հասարակութեան մէջ ծիծաղելի է, իսկ չափազանց ուրախութիւնը անվայելու:

Նէ մինչև վերջը ըստեց, զնաց հեռու, նստեց Գրուշնից կու մօտ, և նորանց մէջ սկսուեց ինչոր սիրային խօսակցութիւն... ինչպէս երեսում էր՝ իշխանագուստը նորա խորին գարձուածքներին բաւական անուշագիր և անյաջող կերպով էր աշխատում, թէ և աշխատում էր ցոյց տալ թէ ուշադիրութեամբ լսում է նորան, որովհետեւ նա երբեմն նէրա վերայ նայում էր զարմանքով, աշխատելով իմանալ նէրա ներքին յուզման պատճառը, որ երբեմն երեսում էր նէրա անհանդարտ երեսի վերայ:

Բայց ես ձեզ հասկացայ, նաղելի օրիորդ, զդուշացէք: Դուք ուզում եք միւնյն կերպով վերաւորել իմ ինքնասիրութիւնս, որպէս ես ձերը վերաւորեցիր բայց այդ ձեզ յաջողութիւն իմ էթէ դուք իմ գէմ պատերազմ հրատարակէք՝ ես բոլորովին անդութ կլինեմ:

Երեկոյեան մի քանի անդամ ես աշխատեցայ նորանց խօսակցութեան մէջ մտնել բայց նէ բաւական պաղ էր վերաբերում գէպի իմ նկատողութիւններս, և ես վերջապէս կեզծ գժկոհութեամբ հեռացայ:

Իշխանագուստը փառաւորուեց. Գրուշնիցին նոյնպէս: Փառաւորուեցէք, բարեկամներ, շտապեցէք... դուք երկար փառաւորուելու չեք... Կ'նչ արած. ես նախազգացում ունեմ... որեւէ ինո՞ հետ ծանօթանալիս ես միշտ նախագուշակում եմ, թէ նէ ինձ պէտք է սիրե՞, թէ ոչ...

Երեկոյեան մնացած ժամանակը անցկացրի Վերայի հետ,

Ե երկար խօսեցանք անցեալի մասին... Խնչու համար նէ սիրումէ ինձ—Ժիրաւի չգիտեմ մանաւանդ, որ նէ միակ կինն է, որ բոլորովին ճանաչել է ինձ, բոլոր իմ մանր պակասութիւններով և վաս հակումներով... Միթէ ջուրը այդպէս զրաւելէ...

Մենք Գրուշնիցկու հետ գուրս եկանք... փողոցում նախ թեկից բռնեց և երկար լուսթիւնից յետոյ ասաց.

— Ե, ի՞նչ:

«Դու յիմար ես», ուզումէի ես նորան պատասխանելք բայց ինձ զագեցի, և միայն ուսերս թօթուեցի:

6 յունիսին

Եյս բոլոր ժամանակ ես իմ բռնած ընթացքը ամենեին չփոխեցի: Իմ խօսակցութիւնս սկսում է իշխանագուածեր զիւկ դաշ ես ներան պատմեցի իմ կեանքի տարօրինակ դէպքերից մի քանիսը. ես սկսում եմ ներա աչքին անսովոր մարդ երեալ: Ես ծաղրում եմ աշխարհում ամեն բան, մանաւանդ զգացմունքները սա սկսում է ներան վախեցնել: «Նէ իմ ներկայութեամբ չէ համարձակվում Գրուշնիցկու հետ զգայական խօսակցութիւններ անել, և արդէն մի քանի անգամ նորա փորձերին պատասխանում է ծաղրական ժպիտով. բայց ես միշտ, երբ Գրուշնիցկին դալիս է ներա մօտ, ընդունում եմ հանգարտ զբութիւն և թողնում եմ նորանց առանձին. առաջին անգամ նէ ուրախ եղաւ սորանով, կամ գոնէ աշխատում է այդպէս ցցյ տալ. երկրորդ անգամ՝ բարկացաւ վերաս, եղանակ անգամ՝ Գրուշնիցկու վերայ:

— Գուգ ինքնասիրութիւն շատ քիչ ունեք, երէկ ասաց նէ ինձ,—ինչու համար դուք մտածում եք, թէ Գրուշնիցկու հետ ես աւելի ուրախ եմ լինում:

Ես պատասխանեցի, որ բարեկամիս բաղդաւորութեան զոհում եմ իմ բաւականութիւնս...

— Իմս էլ պատասխանեց նէ:

Ես աչքերս յառած նայեցի ներա վերայ և ընդունեցի լուրջ դէմք: Յետոյ ամբողջ օրը ներան ոչ մի խօսք չասացի... Երեկոյեան նէ մտածմունքի մէջ ընկաւ: Եսկ առաւօտ ջրակի մօտ աւելի տիսուր էր: Երբ ես մտեցայ ներան, նէ անուշադիր լսում էր Գրուշնիցկուն, որը, կարծես, յափշտակուել էր

բնութեան տեսարանով, բայց հէնց որ ինձ տեսաւ՝ նէ սկսեց ծիծաղել (բոլորովին անտեղի), ցոյց տալով, իբր թէ ինձ չէ նկատում: Ես հետացայ և թաքուն սկսեցի նէրան դիտել: նէ երես գարձրեց իւր խօսակցից և երկու անգամ յօրանջեց: Նէ Գրուշնիցիուց բոլորովին ձանձրացել էր:— Երկու օր դեռ ևս նէրա հետ չպէտք է խօսեմ:

11 յունիսի:

Ես յաճախ ինձ հարցնում եմ, ինչու այգպէս կամակորութեամբ հետեւում եմ մանկամարդ աղջկայ սէրը զրաւելու, որին պատրել չեմ ցանկանում: և որի հետ երբէք ամուսնանալու չեմ: Ինչու համար է այս կանացի ալեվլիկ գալը: Վերան աւելի շատ է սիրում ինձ, քան երբ և իցէ իշխանագուստը Մերին. եթէ նէ լինէր անցաղթելի գեղեցիուհի՝ գուցէ նէրան գժուաբութիւնն ինձ մղէր նէրան հետեւելու...»

Ի՞այց ամենևին այգպէս չէ: Հետեւապէս այս սիրոյ այն անհանդիսա պահանջը չէ, որը մեզ տանջում է երիտասարդական առաջին տարիներում: ձգում է մեզ մի կնոջեց միւսի մօտ, մինչեւ որ վերջապէս գտնում ենք այնպիսի մէկին, որի համար անսանելի ենք. այստեղ սկսում է մեր շարունակ— իսկական կեանքը, անվելջ տուփանքը, որը թուաբանորէն կարելի է արտայայտել մի գծով. որը մի կէտից ձգվում է տարածութեան մէջ, այս աւելզականութեան գտղանիքը կայանում է նորանում: որ անհնար է հասնել նպատակին, այսինքն վերջին:

Ինչու համար եմ ես աշխատում:— Գրուշնիցիու նախանձից: Թշուառ, նա բոլորովին նէրան արժան չէ: Կամ սա այն դարշելի, բայց անցաղթելի զգացմունքի հետեւանքն է, որ սախապում է մեզ ինանգարել մերձաւորի քաղցր մասածմունքները, որ ունենանք նորան ասելու բաւականութիւն, երբ նայուահատութեան մէջ հարցնէ, թէ ում պէտք է հաւատայ:

— Ի՞արեկամի ինձ էլ նոյն է պատահել. և դու տեսնում ես, սակայն, որ ես ձաշում եմ, ընթրում եմ և հանդիսաքնում եմ, և յօյս ունեմ կարող եմ մեռնել առանց ձիչի և արտասուքի:

Եւ իրաւ, կայ մի անսահման վայելլութիւն, մի փոքրիկ,

Հաղիւ փթթած հոգու տերսապետելուն մէջ: Նու ծաղկի է նման, որի ամենալաւ անուշահոտութիւնը գոլորշեանում է արևի առաջին ճառագոյթների առջև. նորան պէտք է այդ բոպէին քաղել և հոտոտելով մինչեւ յագենալը՝ ձգել ճանապարհի վերաց. դուցէ մէկը վերցնէ: Նւ զգում եմ այս անյադ ամեն ինչ կլանող փափաքը. եօ նայում եմ ուրիշների տանջանքների և ուրախութիւնների վերաց եմ օգտի տեսակետից-ինչպէս իմ հոգեկան ոյժերս պահպանող ուտելիքի վերաց: Նո այլեւ ընդունակ չեմ մաշուելու տարփանքից. իմ պատուասիրութիւնս մեռած է զանազան հանգամանքներից, բայց նա երեան եկաւ ուրիշ կերպարանքով. որովհետեւ պատուասիրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իշխելու փափաք, իսկ իմ առաջին բաւականութիւնս է իմ իշխանութեան ենթարկել այն ամենը, ինչ որ շըջապատումէ ինձ: Զարթեցնել գէպի ինձ սիրոյ, մտերմութեան և երկիւղի զգացմոնք—արգեօք իշխանութեան առաջին նշանը և փառաւոր յազթանակը չէ: Ոէ-կի թշուառութեան և ուրախութեան պատճառ ինել առանց հիմաւոր իրաւունք ունենալու—արգեօք սա չէ<sup>o</sup> մեր հպարտութեան ամենաքաղցր ճարտակը: Նւ ի՞նչէ երջանկութիւնը: Յագեցած հպարտութիւն: Եթէ ես ինձ համարի ամենալաւ և ամենատժեղ աշխարհիս երեսին՝ ես երջանիկ կլինեի, եթէ, բոլորը ինձ սիրէին՝ ես կը գտնէի սիրոյ անսպառ աղբիւր: Զարութիւնը ծնումէ շարութիւն. առաջին տանջանքը գաղափար է տալիս ուրիշի տանջուելու բաւականութեան մասին: Զարութիւնն գաղափարը չէ կարող մարդու մօքում արծարծուել եթէ մարդը չկամենայ նորան գործադրել: Գաղափարները, ասել է մէկը, օրգանական ստեղծագործութիւններ են. նորանց ծննունդը արգէն տալիս է նորանց ձեւ, իսկ այդ ձեր—գործողութիւն է. այն մարդը, որի զիսում ծնուել են աւելի շատ գաղափարներ, նա ուրիշներից շատ է զործում: Եյս պատճառով հանձնարը, որը կաշկանդուածէ աստիճանաւորի սեղանի հետ, պէտք է կամ մեռնի, կամ ինելագարի, այնպէս, ինչպէս ամուր կազմուածքով մի մարդ եթէ նստական և միանգամայն խոհեմ կեանք վարէ՝ կմեռնի կաթուածից:

Կիրքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գաղափար՝ նորա զարգացման առաջին աստիճանում նա մատաղ սրտին սեփականութիւնն

է. յիմար է նա, ով ուզումէ իւր բոլոր կեանքում նորանով զգածուած լինել. շատ հանդարտահոս գետեր սկիզբն են առնում կատաղի ջրուէժնելից, և ոչ մէկը չէ ցատկում և փրփրում մինչև ծովի մէջ թափուելը։ Բայց այս հանդարտութիւնը շատ անգամ նշան է, թէպէտ ծածուկ, բայց մեծ ոյժի մոքերի և զգացմունքների լայնութիւնը և խորութիւնը թոյլ չեն տալիս բուռն զգացմունքներ առաջ դալու. հոգին չարչարուելիս ու հրճուելիս, ամեն բանում ձիշտ հաջիւ է տալիս ինքն իրեն, և համոզվումէ, որ այդպէս էլ հարկաւոր է։ Նա դիտէ, որ առանց փոթորկի՝ արևի մշտական տապը նորան կչորացնէ. նա թափանցումէ իւր կեանքի մէջ—գուրդ գուրծում և պատժումէ իրեն, ինչպէս սիրած երեխային։ Միայն ինքնաճանաչութեան այս բարձր զրութեան մէջ մարդս կարողանումէ գնահատել Տիրոջ արդարադատութիւնը։

Եյս երեսը կարգալով, ես նկատում եմ, որ շատ հեռացայ իմ առարկայից... Բայց ի՞նչ կարիք... ԶԵ՞ որ այս օրադիրը գրում եմ ինձ համար, և իրաւ, այս բոլորը, ինչ որ են ձգում եմ նորա մէջ՝ ինձ համար ժամանակին կինի թանկապին յիշողութիւն: . . . . .

Եկաւ Գրուշնիցին և փաթաթուեց եմ պարանոցիս. Նա ստացելէ սպայի աստիճան: Մհեք խմեցինք շամպայն գինի: Վերներ բժիշկն էլ նորա հտեւից մտաւ Նկատ:

— Ես ձեզ չեմ շնորհաւորում, ասայ նա Գլուշից-  
կուն:

— Kriegs-

— Նորա համար, որ զինուորի վերարկուն ձեզ շատ էր սաղում, և խոստովանուեցէք, որ այսուեղ կարած հետևակազօրի ձեւազդեստը ձեզ հետաքրքիր չէ դարձնում... Տեսնում էք, մինչև հիմա գուշք մի բացառութիւն էիք, բայց այժմ ենթարկվում էք բնդՀանուր կանոննին:

-- Պուլս տուէք, դուրս տուէք, բժիշկը դուք ինձ չէք  
խանգարի ուրախանալ: “Նա չփառէ, Գրուշնիցկին շնչաց  
իմ ականջիս, թէ որքան այս ուսազիրները ինձ յօս տուին...  
Օ... ուսազիրներ. ձեր աստղեկները ուղեցոյց աստղեկներ  
են... Ոչ, ես այժմ բոյորտին բաղաւոր եմ:

— Աղասինձ հետ վեհի ափին դրօնելու, հարցըրի:

— Ե՞ս ինչ էլ որ լինի չեմ երեխ իշխանադստեր, մինչեւ  
որ ձեւազգեստս պատրաստ չլինի:

— Իրաւունք կտան նէրան յացտնել քո ուրախութիւնդ:

— Ո՛չ ինդրում եմ, մի՛ ասիր, Ես ուզում եմ նէրան  
զարմացնել:

— Ի՞սոյց գու ինձ ասա, քո գործերդ նէրա հետ ի՞նչպէս են:

Նա շփոթուեց և խորասուղուեց մտածմունքի մէջ. նա  
ուզում էր պարծենալ սուտ խօսել—բայց ամաչում էր, միւ-  
նչն ժամանակ ամաչում էր ճշմարիտը խօսառվածնել:

— Ի՞նչպէս ես կարծում, նէ քեզ սիրում է...

— Սիրում է: Ի՞նչ էք ասում, Պեչորին, այդ ի՞նչպիսի  
խելք է... ի՞նչպէս կարելի է այդպէս շուտ... Եւ եթէ նէ սի-  
րելս էլ լինի՝ մարդավարի կինը այդ չի ասի...

— Լա՛ւ: Ուրեմն, քո ասելով մարդավարի մարդը նոյն-  
պէս պէտք է լու իւր կրքերի մասին:

Ե՛ւ, եղբայր, ամեն բան իր կարգն ունի. շատ բան ա-  
ռանց ասելու են հասկանում.։

— Եյդ ճշմարիտ է... Բայց սէրը, որ մենք կարդում ենք  
աչքերում՝ ինո՞ջ վերայ ոչ մի պարտք չէ դնում, մինչդեռ  
խօսքը... Զգոյշ կաց Պրուշնիցիլյ, նէ քեզ խաբում է:

— Նէ, պատասխանեց նա, աչքերը երկինք բարձրացնե-  
լով և ինքնաբաւական ժպիտով. ես քեզ վերայ ցաւում եմ,  
Պեչորին...

‘Ես գնաց:

Երեկոյեան դէմ բաւականին մեծ հասարակութեան հետ  
ոսով գնացել էինք գէպի վեհը զբոներու:

Եյստեղացի զիանականների կարծիքով այս վեհը ոչ  
այլ ինչ է, եթէ ոչ հանգած հրաբուխի բերան. նա գտնվում  
է Մաշուկի զատիվացրի վերայ, քաղաքից մի վերստ հեռու:  
Դէպի այս վեհը տանում է մի շաւիզ թուփերի և ժայռերի  
միջով: Եեռը բարձրանալիս ես ձեռ տուի իշխանադստեր և  
նէ բռնած ունէր մեր ամբողջ զբոնելու ժամանակ:

Մէր խօսակցութիւնը սկսուեց զուարձաբանութեամբ, ես  
սկսեցի քրքրել մեր բացակայ և ներկայ ծանօթներին. սկզբից  
նորանց ծաղքելի, յետոյ վատ կողմերն էի ասում: Քանի գնաց  
տաքացայ: Ես սկսեցի կատակով բայց վերջացրի կատարեալ

չարութեամբ: Ակզբից այս նէրան ղուարձացնում էր, բայց  
վերջը վախեցրեց:

— Դուք վտանգաւոր մարդ էք, նէ ինձ ասաց. ևս աւելի  
լաւ կհամարէի անտառում մարդասպանի դանակին հանդի-  
պել քան ձեր լեզուին... Ես առանց կատակի ձեղանից խրնդ-  
րում եմ, երբ իմ մասին վատ խօսելու լինէք—լաւ է դանակը  
վերցրէք և ինձ մոլութեցէք—ես կարծում եմ, որ այս ձեզ շատ  
դժուար չել լինի:

— Մի՞թէ ես մարդասպանի նման եմ:

— Աւելի վատ էք:

Ես մի բոպէ խորհելուց յետոյ ասացի, ընդունելով խոր  
զգածուած գիրք.

— Այս է եղելիմ բաղդս մանկութիւնից ի վեր. ա-  
մենքը երեսիս վերայ նկատում էին վաս յատկութիւնների  
նշաններ, որոնք չկային. բայց ենթադրում էին, որ կան—և  
նորանք յառաջացան: Ես համեստ էի, բայց ինձ մեղապում  
էին, թէ ես խորամանկ եմ. և ես ծածկամիտ գարձայ: Ես  
խոր զգում էի բարին ու չարը ոչ ոք ինձ չէր փայփայում  
այլ բոլորը վերաւորում էին, ես ոխակալ գարձայ. ես գաժան  
էի, միւս երեսաները ուրախ էին և շատախոս. ես ինձ նորան-  
ցից բարձր էի զգում—ինձ նորանցից յածր էին համարում, և  
ես նախանձու գարձայ: Ես պատրաստ էի ամբողջ աշխարհը  
սիրել—բայց ոչ ոք ինձ չհասկացաւ. ես սովորեցի ատել. Եմ  
անդոյն երիտասարդութիւնս անցկացաւ կուռով անձիս և աշ-  
խարհի հետ իմ ամենալաւ զգացմունքներս ուրիշների ծաղրե-  
լուց վախենալով պահեցի սրտիս խորքում, նորանք այնտեղ  
և մոռան: Ես ասում էի ճշմարիտը—ինձ չէին հաւատում  
ես սկսեցի խարել լաւ ձանաչելով աշխարհը և հասարակու-  
թեան թոյլ կողմերը՝ կեանքի գիտութեան հմտացայ. ես տես-  
նում էի, թէ ինչպէս ուրիշները առանց գիտութեան բաղդա-  
ւոր են, ձրի օգտուելով այն բարիքներով որոց ես այնպէս ան-  
խոնջ հետեւում էի ձեռ բերել: Եւ այն ժամանակ իմ սրտում  
ծնուեց յուսահատութիւն—բայց այն յուսահատութիւնը  
որը բժշկում են առարձանակի բերանով բայց սառն, անդօր,  
սիրալիր և բարի ժամանով սքողուած յուսահատութեամբ: Ես  
գարձայ բնաւորութեամբ համի. իմ հոգուս կէսը զոյութիւն

չունելու նա ըրացել գոլորշեացել մեռել էր ևս նորան կարեցի և դէն ձգեցի, մինչդեռ միւս կէսը արփում և ապրում էր ուրիշների ծառայութեան համար. բայց այս ոչ ոք չէր նկատում, որովհետեւ նորա միւս կէսի ոչնչանալու մասին ոչ ոք ոչինչ չղիտէր. բայց գուշք այժմ ինձ նորա մասին յիշեցնել առուիք, և ես ձեզ կարգացի նորա գամբանականը. առհասարակ բոլոր գամբանականները շատերին ծիծաղկի են թվում, բայց ինձ— ոչ մանաւանդ երբ յիշում եմ, թէ նորա տակը ի՞նչ է հանդցում: Աակայն ես ձեզ չեմ խնդրում իմ ասածիս համաձայնել և եթէ իմ խօսածս ձեզ ծիծաղկի թուի՝ խնդրում եմ ծիծաղեցէք. ես ձեզ առաջուց եմ ասում, որ գորանով ամենեին չեմ նեղանայ:

Եյդ բոպէին ես պատահմամբ նայեցի նէրա աչքերին. նորանց մէջ փայլում էր արտասուք. նէրա ձեռը յենուելով իմիս գողում էր. այտերը այրվում էին. նէ յաւում էր իմ վերայ: Կարեկցութիւնը—զգացմունքը, որին այգակէս հեշտ հնազանդվում էն բոլոր կանայք, իւր ծիրանները ցցեց նէրա անփորձ սիրալը: Օքսաննքի ժամանակ նէրա ուշադրութիւնը ցրուած էր, ոչ ոքի հետ ալևլիկ չէր գալիս—իսկ սա մեծ նշան է:

Մենք հասանք վեհը. տիկինները թողին իրենց ասպետներին, բայց նէ չժողոց իմ ձեռը: Եյսաեղի պՃնասէրների սրախօսութիւնները նէրան չշփոթեցին: Փուլ եկած տեղի զառիվայրութիւնը, որի մօտ նէ նատել էր, նէրան չէր վախեցնում, մինչդեռ միւս օրիորդները ճռում էին և աչքերը փակում:

Յետ վերադառնախներուս ժամանակ ես չնորոգեցի մեր տխուր խօսակցութիւնը, բայց իմ գատարկի հարցերիս և կատակներիս նէ պատասխանում էր կարծ և անուշագիր:

— Դուք որեւէ ժամանակ սիրել էք, վերջապէս նէրան հարցը իւս:

“Նէ աչքերը յառած իմ վերայ նայեց, զլուխը շարժեց և նորից ընկաւ մտածմունքի մէջ. պարզ էր, որ նէ ուզում էր ինչ որ բան առել բայց չղիտէր ինչց սկսէր. նէրա սիրաը բարախում էր...” Կ’նչ արած... Տեհեղեցնայ կտորը տկար պատսպարան է, և էլքատրական կայծը իմ ձեռից անցաւ նէրա ձեռը համարեա թէ բոլոր կրթերը սկսվում են այսպէս, և մենք յաճախ մեղ խաբում ենք, մտածելով, թէ կանայք սի-

բում են մեզ մեր ֆիզիկական կամ բնաւորութեան արժանաւորութիւնների համար. ի հարկէ, նորանք պատրաստում են, կարգադրում են նէրանց սիրտը սուրբ կրակը ընդունելու համար, այնուամենայնիւ առաջն շիտումը վճռումէ գործը:

— Շմարիտ չէ, ես այսօր շատ սիրալիք էի, ասաց իշխանագուստը բոնի ժպիտովի երբ մենք վերադարձանք զբօսանքից:

Մենք բաժանուեցանք:

“Նէ դժգոհ էր իրենից, ըստ որում առոն լինելու համար իրեն էր մեղադրում: Օ՛, աս առաջին զիսաւոր յաղթանակն է:

Վաղը նէ կյանկանայ ինձ վարձատրել: Ես այդ բոլորը գիտեմ—ահա այս է ձանձրալին:

12 Ժոհուական.

Եյսօր տեսայ Վերային: “Նէ ինձ տանջեց իւր նախանձուութեամբ: Իշխանագուստը, կարծեմ, յայտնել է նէրան իւր սրտի գաղտնիքը. լաւ ընտրութիւն:

— Ես գուշակում եմ, թէ ի՞նչ կլինի սորա վերջը, ասաց ինձ Վերան. ամենից լաւն է ինձ այժմեանից ասես, որ գու նէրան սիրում ես:

— Բայց եթէ չեմ սիրում:

— Աւրեմն ինչո՞ւ համար նէրան հետևել զրդուել յուղել նէրա երևակայութիւնը... Օ՛, ես քեզ լաւ եմ ձանաշում: Լսի՞ր, եթէ ուզում ես, որ ես քեզ հաւատամ, մի շաբաթից եկ Կիսօվոգուկ: Վաղը չէ միւս օր մենք տեղափոխվում ենք այնտեղ: Իշխանուհին այնտեղ աւելի երկար կմնայ: Մեր տան մօտ բնակարան վարձի՞ր, մենք կապրինք մեծ տան մէջ, աղբիւրի մօտ, վերնայարկում (մեզօնիա), ներքելը Լեզօվսկայեա իշխանուհին է, իսկ կողքին նոյն տանտիրոջ տունն է, որ գեռ ևս բոնուած չէ... Կդաս...

Ես խոստացայ, և հէնց այն օրը մարդ ուղարկեցի այն բնակարանը վարձելու:

Վեց ժամին Գրուշնիցին եկաւ իմ մօտ և յայտնեց, որ էզուց հէնց պարահանդէսին պատրաստ կլինի նորա ձեաղգեստը:

— Վերջապէս ես նէրա հետ ամբողջ երեկոյ պարելու  
եմ... Եյ, կուշտ կխօսեմ, աւելացրեց նա:

— Ե՞րբ է պարահանդէսը:

— Եգուց: Միթէ չզիտես: Մեծ տօն է, և այստեղի ծա-  
ռայողները մտածել են սարքել այդ պարահանդէսը...

— Գնանք ձեմելիք:

— Եյս անպիտան վերարկուով անհնարին բան է...

— Ի՞նչպէս դու նորան արգէն աչքից ձգեցիր:

Ես գնացի մենակ և պատահեցի Մերի իշխանագատեր,  
հրաւիրեցի նէրան մազուրկայ պարելու: “Նէ զարմացած և  
ուրախ թուեց ինձ:

— Ես կարծում էի, թէ դուք պարում էք միայն հարկը  
ստիպած ժամանակ, ինչպէս անցեալ անգամ; ասայ նէ սիրա-  
լիր ժպիտով...

“Նէ, կարծես, ամենեին չէ նկատում Դրուշնիցկու բա-  
ցակայութիւնը:

— Եգուց դուք մի ուրախալի դէսքից պիտի զարմանաք,  
ասացի ես նէրան:

— Ի՞նչ բանի:

— Եյդ գաղտնիք է... պարահանդէսի ժամանակ դուք  
ինքներդ կնկատէք:

Ես երեկոն անցկացրի իշխանուհու մօտ. Հիւրեր չկային  
բայցի Վերացից և մի ծիծաղելի ծերից: Իմ տրամադրութիւնս  
լաւ էր. զանազան տարօրինակ բաներ էի թիսում: իշխանա-  
գուստը նստած էր իմ գիմայ և լսում էր ցնկարանութիւն-  
ներս այնպիսի խոր, լարած մինչև անգամ քնքոյշ ուշադրու-  
թեամբ, որ իսկամ եկաւ: Ուր էր կորել նէրա վառվառութիւնը,  
նէրա ալեվլիկ գալը, նէրա կամակորութիւնները, նէրա յան-  
դուզն նայուածքը, արհամարհու ժպիտը, անուշագիր հայ-  
եացքը:

Վէրան այս բոլորը նկատեց. նէրա հիւանդու երեսը  
արտայայտում էր սաստիկ տիսրութիւն. նէ նստած էր շուաքում  
լուսամուտի տակ բաղկաթուի վերայ: “Նէ իմ կսկիծս տուեց:

Եյդ ժամանակ ես պատմեցի իմ նէրա հետ ծանօթանալս  
և մեր սիրոյ բոլոր եղերգական պատմութիւնը—ի հարկէ,  
այս բոլորը սքողելով հնարովի անուններով:

Ես այնպէս կենդանի արտայայտեցի իմ խանդս, իմ անհանդստութիւնս, հիացմունքս. ես այնպէս լաւ, զրաւելի կերպով ներկայացրի նէրա արարմունքը, որ նէ ակամայ պէտք է ներէր իմ ալեվլեկութիւններս իշխանագուտեր հետ:

“Նէ վերկացաւ, նստեց ինձ մօտ և ղըւարթացաւ. և մէնք միայն իրկու ժամին յիշցինք, որ բժշկները պատուիրում ենքնել տասն և մէկին:

13 Ժունիսի:

Պարահանդիսից կէս ժամ առաջ իմ մօտ եկաւ Գրուշնիցին հետևակազօրի պաշտօնական պսպղուն ձևաղբեսառփ: Երրորդ օղակից կախուած էր ժամացոյցի թուրնչէ շղթան, որից կախուած էր զբարանի ակնոցը. անասելի մեծ ուսաղիրները թեքուած էին գէսլի վեր, ինչպէս սիրոյ թեկիները. նորա կօշիկները ճռճռում էին. ձախ ձեռով բռնել էր ըսկանակազոյն լայտայի ձեռնոցները և զլխարկը իսկ աջ ձեռով շուտ շուտ խառնում էր թռչունի փետուրի նման գանդուր մազերը: Կնքնաբաւականութիւնը և սորա հետ անվատահութիւնը պատկերանում էին նորա երեսի վերայ. նորա հանդիսաւոր արտաքին տեսքը, հպարա քալուածքը իմ ծիծաղս կշարժէին, եթէ մոտաղրութիւն ունենայի:

“Նա զլխարկը և ձեռնոցները ձգեց սեղանի վերայ և սկսեց ձգձգել քզանցնքները և կոկուիլ հայելու առջև. մեծ սև թաշկինակը, որ փաթաթուած էր շատ բարձր փողպատակալի վերայ, և որի ծայրը ծածկում էր նորա կզակը՝ օձիքից կէս վերշոկի չափ զուրս էր ցցուած. նորան քիչ երեաց և նա վեր քաշեց մինչեւ ականջները. այդ գժուար աշխատանքից—որովհետեւ ձևաղբեսոփ օձիքը խիստ նեղ էր անհանդստացնող արիւնը լեցուեց նորա երեսը:

— Գու, ասոււմ են, այս օրերս սաստիկ հետևելիս ես եղել իմ իշխանագուտեր, բաւական անփոյթ կերպով ասաց նա ինձ, երեսիս նայելով:

— Մէնք ուր, թէյ խմելն ուր \*), պատուսխանեցի ես,

\*) Այս խօսքը մնաւորապէս համապատասխանում է ժողովրդեսն ասացուածքին, թէ կամ օդան նստել Սուլթան Մահմուդն է տեսնում երազում: Ծանօթ. Թարգ.

կրկնելով անցած ժամանակների մի շատ յաջող ասացուածք,  
որը մի ժամանակ ասել է Պուշկինը:

— Ասացէք ինդրիմ, ձեւզգեստը իմ վերաս լաւ է գալիս...  
Եյ, անիծուած ջհուտ... Ի՞նչպէս թեւրիս տակ նեղ է...  
Մօտգ օծանելիք չունի՞ս:

— Ի սեր Ասածու, ի՞նչ ես ասում. քո վերայիցդ առանց  
այն էլ վարդի օծանելիքը բուրումէ:

— Ոչի՞նչ, տուր այստեղ...

‘Նո կէս սրուակ օծանելիք սրսկեց փողապատի վերայ, թաշ-  
կինակի մլջ, թեւրին:

— Դու պիտի պարե՞ս, հարցրեց նա:

— Չեմ կարծում:

— Ես վախենում եմ, թէ դէպք լինի իշխանադատեր հետ  
մազուրկաց պարել... ես ոչ մի ձեւ չղիտեմ...

— Դու նէրան հրաւիրե՞լ ես մազուրկայի:

— Դեռ ևս ոչ...

— ‘Նայի՛ր, որ քեզանից առաջ չանցնեն...

— Իրաւ, ասաց նա ճակատին խփելով: Վնաս բարով...  
Կդնամ նէրան վրան մօտ սպասելու: ‘Նո խլեց գլխարկը և  
գուրս վազեց:

Աէս ժամից յետոյ ես էլ զնացի: Փողոցը մուժն էր և գտ-  
տարկ ժողովարանի, կամ գինետան շուրջը—ինչպէս ուզում  
էք կոչեցէք—խմբուած էր ժողովաւրդը. նորա պատուհանները  
լուսաւորուած էին: Օքնուորական երաժշտութեան ձայնը  
երեկոյեան քամին բերում էր ինձ:

Ես զնում էի հանգարտ, ես տխուր էի... Մի՛թէ, մտա-  
ծում էի ես, աշխարհիս երեսին իմ միակ նշանակութիւնս է  
խորտակել ուրիշի յոյսիրը: Այն ժամանակից, երբ ես ապրում  
եմ և գործում, բաղդը կարծես ինձ հասցնումէ ուրիշի ար-  
կածների աւարտին, կարծես, թէ առանց ինձ ոչ ոք չէր կա-  
րող մեռնել, կամ յուսահատուել: Ես հինգերորդ տեսարանի  
կարեոր գերասանն եմ եղել. ակամայ ես կատարել եմ գահձի  
կամ գաւաճանի պաշտօնը: Սորանում բաղդը ի՞նչ նպատակ ու-  
նի... Երդեօք նա ինձ չէ նշանակել ժողովրդական կեանքից եղե-  
րիրդութիւններ և ընտանեկան վէպել շարագրելու—կամ թէ  
մտակարար — աշխատակից լինելու, օրինակ «Բիбліотекա ձի»

чтенія» оրադրին: Ի՞նչ զիտեմ.., Քիչ կան մարդիկ որոնք կեանքի սկզբում մասածում են վերջացնել ինչպէս Մեծն Սղբ-սանդր, կամ լօրդ Բայրոնը, մինչդեռ ամբողջ կեանքում մնում են պարզ պաշտօնեայ (титулярный советникъ)...

Դաշլիճ մանելով ևս թաք կացայ տղամարդկանց խմբի մէջ և սկսեցի իմ նկատողութիւններս: Գրուշնիցկին կանդ-նած էր իշխանագուտեր մօտ և սաստիկ ողեւորուած ինչ որ բան խօսում էր, նէ նրան անուշադիր կերպով լսում էր, նա-յում էր այս ու այն կովմը, հովհարը շրմունքներին սեղմելով. ներա երեսը արտայացառում էր անհամբերութիւն. աչքերը չորս կողմը պարում էին մէկին. ևս կամաց գնացի ետելից, որ լսեմ նորանց խօսակցութիւնը:

— Դուք ինձ զարմացնում էք, օրիորդ իշխանուհի, ա-սում էր Գրուշնիցկին. դուք սաստիկ փոխուել էք այն ժամա-նակից, երբ ձեզ տեսած չեմ...

— Դուք նոյնպէս փոխուել էք, պատասխանեց նէ, նորա վերայ թոռոցիկ հայեացք ձգելով որի մէջ նա չնկատեց ծա-ծուկ ծանակը:

— Ե՞ս: Ես փոխուել եմ., Օ՛, երբէք: Դուք զիտէք, որ այդ անհնարին է: Ով մի անգամ տեսել է ձեզ նա յաւիտեան կպահէ ձեր աստուածային տիպարը:

— Թա՞ղէք...

— Ինչո՞ւ. այժմ չէք ուզում լսել այն, որ դեռ մօտ ժա-մանակներս լսում էիք հածութեամբ և այնպէս յաձախ:

— Որովհետեւ ես չեմ սիրում կրկնութիւն, պատասխա-նեց նէ ծիծաղելով:

— Օ՛, ես սաստիկ սխալուած եմ.. Ես, յիմարս, մաս-ծում էի, թէ գուցէ այս ուսագիրները կտան ինձ իրաւունք յուսալու... Ո՛չ աւելի լսու էր յաւիտեան մնալ այն զինուո-րական արհամարհելի վերարկուով որով գուցէ, ես պարտա-կան եմ ձեր ուշադրութեան...

— Յիրաւի զինուորական վերարկուն ձեզ աւելիէ սաղում...

Եյդ ժամանակ ես մօտեցայ և ողջունեցի իշխանագուտեր. նէ քիչ կարմրեց և արագ կերպով սասաց.

— Շշմարիտ չէ, պարոն Պիչորին, որ զինուորական մոխրա-ղոյն վերարկուն աւելի շատ է սաղում պարոն Գրուշնիցկուն...

— Ես ձեզ հետ համաձայն չեմ, պատասխանեցի ես.  
ձեւաղեսուվ նա աւելի դեռահաս է երեսում:

Գրուշնիցկին չտարտու այդ հարուածը. երեխաների նման  
նա իրեն ծեր է համարում. կարծում է, թէ իւր երեսի վե-  
րայ կըքերի խոր հետքերը կրում են իւր տարիների կնիքը.  
Նա իմ վերայ ձգեց կատաղի հայեացք, տրոփեց ոտով և հե-  
ռացու:

— Խոստովանուեցէք, ասացի ես իշխանուհի օրիորդին,  
որ թէ նա միշտ սաստիկ ծիծաղելի է եղած՝ բայց գեռ մօտ  
ժամանակներս նա ձեզ թվում էր հետքրագրական մարդ...  
զինուորականի մոխրագոյն վերարկուով...

Նէ խոնարշեցրեց աչքերը և չպատասխանեց:

Գրուշնիցկին ամբողջ գիշերը հետեւում էր իշխանադստեր,  
պարում էր կամ նէրա հետ, կամ vis-a-vis. Նա նէրան կլա-  
նում էր աչքերով հառաջում էր և նէրան ձանձրացնում ա-  
ղաջանքներով և յանդիմանութիւններով: Վրորդ կազրիլեց  
յետոյ նէ նորան արդէն ատում էր:

— Ես այդպիսի բան քեզանից չեմ սպասում, ասաց նա,  
մօտենալով ինձ և բոնելով ձեռս:

— Ի՞նչպիսի բան:

— Դու նէրա հետ մազուրկայ ես պարում, ասաց նա  
բարձր ձայնով: — Նէ ինձ խոստովանուեց...

— Ե, ի՞նչ մի՞թէ այդ գաղտնիք է:

— Ի հարկէ... Ես այդ սպասում էի այդ աղջկանից, այդ  
ալեվլիից... Ես վրէժինդիր եմ լինելու...

— Մեղքը քո զինուորական վերարկուինդ է, կամ ուսա-  
զիրներինդ. Ինչու ես նէրան մեղագրում: Ինչով է նէ յան-  
ցաւոր, որ զու նէրան այլ ևս գիւր չես գալիս:

— Ինչու է յօյս տալիս:

— Դու ինչու ես յօյս գնում: Յանկալ և հասնել մի բա-  
նի—ես այդ հասկանում եմ: բայց նվէ յօյս գնում:

— Դու զրաւը տարար, բայց ոչ բոլորովին, ասաց նա  
նենդ ժայխով:

Մազուրկան սկսուեց. Գրուշնիցկին ընտրեց միայն իշ-  
խանադստեր, միւս սասպետները յաճախ ընտրում էին նէ-  
րան. սա գաւագրութիւններ իմ գէմ—աւելի լաւ. նէ ուղղում

է ինձ հետ խօսել նէրան խանդարում են—նէ աւելի կցանուկանայ:

Ես երկու անդամ՝ նէրա ձեռը սեղմեցի. երկրորդ անդամ՝ նա ձեռը դուրս քաշեց մի խօսք չառելով:

— Ես այս զիշեր անհանդիսա եմ քնիլու. ասաց նէ, երբ մաղուրկան վերջացաւ.

— Յանցանքը Պրուշնիցիունն է:

— Օ՛, ոչ—եւ նէրա երեսը արտայայտեց այնպիսի յուղմունք և ախրութիւն, որ ես խօսք տուի, որ այս երեկոյ անպատճառ համբուրել նէրա ձեռը:

Սկսեցին ցրուել: Դշխանադատեր կառք նստեցնելիս ես արագութեամբ նէրա փոքրիկ ձեռը սեղմեցի իմ շրթունքներիս: Մութն էր, և ոչ ոք այս ընկատեց:

Ես վերադարձայ դաշլիճ շատ գոհ սրտով:

Մեծ սեղանի մօտ նստած ընթրում էր երիտասարդութիւնը, որոց մէջ էր և Պրուշնիցին: Երբ ես ներս մտայ լուսորը լուցցին, պարզ էր, որ իմ մասին էին խօսում: ‘Նախորդ պարահանդիսից շատերն իմ վերայ բարկացած էին, մանաւանդ հեծելազօրի կապիտանը. իսկ այժմ կարծեմ հաւասարապէս իմ զիմ կովումէ մի թշնամի խմբակ Պրուշնիցիու դեկավարութեամբ, որովհետեւ նա շատ զոռող և քաջ տեսք ունի:

Հատ ուրախ եմ ես սիրում եմ թշնամիներիս, թէ ոչ քրիստոնէական ձեռով: ‘Խորանք ինձ զուարձացնում են, յուղում են արիւնս: Այնել միշտ հսկող, որսալ ամեն մի հայացք, ամեն մի խօսքի նշանակութիւնը, գուշակել տրամադրութիւնը դաւաղրութիւնները ի գերեւ հանել, ցոյց տալ, թէ խարստած եմ, և յանկարծ մի հարուածով տապալել նորանց խորամանկութեան և դիտաւորութեան—ամբողջ վիթխարի և բազմաշխատ շնուրթիւնը, աշա թէ ես ինձն եմ անուանում կեանք:

Ընթրիքի ժամանակ Պրուշնիցին փսփսում և աչքով էր անում հեծելազօրի կապիտանին:

Եյսօր առաւոտ Վէրան իւր էրկան հետ զնաց Ախոլօդուկի: Ես պատահեցի նորանց կառքին, երբ գնում էի Լեգովսկայեա

իշխանուհու մօտ: “Նէ ինձ զլիսով արեց, նէրա Հայեացքը արտայայտում էր յանդիմանութիւն:

— Ումն է յանցանքը: Կնչու նէ չէ ուղում ինձ հեա տեսնուել առանձին: Աէրը նման է կրակի—առանց ճարակի կմարի: Պուցէ նախանձը անէ այն, ինչ որ չկարտղացան անել իմ աղաւանքները:

Ես իշխանուհու մօտ նստեցի մի ամբողջ ժամ: Մերին գուրս չեկաւ—հիւանդ է: “Նէ երեկոյեան Ճեմեկքում չկար: Նոր կաղմուած խմբակը զինուորուած զրպանի ակնոցներով յիրաւի սպառնալի զիրք է բռնել: Ես ուրախ եմ, որ իշխանադուտարը տկար է: “Նորանք գուցէ որեւէ լրբութիւն անէին նէրա դէմ: Վրուշնիցին մազերը սանդրում է, խառնիխուռան և ունի զարհուրելի տեսք: “Նա, կարծեմ, հաստատ վշտացած է: մանաւանդ անսպառուած է նորա ինքնասիրութիւնը. բայց չէ որ կան մարդիկ, որոց վշտանալն էլ զուարձալի է...

Աերագառնալով տուն ես նկատեցի, որ ինչոր բան սպակաս է թվում: Ես նէրան չտեսայ: “Նէ հիւանդ է: Աիրահարուել չի մ ես արդեօք... Ի՞նչ եմ գուրս տալիս:

15 Ժունիսի:

Ծուաւուեան տամնումէկ ժամն է—ժամ երր Լեզովսկայեա իշխանուհին Երմօլովիեան լողարանում քրտնում է: Ես անցկացաց նէրա տան մօտով: Իշխանագուստը մտածմունքի մէջ ընկդմոծ նստել էր լուսամուտի մօտ: Խճ տեսնելով վեր թուաւ:

Ես մուս նախասնեստկը. ծառաներից ոչ ոք չկար, և ես առանց յայտնելու, այդտեղի սովորութեան աղաստութիւնից օգտուելով, մուս հիւրանոցը: “Նսեմ գժգունութիւնը ծածկել էր իշխանագուստեր երեսը: “Նէ նստել էր դաշնամուրի մօտ, մի ձեռով յենուելով բազկաթոռի յենարանին. այդ ձեռը աննկատելի կերպով դողում էր: Ես հանդարտ մօտեցայ նէրան և ասացի.

— Պուք իմ վերայ բարկացած էք:

“Նէ նուազ և խոր հայեացքով շարժեց դլուխը. նէրտ շրթունքները կամենում էին ինչ որ բան ասել, բայց չկարողացան. աչքերը արտասուքով լեցուեցին. նէ ընկաւ բազկաթոռի վերայ, և երեսը ծածկեց ձեռներով:

\*

- Կ՞ոչ է եղել ձեզ, ներա ձեռք բռնելով ասացի ես:
- Դուք ինձ չեք յարդում... Օ՛, թողէք ինձ...
- Ես մի քանի քայլ յնտ զնացի..., Նէ բազկաթոռի վերայ ուղղուեց, ներա աչքերը փայլեցին...
- Ես գոան բռնից բռնելով կանդ առայ և ասացի.
- Ներեցեք ինձ, օրինրդ իշխանուհի, ես անմիտ վարուեցի...
- Եյլ ես երկրորդ անդամ չի պատահի, ես միջոցներ ձեռ կառնեմ... Ինչու դուք զիտենաք այն, ինչ որ մինչեւ այժմ կառարուել է իմ հոգում մեջ: Դուք այս ոչ մի ժամանակ զիտենաւը չեք և ձեզ համար աւելի լաւ: Մնաք բարով:
- Ճեռանալիս, ինձ այնպէս էր թվում թէ նէ լաց էր լեռում:
- Ես մինչև երեկոյ թափառեցի Մաշտկի շուրջը. սասափի յոգնեցի և տուն զալով բոլորվին ուժասպառ ընկայ անկողնիս վերայ:
- Ինձ մօա եկաւ Պետրները:
- Շմարի՞տ է, հարցրեց նա, որ դուք պատկվում էք եղովկայեա իշխանապատել հետ:
- Ե ի՞նչ:
- Եմբողջ քաղաքը խօսում է: Բոլոր իմ հիւանդները զքաղուած են այդ կարեսը նորութիւնով. այդ հիւանդները այնպէս մարզիկ են, որ ամեն բան զիտեն:
- «Եյդ Գրուշնիցկու բաներն են», մտածեցի ես:
- Որպէս զի բժիշկ ձեզ ցոյց տամ այդ խօսքերի սուտ լինելը, զաղանի կերպով յայտնում եմ ձեզ որ եգուց ես գնալու իմ կիսօվզօդսկ...
- Եշանագուստը նոյնպէս...
- Աչ նէ դեռ ևս մի շարաթ էլ կմնայ այստեղ...
- Ուրեմն գուք չեք պատկվում:
- Բժիշկ բժիշկ նայեցէք իմ վերայ, միթէ՞ ես նման եմ վեսացուի, կամ որևէ բանի:
- Ես այդ չեմ ասում: Բայց զիտէք լինում են դէպքեր... աւելացրեց նա, մեղմ ժամանակ որից յետք պատուաւոր մարդը պարտական է պսակուել և կան մայրեր, որ գոնէ չեն նախազգուշացնում այս դէպքերից... Եւ այսպէս, ես ձեզ ինչպէս բարեկամ խորհուրդ եմ տալիս զգոյշ լինել: Եյտեղ ջը-

րում օդը շատ վտանգաւոր է. ինչքան ես տեսել իմ գեղեցիկ գեռահաս մարդիկ, արժանաւոր աւելի լաւ վեճակի, որ այդտեղից գնացել են պատկուած... Ո՞ինչև անդամ՝ հաւատացեէք, ինձ էին կամենում ամուսնացնել: Գաւառացի մի որդեսէր մայր, որ ունէր մի տժգին աղջիկ, ես անբազգութիւն ունեցայ նէրան ասելու, թէ պատկուելուց յետոյ երեսի գոյնը տեղը կդայ. այն ժամանակ նա շնորհակալութեան արտասուզներով առաջարկում էր ինձ իւր աղջկայ ձեւը և իւր բոլոր կարողութիւնը—Ապրծեմ յիսուն ճորդ, բայց ես պատասխանիցի, որ ես դորան անընդունակ եմ:

Ա երները գնաց կատարեալ հաւատացած լինելով, թէ ինձ զգուշացրեց: “Նորա խօսքից ես նկատեցի, որ իմ և իշխանագուտեր մասին քաղաքում տարածուած են զանազան վատ լուրեր: Աս Գրուշնիցկուն աժան չլ’ նստի:

18 Ժունիսի.

Վ հա երեք օրէ, ինչ ես Կիսլավօդսկում եմ: Ամեն օր Ա երացին տեսնում եմ ջրակի մօտ և զքոսանքի ժամանակ: Ըուաւու երբ զարթնում եմ, նայում եմ լուսամուտի մօտ և ուղղում եմ գրավանի ակնոց գէպի նէրա պատշգամիք. նէ վաղուց արդէն հագնուած է և սպասում է պայմանեալ նշանին. մենք իրար թէ հանդիպում ենք սպատահմամբ պարտիզում, որը մեր տանից ձգվում է գէպի ջրակը: Լ ևոնսցին կենդանացուցիչ օդը նէրա երեսի գոյնը տեղը բերեց և կազդուրեց: Ի զուր չէ, որ “Նարզանը կոչվում է հսկայի տղբեկը: Ե յստեղի բնակիչները հաստատում են, որ Կիսլավօդսկի օդը մարդկանց արամագրում է գէպի սէր, որ այս բոլոր վէպերի վերջաւորութիւններն այստեղ են տեղի ունենում, որոնք երբ և իցէ սկսուել են Մաշուկի սարուտներում և իրաւ, ամեն ինչ այստեղ առանձնութեան տիպ է կրում, ամեն բան խորհրդաւոր կերպարանք ունի—և կաղամախների ծառուղիների բարձր ստուերները, որոնք թէքվում են գէպի հեղեղը, որը աղմուկալի և փրփրած թափառում է սարից սար, իրեն ճունապարհ է բացանում կանաչած լեռների միջով և կիրճելը, որոնք լեցուած են մասախուղով և լոռութեամբ, և որոնք ճիւղաւոր-

ուած տարածվում են ամեն կողմ—և թարմութիւնը անուշահոս օդի, պարարուած հարաւի բարձրացօղուն խոտերի և սպիտակ տկացիայի բուրմունքներով—և անընդհատ քաղցր—թմբեցուցիչ մբմունջը սառն աղբիւրների, որոնք միանալով հովտի վերջերում, վազում են և վերջապէս թափվում Պօգկումօկ գետակը: Եյս կողմից կիրճը աւելի լայն է և գառնում է կանաչ հովիտ: Նորա միջով անցնում է մանուաձե փոշոտ պողոտան: Ամեն անգամ, երբ ես նորա վերայ իմ նայում, ինձ թվում է, թէ կառք է անցնում և կառքի լուսամուտից դուրս է նայում մի վարդագոյն երեսիկ: Երդէն շատ կառքեր են անցել այս ճանապարհով, բայց նէ չկայ: Եմրոցի ետեի եղած բազը, մարդաբնակէ դարձել: Պանդոկում, որը շինուած է մի բլուրի վերայ, մի քանի քայլ հեռու իմ բնականից, երեկոները սկսում են երկու կարդ տօսիների միջից պլազմալ կրակներ: գաւաթների աղմուկը և Ճնկոցը լսվում են մինչեւ ուշ գիշեր:

Ոչ մի տեղ այնքան չեն խմում կախէթի գինի և հանքային ջուր՝ ինչպէս այստեղ:

Հաստ ցանկացողներ կան այս երկու արհեստը (կամ պարապմունքը) միմեանց խառնելու, իսկ ես նոյանից չեմ:

Գրուշնիցին իւր խմբակի հետ խանայն օր գինետնում դռուում է, և համարեա թէ ինձ չէ բարեւում:

Նա գեռ երեկ է եկել բայց արդէն երեք ծերի հետ կրռուել է, որոնք ուղղում էին նորանից տուաջ մանել լողարան: յիրաւի անյաջողութիւնները ներշնչում են նորա մէջ զինուորական հոգի:

22 յունիսի.

Վերջապէս նէրանք եկան: Ես նստած էի լուսամուտի մօտ, երբ լսեցի նէրանց կառքի ձայնը, իմ սիրտս բաքախնից: այս ինչ է: Միթէ ես սիրահարուած եմ: Ես այնպէս յիմար եմ սաեղծուած, որ այդ կարելի է ինձանից սպասել:

Ես նէրանց մօտ ճաշեցի: Իշխանուհին իմ վերայ նայում է մեծ զզուանքով և չէ հեռանում աղջկանից... վատ է: Բայց զոնէ Վերան նախանձում է ինձ և իշխանադսակեր: Հասոյ վերջապէս այդ յաջողութեան: Խնչ չի անէ կինը, որ վշացնէ իւր հակառակորդին: Ես յիշում եմ, մէկը սիրեց ինձ նորա

Համար, որ ես սիրում էի ուրիշն: Ոչ մի բան այնպէս տարօրինակ չէ, ինչպէս կնոջ խելքը. կնոջ որևէ բանի մէջ գըգուարէ համոզել պէտք է նէրանց հասցնել մինչև այնտեղ որ իրենք համոզուին: Կապացոյցների գասաւորութիւնը, որով նէրանք փարատում են իրենց նախապաշարմունքները՝ շատ ասրօրինակ է: Որպէս զի մարդ նէրանց մասածելու եզանակին վարժուի՝ պէտք է իւր մէջ յեղաշրջէ բոլոր ուսումնարանական արամարանական օրէնքները: Օրինակ մտածելու սովորական ձևն է:

Եյս մարդը սիրում է ինձ. բայց ես մարդու եմ գնացած. հիտեապէս ես նորան չպէտք է սիրեմ:

Կնոջ մասածելու ձևն է.

Ես չպէտք է նորան սիրեմ, որովհետեւ ես մարդու եմ գնացած. բայց նա ինձ սիրում է—հիտեապէս...

Եյտեղ մի քանի կէտեր, որովհետեւ առողջ գատողութիւնը ըստում է, այլ մեծ մասամբ խօսում է լեզուն, աչքերը և նորանց յետելից սիրոք, եթէ նա կայ:

— Ինչ կլինի, եթէ մէկ օր այս նամակները ընկնին կնոջ ձեռը. «Օքապարտութիւն», կըզաւէ զայրացած:

Եյն ժամանակից, ինչ բանաստեղները զրում են և կանայք կարդում (որի համար նէրանց խորին չնորհակալութիւն), քանի անդամ նէրանց կոչել են հրեշտակ, որ արտարե են, և նէրանք հոգու պարզութեամբ հաւատացել են այդ հաճոյական խօսքին, մոռանալով, որ հէնց նոյն բանասաւեղջները փողի համար ներոնին մինչև Կատուած կոչեցին:

Տեղը չէր որ ես նէրանց մասին այսպէս չարութեամբ խօսէի, ես, որ այս աշխարհում նորանցից զատ ուրիշ ոչ ոքի չեմ սիրում, ես, որ միշտ, պատրաստ եմ եղել նէրանց զոհել իմ հանդսութիւնս, պատուասիրութիւնս և կեանքս... Բայց ես կրքի և վերաւորուած պատուասիրութեան կատաղութիւնից չէ, որ աշխատում եմ վերցնել նորանց վերայից մոգական ծածկոցը, որի միջեց միայն սովորական նայուածքն է թափանցում: Ոչ միայն բոլորը, ինչ որ ես նորանց մասին ասում եմ հիտեամնք է


Ո՞տքի սառը գատողութեան,  
Ո՞րտի դառն գիտողութեան:


Աանսյք պէտք է ցանկանան, որ բոլոր տղամարդիկ նէրանց այնպէս լու ձնանաշն, ինչպէս ես, որովհետեւ ես նէրանց հարիւր անգամ աւելի եմ սիրում այն ժամանակից, ելք նէրանցից չեմ վախենում և հասկացայ նէրանց մանր թուլութիւննելը:

Ի գետ, Վերները անցեալ օրը կանանց համամատեց հըմայած անտառի հետ, որի մասին Տասան պատմումէ իւր, «Ըղատուած Երուսաղէմի մէջ. «Միայն մօտեցիր», ասումէ նա, քո վերայ ըսրս կողմից կթափուեն այնպիսի արհաւիրքներ, որ Նստուած ազատէ. պարաք, հպարաւութիւնն, վայելչութիւնն, հասարակական կարծիք, ծաղը, արհամարանք... Միայն պէտք է չնայել այլ ուղիղ գնալ. քիչքիչ հրէշները կանցայտանան և քո առջեւ կրացուի հանդարա և փայլուն դաշտ, որի մէջ ծաղկումէ կանաչ մրտենին: Բայց դժբաղդութիւննէ, երբ առաջին անգամ սիրտդ վախենաց յիւ դառնասա:

24 Ժունիսի.

Այս երեկոն լի էր արկածներով: Ախսօվողսկից երկք վերստ հեռու, այն կրծում, որտեղ հոսումէ Պօդկումծկը, կայ մի ժայռ, որ անուանվումէ Օզակ. սա մի գուռնէ բնութենից շինուած. նա գտնվումէ բարձր բլուրի վերայ, և ծագող արել նորա միջից ցրվումէ աշխարհի վերայ իւր վերջնն, հրացայտ հայեացքը: Կանանց և տղամարդկանց մի ձիաւոր խումբ գնաց այնտեղ քարէ լուսամուտի միջից նայելու արեւի մայր մանկուն: Ոչ ոք նորանցից, ճշմարիտն ասած, չէր մտածում արեւի մասին: Ես գնումէի իշխանագստեր մօտով: Տուն վերագառնալիս պէտք էր ոտով անցնել Պօդկումծկը Լեռնային ամենացանծաղ գետակները վտանգաւոր են նրանով, որ նորանց յատակը կատարեալ գեղազիասկ է (կալեմակոո): ամենայն օր ալիքների ընդհարումից փոփոխվումէ. երէկ որտեղ քար էր, այսօր վիշ է: Ես բանեցի իշխանագստեր ձիու սանձից և տարոց ջուրը, որ մինչեւ ծննիներս հաղիւ լինէր: Մենք սկսեցինք հանդարա հոսանքին հակառակ փոքր ինչ շեղ առաջ շարժուիք: Յայտնի է որ արագահոս գետակներ անցնելիս ջրին չպէտք է նայել որովհետեւ իսկցն խելքդ սկսումէ պտտել:





Պօլկումօկ գետից անցնելը. նկար՝ Օվելէ

М. Зичи. — Переходъ черезъ рѣку Подкумокъ.

Изъ романа »Герой нашего времени« Лермонтова.

Հրատ. «Արաբս» Հանդիսի:



Fig. 1. Two large, dark, craggy rock formations or mountains. The formation on the left is more rounded and has a small, light-colored patch near its base. The formation on the right is more jagged and has a prominent, light-colored, overhanging rock formation extending downwards.

Ես մոռացայ սրա մասին նախազգուշացնել իշխանադուստր  
Մելին:

Մենք արդէն գետակի մէջ տեղն էինք, արագահոս տեղում՝  
երբ նէ թամբի վերայ յանկարծ դատանուեց: «Ես վատ եմ  
զգում ինձ», ասաց նէ թոյլ ձայնով: Ես արագութեամբ ծուռեցի  
նէրան, ձեռս փաթաթեցի նէրա ծապուկ մէջքին:

— Անք նայեցէք, ասացի նէրան. ոչինչ չկայ, միայն  
դուք մի՛ վախենաք. ես ձեզ հետ եմ:

«Նէ լաւ եղաւ, նէ ուղում էր իմ ձեռիցս աղատուիլ բայց  
ես ձեռս աւելի ամուր փաթաթեցի նէրա փափուկ քնքոյշ  
մէջքին. իմ այտս համարեա քսվում էր նէրա նուրբ այտին,  
որից շնչում էր տաքութիւն:

— Եյդ ի՞նչ էք անում... Եսառած իմ...

Ես ուշագրութիւն չփարձրի նէրա յուղման և սարսափին,  
և իմ շըթունքներս հպում էին նէրա քնքոյշ այտերին. նէ  
ցնցուեց, բայց ոչինչ չասաց. մենք գնում էինք յետելից. մեզ  
ոչ ոք չնկատեց:

Նրա մենք դուրս եկանք՝ բոլորս ձիերս քշեցինք: Իշխա-  
նադուստրը յետ պահեց իւր ձին. ես մնացի նէրա մօտ. նկա-  
տելի էր, որ նէրան անհանգստացնում էր իմ լուռեթիւնս.  
բայց ես երդուել էի մի խօսք չխօսել—Հետաքրքրութեան հա-  
մար: Ես ուղում էի տեսնել, թէ ինչպէս նէ դուրս կդայ այդ  
գժուար դրութիւնից:

— Վամ դուք ինձ արհամարում էք, կամ շատ էք սիրում:  
վերջապէս ասաց նէ, այնպիսի ձայնով որի մէջ կային ար-  
տասունքներ: Դուցէ դուք ուղում էք վերաս ծաղրել պղղ-  
տորել իմ հողիս, յետոյ թողնել... Դա այնքան կեղտուա, նոյն-  
քան ցած բան կլինէր, որ ենթագրելն անդամ... Օ՛, ոչ, ճըշ-  
մարիտ չէ, աւելացրեց նէ մտերմական քնքոյշ ձայնով, ճշմա-  
րիտ չէ. իմ մէջ չկայ այնպիսի մի բան, որի պատճառով կա-  
րելի չլինի ինձ յարգել: Զեր յանդուզն վարմունքը... ես պէտք  
է, պէտք է ձեզ նէրեմ, որովհետեւ թոյլ տուի... պատասխա-  
նեցէք, խօսեցէք. ես ուղում եմ լսել ձեր ձայնը...

Անքին խօսքերում կար այնպիսի կանացի մի անհամ-  
բերութիւն, որ ես ակամաց ժպատակի. տարաբազզարար սկսեց  
մժնել... Ես ոչինչ չպատասխանեցի:

— Դուք լսումէք. շարունակեց նէ. դուք, գուցէ, ուղումէք, որ առաջին անգամ ես ասեմ, թէ ձեզ սիրումէմ...  
Ես լսումէի:

— Այդ էք ուզում, շարունակեց նէ արագութեամբ դէպի ինձ գառնալով... Նէրա գէմքի և ձայնի վճռականութեան մէջ կար ինչ որ զարհուրելի բան...

— Կ'նչ հարկ կայ, ուսերս վեր թօթուելով պատասխանեցի ես:

‘Նէ խփեց ձիուն իւր մարտակով և բոլոր ոյժով քշեց նեղ և վասնգաւոր ճանապարհով. սա այնպէս շուտ կատարուեց, որ ես հաղիւ կարողացայ նէրան համնել և այն, երբ նէ հասաւ մնացած խմբին: Մինչև տուն համնելը նէ խօսում և յաջախ ծիծաղում էր: ‘Նէրա շարժումների մէջ նկատվում էր ինչ որ տենգային զրդիռ. իմ վերայ ոչ մի անգամ չնայեց: Բոլորը նկատեցին այս անսովոր ուրախութիւնը: Խշխանուհին ևս իւր սրտի մէջ ուրախանում էր, նսյելով իւր զստեր վերայ. իսկ աղջեկը ջղային հիւանդութեան մէջ էր. նէ գիշերը կանցկացնէ անքուն. և լաց կինի: Այդ միտքը ինձ պատճառում է անսահման հրձուանք. կան բոպէներ, երբ ես հասկանում եմ վամպիրին\*):... Մինչդեռ ես համարվում եմ բարեսիրտ մէկը և աշխատում եմ, որ այսպէս էլ ճանաշուլիս:

Զիերից իջնելով տիկինները մտան իշխանուհու մօտ. ես յուզուած էի և գնացի լեռները իմ մաքերս ցրուելու, որոնք կիտուած էին իմ մէջ: Յօղալից երեկոն զրաւիչ էր և զով: Լուսինը բարձրանում էր սարերի մութ կատարների ետեկից: Զպայտած ձիուս իւրաքանչիւր քայլը խուլ կիրապով տարածվում էր կիրճերի լոռութեան մէջ. ջրվէժի մօտ ձիուս ջրեցի. յաջողութեամբ երկու անգամ գարնանային զիշերի թարմ օդը ծծելով յետ գարձայ: Ես գնում էի նոր թաղով: Ճրագները լուսամուտներում սկսում էին հանգել զիշելսապահները պատնէշի վերայ և կօգակների խմբերը շրջակայքում ձայն էին տալիս միմեանց երկարաձիդ ձայնով...

‘Նոր թաղի մի տան մէջ, որը շինուած էր ձորի ափին, նկատեցի սաստիկ լուսաւորութիւն. երբեմն լսվում էր աններ-

\*.) Առասպելական էակ, որ գիշերները գերեզմանից դուրս է գալիս և մարդկանց և կենդանիների արիւնը ծծում է:

դաշնակ խօսակցութիւն և աղմուկներ, որոնք նշան էին, թէ այնտեղ զինուորականների խնձոյք կայ: Ես ձիուց իջայ, թագ-կացայ պատուհանի մօտ, պատուհանի կիսատ ծածկուած մի եղլը ինձ միջոց տուեց տեսնել խնձոյք անողներին և լսել նորանց խօսքերը:

“Նորանք իմ մասին էին խօսում:

Նեծելազօրի կապիտանը, որի զլուխը զինու շոգիով լեց-ուած էր, բուռնցքով խփեց՝ սեղանին պահանջելով ուշա-դրութիւն:

Պարոններ, ասաց նա, աս ոչ մի բանի նման չէ: Պեչօրի-նին պէտք է սովորեցնել: Եյս Պետերբուրզի պարոնները միշտ իրենց չափը կորցնում են, մինչև որ նորանց քթին չատա: Նա մտածում է թէ միայն աշխարհում ինքն է ապրել որովհետեւ միշտ կրում է մաքուր ձեռնոցներ և հաղնում մաքրած կօ-շիկներ: Եւ ինչ անբարդաւան ժպիտ է, իսկ ես համոզուած եմ, որ նա վախկու է, այո՛ վախկուա:

— Ես ել այդպէս եմ կարծում, ասաց Պրուշնիցին: Նա սիրում է կատակի տալ ամեն բան: Ես մի անդամ նորան այն-պէս բաներ ասացի, որ մի ուրիշը ինձ հէնց այնտեղ կջար-գէր, իսկ Պեչօրինը ելի կատակի զարձրեց: Ես ի հարկէ նո-րան մենամարտութեան չկանչեցի, որովհետեւ դա նորա գործն էր, բացի այդ չէի ուզում գործ բանալ:

— Պրուշնիցին նորա վերայ բարկացել է, որովհետեւ նա խլեց նորա ձեռից իշխանագուասրը: ասաց մէկը:

— Բան ասացիր, ելի: Ես, ճշմարիտ է, մի քիչ իշխա-նագուասեր ետեից ընկայ, բայց իսկոյն թողի, որովհետեւ չեմ ուզում ամուսնանալ: Իսկ արատաւորել մի աղջկայ անունը— իմ սովորութիւնս չէ:

— Եյս, հաւատացնում եմ ձեզ, որ նա կատարեալ վախ-կու է, այսինքն Պեչօրինը, ոչ թէ Պրուշնինին, իսկ Պրուշ-նիցին կտրիձ է: բացի սրանից նա իմ ճշմարիտ բարեկամն է, ասաց նորից հեծելազօրի կապիտանն:

— Պալտներ, ոչ ոք այստեղ նորան (Պեչօրինին) չէ պաշտպանում, ոչ ոք: աւելի լաւ, ուզում էք փորձել նորա քաջութիւնը, այս ձեզ կղուարձացնէ:

— Ուզում ենք, բայց ի՞նչպէս:

— Եյ լսեցէք, զլխաւորապէս Գրուշնիցկին է նորա վերան բարկացած — ուրեմն նախ նա գուրս կդայ: Նա մի չնչին պատճառառանքով Պեչօրինին կիանչէ մենամարտութիւն... Սպասեցէք, այ, սորանումէ կատակը... կկանչէ մենամարտութիւն, լաւ: Եյդ մենամարտութեան հրաւէրը, պատրաստութիւնները, պայմանները բոլորը կլինին, որքան կարելի է փառաւոր և սարսափելի ձևականութեամբ. այդ ևս յանձն եմ առնում: ևս կլինեմքո վկադ (սեղունակ), իմ խեղճ բարեկամ: Լաւ: Խսկ աշա ինչումն է սատանութիւնը, ատրճանակի մէջ մենք գնդակ չենք դնի. ևս զլուխս դրաւ եմ դնում, որ Պեչօրինը կվախենայ — ձեզ վեց վերստ հեռաւորութիւն կկանդնեցնեմ: ինչ լաւ բան կլինի: Համաձայն էք պարոններ:

— Շատ լաւ է մտածած: — Համաձայն ենք... Ի՞նչու չէ, լոռեց ամեն կողմից... Խսկ գու Գրուշնիցկիյ:

Ես Գրուշնիցկու պատասխանին, հետաքրքրութեամբ էի սպասում, ցուրտ կատաղութիւնը տիրեց ինձ, երբ մտածում էի, որ եթէ այս դէպքը չպատահէր, ևս այդ յիմարներին ծաղրի առարկայ պիտի դառնայի: Եթէ Գրուշնիցկին չհամաձայնէր, ևս կրոնէի նորա կոկորդից: Բայց փոքր լռութիւնից յետոյ, նա վեր կացաւ իւր նստած տեղից, մեկնեց ձեռը կապիտանին և լուրջ կերպով ասաց. Աշաւ, ևս համաձայն եմ:

Դժուար է նկարագրել այս հիմնալի ընկերութեան հիացումը:

Ես վերադարձայ տուն, յուղուած երկու տարբեր զգացմունքով: Առաջինն էր տիրութիւն: «Ի՞նչու համար նորանք բոլորը ինձ ատում են», մտածում էի ևս: — Ի՞նչու համար: Անպատճե՞լ եմ ևս արգեօք որեւէ մէկին: Ոչ:

Միթէ ևս այն մարդկանցից եմ, որոց միայն տեսքը ծնեցնումէ տաելութիւն: Եւ ևս զգում էի, որ թունալից չարութեամբ քիչքիչ լցցում էր իմ հոգին... «Օգոյշ կացէք, պարոն Գրուշնիցկիյ» ասում էի ևս, սննեակում մանգալով. «Ինձ հետ այդ ձեռով կատակ չեն ահում: Զեր յիմար ընկերների խլախոյսը ձեզ վերայ թանգ կնսամի: Ես ձեր խաղալիքը չեմ...»

Ես ամբողջ գիշեր չքնեցի: Առաւօտեան դէմ իմ գոյնս զեղնել գալձել էր նարնջի գոյն:

Առաւօտեան ջրակի մօտ ևս պատահեցի իշխանադստեր:

— Դուք հիւանդէք, ասաց նէ աչքերը յառելով իմ վերայ:  
— Եմբողջ զիշերը ևս չեմ քննել:  
— Ես նոյնպէս... Ես ձեզ մեղաղում էի... Դուցէ զնուր  
տեղը: Բայց ևս ձեզ ամեն բան կարող եմ ներել...  
— Եմի՞ն բան...  
— Եմեն բան... միայն ասացէք ձշմարխտը... Բայց շուտ:  
Տեսնում էք, ևս շատ էի մոտածում, աշխատելով բացատրել  
արդարացնել ձեր վարմունքը.—գուցէ դուք արդելքներից վա-  
խենում էք իմ ծնողների կողմից... այդ ոչինչ.—երբ նորսնք  
իմանան... (նէրա ձայնը գողաց) ևս նորսնց կթախանձեմ: Կամ  
ձեր զրութիւնը... Բայց գիտացէք, որ ևս ամեն բան զոհում  
եմ նորա համար, որին սիրում եմ... Օ՛, պատասխանեցէք,  
շուտ արեք—խղճացէք... գուք ինձ չեք արհամարհում, այն-  
պէս չ:

‘Նէ բռնեց իմ ձեռը:

Իշխանուհին մեր առջեից գնում էք Աէրայի մարդի հետ  
և ոչինչ չեր տեսնում: բայց մեզ կարող էին տեսնել զբօսնող  
հիւանդները ամենահետաքրքիլ բամբասասէրները աշխարհի  
երեսն, և ևս շտապով ազատեցի ձեռս նէրա տռփալի սեղ-  
մումից:—Ես ձեզ կասեմ բոլոր ձշմարտութիւնը, պատասխա-  
նեցի իշխանագստերը չպէտք է արդարանամ, և ոչ բացատրեմ  
իմ վարմունքս. ևս ձեզ չեմ սիրում:

‘Նէրա շրթունքները գունատեցան:

— Թողէք ինձ, ասաց նէ հաղեւ լսելի ձայնով:

Ես ուսերս վեր թօթուեցի, յետ դարձայ և հեռացայ:

25 յունիսի.

Ես երբեմն ինձ արհամարհում եմ: Սորանից չ արդեօք,  
որ ևս արհամարհում եմ և ուրիշներին... Ես անընդունակ  
դարձայ աղնիւ միտումների. ևս վախենում եմ ինքս ինձ ծի-  
ծաղելի թուելուց: Մի ուրիշը իմ տեղս կառաջարկել իշխա-  
նագստեր son coeur et sa fortune (իւր սիրան ու բաղդը). բայց  
ամուսնանալ բառը ինձ համար ունի մի տեսակ մոգական աղ-  
դեցութիւն. ինչքան էլ սաստիկ ևս չսիրեմ մի կին, բայց հէնց  
որ նէ ինձ զգացնել ապ, որ ևս պէտք է նէրա հետ ամուս-  
նանամ—մնան բարով սէր. իմ սիրան քար է դառնում, և ոչ

մի բան նորից չետաքացնէ: Ես ամեն բան զոհելու պատրաստ եմ, բայց դուանից քսան անդամիմ կեանքս, մինչեւ տնդամ պատիւս վտանգի կենթարկեմ, բայց իմ ազատութիւնս չեմ ծախի: Ենչու համար ես նորան այդպէս թանկ եմ գնահատում, ի՞նչ պէտք է անեմ այդ ազատութիւնը, ես ինձ ինչու համար եմ պատրաստում, ի՞նչ եմ սպասում ապագայից... Խոկապէս ոչինչ: Եյս մի տեսակ բնածին երկիւղէ, անքացատրելի նախազգացումն... Զէ՞ որ կան մարդիկ, որոնք վախենումն սարդից, օթիվից, միից... Խոստովանուեմ: Երբ ես երեխայէի, մի պառաւ իմ մասին գուշակելէր մօրս և ասել, որ ես չար կնոջից մահ եմ ընդունելու. այդ իմ վերայ սաստիկ ազգեց. իմ հողուո մէջ ծնուեց անյաղթելի զզուանք գէպի ամուսնութիւնը... Սակայն մի բան ինձ ասումէ, որ նէրա նախազուշուութիւնը կատարուելու է. գոնէ կաշխատեմ, որ այդ, որքան կարելի է, ուշ կատարուի:

26 Յունիսի.

Երեկ եկաւ այստեղ ձեռնածու Ապֆելքառումը: Պանդոկի դրան վերայ երեւաց մի երկար յայտարարութիւն, որը յայտնումէր յարգելի հասարակութեան, թէ վերոյիշեալ զարմանալի ձեռնածուն, մարմնամարդը քիմիկոսը և ակնահման այսօր երեկոյեան ութը ժամին ակումբի դահլիճում, այսինքն պանդոկում պատիւ կունենայ հիանալի ներկայացում տալու: Տօմսակն արժէ երկու ր. յիսուն կոտ: Բոլորը պատրաստվում են զարմանալի ձեռնածուին տեսնելու. մինչեւ անդամ Լեզօվիսկայի իշխանութիւն, չնայելով որ նէրա աղջիկը հիւանդ է, իւր համար տումնակ առաւ:

Եյսօր Ճաշեց յետոյ ես անցնումէի Ակրայի պատուհանի մօտովնէ պատշամբի վերայ նստածէր մենակիմ ոտնելի մօտ ընկաւ մի նամակ, «Եյսօր, երեկոյեան տասը ժամին, մէծ սանդուխով արի իմ մօտ. մարդս զնաց Պետախզօրսկ և կվերազառնայ էզուց առաւօտ: Իմ ծառաներս և նաժիշտներս չեն լինի տանը. ես նորանց բոլորին տումնակ եմ տուել նոյնպէս և իշխանութու ծառաներին:— Ապասումիմ քեզ եկ անպատճառա:

— Եհէ, մտածեցի ես, իմ ցանկութիւնս կատարուեց: Ութը ժամին զնացի ես ձեռնածուին նայելու: Հասարա-

կութիւնը հաւաքուեց իններորդ ժամի վերջին. ներկայացումն սկսուեց: Յետևի աթոռների վերայ ևս նկատեցի Աշրայի և իշխանուհու սպասուորներին և նաժիշտներին: “Նորանք բոլորն էլ սյնտեղ էին: Գրուշնիցին գրապանի ակնոցը ձեռին նստած էր առաջին կարգում: Ամեն անգամ ձեռնածուն դիմում էր նորան, երբոր պէտք էր լինում թաշկինակ, ժամացոյց, մատանի և այլն.

Գրուշնիցին բաւական ժամանակ է արգէն, որ ինձ չէ բարեւում: իսկ սյսօր մի երկու անգամ բաւականին յանդուզն նայեց իմ վերայ: Եյս բոլորը նա կյիշէ, երբ մենք մեր հաշեւը կականք մաքրել:

Ժամը տասին ևս գուրս եկայ:

Դուրսը սաստիկ մութն էր, այնպէս որ աչք-աչքի չէր տեսնում: Օանը և յրտարեր ամպերը տարածուել էին շրջակայ լեռների գագաթների վերայ. միայն երբեմն հանդարտող քամուց աղմկում էին սօսիների կատարները, որոնք շրջապատել էին պանդոկը, որի լուսամուտների մօտ հաւաքուել էր ժողովուրդը: Ես սորից վար իջայ և ծոռւելով դէպի գուռը՝ քայլերս արագացրի: Յանկարծ, ինձ այնպէս թուեց, թէ մեկը գալիս է իմ ետևից: Ես կանգ առայ և չըրս կողմն նայեցի: Մթութեան մէջ ոչինչ չէր կարելի որոշել սակայն, ես զգուշութեան համար պտտուեցայ տան չըրս կողմը, իբրև թէ զըօսնելով: Իշխանագստեր լուսամուտների մօտից անցնելով՝ ես նորից իմ ետևից լսեցի ոտի ձայն. զինուորական վերարկուով փաթաթուած մի մարդ իմ մօտից վազելով անցաւ: Եյդ ինձ շփոթեցրեց. սակայն ես մօտեցայ դրան, և շատպով բարձրացայ մութ սանդուխը: Աշրի գուռը բացուեց և փոքրիկ ձեռը խլեց իմ ձեռս...

— Ոչ ոք քեզ չտեսամ, ասաց շշուկով Աշրան, ինձ փաթաթուելով:

— Ոչ ոք:

— Եյժմ գու. հաւատո՞ւմ ես, որ ես քեզ սիրում եմ: Օ, ես երկար տատանվում էի, երկար չարչարվում... Բայց գու ինձ հետ վարվում ես այնպէս, ինչպէս ուզում ես:

Աշրա սիրաը սաստիկ զարմում էր, ձեռները սառն էին ինչպէս սառոյց: Ակսեցին նախանձի յանդիմանութիւններ և

գանդատներ, նէ ինձանից պահանջումէր, որ ես նէրան ամեն բան խոստովանէի, ասելով, որ նէ հեզութեամբ կտանի իմ դաւաճանութիւնս դէպի ինքը, որովհետև ցանկանումէ միմիայն իմ բազդաւորութիւնս: Ես դորան այնքան էլ չհաւատացի. բայց նէրան հանգարտեցրի երդումներով խոստում ներով և այլն:

— Ուրեմն դու չես ամուսնանայ Մերիի հետ, չե՞ս սիրում նէրան... Եսկ նէ կարծումէ... դիտես, նէ խելագարի պէս սիրահարուել է քո հետ, խեղճ աղջիկ. . . . .

Գիշերուայ մօտ երկու ժամին ես բաց արի լուսամուտը, և երկու շալ երկոր կապելով վերևի պատշգամբից իջայ վարի պատշգամբը՝ սիւնը բռնելով: Իշխանագուտեր կրակը դեռ վառ էր: Մին ինչ որ բան ինձ գրտեց դէպի լուսամուտը նայելու: Վարագոյրը լիովին քաշած չէր և ես կարողացայ հետաքրք քրութեամբ նայել սենեակի ներսը: Մերին, ձեռները ծնկների վերայ ծալած, նստած էր իւր անկողնի վերայ. նէ խիտ մազերը կապել էր գիշերուայ ծամկալով որ չորս կողմից զարդարուած էր ժապաւէններով: Մեծ, կարմրագոյն թաշկինսկի ծածկել էր նէրա սպիտակ ուսերը, և փոքրիկ ոտիկը ծածկուած էր պարսկական գոյնզգոյն մուշտակի մէջ: Նէ անշարժ նստած էր զլուխը քաշ արած: Նէրա առջև, փոքր սեղանի վերայ տրուած էր մի բացուած զիրք, բայց նէրա աչքերը, որոնք անշարժ էին և լի անբացարեկի տիսրութեամբ, երեւում էր, որ հարիւր անդամ նայել էին միեւնոյն տողին, մինչդեռ միտքը բոլորովին ուրիշ տեղ էր...

Եյդ ժամանակ մէկը շարժուեց թփի ետեր: Ես պատրշ գամբից թռայ կանաչի վերայ: Մի անյայտ ձեռ բռնեց իմ ուսից:

Ծէր, ասաց մի կոշտ ձայն—բռնուեցար... գիշերով կդան իշխանուհի օրիորդի մօտ—:

— Ամուր բռնիր, բղաւեց միւսը, անկիւնից գուրս թըռչելով:

Դոլանք Գրուշնիցին և Հեծելազօրի կապիտանն էին: Ես վերջինի զիսին զարկեցի բռունցքով, գետին ձգեցի և նե-

տեցի թփերի մէջ: Պարտէզի բոլոր նրբացքները, որոնք ծածկել էին մեր տան դիմացի զառիվայրը, ինձ յայտնի էին:

— Գող կայ... պահապան... բղաւում էին նորանք. լսուեց հրացանի ձայն. ծխուող թուղթը ընկաւ համարեա իմ ուներիս մօտ: Մի բոպէից յետոյ ես արդէն իմ սենեակումն էի, հանուեցի և պառիեցայ: Ապասաւորա հէնց նոր էր գուռը փակել որ սկսան բղաւիլ կապիտանը և Գրուշնիցին:

— Պեչորին, քնած էք, այստեղ էք... Բղաւեց կապիտանը.

— Քնած եմ, բարկացած պատասխանեցի ես:

— Վեր կացէք գող... չէրքէղ... կայ...

— Ես հարգուիս ունեմ, պատասխանեցի ես, մրսելուց վախենում եմ:

“Նորանք զնացին: Ի զուր ես նորանց պատասխանեցի սենեակիցս. ապա թէ ոչ նորանք մի ժամ էլ ինձ կփնտուէին պարափում: Այս ժամանակ արդէն ահապին դղրդղիւն էր բարձրացել: Ամրոցից եկաւ կօպակ: Բոլորը աելից շարժուեցան. սկսեցին ամեն թփի տակ չէրքէղ որոնել—և ի հարկէ՛, ոչ ոքի չգտան: Բայց շատերը, հաւանական է, հաստատ համոզուցան, որ եթէ բերդապահ զօրքը ցցց տար աւելի մեծ քաջութիւն և փութաջանութիւն՝ երկու տասնեակ դողեր կընկնէին նոյն տեղում:

27 յունիսի.

Եյօր առաւօտեան ջրակի մօտ միսյն այն էին խօսում, թէ գիշերը չէրքէղները վրայ են տուել: Որոշուած քանակութեամբ՝ “Նարզանի ջուր խմելուց յետոյ, տամն անգամ անցնելիս սօսիների երկար ճեմելիքով, ես պատահեցի Վերայի մարդուն, որը նոր եկել էր Պիտարդորսկից: “Նա ինձ թեւը առւեց և մենք զնացինք պանդոկը նախաճաշելու. նա սասաիկ անհանգիսա էր կնոջ համար. «Խնչլէս նէ վախեցած կլնի այս գիշեր». ասում էր նա և կարծես այդ պէտք է պատահէր իմ բացակայութեանս ժամանակ: Մենք նստանք նախաճաշելու դրան մօտ, որը տանումէ դէպի անկիւնի սենեակը, որտեղ կային մօտ տասը երիտասարդ, որոց թփում էր և Գրուշնիցին:

Իազդս երկրորդ անդամ բերեց լսելու մի խօսակցութիւն, որը պէտք է վճռէր նորա բազզը: “Նա ինձ չէր տեսնում, և

Հետեւապէս և չէի կարող կասկածել թէ նա դիտմամբ է խօսում բայց այս միայն նրա յանձնանքը մեծացրեց իմ աչքում:  
— Եւ մի՞թէ գրանք, խակապէս, չէրքէզներ էին, ասաց մէկը: Կորանց տեսնող եղի՞լէ:

— Ես ձեզ կպատմեմ բոլոր ճշմարտութիւնը, պատասխանեց Գրուշնիցկին, միայն խնդրում եմ, շասէք թէ ումից էք իմացել: Եհա թէ ինչպէս եղաւ: Երէկ մի մարդ, որի անունը չեմ տայ, գալիս է իմ մօտ և պատմում, թէ ինքը տեսաւ, որ երեկոյեան տասը ժամին մէկը գաղտուկ մտաւ Լեզովսկայեաների տունը: Պէտք է յիշել որ իշխանուհին այստեղ էր, իսկ օրիորդ իշխանուհին տանը: Մէնք երկուքս դնացինք լուսամուտների տակ, գարան դնելով բաղդաւորին:

Խոստովանվում եմ, ևս վախեցայ, թէև իմ ընկերս խիստ զբաղուած էր իւր նախաձաշով: Նա կարող էր իւր համար անդիւր բաներ լսել ևթէ յանկարծ Գրուշնիցկին հասկանար ճշմարիտ եղելութիւնը. բայց նախանձից կուրացած նա չէր էլ մասձում իսկական եղելութեան մասին:

— Եհա, տեսնում եք, շարունակեց Գրուշնիցկին, մէնք զնացինք, առնելով հրացան առանց գնդակի, միայն որ վախեցնենք: Մինչ ժամի երկուսը ապասեցնեք պարաւիղում: Վ երջապէս Եստուած գիտէ, թէ որտեղից նա յայտնուեց, միայն ոչ լուսամուտից, որովհետեւ նա չէր բացվում, այլ գուցէ նա դուրս եկաւ ապակէ գոնից, որը սիւնի ետեն է—վերջապէս ասում եմ, մենք տեսնում ենք, մէկը իջնում է պատշգամից... Եյ քեզ իշխանագուստը: Եշ, այդ Մոսկուայի օրիորդները: Սորանից յետոյ էլ ի՞նչ բանի կարելի է հաւատալ: Մէնք ուղում էինք նորան բռնել միայն նա ազատուեց և նապաստակի նման ընկաւ թուփերը. այդ ժամանակ ևս նորա վերայ հրացան արձակեցի:

Ծուրջըլսուեց Գրուշնիցկու կասկածանքի շշուկ:

— Դուք չէք հաւատում, շարունակեց նա, ձեզ աղնիւ և պատուաւոր խօսք եմ տալիս, որ այս բոլորը կատարուած ճշմարտութիւն է. և ձեզ ապացուցացելու համար այն պարոնին անունը կտամ:

— Եսա, ասա՛, ով է նա, լսուեց ամեն կողմից:

— Պէջօրինը, պատասխանեց նա:

Այդ ժամանակ նա աչքերը վեր բարձրացրեց, ևս զբան մէջ կանգնած էի նորա զիմաց. նա սաստիկ կարմրեց: Խո մօտեցայ նորան արագ և ցած ձայնով ասացի.

— Շատ ցաւում եմ, որ ես ներս մասյ այն ժամանակ, երբ դուք աղնիւ խօսք էիք տուել ամենազգուելի զրապարտութիւնը հաստատիլու: Խմներկայութիւնս ձեզ փրկեց մի նոր կեղտութիւն անելուց:

Գրունիցին վեր կացաւ իւր տեղից և ուզում էր տաքանալ:

— Խնդրում եմ, շարունակեցի ես միւնցն ձեռվ, խընդրում եմ հինգ այժմ յետ առնել ձեր խօսքերը, որը շատ լաւ գիտէք, թէ Հնարովի է: Խս չեմ կարծում, որ ինո՞ջ անապրեկութիւնը դէպի ձեր փայլըն արժանաւորութիւնները՝ կարող էր ձեզանից այդպիսի սարսափելի վրէժինդրութիւն գրանել: Մի լաւ մտածեցէք, եթէ ձեր կարծիքը պաշտպանելու լինէք, դուք կկորցնէք պատուաւոր մարդու անուն կրելու իրաւունքը և վասնդի կենթարկէք ձեր կեանքը:

Գրունիցին կանգնած էր իմ առջև աչքերը խոնարհեցրած և սաստիկ յուզուած էր: Բայց խղճի և ինքնասիրութեան կոփւր երկար չտեեց: Հեծելազօրի կապիտանը, որը նստած էր նորա մօտ մշակեց նորան արմուկով: նա ցնցուեց և աչքերը չքարձրացնելով շտավով ինձ պատասխանեց:

— Մեծապատիւ պարոն, երբ ես մի բան ասում եմ, այդ ես մտածում եմ և պատրաստ եմ կրինելու... Խս չեմ վախենում ձեր սպառնալիքներից և ամեն բանի պատրաստ եմ:

— Վերջինը արդէն դուք ապացուցիք, պատասխանեցի ես սառն, և հեծելազօրի կապիտանի թեւն առած դուրս ելայ:

— Ի՞նչ էք կամենում, հարցրեց կապիտանը:

— Դուք, Գրունիցիու բարեկամն էք, և հաւանակորէն, կլինէք նորա կողմի վկան:

Կապիտանը լուրջ կերպով գլուխ տուեց:

— Դուք գուշակեցիք պատասխանեց նա, ես մինչև անգամ պարտական եմ նորա կողմի վկան լինելու, որովհետեւ այն վերաւորանքը որ հասցըիք նորան՝ վերարելումէ և ինձ երէկ գիշեր նորա յետինը ես էի, աւելացրեց նա ուղղելով իւր կոր թիկունքը:

— Հայ, ուրեմն ձե՞զ էր, որ ևս ամուր պլիսին խփեցի:

— Նա գեղնեց, կապուտիկեցաւ, սրտի նելքին չարութիւնը զբաշմուեց նորա երեսին:

— Ես պատիւ կունենամ այսօր իմ կողմի վկային ձեղ մօս ուղարկելու, աւելացրի ես, շատ քաղաքավարի կերպով դղուի տալով և ցոյց տալով իրը թէ նորա բարկութեան վերաց ուշադրութիւն չեմ գարձնում:

Պանդոկի կառւրի վերայ ես պատահեցի Աներայի մարդին. կարծեմ, նա ինձ սպասում էր:

— Նա բոնեց իմ ձեռըլի զդացմունքով, որ նման էր հիացման:

— Պատուաւոր երիտասարդ, ասայ նա արտասուալից աչքերով: Ես բոլորը լսեցի: Խչպիսի ապերախտ կեղտոտ արարած է... ընդունիր այսուհետեւ նորանց պատուաւոր ընտանիքի մէջ: Փառք Սատուծու, որ ես աղջիկ չունեմ: Բայց ձեղ կվարձատրէ նէ, որին համար գնումէք ձեր կեանքը: Վասահ եղէք իմ ամօթխածութեան վերայ, առ ժամանակի: Ես ինքս գեռահաս էի և գտնվումէի զինուորական ծառայութեան մէջ, զիտեմ որ այդպիսի գործերի մէջ խառնուիլ պէտք չէ: Մնաք բարով:

— Ուշուառ, ուրախանումէ, որ ինքը աղջիկ չունի...

Ես ուղեղ զնացի Աներների մօտ, զայ նորան տանը և պատմեցի ամեն ինչ—իմ յարաբերութիւնս դէպի Աներան և իշխանագուստը, և խօսակցութիւնը, որ ես զաղտնի լսել էի, և որից ես հասկացայ այդ պարտնների արամազդութիւնը—որ ուղումն ինձ ծաղրել ստիպելով առանց զնդակի հրացան արձակիլ: Բայց այժմ արդէն բանը բանից անցաւ. նորանք շատ կարելի է, որ չին սպասում գործի այդպիսի վերջաւորութեան:

Բժիշկը համաձայնեց լինել իմ կողմի վկան, ևս նորան մենամարտութեան մասին մի քանի հրահանգներ տուի. նա պէտք է պնտէր որ գործը վերջանար որքան կարելի է ծածուի, որովհետեւ, թէև ես երբ էլ լիներ պատրաստ էի մեռնել, բայց ամենեին մոտադիր չեմ իմ ապագան այս աշխարհում յաւիտեան ոչնչացնելու:

Սորանից յետոյ ես գնացի տուն: Մի ժամից յետոյ բժիշկը վերադարձաւ նորանց մօտից:

— Զեր գէմի կարծես, դաւազբութիւնն կայ, ասացնա: — Ես  
Վրուշնիցկու մօտ տեսայ Հեծելազօրի կապիտանին և մի պարոնի,  
որի ազգանունը չեմ յիշում: Ես մի բոպէ մնացի նախասե-  
նեակում, որ հանեմ կրիստոնէնիքա: Նորանք սաստիկ աղմ-  
կով վիճումէին... «Անհնար է չեմ համաձայնի», ասումէր Վրուշ-  
նիցկին: «Աս ինձ անպատուեց հրազդարակաւ. այն ժամանակ  
գործը ուրիշ տեսակ էր»... — Վո ի՞նչ գործն է», պատասխանեց  
կապիտանը, ամեն բան ևս իմ վերաց կառնեմ: Ես վկայ եմ  
եղել հինգ մենամարտութեան, և զիտեմ, թէ ինչպէս պէտք է  
այս բանը զլուխ բերել: Ես ամեն բան կարդատրել եմ, խընդ-  
րում եմ ինձ մի խանգարիք: Վախեցնելը վատ չէ: Եւ ին-  
չու քեզ ենթարկես վտանգի, երբ կարող ես աղատուելը...  
Եյդ ժամանակ ես ներս մտայ. Նորանք խկոյն լուցին: Վեր  
պայմանագրութիւնը բաւական երկար տևեց. վերջապէս մենք  
գործը վերջացրինք այսպէս. հինգ վերաս հեռու այստեղց  
կայ մի ամսայի կիրճ: Նորանք այնանց կզան էզուց առաւօ-  
տեան չորս ժամին, և մենք կզանք կէս ժամ նորանցից յե-  
տոյ — ատրճանակ պէտք է արձակել վեց քայլ հեռաւորութիւ-  
նից — այս պահանջումէր Վրուշնիցկին: Մեռածը չէրքէզների  
վերաց կձգնեք: Եյժմ ահա ես ինչ եմ կասկածում: Նորանք,  
այսինքն վկաները, հաւանական է, փոխել են իրենց նախկին  
ծրագիրը, և ուզում են գնդակ գնել միայն Վրուշնիցկու  
ատրճանակի մէջ: Սա մի քիչ նման է սպանութեան, բայց  
պատերազմի ժամանակի, մանաւանդ ասիական պատերազմի՝  
խորամանկութիւններ թոյլատրումն: բայց Վրուշնիցկին ա-  
ւելի աղնիւ է երեւում քան իւր ընկերը: Դուք ի՞նչ եք կար-  
ծում: մենք նորանց պէտք է ցոյց տանք, թէ մենք գործի  
էութիւնը հասկացել ենք:

— Նմենեին. բժիշկ, հանգիստ կացէք, ես նորանց խաղա-  
լիք չեմ դառնայ:

— Դուք ի՞նչ եք ուզում անել:  
— Եյդ իմ գաղտնիքս է:  
— Նայեցէք, որ չխաբուիք... վեց քայլ հեռաւորութիւն է:  
— Իմիշկ, ես ձեզ սպասում եմ էզուց չորս ժամին. ձիերը  
պատրաստ կլինին... Մնաք բարով:  
Ես մինչև երեկոյ սենեակում վակուած նստած էի տանը:

Եկաւ սպասաւորս և ասաց, որ իշխանուհին ինձ կանչըումէ—ես հրամայեցի յայտնել որ հիւանդ եմ.....

Դիշերուայ ժամի երկուքն է... քուն չէ ասնում... Բայց պէտք է քնիլ որ էգուց ձեռու չղողայ: Սակայն, վեց քայլ հեռաւորութիւնից սխալուելը դժուար է: Ե՞շ, պարոն Պրուշնիցին, ձեր սատանութիւնը զլուխ չի գայ... մենք գերերս կիսուինք. այժմ ես պէտք է ձեր տժգոյն երեսի վիրայ որոնեմ ներփին երկիւղի նշաններ. ինչո՞ւ ինքներդ նշանակեցիք այդ օրհասական վեց քայլը: Պուք կարծում էք, թէ ես առանց գիմագրութեան դէմ կրանեմ իմ ճակատս... մենք վիճակ կձբգինք... և այն ժամանակ... այն ժամանակ... իսկ եթէ նորաբաղդի նժամը վերակշռէ, եթէ իմ աստղը ինձ դաւաճանէ... Եւ զարմանք չի լինի. այդ աստղը երկար ժամանակ հաւատարմօրէն ծառայեց ինձ:

Վնչ, եթէ պէտք է մեռնել, կմեռնեմ: աշխարհի համար մի մեծ կորուստ չէ. ես էլ արդէն ձանձրացնել եմ ապրելուց: Ես նման եմ ինջոյքում յօրանջող մարգու, որը չէ զնում քնիլու միայն այն պատճառով, որ իւր կառքը չիայ: Բայց հէնց որ կառքը պատճառով է էլ միաք բարով...

Մտարերում իմ իմ բոլոր անցեալս և ակամայ ինձ հարցնում իմ ի՞նչ նպատակի համար ծնուեցայ... դուցէ այդ նպատակը գոյութիւն ունէր, և գուցէ ինձ համար եղելէ բարձր նշանակութիւն, որովհետեւ ես իմ մէջ զգում եմ անսահման զօրութիւն... բայց ես չհասկացայ այդ նշանակութիւնը ևս գրաւուեցայ դատարկ և անբարոյական առփանքների հրապուրանքներով. նորանց բովից ես դուրս եկայ ինչպէս երկաթ ամուր և սառն բայց յաւիտեան կորցրի աղնիւ ձգառումներիս ոգեւորութիւնը—կեանքի ամենալաւ ծաղիկը: Եւ այն ժամանակից ի վեր քանի անդամ ես բաղդի ձեռքում ծառայել եմ իրեւ կացին: Իբրև սպանութեան զործիք, քանի անդամ իջել եմ օրհասական նոհատակների զլիսին, յաճախ առանց զայրցիթի, միշտ առանց ցաւակցութեան... իմ սէրս, ոչ ոքին չբաղդաւորեցից, որովհետեւ ես նորանց համար, որոց սիրել եմ, ոչինչ չեմ զոհել ես սիրել եմ միայն ինձ համար, իմ բաւականութեանս համար. ես միայն բաւականութիւն էի տալիս սրտիս օտարութի ցանկութեան, աղահութեամբ կը անելով նո-

բանց զգացմունքը, նորանց դորովը, ուրախութիւնը, տան-  
ջանքը, և երբէք չէի յագենում: Այդպէս երբ մարդքաղցից ծըն-  
շուած և թուլացած նիրհումէ և տեսնումէ իւր առջե  
պատուական կերակուրներ և ըմպելիքներ, նա հիացմամբ ու-  
տումէ իւր երեւակայութեան օդային պարզեները, և նա  
մուանումէ վիշտը բայց հէնց որ զարթնումէ — երեւակայու-  
թիւնը ցնդումէ... մնումէ կրկնապատկուած քաղցը և  
յուսահատութիւնը:

Եւ գուցէ ես վաղը մեռնեմ... և աշխարհիս երեսին չի մնայ  
ոչ մի արարած, որ ինձ կատարելապէս հասկացած լինէր: Մէկը  
ինձ համար աւելի լաւ կասէ, միւսը աւելի վատ, քան որ իսկա-  
պէս եմ... Մէկը կասէ, նա լաւ երիտասարդ էր, միւսը — կեղտուտ:  
Մէկն էլ միւսն էլ սուտ խօսած կլինին: Սորանից յետոյ արժէ՝  
ապրել բայց և այնպէս մարդ ապրումէ հետաքրքրութիւ-  
նից: սպասելով, ինչոր նոր բանի... ծիծաղելի է և տիրալի:

---

Եշա, արդէն ամիս ու կէս է, որ ես Ռ. ամրոցում եմ:  
Մակսիմ Մակսիմիջը գնաց որսի... ես մենակ եմ: նստած եմ  
լուսամուտի մօտ, մոխրագոյն ամպելը ծածկել են լիռները  
մինչեւ նորանց ստորոտները: արել մառախուղի միջեց երեսում  
է գեղին բծի նման: Յուրածէ, քամին փչումէ և տատանում  
լուսամուտի փեղիերը... Տխուր է... Օրագիրս կշարունակեմ,  
որը դատարեցրել իմ այնքան տարօրինակ արկածների պատ-  
ճառով: Կարգում եմ վերջին երեսը, ծիծաղելի է: — Ես կար-  
ծում էի թէ կմեռնեմ բայց կարելի չեղաւ, ես գեռ չեմ քա-  
մել բաժակի վերջին մրուրը: և այժմ զգում եմ, որ ես գեռ  
ես երկար պէաք է ապրեմ:

Անցեան ինչպէս լու է մնացել իմ յիշողութեան մէջ: Ժա-  
մանակը մի զիծ, մի նշանախից չէ ջնջել:

Ես յիշում եմ որ մենամարտութեան նախընթաց զիշերը  
մի վայրկեան չեմ քնիլ: Երկար գրել չկարողացաց: «Ներքին ան-  
հանգստութիւնը ինձ ախրել էր, մօտ մի ժամ ես ման եկաց  
սենեակում, յետոյ նստեցի և բաց արի Վալ'տեր Սկօտի «Ըստ-  
լանդիսի պուրիտոններ» վիպասանութիւնը, որը տրուած էր  
իմ սեղանի վերսց: ես առաջ կարդում էի զօրով բայց յետոյ

ինքս ինձ մոռացայ զրաւուելով զրգի հիանալի բովանդակութեամբ: Աւրջապէս ծէղեց: Խմ ջղերս հանգստացան: Խս նայեցի հայելու մէջ, նուազ տժդրյնութիւնը ծածկել էր երևս, որի վերայ նկատվում էին անքնութեան հետքեր. բայց աշքերս, թէև ծածկուած էին շափնակագյն գոյնով՝ փայլում էին հպարտ և անողոքելի: Խս ինձանով զոհ մնացի:

Հրամայելով որ ձիերը թամբեն, հաղնուցայ և վազեցի լողարանը: Նարզանի եռացող ստոր ջրի մէջ խորասուղուելով, ես զգում էի, թէ ինչպէս իմ ֆիղեկական և հոգեկան ոյժերս վերականգնում էին: Խս լողարանից դուրս եկաց թարմ և կայտառ, կարծես թէ պատրաստվում էի պարահանդէս գնալու: Սորանից յետոյ ասացէք, թէ հոգին մարմնից կախում չունի...

Աւերագառնալով սէնեակում գուաց բժշկին: Խս հագել էր մոխրագյն ձխուորի վարտիք, արխալուզ և ծածկել էր չէրքէզի զլիարի: Խս տեսնելով այդ փոքր պատկերը ահազին բրդոտ զլիարկ դրած, ծիծաղեցի. նորա երեսը ամենելին զինուորական չէ, իսկ այս անգամ սովորականից աւելի երկար էր երևում:

— Ինչու այդպէս տխուր էք, բժիշկ, ասացի նորան.— Վիթէ դուք հարիւր անգամ անտարբեր սրտով մարդ ուղարկած չէք այն աշխարհը: Երևակայեցէք, որ ես մաղձատենդ ունեմ կարող եմ բժշկուել կարող եմ և մեռնել, երկուսն էլ աշխարհի բան է. աշխատեցէք նայել իմ վերայ ինչպէս հիւանդի վերայ, որը բունուած է թերեւ ձեղ անցայտ հիւանդութեամբ—և այն ժամանակ վերջին աստիճանի կշարժուի ձեր հետաքրութիւնը. դուք այժմ կարող էք իմ վերայ անել մի քանի կարեւոր բնախօսական դիտողութիւններ: Տանի մահուան սպասելը արգեօք հիւանդութիւն չէ:

Եյս միտքը զրաւեց բժշկին և նա ուրախացաւ:

Մենք նստանք ձիերս: Աւելները երկու ձեռով ամուր բռնեց սանձի երասանակներից և մենք ձիերս քշեցինք—մի լոպէի մէջ անցանք ամլոցի մօտով բարձր թաղը և մոտնք կիրճը, որի միջով մանուաձև անցնում էր ձանապարհը, որ ծածկուած էր տեղատեղ խոտերով. այս ձանապարհը յաձախ կտրատում էր մի աղմկալի առուտի, որը պէտք էր անցնել ձիով

ի ասրսափի բժշկի, որովհետեւ ջրի մէջ նորա ձին իւրաքանչիւր ըսպէ կանդ էր առնում:

Ես այդպիսի թարմ և զուարթ առաւօտ չեմ յիշում, արեք հաղիւ ծագել էր լեռների կատարների ետեից, և նորա ճառադայթների առաջն ջերմութեան խառնուելը զիշերուայ անհետացրդ զովին հետ բերում էր մարդու գերայ մի տեսակ քաղցր գգուանք: «Նորածին օրուայ ուրախ Ճաճանչը դեւ չէր թափանցել կիրճը. երկու կողմից մեր զիսին կախուած նա ոսկեզօծում էր ժայռերի կատարները, սաղարթախիտ թուփերը, որոնք բուսած էին նորանց խորխորատների մէջ, քամու փոքր գատանումից մեղ վերայ շաղ էին տալիս անձրեի կաթիներ: Ես յիշում եմ, որ այս անդամ աւելի քտն մի ուրիշ անգամ սիրեցի բնութիւնը: Խչալիսի հետաքրիզութեամբ նայում էի ևս ամեն մի ցօղեկի վերայ, որը խաղում էր խաղողի լայն տերեւի վերայ և անդրագարձնում էր ծիածանի միլիոնաւոր շողեր: Խչալիսի ագահութեամբ ևս ուղում էի թափանցել մատախլապատ դաշտավայրը: Եյնտեղ Ճաճապարհը քանի զնում նեղանում էր, ժայռերը աւելի կապոյտ և սարսափելի էին երեւում, և վերջապէս նորանք, կարծես, միանում էին և անթափանցելի պարիսազ կաղմում: Մենք զնում էինք ըսութեամբ:

— Դուք զլեցի՞ք ձեր կտակը, յանկարծ հարցրեց Ակինելը:  
— Ոչ  
— Եսկ եթէ սպանուեք...  
— Ժառանգներն իրենք լցու կընկնեն:

— Մի՞թէ գուք բարեկամներ չունիք, որոց կամենաք ուղարկել ձեր վերջին հրաժեշտը:

— Ես զլուխս շարժեցի բացասաբար:  
— Միթէ աշխարհիս երեսին չկայ մի կին, որին կամենացիք թողնել որեւէ յիշատակ...

— Ուզում էք բժիշկ, ասացի նորան, որ ձեր առջեւ բանամիմ սիրառս, Տեսնում էք, ևս անցրել եմ այն տարիները, երբ մարզիկ վեռնելիս, արտաստնում են իրանց սիրուհու անունը, և կտակում են բարեկամներին օծուած կամ չօծուած մազերի մի փունչ: Մտածելով մօտավոր և հստրաւոր մահուսն մասին, ևս մտածում եմ միայն իմ մասին, ուրիշները

այդ ևս չեն անում: — Եյնպիսի բարեկամները, որոնք հինգ  
էդուց ինձ պիտի մոռանան, կամ աւելի վաս պիտի հնա-  
րին իմ մասին, ով զիաէ՞, ինչպիսի բամբասանքներ, այնպիսի  
կանայք որոնք ուրիշն զգուելով ինձ պէտք է ծաղրին, որ-  
պէս զի չշարժեն նորա նախանձը դէպի մի հանգուցեալ—զորանք  
թէկուզ չլինեն: Աեանքի փոթորիկից ես դուրս բերի միայն  
մի քանի գաղտիարներ—բայց ոչ մի զգացմունք: Ես վազուց  
է որ ապրում եմ զլանվս, բայց ոչ սրտովս:

Ես կշռագատում եւ քննում եմ իմ սեփական ցանկութիւն-  
ներս և գործերս սաստիկ հերաքրութեամբ, բայց անտար-  
բեր կերպով: Եմ մէջ երկու մարդ կայ. մէկը ապրումէ բառիս  
բուն նշանակութեամբ, միւսը խորհրդածումէ և գատում  
է նորան. առաջինը մի ժամ յետոյ դուցէ իւր վերջին հրա-  
ժեշտը տայ ձեզ և բոլը աշխարհին, իսկ երկորդը... երկրորդը...  
նայեցէք, բժիշկ տեսնում էք դէպի աջ ժայռի վերս երեւում  
է երկը անձ. դորանք, կարծեմ մեր հակառակուդներն են...

Մենք շտապեցինք:

Ժայռի ստորոտում թփերի մէջ՝ կապուած էին երեք ձի.  
մենք մեր ձիերն էլ այլտեղ կապեցինք. իսկ ինքներս նեղ  
նրբանցքով բարձրացանք տափարակը, որտեղ սպասում էր  
մեղ Գրուշնիցին կապիտանի և միւս վկայի հետ, որի տ-  
նունը Իվան Իգնատովիչէր, իսկ ազգանունը երբէք լսած չեմ:

Մենք վազուց է ինչ սպասում ենք ձեղլ ասաց հեծելա-  
զօրի կապիտանը ծաղրական ժպիտով:

Ես հանեցի ժամացցյա և ցոյց տուի նորան:

‘Ես ներողութիւն ինպրեց, ասելով որ իւր ժամացըցն  
առաջ է:

Մի քանի բողէ տեեց դժուարին լսութիւնը. վերջա-  
պէս բժիշկը ընդհատեց լրութիւնը Գրուշնիցիուն դառնալով:

Ես կարծում եմ, ասաց նա, որ երկու կողմը ցոյց տարով  
մենամարտելու պատրաստութիւն, և բաւականութիւն տա-  
լու պատուի վերառուանքին համար՝ դուք կարող եք, պարոն-  
ներ, իսար բացատրութիւն տալ և ապա գործը սիրով վեր-  
ջացնել:

— Ես պատրաստ եմ, ասացի ես:

Կապիտանը աչքով արեց Գրուշնիցիուն. և սա կարծե-

լով, թէ վախենում եմ՝ ընդունեց հպարտ զիրք՝ թէև մինչև  
այդ ժամանակ նուազ տժունութիւնը ծածկել էր նորա ե-  
րեսը։ Մեր եկած ժամանակից մինչև հիմա նա առաջին ան-  
գամ աչքերը բարձրացրեց իմ վերայ, բայց նորա հայեացքի  
մէջ նկատվում էր ինչ որ անհանդստութիւն, որը պատերաց-  
նում էր ներքին կոփեր։

— Ի ացատրեցէք ձեր պայմանները, ասաց նա. և ինչ  
որ կարող եմ անել ձեզ համար՝ պատրաստ եմ, հաւատացած  
եղէք…

— Եշա իմ պայմաններս. դուք հինց այսօր հրապարա-  
կու յետ կառնէք ձեր զրպարտութիւնը և ինձանից ներողու-  
թիւնը կիսնդրէք…

— Մեծապատիւ. պարոն, ես զարմանում եմ, թէ դուք  
ի՞նչպէս էք համարձակվում ինձ առաջարկել այդպիսի պայ-  
մաններ…

— Դորանից զատ ի՞նչ կարող էի առաջարկել…

Աւրեմն մենամարտինք։

Ես ուսերս թօթուեցի։

— Համեցէք. միայն մտածեցէք, որ մեզանից մէկն ու մէկը  
անպատճառ պիտի սպանուի։

— Ես ուղրում եմ, որ այդ դուք լինէք…

— Իսկ ես համոզուած եմ, որ հակառակը պիտի լինի։

‘Ես շփոթուեց, կարմրեց, յիտոյ բոնի քըքջաց։

Կապիտանը բոնեց նորա թեր տակից և տարաւ մէկ կողմէ,  
նորանք երկար փափսացին։ Ես երբ եկայ, հոգիս բաւական  
խաղաղ էր, բայց այս բոլորը ինձ սկսեց կատաղեցնել։

Իժիշկը մօտեցաւ ինձ։

— Լամիր, ասաց նա յայտնի անհանդստութեամբ, դուք  
դուցէ մոռացել էք նորանց դաւադրութիւնը։ Ես չեմ կա-  
րող ասարձանակը լցնել բայց այս գէպքում։ Դուք տալորինակ  
մարդ էք։ Վասցէք նորանց, որ դուք զիտէք նորանց մտա-  
զրութիւնը։ — և նորանք չեն համարձակուի։ ի՞նչ լինք է,  
ձեզ սպանեն ինչպէս մի թռչուն։

— Ինդպում եմ, անհանդիստ մի լինիք, բժիշկ, և սպա-  
սեցէք…… Ես ամեն բան այնպէս կանեմ, որ նորանք ոչինչ չեն  
շահի։ Թող փափսան…

— Պարոններ, սա ձանձրալի է դառնում, բարձր ասացի նորանց, թէ մենամարտելու ենք՝ մենամարտինք. դուք երեկ ժամանակ ունեիք խօսակցելու:

— Մենք պատրաստ ենք, ասաց կապիտանը: Կանդնեցէք տեղերդ պարոններ: Իմիշկ, համեցէք չափեցէք վեց ոտ...

— Կանգնեցէք, սուր ձայնով կրկնեց Խվան Դգնատօվիչը:

— Կացէք, ասացի ևս, ելի մի պայման. որովհետեւ մենք մենամարտելու ենք մինչև ի մահ՝ ուստի մենք պէտք է այնպէս կարգողինք, որ այս բանը դադանի մնայ, որպէս զի մեր վկաները պատասխանառութեան չինթարկուեն: Համաձայն էք:

— Իոլորովին համոձայն ենք:

— Ուրեմն ահա թէ ես ինչ եմ կարծում: Տեսնում էք լեռան գագաթին վերայ կախուած ժայռի աջ կողմում նեղ տափարակը, այդտեղից մինչև վար կլինի երեսուն սաժէն, եթէ ոչ աւել, վարը սուր քարեր են: Մեղանից տմեն մէկը կիսնգնի տափարակի ծայրին. այդպիսով փոքր վէրքն անգամ մնչացու կլինի: Աս ձեր ցանկութեան համապատասխան պէտք է լինի, որովհետեւ վեց քսյլ դուք էք նշանակել: Վիրաւորուածը անպատճառ կլլորուի վար և ջարդ ու փշուր կլինի, բժիշկը զնոպակը կհանէ և այն ժամանակ հեշտ կլինի այդ վաղահաս մահը բացատրել անյաջող ոստիւնից առաջ եկած: Մենք վիճակ կձգենք, թէ ով առաջ ատրճանակն արձակէ: Ահրջապէս ևս յայտնում եմ, որ այլապէս չեմ կարող մենամարտել:

— Հրամեցէք, ասաց կապիտանը, աղոյու կերպով նայելով Գրուշիցիու վերայ, որը շարժեց զլուկսը ի նշան համաձայնութեան: Նորա երեսի գոյնը շուտ—շուտ փոխվում էք: Խս նորան նեղը ձգեցի: Ոսվորական պայմաններով մենամարտելիս՝ նա կարող էր նշան առնել ոտիս, թեթև կերպով ինձ վերաւորել և այսպիսով բաւականութիւն տալ իւր վրէժինզրութեան, չափազանց չ'ծանրաբեռնելովիւր իիղջը. բայց այժմ նա պէտք է կամ օդի մէջ արձակէր ատրճանակը, կամ մարդասպան դառնար, կամ վերջապէս իւր կեղասոտ զաղանիքը թողնելով ենթարկուէր ինձ հետ հաւասար վտանգի: Եյս ժամանակ ևս չեի կամենում նորա տեղը լինել: Աս մի կողմ տարաւ կապիտանին, սկսեց նորա հետ տաք-տաք ինչ որ բան խօսել.

ես տեսայ, թէ ինչպէս նորա կապուտկած շրթունքները դողում էին, բայց կապիտաննը երես դարձեց նորանից արհամարական ժամանակի: — Դու յիմար ես, ասաց նա Գրուշնից-կուն բաւական բարձր ձայնով, ոչինչ չես հասկանում, Գնանք, պարոններ...»

«Նեղ շաւիղը անյնում էր թփերի միջով դէպի զառիվայրը. ժայռերի փուրծելը կազմում էին բնութեան այդ սանդուխի շարժուն աստիճանները. թուփերից բռնելով՝ ճանկուտելով սըկ-սեցինք բարձրանալ: Գրուշնիցին գնում էր առջևից, նորա հտերից իւր վկաները, յետոյ ես և բժիշկը:»

— Ես զարմանում եմ ձեր վերայ, ասաց բժիշկը, իմ ձեռս ամուս սեղմելով: — Թոյլ տուեք ձեր երակը զննելու—էհէ, տենգային է... Բայց երեսիդ վերայ ոչինչ նկատելի չէ... միայն աչքերդ սովորականից աւելի պայծառ են փայլում:

Յանկարծ փոքր քարերը զլորուեցան մեր ստների տակ: Եյդ ի՞նչ է: — Գրուշնիցին գայթեց. այն սստիկը, որից բռնել էր կոտրուեց, ևնա մէջքին կզլորուեր ցած, ևթէ վկաները նորան չքանիչնեն:

— Օգոյշ կացէք, դոչեցի նորան, առաջուց մի ընկնիք այդ վատ նշան է: Յիշեցէք Յուլիոս Անապին:

Վհա մենք բարձրացանք գուրս ցցուած ժայռի զլուխը. տափարակը ծածկուած էր մանր աւաղով, կարծես զիտմամբ պատրաստած լինէր մենամարտութեան համար: Չորս կողմը, առաւատեան ստիեզոյն աղջամուղջի մէջ, պատել էին լեռների կատարները, ինչպէս մի անժիւ հօտ, և հարաւային կողմում բարձրանում էր սպիտակ շեղջով Ելբրուսը, շըջապատելով սառցապատ կատարների շղթան, որոց մէջ արգէն թափառում էին արևելքից եկող բազմերանդ ամպերը: Ես մօտեցայ տափարակի եղբն և նայեցի վարքից մնաց իմ խելքս պտտէր. այնտեղ վարը, այնպէս էր թփում, թէ մութն է և ցուրտ, ինչպէս գերեզմանում: Ժայռերի մամնապատ ատամները, որոնք այս ու այն կողմը ձգուած՝ փոթորկից ու ժամանակից կարծես սպասում էին իրանց որսին:

Տափարակը, որի վերայ մենք պէտք է մենամարտէինք, համարեա ներկայացնում էր ուղիղ եռանկիւնի: Դուրս ցցուած անկիւնից հաշուեցին վեց քայլ և որոշեցին—նա, ով պէտք

Է առաջին անդամ՝ կանգնի թշնամու զնդակի գիմաց՝ պիտի կանգնի անկիւնի ծայրին թիկունքը դէպի անդունդը. եթէ նա չսպանուի՝ այն ժամանակ հակառակորդները կփոխեն տեղերը:

Ես վճռեցի բոլոր առաւելութիւնները Գրուշնիցկուն տալ ես ուզում էի նորան փորձել, նորա հոգում կարող էր զարթել մեծահոգութեան կայծը.—և այն ժամանակ ամեն բան դէպի լաւը կփոխուէր, բայց ինքնասիրութիւնը և բնաւորութեան թուլութիւնը աւելի զօրաւոր գտնուեցան... Ես ուզում էի ինձ իրաւունք տալ նորան բնաւ չինայելու, եթէ բաղզը ինձ ողորմէր: Ո՞վ իւր խղճի հետ այսպիսի պայման չէ կապել:

— Պիճակ ձգեցէք, բժիշկ, ասաց կտպիտանը:

Բժիշկը գրապանից հանեց արծաթէ ստակը, և վերև ձգեց:

— Գեշը, շտապով բզաւեց Գրուշնիցկին, ինչպէս մէկը քնից զարթում է ընկերի զրգելուց:

— Երծիւը, ասացի ես:

Ստակը մաղեց և Ճնկալով ընկաւ, բոլորը թափեցան նորուս վերայ:

— Գուք բաղդաւոր էք, ասացի ես Գրուշնիցկուն դուք պէտք է առաջինը ատրճանակ արձակեք: Բայց զիտցէք, որ եթէ դուք ինձ չսպանէք՝ ես ատրճանակս սխալ չեմ արձակի—ձեզ աղնիւ խօսք եմ տալիս:

Նա կարմրեց, նա ամազում էր անդին մարդուն արանել ես նորա վերայ անթարթ նայում էի. մի բոսէ ինձ այնպէս թուեց, թէ նա կընկնի իմ ոտների առաջ և ներողութիւն կինդղէ... Բայց ինչպէս պիտի խոստովանէր նա իւր այն ցածութիւնը.. նորան մի միջոց էր մնում—ատրճանակը արձակել օդի մէջ: Եւ ես համոզուած էի թէ նա ատրճանակը օդը կարձակէ: Մի բան կտրող էր սորան խանգարել. այն միտքը, որ ես երկրորդ անգամ կհրաւիրեմ մենամարտութեան:

— Ժամանակ է, փափասց ինձ բժիշկը, թեկիցս ձգելով եթէ դուք այժմ չեք ասի, որ մենք զիտենք նորանց մտազբութիւնը, ասել է ամեն բան կորաւ: Նայեցէք, նա արդէն ատրճանակն լեցնում է... եթէ դուք ոչինչ չասէք, այն ժամանակ ես ինքս...

— Ճնկարելի է այդ, բժիշկ, ասացի ես, բռնելով նորա

ձեռից, գուշք ամեն բան կփչացնէք, գուշք ինձ խօսք տուիք չխանգարել... Չեր ինչ գործն է, գուցէ ևս ուզում եմ մեռնել:

“Նա իմ վերայ նայեց զարմանքով:

— Օ՛, այդ ուրիշ բան է... միայն իմ վերայ միւս աշխարհում չբանդատիք...

Իսկ կապիտանը այս ժամանակ լցրեց ատրճանակները, մէկը տուեց Գրուշնիցիուն, ինչ որ բան փսփսալով ժպտալով, իսկ միւսը ինձ:

Ես կանգնեցի տափարակի տնկիւնում, ձախ ոտով ամուրքարին յենուելով և մի քիչ առաջ թեքուելով, որպէս զի թեթև վերք ստանալիս յետ չընկնեմ:

Գրուշնիցին իմ դիմաց կանգնեց և երբ նշանը տրուեցաւ սկսեց ատրճանակը բարձրացնել: “Նորա ծնկները դողում էին: “Նա նշան արեց ուղղակի իմ ձակատիս:

Մի անբացարելի կատաղութիւն եռաց իմ կրծքում:

Յանկարծ նա ցած թողեց ատրճանակը և երեսի դոյնը նետած գարձաւ գէպի իւր վկան:

— Չեմ կարող, ասաց նա խուլ ձայնով:

— Վասիկոտ, պատասխանեց կապիտանը:

“Ես արձակեց: Գնդակը իմ ծունկս քերծեց: Ես ակամայ մի քանի քայլ առաջ շարժուեցի, որպէս զի շուտով հեռանամ վհի ափից:

— Եւէ, եղբայր Գրուշնիցիի, ափսոս, որ լաւ չդիպար, ասաց կապիտանը: Եյժմ հերթը քոնն է, կանգնի: Նուաջ զրկիր ինձ, մենք այլևս չենք տեսնուելու: “Նորանք փաթաթուեցան. կապիտանը հաղիւ կարողանում էր պահել իւր ծիծաղը:—

Մի՛ վախենայ, ասաց նա խորամանկութեամբ նայելով Գրուշնիցիու վերայ. աշխարհիս երեսին ամեն բան դատարկ է... Բնութիւնն է խննմթ, բաղդն է հնդկահաւ, կեանքը—մի կոպէկ:

Եյս եղերերգական պերճախօսութիւնը, վայելուչ լրջութեամբ ասելուց յետոյ՝ նա գնաց իւր տեղը: Խվան Խվանովիցը նցյալէս արտասուքը աչքերին զրկեց Գրուշնիցիուն, և աշանա միայնակ կանգնած է իմ դիմաց: Ես մինչեւ այժմ աշխատում եմ ինձ բացարել թէ ինչպիսի զգացմունք եռ էր գալիս այն ժամանակ իմ սրտում. դա թէ վերաւորած ինքնասիլութեանս վիշան էր, թէ արհամարտանք, թէ բարկութիւն,

որը յառաջացաւ այն ժամանակ, երբ մատածումէի, թէ սյս մարզը, որը այժմ այսպէս աներկայութեամբ, այդպէս խաղաղ յանդքնութեամբ նայումէ իմ վերայ՝ երկու շոպէ առաջ իրեն չենթարկելով ոչ մի վաճանդի ինձ ուղումէր սպանել, որպէս շան, որովհեաւ, եթէ ոտս մի քիչ աւել վերաւորուեր՝ ևս անսպատճառ ժայռից ցած կպլուուէի:

Ես մի քանի րոպէ անթարթ նայեցի նորա երեսին, աշխատելով նկատել գոնէ զզջման մի փոքր հետք: Իսյց ինձ այնպէս էր թվում, որ նա զսպումէր իւր ժպիար:

— Ես ձեղ խորհուրդ եմ տալիս մեռնթւց առաջ աղօթել Աստծոն, այն ժամանակ ասացի ևս նորան:

— Իմ հոգու մասին մի հոգաք աւելի քան ձեր հոգու մասին: Մի բան եմ ձեզանից խնդրում. շուտով արձակեցէք:

— Եւ դուք յետ չէք առնում ձեր զըսպարտութիւնը. ինձանից ներողութիւն չէք խնդրում... Մի լաւ մտածեցէք. ձեր խիզձը ձեղ ոչինչ չէ՞ ասում:

— Պարոն Պեչորին, բղաւեց հեծելազօրի կապիտանը. թոյլ տուեք նկատելու, որ ձեղ այսուեղ քարոզիչ չեն նշանակել... Ծուտով վերջացրէք. դուք մէկը անցնի կիրծից և մեզ նկատէ:

— Լաւ, բժիշկ, մօտեցէք ինձ:

Իժիշկը մօտեցաւ: Խեղձ բժիշկ, նորա երեսի գոյնը աւելի էր գնացել, քան տասը րոպէ առաջ Պրուշնիցկունը:

Հետեւեալ խօսքերը ևս զիտմամբ արտասանեցի հատիկ հատիկ, բարձր և քաշ ինչպէս արտասանումնն մահուան դատավճիռը:

— Այդ սարսները, երեկի շտապելով, մոռացել են իմ ատրճանակի մէջ գնդակ գնել. խնդրումեմ ձեղ լցնել նորից— և լաւ:

— Անկարելի է, բղաւեց կապիտանը, անկարելի է այդ. երկու ատրճանակն էլ ես եմ լցրել գուցէ թէ ձերի միջից զընդակն ընկել է... Այդ իմ յանցանկս չէ՞: Իսկ դուք իրաւունք չունեք նորից լեցնելու... ոչ մի իրաւունք... Պա կանոնին բոլորվին հակառակ է. ևս թոյլ չեմ տայ:

— Ծատ լաւ, ասացի ևս կապիտանին, եթէ այդպէս է, այն ժամանակ մենք նոյն պայմաններով կմենամարտենք ձեղ հետ...

“Նա պապանձեցաւ:

Գրուշնիցկին կանգնած էր դլուխը կրծքին թողած, շփոթուած և մուսցի:

— Թողնորանց, վերջապէս ասաց նա կապիտանին, որը ուղումէր իմ տարձանակս խլել բժշկի ձեռից:— Դու ինքդէլ զիտես, որ նորանք ճշմարիտ են ասում:

Կապիտանը նշաներ էր անումնորան, բայց ի դուր, Գրուշնիցկին չէր ուղում մինչեւ անգամ նայել նորան:

Իմիշկը լցրեց տարձանակը և տուեց ինձ:

Եյս տեսնելով կապիտանը թքեց և ոտով արորեց:

— Յիմար ես զու, եղբայր, ասաց նա. և ստոր յիմար... Երբ յոյս զբիր իմ վերայ, ուրիմն ամեն բանի մէջ լսիր ինձ... Վեղտեղն է: Ատակիր ինչպէս ճանձ... նա յետ դարձաւ և հեռանալով մրմնջաց. այսու ամենայնիւ սա կանոնի հակառակէ:

— Գրուշնիցկիյ, ասացի ես, դեռ. ևս ժամանակ կայ, յետ առ քո զբարտութիւնդ, ես քեզ ամեն բան ինկրեմ: Վեղցաջողուեց ինձ յիմարայնել, և իմ ինքնասիրութիւնը բաւականութիւն ստացել է: Յիշեր մենք մի ժամանակ բարեկամներ էինք:

“Նորա երեսը զայրոյթ արտայայտեց, աչքերը փայլեցին:

— Երձակեցէք, պատասխանեց նա, ես ինձ արհամարտում եմ, ձեզ ատում եմ: Նթէ գուք ինձ չսպանէք ես ձեզ զիշերը թաքուն կմորթեմ: Մենք երկուսս աշխարհի վերայ միասին ապրել կարող չենք:

Ես արձակեցի:

Երբ մուխը ցրուեց՝ Գրուշնիցկին տափարակի վերայ չկար:

Միայն փոշու բարակ սիւնը ոլորվում էր ձորի ափին:

Բոլորը միաձայն գոչեցին:

Finita la comedia! \*) ասացի ես բժշկին:

“Նա չպատասխանեց և սարսափելով երեսը դարձրեց:

Ես ուսկը թօթուեցի և հրաժեշտ տուի Գրուշնիցկու վկաներին:

“Երբանցքից վար իջնելով ժայռերի ճեղքուածքի մէջ ես

\*) Կատակերգութիւնը վերջացաւ:

«Արաքս».

Նկատեցի Գրուշնիցկու արիւնաթաթախ դիակը: Ես ակամայ աչքերս փակեցի:

Զիուս կապը արձակելով ես հեծայ և կամաց տուն գնացի: Սիրտս ճնշվում էր կարծես քարի տակ: Երեք ինձ խաւար էր թվում: Նորա ճառագյթները ինձ չեին տաքայնում:

Վերի բաղը չհասած՝ ես ծոռւեցի դէպի աջ կիրճը: Մարդու ներկայութիւնը ինձ անտանելի կլինէր. ես ուզում էի մենակ լինել: Զիուս սանձը թողնելով զլուխս կրծքեր ցած ձգելով, ես երկար ժամանակ գնում էի, վերջապէս ուշքս վերաս եկաւ այնալիսի մի տեղ որը ինձ բոլորովին անձանօթ էր, ես յետ դարձայ և սկսեցի որոնել Ճանապարհը. արդէն արեք մայրն էր մտնում, երբ ես յոգնած, ձիուս վերայ Ախոլօփողսկ մտայ:

Սպասաւորս ասաց, թէ Ակները եկել է իմ մօտ և թողել է ինձ երկու նամակ. մէկը իրանից, միւսը... Վերայից:

Ես բացարի առաջինը. նորա բովանդակութիւնը հետեւալն էր: «Ըմեն բան կարելոյն չափ կարգի է զրած. դիակը բերուած է այլանդակուած. գնդակը կրծքից հանուած է: Բոլորը համոզուած են, թէ նորա մահուան պատճառը ձախորդ դիպուածն է եղել: Միայն բերգապետը, որին, հաւանականօրէն յայտնի էր ձեր վէճը՝ զլուխը շարժեց, բայց ոչինչ չասաց: Զեր դէմ ոչ մի ապացոյց չկայ, և դուք կարող էք հանգիստ քնել... եթէ կարող էք... Մնաք բարով»...

Ես երկար ժամանակ վարանում էի բաց անել երկրորդ նամակը... Եէ ի՞նչ կարող էր ինձ զրել: «Օանը յուղմունքը ալեկոծում էր իմ հոգիս:

Սհա այն նամակը, որի իւրաքանչեւր բառը անջինջ կերպով դրոշմուել էր իմ մաքիս մէջ:

«Ես զրում եմք ի՞նչ լիովին հաւատացած լինելով, որ մենք այլ ես տեսնուելու չենք: Մի քանի տարի առաջ, քեզանից բաժանուելս ես նոյնն էի կարծում բայց երկինքը ուղեց երկրորդ անգամ ինձ փորձել. ես չկարողացայ դիմադրել այդ փորձութեան. իմ թոյլ սիրտս նորից հնազանդեց ծանօթ ձայնին... Դորա համար դու ինձ չես արհամարի... այնպէս չէ: Եյս նամակս վերջին հրաժեշտս է դէպի քեղ և խոստովա-

Նանքս. ևս պարտական իմ քեզ ասել այն բոլորը, ինչ որ լեցուած է սրտում այն ժամանակից իվեր, երբ քեզ սիրեցի: Ես քեզ մեղագրելու չեմ—դու ինձ հետ վարուեցար այնպէս, ինչպէս կվարուէր ամեն մի էրիկմարդ. դու ինձ սիրումէիր ինչպէս քո սեփականութիւնդ, ինչպէս աղքիւր միմիանց փոխանակող երջանկութեան, յուզմունքի և տիրութեան, առանց որոց կեանքը տիսուր է ու միատիսակ: Ես այդ հասկանումէի սկզբից... Բայց դու անբաղդէիր, և ևս զոհեցի իմ կեանքս, յուսալով որ երբ և իցէ դու կգնահատես իմ զոհաբերութիւնս, որ դու երբ և իցէ կհասկանաս իմ խորին գորովը, որը կախում չէ ունեցել ոչ մի պայմանից: Եյն օրից յետոյ երկար ժամանակ անցաւ. ևս թափանցեցի քո հոգու բոլոր գաղտնիքը, և համոզուեցայ, որ իմ յօյսն անիրազործելի էր: Եյդ ինձ համար ծանր էր: Բայց իմ սէրս կապուեցաւ հոգուս հետ. նա նուազեց, բայց չհանգաւ:

«Մենք բաժանվում ենք յաւիտեան, բայց դու կարող ես, վստահ լինել որ երբէք ուրիշն չեմ սիրելու. իմ հողիս քեզ համար սպառեց իւր բոլոր ջանքերը, իւր արտասուբը և յուսերը: Քեզ մի անգամ սիրողը չէ կարող ուրիշ էրիկմարդկանց վերայ նայել առանց արհամարանքի. ոչ թէ նորա համար, որ դու նորանցից լաւ ես, ոչ, ոչ բայց քո մէջ կայ մի ինչ որ բան—միայն քեզ յատուկ, մի ինչոր հպարտ և խորհրդաւոր. քո ձայնը, ինչ էլ որ խօսես, մի անյաղթելի իշխանութիւն ունի. ոչ ոք չէ կարող շարունակ ցանկալով սիրելի լինել, ոչ ոքի մէջ չարութիւնը այդքան հրապուրիչ չէ, ոչ ոքի հայեցքը չէ խոստանում այնքան երանութիւն, ոչ ոք չէ կարող աւելի լաւ օգտուել իւր առաւելութիւններով և ոչ ոք չէ կարող լինել այնպէս կատարեալ անբաղդ՝ ինչպէս դու. որովհետեւ ոչ ոք այնքան չէ աշխատում իրան համոզել իրականին հակառակ:

«Եյժմ ես քեզ ոկտը է բացատրեմ իմ շուապով հեռանալուս պատճառը. նա քեզ կմուտի մի չնչին բան, որովհետեւ միայն ինձ է վերաբերում:

«Եյս առաւօտ մարդս եկաւ տուն և պատմեց քո վէճդ Վլուշնիցիու հետ: Երեկի, որ իմ դէմքս սաստիկ այլայլուել է այս լուրը լսելիս, որովհետեւ նա երկար և անթարթ նայում

էր աչքերիս. ևս քիչ մնաց ուշաթափուէի, մտածելով որ դու պյօր պէտք է մենամարտես և որ դորա պատճառը ես եմ. ինձ թվում էր, թէ ես խելքս թոցնում եմ: Բայց այժմ երբ ես կարող իմ դատել ևս հաւատացած եմ, որ դու կենդանի ես մնալու, անհնար է, որ դու առանց ինձ մեռնես, անհնար է: Ամուսինս երկար ման եկաւ սենեակում ես չեմ յիշում, թէ նա ինձ ինչ էր ասում, և ես նորան ինչ էի պատասխանում... իրաւ, ես նորան ասացի, թէ քեզ սիրում եմ... Յիշում եմ, որ մեր խօսակցութեան վերջը նա ինձ վերաւորեց մի սորսափելի խօսքով և դուրս գնաց... Ես լսեցի, որ նա հրամայեց կառքը լծել... Եհա արդէն երեք ժամ է, որ ես նստած եմ պատուհանի մօտ և սպասում եմ քո վերագարձիդ... Բայց դու կենդանի ես, դուն չես կարող մեռնել... Կառքը համարեա պատրաստ է... Մնաս բարով... Մնաս բարով... Ես կորայ, բայց ի՞նչ փոյթ: Եթէ ես կարողանայի համոզուել, որ դու ինձ միշտ կյիշես—էլ չեմ ասում սիրես—ոչ, միայն յիշել... Մնաս բարով, զալիս են... ես պէտք է պահեմ նամակս...— Ճշմարիտ չէ, դու Մերին չես սիրում, դու նէրա հետ չպիտի ամուսնանաս—լսիր, այդ զոհը դու պէտք է անես ինձ. ես քեզ համար ամեն ինչ կորցրի աշխարհիս երեսին...»

Ես խելագարի պէս բակը իջայ, հեծայ Զէրկէզ ձիս, որը պահում էի բակում և բոլոր ոյտով քշեցի Պիատիգօրսկի ճանապարհով: Ես անխնայ քշում էի յոդնած ձիուս, որ բոլորովին քրտնած հեւում էր՝ թոցնում էր ինձ քարոտ ճանապարհով:

Երեն արդէն թաք էր կացել սե ամպի տակի, որը հանգչում էր արևմասեան լեռների շղթայի վերայ. կիրճը մթնեց և խոնաւութիւնը զգալի եղաւ: Պօդկումօկ դետը հոսելով քարերի միջով, մոնչում էր խուլ և մի տեսակ: Անհամբերութիւնս հատած ես սլանում էի ձիով: Այն միտքը, թէ Պիատիգօրսկում նէրան չեմ գտնի՝ մուրճի նման ծեծում էր սիրտս: Մի լուպէ, էլե մի բոպէ տեսնեմ նէրան ասեմ մնաս բարով, սեղմեմ նէրա ձեռը... Ես ազօթում էի, նզովք կտրդում, լալիս և ծիծաղում... ոչ, ոչ մի բանով չէ կարելի արտայայտելիմ անհանդստութիւնս, յուսահատութիւնս... Հնարաւոր եղած ժամանակ կորցնել նէրան յաւիտեան՝ Պէրան ինձ համար աշխարհիս երեսին ամեն բանից թանգ էր, թանգ էր կեանքիցս,

պատուիցս, երջանկութիւնիցս: Աստուած զիտէ, թէ ինչպիսի տարօինակ, ինչպիսի կատաղի մաքեր պտտում էին մտքումս... Սակայն ես շարունակ ձիս վաղեցնում էի առանց խնայելու:— Եւ աշա ես սկսեցի նկատել որ ձիս ծանր է շունչ քաշում, և երկու անգամ սայթակեց հարթ տեղում... Հինդ վերստ մնացել էր մինչեւ Խանստուկ—կօղակների գիւղը, որտեղ ես կարող էի ուրիշ ձի հեծնել:

Վմեն ինչ կյաջող էր, եթէ իմ ձիուս ոյժը տասը բոպէ աւելի զօրէր: Ի՞այց յանկարծ, երբ փոքրիկ ձորից վեր էր բարձրանում լեռներից գուրս գալու ժամանակ, շաւղի ծուռ տեղում, նա արագութեամբ վար իջնելով ուղում էի նորան բարձրացնել քաշում եմ երասանակից—զուր, հաղիւ լսելի հառաջը լսուեց նորս սեղմած ատամների միջից. մի քանի բոպէից յետոյ նա սատկեց. ևս անապատում մնացի մենակ՝ վերջին յօյսս կորցնելով փորձեցի ստով գնալ—ուներս ծալվում էին. ցերկուայ վըգովմունքներից և անքնութիւնից ջարդուած՝ ես ընկայ թաց տերեւ վերայ և երեխայի պէս լաց եղայ:

Եւ երկար ընկած էի ես անշարժ և դառը լալս էի, չաշխատելով զսպել արտասուքս և մղկատնիս. ես կարծում էի, թէ իմ կուրծքս կապատուուի. բոլոր իմ անյաջողութիւնս, բոլոր սառնասբառութիւնս անհեաացաւ ծխի պէս, հոգիս ոյժից ընկել էր, բանսկանութիւնս կորել և եթէ այդ ժամանակ մէկը ինձ տեսնէր՝ նա արհամարտնով երեսը կդարձնէր:

Երբ զիշերուայ յօդը և լինային քամին զովացրին իմ տաքացած զլուխս և խելքս վերաս եկաւ՝ ես հասկացայ, որ խորսակուած բազդի ետեւից ընկնելը անօգուտ է ու անմիտ: Կյլ ևս ինձ ի՞նչ է պէտք,—տեսնել ներան,—ի՞նչու, մի՞թէ ամեն բան մեր մէջ վերջացած չէ:

Ենջատման մի գառն համբոյրը չի հարստացնէ իմ յիշու զութիւնս, իսկ այդ համբոյրից յետոյ մեղ աւելի դժուար կլինի բաժանուիլ:

Սակայն, ինձ ախորժելի է, որ ես կարողանում եմ լաց լինել: Ո՞վ զիտէ, գուցէ սորա պտտառը ջղերիս գրգռած լինելն է, անքուն գիշեր անցկացնելն, երկու բոպէ ատրճանակի առջեւ լինելս, և քաղցած ստամոքսս:

Ամեն ինչ գեպի լաւնէ ընթանում: Կյս նոր կակիծը, զինուոռտկանի լեզուով խօսելով ինձ հարմար զառածութիւն (ճաւերսիա) եղաւ: Լաց լինելը առողջարար է, և բացի այս, հաւանակորէն եթէ ձիով զբօսած չլինեի՛ ևս ստիպուած չէի լինել տասն և հինգ վերստ ճննապարհ ոտով քայլել և այդ գիշերը աչքերս քուն չէր գայ:

Ես Կիսլովոդսկ վերագարձայ առաւտօտեան հինգ ժամին, ընկայ տեղաշրիս վերայ և քնեցի այնպէս, որպէս Նապոլէօնը Վասիլիլից յետոյ:

Երբ զարթնեցի դուրսը արդէն մութն էր. ևս նստայ բացուած լուսամուափ մօտ, քանդեցի արխալուղիս կոճակները— և լեռնային քամին զովացրեց իմ կուրծքը, որ յոգնածութեան երկարատև քունը գեռ ևս չէր հանգստացրել: Հեռու գետի միւս ափին, խիտ կաղամուխների կատարների միջեց, որոնք ընդգրկել էին նորան, փայլում էին կրախներ ամրոցի բարձր թաղի շինութիւնների մէջ: Դուրսը ամեն բան խաղաղ էր. իշխանուհու տունը մութն էր:

Ինձ մօտ եկաւ բժիշկը. նա նօթելը կիտել էր. նա սովորականին հակառակ ինձ ձեռ չառուեց:

— Ո՞րտեղից էք գալիս բժիշկ:

Լեզովկայեա իշխանուհու մօտից. ներա դուստրը հիւանդէ—ջղերի թուլացումն... բայց բանը սորանում չէ այլ նորանում, որ իշխանութիւնը սկսել է հասկանալ բանի էութիւնը. և թէե հաստատապէս ոչինչ ասկացուցանել չէ կարող, սակայն ևս ձեզ խորհուրդ նիմ տալիս զգոյշ լինել: Իշխանուհին այսօր ինձ ասաց, որ նէ գիտէ, որ գուք մենամարտել էք իւր գտաեր պատճառով: Ներան բոլորը այդ ծերն է պատմել... ի՞նչպէս է անունը: Նա պանդոկում քո և Գրուշնիցիու վեճին ներկայ է հղել: Նո եկայ ձեզ նախազգուշացնելու:— Ո՞նաք բարով: Դուցէ մենք այլ ևս չտեսնուենք—ձեղ կուղարկին որեւէ տեղ:

‘Նա շեմքի վերայ կանգնեց, նա կամենում էր սեղմել իմ ձեռու... և եթէ ևս ցոյց տայի մի փոքր տրամադրութիւն նա կփաթաթուէր զվես. բայց ևս մնացի անտարբեր ինչպէս քար— նա դուրս գնաց:

Եշտ մարդիկ, նորանք բոլորն էլ այդպէս են. առաջուց

գիտենալով վարմունքի բոլոր վատ կողմերը օգնում են, խորհուրդ են տալիս մինչև անդամ խրախուսում են աեսնելով որ ուրիշ միջոց չկայ.—իսկ յետոյ լուանում են ձեռները և զգուանքով երես են դարձնում նորանից, որ ունեցել է համարձակութիւն պատասխանատվութեան բոլոր ծանրութիւնը իւր վերայ առնել: Նորանք բոլորը այդպէս են. մինչև անդամ ամենաբար բիները և ամենախելացիները:

Միւս օր առաւօտեան բարձր իշխանութիւնից հասման ստանալով՝ տեղափոխուել Ո՞ ամրոցը՝ և գնացի իշխանուհումօս մեաս բարով ասելու:

‘Նէ զարմացաւ, երբ նէրա հարցին—ունեմ ես որեւէ մի կարևոր բան նէրան ասելու՝ պատասխանեցի, որ ցանկանում եմ նէրան յաջողութիւն և այլն...’

— Իսկ ես մի լուրջ խօսելիք ունիմ քեզ հետ:

Ես նստայ լուռթեամբ: Պարզ էր, որ նէ չզիտէր թէ ինչեց սկսէ, նէրա երեսը կարսիրեց. նէ գէր մատներով բաղխում էր սեղանին, վերջապէս նէ ընդհատուող ձայնով սկսեց այսպէս.

— Լսեցէք, պարոն Պէջորին, ես կարծում եմ, որ դուք աղնիւ մարդ էք:

Ես զումի տուի:

— Ես մինչև անդամ հաւատացած եմ, շարունակեց նէ, թէւ ձեր վարքը մի քիչ կասկածելի է, բայց դուք կարող էք ունենալ պատճառներ, որ ես չփառեմ, և այդ պատճառները այժմ դուք պէտք է ինձ հաւատաք: Դուք իմ դուստրը պահպանեցիք զրպարատութիւնից, նէրա համար մենամարտեցիք—հետեւապէս ձեր կեանքը վատնդի մէջ դրիք... Ո՞ պատասխանէք, ես զիտեմ, որ դուք այս չէք խոստովանի, որովհետեւ Պրուշնիցին մեռած է (նէ երեսը խաչտնիքից): Կատուած նորան թողութիւն կտայ, ձեղ նոյնպէս յուսով եմ... Եսդ ինձ չէ վերաբերում... Ես չեմ կարող ձեզ դատել, որովհետեւ իմ դուստրը թէւ անմեղ է, բայց սորան պատճառաւ է եղած: Նէ ինձ պատմեց... կարծեմ բոլորը: Դուք արտայայտել էք նէրան ձեր սէրը, նէ յայտնել է իւրը (այդ ժամանակ իշխանուհին խոր հառաջեց): Բայց նէ հիւանդ է, և ես համոզուած եմ, որ սա հասարակ հիւանդութիւն չէ: Ներքին ախրութիւնը նէրան սպանումէ. նէ չէ խոստովանում, բայց ես

Համողուած եմ, որ սորտ պատճառը դուք էք... Եսեցէք դուցէ դուք մտածում էք, որ աստիճանների աչք ունեմ, կամ մեծ հարստութեան—սիսալգում էք—ես ցանկանում եմ մի-այն դստերիս երջանկութիւնը: Չեր ներկայ դրութիւնը նա-խանձելի չէ, բայց կարող է ուզուել, դուք ունեք կարողու-թիւն. ձեղ աղջիկս սիրում է, նէ այնպէս լաւ է կրթուած, որ էրկայ երջաննկութիւնը կլինի: Ես հարուստ եմ, նէ իմ մի հատիկս է... խօսեցէք, ի՞նչն է ձեղ առգելում... Տես-նում էք, ես չպէտք է այս բոլորը ձեղ առէի, բայց ես վստա-հացայ ձեր սրաի վերայ, ձեր պատուի վերայ—յիշեցէք ես միայն մի աղջեկ ունեմ... մի...

«Եւ լայ եղաւ:

— Եշխանուհի, ասացի, ես չեմ կարող ձեղ պատասխա-նել թոյլ տուեք ինձ ձեր գստեր հետ առանձին խօսել...

— Երբէք, բզաւեց նէ սաստիկ յուղուած, աթոռից վեր կենալով:

— Ենչպէս ուզում էք, ասացի ես պատրաստուելով գնալ:

«Նէ մտածմունքի մէջ ընկաւ, ինձ ձեռով նշան արեց, որ ես սպասեմ և դուրս ելաւ:

Ենցաւ մի հինգ բոպէ, իմ սիրա սասարիկ բարախում էք բայց միաքս հանգիստ էր, զլուխս սառն, որովհետեւ ես իմ կրծքումս որոնում էի սիրոյ մի կայծ գէպի սիրուն Մերին՝ բայց ի դուր էին իմ ջանքերը:

Եհա դուռը բացուեցաւ և ներս մտաւ նէ. Աստուած իմ, ինչպէս փոխուել էր նէ այն ժամանակից ի վեր, ինչ ես տե-սել էր ներան—վաղուց է:

Մինչեւ սենեակի մէջ տեղը գալով, նէ տատանուեց. ես վեր թռայ տեղեցս, ներան ձեռ տուի և տարայ մինչեւ բազ-կաթոռը:

Ես կանգնած էի ներա դիմաց: Մենք երկար ժամանակ լուսում էինք. ներա մեծ աչքերը, որոնք լի էին մի անբացատ-րելի տիրութեամբ, թվում էր, թէ իմ աչքերի մէջ որոնում էին յոյսի նման ինչ որ բան՝ ներա տժգոյն շըմունքները զուր աշխատում էին ժպտալ ներա քնիքը ձևոները, որ ծալուած գրել էր ծնկների վերայ, այնպէս վտիտ և թափանցիկ էին, որ նէ իմ կտիծս տուեց:

— Եշխանուշի օրիորդ, ասացի ես, դուք դի՞տէք, որ ես  
ձեզ ծալըռում էի... Ուրեմն դուք պէտք է ինձ ատէք:

‘Նէրա այտերի վերայ երեայ հիւանդու կարմրութիւն:  
Ես շարունակեցի, հետեապէս դուք ինձ սիրել չեք կարող...  
‘Եէ երեսը գարձեց, յենուեց աթոռին, աչքերը ձեռներով ծած-  
կեց, և ինձ թվում էր, թէ նորանց մէջ փայլեց արտասուք:  
Աստուած իմ, շնչաց նէ հազեւ լսելի ձայնով:

Վյո անտանելի էր. էլի մի բոպէ—ես կընկնէի նէրա ոտները:  
— Եւ այսպէս, դուք ինքներդ տեսնում էք, ասացի ես,  
ինչքան կարող էի բարձր ձայնով և բոնի ծիծաղելով, ինքներդ  
տեսնում էք, որ ես չեմ կարող ձեզ հետ ամուսնանալ: Եթէ  
այդ մինչև անգամ դուք այժմն էլ շանկանայիք՝ շուտով ինք-  
ներդ կզզջայիք: Չեր մօր հետ ունեցած խօսակցութիւնս սոփ-  
պէց ինձ այժմ այսպէս անկեղծ և կոսիտ խօսել ձեզ հետ: Ես  
յօյս ունիմ, որ նէ սխալուած է, դուք հեշտութեամբ կարող  
էք նէրան տարհամողել: Դուք տեսնում էք, ես ձեր առջև  
խաղում եմ թշուառ և զգուելի դեր. մինչև անգամ այս խոս-  
տովանում եմ—ահա բոլոր, ինչ որ ես կարող էի ձեզ համար  
անել: Դուք իմ մասին ինչպիսի վատ կարծիք էլ չունենաք  
ես ընդունում եմ... Տեսնում էք, ես ձեր առջև կեղաստ եմ  
դուրս գալիս... Շմարիտ չէ, եթէ մինչև անգամ դուք ինձ  
սիրում էլ էլիք՝ այս բոպէից ատում էք...

‘Նէ երեսը գարձեց դէպի ինձ, նէ տժդոյն էր ինչպէս մար-  
մար, միայն նէրա աչքերը ցոլում էին հիանալի կերպով:

— Ես ձեզ ատում եմ, ասաց նէ:  
Ես շնորհակալութիւն յայանեցի, յարդանքով խօնարհու-  
թիւն տուի և դուրս ելայ:

Մի ժամկից յեայ սուրհանդակի սայլակով սլանում էի Ախ-  
լովոսկից: Եսինդուկից մի քանի վերատ հեռու ճանապարհի  
մօտ ես ճանաչեցի ժիր ձիուս զիակը. թամբը վերցրած էր,  
(հուանակօրէն անցորդ կօղակի ձեռքով) և թամբի տեղ նորա  
մէջքի վերայ նստել էին երկու ագռաւ: Ես հառաչեցի և ե-  
րեսս գարձրիս...

Եւ այժմ այստեղ, այս տխուր ամբոցում, ես յաճախ յի-  
շում եմ անցեալս և ինձ հարցնում, ինչու ես չէի ուզում  
գնալ այն ճանապարհով որը բայել էր բաղդը ինձ համար,

որտեղ սպասում էր ինձ խաղաղ բերկութիւն և հոգու հանգստութիւն... Այս ես չէի կարող յարմարուիլ այդ վիճակին: Ես նման եմ այն նաւաստուն, որ ծնուած և մեծացած է ծովահենի նաւի վերայ, որի հոգին ապրել է փոթորիկների և պատերազմների մեջ, և երբ ձգուած է նաւից դուրս, նա տիրում է և նեղվում, ինչքան էլ չհրապուրէ նորան ստուերախտ անտառը, ինչքան էլ ըսւսաւորէ նորան խաղաղ արելը. Նա ամբողջ օրը ման է գալիս տփի աւաղի վերայ, լսում է ծփող ալիքների միատեսակ մրմունջը և սպասում է գէպի մառախլապատ հեռուն թէ տժգոյն գծին վերայ, որ կապոյտ յորձանկը բաժանում է մոխրագոյն ամսերը, արդեօք չէ երեսում ցանկալի առագաստը, որը սկզբից նման է ձկնկուլի թեխն, բայց քիչքիչ բաժանուելով փրփուրից՝ հանդարտ ընթացքով մօտենում է անբնակ նաւահանգստին...



### ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱԽԱՏԱՑՈՂ

Մի անգամ ինձ դեպք եղաւ երկուշաբաթ ապրել կօղակների գիւղում, ձախակրղմեան պահակում: Այստեղ էր և հետեակաղօրի գունդը. սպաները հերթով հաւաքվում էին միմեանց մօտ, և երեկոները թուղթ էին խաղում:

Մի անգամ, բոստոն խաղեց ձանձրանալով թղթերը դէն ձգեցինք և երկար ժամանակ նստանք Ա... մայեօրի մօտ. խօսակցութիւնը սովորականից աւելի հետաքրքիր էր: Խօսում էինք այն մասին, թէ խալամական մնութիապաշառութիւնը—իբր թէ մարդու բաղդը գրուած է երկնքում ունի մեր մեջ ևս շատ հաւատացողներ, ամեն մէկը պատմում էր զանազան անսովոր գէպքեր:

— Եյդ բոլորը, պարոններ, ոչինչ չէ ապացուցանում, ասաց ծեր մայեօրը. չէ՞ որ մեզանից ոչ ոք վկայ չէ եղել այն տարօրինակ գէպքերին, որով գուշ պաշտպանում էք ձեր կարծիքը:

— Ի հորկէ, ոչ ոք, ասացին շատերը. բայց մենք լսել ենք հաստատ հաւատարիմ անձերից...

— Այդ բոլորը գատարկ բանե՞ր են, ասաց մէկը. որտեղ  
են այդ հաւատարիմ անձերը, որոնք տեսած են այդ ցանկը,  
որի մէջ նշանակուած է մեր մահուան ժամը... Նև եթէ կոյ  
նախասահմանութիւն՝ էլ ինչու մեղ տրուած է կամք և բա-  
նականութիւն, ինչու համար մենք պէտք է պատասխանտու-  
լինենք մեր գործերին:

— Այդ ժամանակ մի սպայ, որը նստած էր անկիւնում,  
վեր կացաւ ու գանդաղ մօտենալով սեղանին՝ բոլորի վերայ  
ձգեց հանգարտ և յաղթական հայեացք. նա ազդով սերբիացի-  
էր, ինչպէս յայտնի էր նորա անունից:

Պռւլիչ պօրուչիկի արտաքին տեսքը լիովին համապատաս-  
խանում էր նորա բնաւորութեանը: Բարձր հասակը, թուխ  
դէմքը, սև մազերը, սև թափանցիկ աչքերը. մեծ, բայց կա-  
նոնաւոր քիթը—որը յատուկ է նորա ազգին—տիսուր և սառն  
ժպիտը, որը միշտ խաղում էր նորա շրթունքների վերայ—  
այս բոլորը կարծես միացել էին նորա համար, որ նորան տան  
այնպիսի մի արարածի տեսք, որը լնդունակ չէ փոխանակել  
իւր մտքերը և զգացմունքները նորանց հետ, որոնք բաղդի  
բերմամբ գարձրել էին նորան ընկեր:

‘Նա քաջ էր, վիճում էր քիչ, բայց կարուկ. ոչ ոքի չէր  
հաւատում իւր հոգեկան և ընտանեկան գաղանիքները, զինի  
համարեա երբէք չէր խմում. երբէք չէր ընկնում գեռահաս  
կօղակ աղջեկների ետելից—որոց չքնաղութիւնն զժուար է  
երեակայել առանց տեսած լինելու: Վյուռ ամենայնիւ ասում  
էին, որ գնդապետի կինը գրաւուած է նորա արտայայտիչ աչ-  
քերով. բայց նա լուրջ կերպով նեղանում էր, երբ նորա մօտ  
այդ մասին ակնարկում էին:

Միայն մի ցանկութիւն ունէր, որը նա չէր թաքցնում—  
սէր գէպի թղթախաղը: Անհաչ սեղանի շուրջը նա ամեն ինչ  
մոռանում էր և ընդհանրապէս տարվում. բայց մշտական ան-  
յաջողութիւնները միայն գրգռում էին նորա կամակօրութիւ-  
նը: Պատմում են, թէ մի անդամ պատերազմական արշաւան-  
քի ժամանակ նա գիշերը—բարձի վերայ թուղթ էր քաշում  
(метать банкъ) և նորան սաստիկ խաղը յաջողվում է: Յանկարծ  
լսվում են հրացանաձգութեան ձայներ, թմբակները զարնում  
են արտասովոր կոչի, բոլորը տեղերից վեր են թռչում և գի-

մում են զէնքերին. «բոլոր բանիը բռնիլ», բղաւումէ Առւլիչը առանց վեր կինալրւ ամենատաք խաղացողներից միոյն։ «Եօթնոց», պատասխանեց միւրս դուրս վաղելով։ Զնայելով ընդհանուրի իրարանցման՝ Առւլիչը քաշեց մինչև ուղած թուղթը. թուղթը տրուեցաւ խաղակցին։

Երբ նա հրացանաձիգների գծին հասաւ՝ այնոտեղ արդէն սխուած էր սաստիկ հրացանաձգութիւնը։ Առւլիչ չէր մտածում ոչ գնդակների և ոչ չէլէնների դաշոյների մասին. նա վնասուում էր բարեբաղդ խաղակցին։

— Եօթնոցը տարաւ, բղաւեց նա, տեսնելով նրան հրացանաձիգների գծում, որոնք սկսում էին թշնամուն անտառից դուրս հալածել, և մօտենալով հանեց իւր քսակը և թղթագրամի պայուսակը և տուեց բազգաւորին, չնայելով որ սա անտեղի էր համարում վճարելու այդ ժամը։ Կատարելով այս անհաճյ պարտաւորութիւնը նա յառաջ անցաւ, ետեւ տարաւ զինւորներին, և մինչև գործի վերջը սառն կերպով կը ուղւմ էր չէլէնների հետ։

Երբ Առւլիչ պօրուչիկը մօտեցաւ սեղանին, բոլորն էլ լուցին, սպասելով որ նա որևէ տարօրինակ բան պիտի անէ։

— Պարոններ, ասայ նո Ծորա ձայնը հանդարտ էր, թէ սովորականից յաձր).—պարոններ, ինչո՞ւ զուր տեղը վեճում էք։ Դուք ապացոյց էք ուղում։ Ես ձեզ առաջարկում եմ անձերիդ վերայ փորձել, թէ արգեօք կարող է մարդ իւր կառքով կեանքը մահի ենթարկել, թէ մեզանից իւրաքանչիւրին համարնախասահմանուած է օրհասական ժամը... Ո՞վէ ուղում։

Ես չեմ ուղում, ես չեմ ուղում, լսուեց չորս կողմից։ Եյ յիմար. ի՞նչ է դուրս տալիս։

— Երիք զրազ գանք, ասացի ես կատակ անելով։

— Ինչի՞ մասին։

— Ես պետում եմ, որ Ճակատազիր ասած բանդ չկայ, ասացի ես, սեղանի վերայ լեցնելով քսան ոսկի—բոլորը, ինչ որ կար զրապանում։

— Համաձայն եմ, պատասխանեց խուլ ձայնով Առւլիչը։

— Մայեօր, դուք գատաւոր եղէք. ահա տասն և հինգ ոսկի, խոկ մնացած հինգը դուք ինձ պարտ էք, լաւութիւն արէք և աւելացրէք սորտ վերայ։

— Աաւ, ասաց մայեօրը, միայն չեմ հասկանում, թէ բանը ինչու՞մն է. և ինչպէս գուք պէտք է վէճը վերջացնէք...  
Վուլիչը լուռ մտաւ մայեօրի ննջարանը, մենք գնացինք նորա ետևից: Նա մօտեցաւ պատին, որի վերայից կախուած էին զէնքերը և առաջին պատահած ատրճանակը մեխից վար առաւ:

Մենք դեռ ևս նորան չէինք հասկանում. բայց երբ ատրճանակի ոտը քաշեց և ծակին վառօդ լցրեց՝ շատերը ակամայ գոչելով բոնեցին նորա ձեռները:

— Ի՞նչ ես ուզում անել: Եյդ յիմարութիւն է, գոչեցին նորան:

— Պարոններ, ասաց նա գանգաղաբար ազատելով իւր ձեռը. նկ է ցանկանում իմ փոխարէն վճարել քսան ոսկին:

Բոլորը լոեցին և յետ քաշուեցան:

Վուլիչը մտաւ միւս սենեակը և նայեց սեղանի մօտ. բոլորը հետեւում էին նորան: Նա նշանով հրաւիրեց մեզ շուրջը նստել. Մենք լոռութեամբ հնագանդում էինք նորան. այդ ժամնակ նա աիրում էր մեր վերայ մի գաղտնի զօրութեամբ: Ես անթարթ նայում էի նորա աչքերին, բայց նա հանգարա և անշարժ հայեացքով նայեց իմ ինքնասէր երեսիս և նորա աժդյուն շրթունքները ժապացին. բայց չնայելով նորա սառնասրառութեան՝ ինձ այնպէս թուեց, թէ ես նորա դժգոյն երեսի վերայ նշմարեցի մահուան կնիքը: Ես նկատողութիւն արի, և շատ հին զինուորականներ հաստատեցին իմ նկատողութիւնը, թէ շատ անդամ մի քանի ժամ յետոյ մեռնող մարդու երեսի վերայ կայ մի տեսակ օտարուահ արտայայտութիւն անջինջ ձակատագրի, այնպէս որ սովոր աչքը դժուար է խափալում: Դուք այսօր պիտի մեռնէք ասացի նորան: Նա արագ երեսը գարձրեց ինձ, բայց պատասխանեց կամաց և հանգարա. կարող է պատահել կարող է և չպատահել: Յետոյ դառնալով դէպի մայեօրը հարցրեց. ատրճանակը լեցրած է, թէ ոչ... մայեօրը շփոթութիւնից լաւ չէր յիշում:

— Ե՞ս, Վուլիչը բաւական է, գոչեց մէկը, հաւանական է որ լեցրած լինի, քանի որ անկողնի վերեւ կախուած էր. ի՞նչ կարիք կայ կատակի...

— Եիմար կատակ է, վրաբերեց, միւսը:

— Յիսուն րուբլի գրաւ կդնեմ, հինգ րուբլու դէմ, որ  
ատրճանակը լիցրած չէ, բղաւեց երրորդը:

‘Նորից գրաղ եկան:

Այդ երկար պատրաստութիւններն ինձ ձանձրացրին:—  
Լսեցէք, ասացի ես, կամ ատրճանակը արձակեցէք ձեզ վերայ,  
կամ կախուցէք իւր տեղը, և դնանք քնելու:

— Ե հարկէ, բացականչեցին շատերը, դնանք քնելու:

— Պարոններ ես ձեղ խնդրում եմ տեղից շարժուիլ առ  
ասց Վուլիչը, ատրճանակի փողը ճակատին դնելով:

Կարծես բոլորը քար կտրան:—Պարոն Պեչօրին, աւելա-  
ցրեց նա, առեք թուղթը և վեր ձգեցէք:

Ես թուղթը առայ սեղանի վերայից, ինչպէս այժմ յի-  
շում եմ, «տանձի» (չըրեա) ասը—և վեր ձգեցի. բոլորն էլ  
շնչառութիւննելը կտրեցին. բոլորի աչքերը մի տեսակ երկիւ-  
ղով և անորոշ հետաքրքրութեամբ լիցուած՝ ատրճանակից  
գտոնում էին օրհասական ասին, որը օգի մէջ փոփոարով  
կամաց գետին էր լնինում. այդ բոպէին հէնց որ թուղթը սե-  
ղանին դիպաւ, Վուլիչքաշեց ատրճանակի ոտը... Սորճա-  
նակը կրակ չառաւ:

Փառք Աստուծու, բղաւեցին շատերը—ատրճանակը գա-  
տարկ է... եղել:

— Սակայն նայեցէք, ասաց Վուլիչը. նա նորից ատրճա-  
նակի ոտը բարձրացրեց նշան առաւ զլխարկին, որը կախուած  
էր լուսամուաի վերեւ, ատրճանակին արձակուեց—սենեակը  
ծխով լիցուեց. երբ ծուխը ցրուեց, զլխարկը վար առան, որը  
մէջ տեղից ծակուած էր և գնդակը խոր մոել էր պատի մէջ:

Երեք բոպէի չափ ոչ ոք չկարողացաւ մի բառ արտասա-  
նել: Վուլիչը հանդարտ կերպով իմ ոսկիները ածեց իւր  
ոսկիների վերայ:— Ակսեցին խօսել թէ ինչու ատրճանակը ա-  
ռաջին անդամ չկրակեց. մի քանիսը պնդում էին թէ կայցա-  
ռի ծակը (ուռեա) խցուած էր. միւսները փափում էին, թէ ա-  
ռաջ վառողը թաց էր և թէ յետոյ Վուլիչը լցրեց չոր վա-  
ռօդ. բայց ես հաստատում էի, որ վերջին ենթադրութիւնը  
արդար չէ, որովհետեւ ես բոլոր ժամանակը ատրճանակից աչքս  
չէի հեռացնում:

— Դուք գլաւզի մէջ բաղդաւոր էք, ասացի ես Վուլիչին:

— Առաջին անգամ կեանքում, պատասխանեց նա ինք-նազոհ ժպիտով.—այս աւելի լաւ է, քան «թուղթ քաշելը» և շառար:

— Բայց և աւելի վտանգաւոր:

— Ի՞նչ: Նախասահմանութեան գուգք սկսեցիք հաւատան:

— Հաւատում եմ, բայց այժմ չեմ հասկանում, թէ ինչու ինձ թվում էր, թէ դուք այսօր պէտք է մեռնէք...

Եւ այդ մարդը, որը հենց նոր անտարբերութեամբ ատրք-ճանակը բռնեց իւր ճակատին՝ այժմ յանկարծ բորբոքուեց-և յուզուեց:

— Սակայն բաւական է, ասաց նա վեր կենալով.—մեր զրագը վերջացած է և այժմ ձեր նկատողութիւնները ինձ անտեղի են թվում:

“Նա առաւ զլիսարկը և գնաց: Եյդ ինձ տարօրինակ թու-եց, և յիրաւի:

«Ռուառվ բոլորը ցրուեցան իրենց տները, զանազան կեր-պով բացատրելով Պռւլիչի հետ պատահած հրաշքը և, հա-ւանօրէն, միաձայն ինձ անուանելով եսական, որովհետև ես զրազ եկայ հակառակ այն մարդուն հետ, որ մտադրուած էր իրեն ատրճանակով սպանել կարծիս, նա առանց ինձ յարմար դէպք չէր կարող գտնել...

Ես գիւղի գատարկ փողոցներով վերադառնում էի տուն բոլորակ և կարմիր լուսինը, ինչպէս հրդեհի ճամանչ սկսեց երեալ տների ատամնաւոր հորիզօնի տակից: Աստղերը խա-ղաղ փայլում էին մուգ-երկնագոյն կամարի վերայ. և իմ ծի-ծաղս եկաւ, երբ յիշեցի, թէ մի ժամանակ կային շատ իմաս-տուն մարդիկ, որոնք մտածում էին թէ երկնային լուսատու-ները մասնակից են լինում մեր հասարակ վէճերին, որոնք տե-ղի են ունենում մի կտոր հրզի, կամ որևէ հնարսի իրաւունքի պատճառով: Եւ ի՞նչ: Եյդ լապտերները, որոնք, նորանց կար-ծիքով, վառուած են միայն նորա համար, որ լուսաւորին նո-րանց պատերազմները և յաղթանակները, վառվում են նախ-կին փայլով բայց նորանց կըքերը և յշյսերը վաղուց մարել են նորանց հետ, ինչպէս այն կրակը, որը վառելէ անհոգ օ-տարականը անտառի ծայրին: Բայց որ աստիճանի կամքի ոյժ աղջում էր նորանց այս հաւատքը, թէ ամբողջ երկինքը

իւր անթիւ բնակիչներով նորանց վերայ նայումէ կարեկցութեամբ, որ թէպէտ համր է, բայց անփոփոխ է... Եւ մէնք, նրանց խղճալի յիանորդներ, որ թափառում ենք աշխարհիս երեսին առանց համոզմունքի և հպարտութեան, առանց վայել չութեան և երկիւղի, բացի այն ակամայ երկիւղից, որ Ճնշում է մեր սիրու անխուսափելի մահուան մասին մատածելիս՝ մնք անընդունակ ենք այլ ևս մէծ զոհաբերութիւնների ոչ մարդկութեան բարօրութեան և ոչ իսկ մեր սեփական երջանկութեան համար, որովհետեւ դիտենք թէ երջանկութիւն չկայ, մի կառկածից անցնում ենք միւսին, ինչպէս մեր նախորդները մի թիւր կարծիքից անցնում էին միւսին, չունենալով, ինչպէս և նրանք, ոչ յոյս և ոչ մինչեւ անգամ այն անորոշ թէւ զօրեղ վայելչութիւնը, որ ունենում է ամեն մի պատերազմում մարդկանց կամ բաղդի հետ...

Եւ ուրիշ շատ տեսակ մատածմունքներ անցնում էին իմ մոքից. ես ինքս չէի արծարծում այդ մատածմունքները, որովհետեւ չեմ սիրում մի վերացական մատածմունքի վերայ երկար կանգնել և ինչ հարկաւոր է այդ: Իմ պատահնեկութեան առաջին տարիներում ես երեւակայող էի. ես սիրում էի փոփոխակի արծարծել երեկոն մռայլ և երբեմն բերկրալի պատկերներ, որոնք՝ պատկերացնում էր ինձ անդադար և ազահ երեւակայութիւնս: Իայց զորանից ինձ ի՞նչ մնաց—միայն յոգնածութիւն, ինչպէս դիշերուայ պատերազմից յիտոյ տեսավլքի հետ, և ազօտ յիշողութիւնը լի ցաւակցութեամբ: Եյդ անօդուտ կոռուի մէջ ես սպառեցի և հոգուս եռանգը և բնաւորութեանս հաստատականութիւնը, որոնք անշնասթեշտ են իրական կեանքի մէջ, ես մտայ այս կեանքը, որը ես արդէն ճաշակել էի երեւակայութեամբ և ես սկսեցի տիրել և զգուել նման այն մարդուն, որը կարգում է վազուց իրեն յայտնի զբքի անյաջող նմանազործութիւնը:

Եյդ երեկոյեան անցքը իմ վերայ թողեց բաւական խոր տպաւորութիւն և զրոգուեց իմ ջղերս: Ես հաստատ զգիտեմ, թէ հաւատո՞ւմ եմ այժմ նախասահմանութեան, թէ ոչ բայց այդ երեկոյ ես նրան հաստատ հաւատացի. ապացոյցը անպայման էր, համոզիչ էր. և, ես չնայելով նրան, որ Ճաղքում էի մեր նախորդներին և նորանց կամակատար աստեղազիտու

թեան՝ ակամայ նրանց կողմնակից դարձայ: Եայց ես ժամանակին կանգ առայ այդ վտանգաւոր ճանապարհի վերայ և սովորութիւն դարձնելով ոչ մի բան անպայման չմերժել և ոչ մի բանի կուրօրէն չհաւատալ՝ դէնը ձգեցի բնաղանցութիւնը շատ տեղին էր. ես քիչ մնաց վար ընկնէի, զայթելով ինչոր հաստ և փափուկ բանից, որ ըստ երևոյթին կենդանի չէր: Վար եմ նայում—լուսինը արդէն լուսաւորել էր ճանապարհը—և ի՞նչ եմ տեսնում իմ առջեւ ընկած էր մի խոզ որ սրով երկու կառը էր արած... Հազիւ ես կարողացայ նորան դիտել լսեցի քայլերի ձայն. երկու կօզակ վազում էին նեղ փողոցից: Մէկը մօտեցաւ ինձ և հարցրեց—թէ չեմ տեսել արդեօք մի հարբած կօզակի, որը վազում էր խոզի եռելից: Ես յայտնեցի նրանց, որ չեմ պատահել կօզակին, և ցոյց տուի նորա կատաղի քաջութեան թշուառ զոհը:

— Եյ աւազակ, ասաց երկրորդ կօզակը. հէնց որ չիխիլրէ խմում սկսումէ ջարդել բոլորը, ինչոր պատահումէ: Պը նանք նրան գանելու. Երեմիչ ակտք է նորան կապել ապա թէ ոչ...

‘Նորանք հեռացան, իսկ ես աւելի զգուշութեամբ շարունակեցի ճանապարհս և վերջապէս անվտանգ հասայ առնա:

Ես բնակվում էի մի ծեր ոստիկանապետի մօտ, որին սիրում էի լաւ բնաւորութեան, մանաւանդ գեղեցիկ աղջկայ ‘Նաստիայի համար:

‘Նէ սովորականին համաձայն՝ մուշտակում փաթաթուած սպասումէր ինձ պարակվել գրան մօտ. լուսինը լուսաւորել էր նէրա քնքոյց շրթունքները, որոնք կապուտկել էին գիշերուայ ցրտից: ‘Նէ, ինձ ճանաչելով, ճպտաց. բայց ես արամադրուած չէի սիրելութիւն անելու: «Մնաս բարով, ‘Նաստիա, ասացի ես, նէրա մօտից անցնելով: ‘Նէ ցանկանում էր ինչ որ բան պատասխանել բայց միայն հառաչեց:

Ես ներս մանելով սենեակիս գուռը փակեցի, վառեցի մոմը և ընկայ անկողնիս վերայ. միայն այս անգամ քունս աւելի ուշ տարաւ: Երեկովը արդէն սկսել էր շառադունել, երբ քուն եղացրայց երեկի ճակատիս վերայ գլուած էր, որ ես այդ գիշեր քունս առնելու չեմ: Եռաւօտեան չորս ժամին եր-

կու բռունցք բաղխեցին իմ լրւսամուտս: Ես վեր թռայ.  
«Ի՞նչ...—վե՛ր կաց, հաղումի՛ր», գոշում էին ինձ մի քանի ձայ-  
ներ: Ես հապճեպ հազնուեցի և գուրս թռայ: «Գիտես ի՞նչ  
է պատահել, միաձայն ասացին ինձ երեք սպայ, որոնք եկել  
էին իմ հոտեկց: Նրանց երեսի գոյնը մեռելի գոյն էր դարձել:

— Ի՞նչ

— Վուլիչը սպանուած է:

Ես ընդարմացայ:

— Եյո, սպանուած է, շարունակեցին նորանք:—Գնանք  
շուտով:

— Ի՞սյց ուր գնանք:

— Ճանապարհին կիմանսաւ:

Գնացինք: Նորանք պատմեցին ինձ բոլորը, ինչ որ պատա-  
հել էր, խառնելով դանազան նկատողութիւններ այն տարօրի-  
նակ ճակատագրի մասին, որը նորան անխուսափելի մահից  
փրկեց մեռնելուց կէս ժամ առաջ:

Վուլիչը մենակ գնալիս է եղել մութ փողոցով, նորա վե-  
րայ յարձակվում է հալբած այն կօղակը, որը կտրատել էր  
խոզը, և գուցէ առանց նկատելու անցած լինէր նորա մօ-  
տից, եթէ Վուլիչը յանկարծ կանգ առնելով հարցրած չլի-  
նէր—ում ևս փնդուում եղըայր:—Քե՞զ պատասխանել է կօ-  
ղակը, թրով նորան խփելով և կարել է նորա ուսից մինչև  
սիրտը... Եյն երկու կօղակներու որոնք պատահեցին ինձ և  
մարդասպանին էին փնդուում՝ վերայ ևն հասել վերցրել ևն  
վիրաւորուածին, բայց նա արգէն վերջի շնջի հետ է եղել և  
ասացել է միայն այս երկու խօսքը՝ «իրաւունք ունի»:

— Միայն ևս հասկացայ այդ մութ խօսքերի նշանակու-  
թիւնը, գորանք ինձ էին վերաբերում: Խեղճ մարդին ևս ակամայ  
նախասասացի նորու ճակատագիրը: իմ բնազդումն չխարեց ինձ.  
ևս նորա այլակերպուած երեսի վերայ կարծես կարգացի մօ-  
տալուս մահուան կնիքը:

Մարդասպանը պահ մուաւ զատարկ իրմիթի մէջ, որը  
գիւղե ծայրին էր. մենք գնացինք այնտեղ: Շատ կանայք լս-  
լով վաղում էին գէպի նոյն կողմը, ուշացած կօղակը երբեմն  
գուրս էր վազում փողոց, շտապով դաշոյնը կապելով, և վա-  
ղելով անցնում էր մեղանից առաջ: Արսափելի իրաւունցում էր:

Վերջապէս մենք էլ հասանք. նայում ենք խրճիթի չորս կողմը, որի գուներն ու լուսամուտները ներսից փակած են. ամբոխը հաւաքուած էր: Ապանելով և կօզակները միմեանց հետ տաք-տաք խօսում են, կանայք ճշում են, ազօթելով և նզովք-ներ կարդալով. նէրանց մէջ աչքիս ընկաւ մի պառաւ կնոջ նշանաւոր երեսը, որը արտայացտում էր խելակորոյցի յուսահատութիւն: “Նէ նստել էր հաստ գերանի վերայ, յինուելով ծընկներին վերայ և զլուխը յինած ձեռներին. նէ սպանուածի մայրն էր: “Նէրա շրթունքները ժամանակ առ ժամանակ շարժվում էին... աղօթք էին նրանք մրմնջում, թէ անէծք:

Սակայն, պէտք էր մի միջոցի զիմել և յանցաւորին բլունել: Սակայն ոչ ոք չէր համարձակում առաջինը յարձակուելու:

Ես մօտեցայ լուսամուտին և նայեցի փեղիի Ճնդքից ներս. տժգոյն նա ընկած էր յատակի վերայ աջ ձեռով տարձանակը բռնած. արիւնոտ թուրը ընկած էր նորա մօտ: “Նորա արտայայտիչ աչքերը սարսափելի կերպով նայում էին չորս կողմը. երբեմն նա ցնցվում էր և բռնում էր իւր զլուխը, կարծես անորոշ կերպով յիշում էր երեկուայ տնցքը: Ես մեծ վճռականութիւն նկատեցի այդ անհանդարտ հայեացքում և մայեօրին ասացի, որ նա զուր տեղը չէ հրամայում կօզակներին դուռը ջարդել և ներս մտնել որովհետեւ աւելի լաւ է այժմ անել այդ, քան այն ժամանակ, երբ նորա ուշքը վերան կգայ:

Եյլ ժամանակ կօզակների ծեր յիսնապետը մօտեցաւ նորան և տուեց նորա անունը. նա ձայն տուեց:

— Մելք գործեցիր, եղբայր Խփիմիչ ասաց յիսնապետը.— Էլ ձար չկայ յանձնուի՞ր:

— Զեմ յանձնվում, պատասխանեց կօզակը:

— Աստծուց վախեցիր. չէ՞ որ գու անիծուած չաշան չես, այլ բարի քրիստոնեայ: Եւ երբ սատանան քեզ մոլորեցրեց՝ էլ ոչինչ չէ կարելի անել. Ճակտուազրից չես աղատուիլ:

— Զեմ յանձնվում, բզաւեց կօզակը սպանալի ձայնով, և լսուեց ինչպէս նա բարձրացրեց ատրձանակի ոտը, որ չխկաց բարձրանալիս:

— Եյ, մօրաքոյր, տսաց յիսնապետը մի պառաւի—իօս-սիր որդուդ հետ, թերեւս քեզ լսէ... Զէ՞ որ սորանսվ միայն \*

Աստծուն է բարկացնում: “Նայիր պարոնները արգէն երկու ժամէ, որ սպասում են:

Պառաւը աչքելը յառեց յիսնապետի վերայ և զլուկութօթուեց:

— Վասիլիյ Պետրօվիչ ասաց յիսնապետը, մօտենալով մայեօրին. նա չի յանձնուի ես նորան ձանացում եմ, իսկ եթէ դուռը կոտրենք՝ նա մեղանից շատերին կտպանէ. չէ՞ք հրամայում նորա վերայ հրացան արձակել—փեղկի մէջ մեծ ձեղքուածք կայ:

Եյդ ժամանակ իմ մէջ ծագեց մի սարսափելի միաք—Վուլիչի նման ես մտածեցի ծակատագիրս փորձել:

— Սպասեցէք, ասացի ես մայեօրին,—ես նորան կենդանի կրոննեմ:

Յիսնապետին հրամայելով, որ նորան խօսքի բռնէ և դրան մօտ երեք կօղակ կանգնեցնելով, որոնք պատրաստ էին դուռը կոտրելու և ինձ նշան տուած բուգէին, օգնութեան հասնելու, ես խթճիթի չորս կողմը ման եկայ և մօտեցայ օրհասական լրւսամուտին—իմ սիրաս սաստիկ բարախում էր:

— Են, դու անիծուած, բզաւեց յիսնապետը, ի՞նչ դու մեղ վերայ ծաղընում ես, ի՞նչ է, կամ մտածում ես, թէ մենք քեզ ձեռք չենք բերի: “Նա սկսեց բոլոր ոյժով դուռը բաղխիլ ես աչքս զնելով ձեղքին հետեւում էի կօղակի շարժումներին, որը չէր սպասում թէ այս կողմից կյարձակուին—և յանկարծ պոկեցի լրւսամուտի փեղկը և զլիսիվայր թռայ լրւսամուտից ցած: Հրացանը արձակուեց իմ ականջիս տակին, զնդակը պոկեց ուսադիմս. բայց ծուխը, որ լեցրել էր սինեակը արգելք եղաւ իմ հակառակորդին սուրը գտնելու, որը ընկած էր նորա մօտ: Ես բռնեցի նորա՝ ձևոները. կօղակները ներս թափուեցին և երեք բուգէ չանցկացած յանցաւորը արգէն կապուած էր և պահապանների հսկողութեամբ բանտն ուղարկուած: Ֆողովուրդը ցրուեց. սպաները ինձ շնորհաւորում էին, և ձիշտ որ շնորհաւորելու բան կար:

Եյս բոլորից յետոյ կարելի՞ է ծակատագրին չհաւատաբ Բայց ովք ձիշտ դիտէ, թէ մարդ մի բանի համոզրւած է, թէ ոչ... որովհետեւ, շատ անգամ զգայարաների սխալմօւնքը կամ դատողութեան թերութիւնը մենք համարում ենք համոզմունք:

Ես սիրում եմ ամեն բանի վերայ կասկածել այս սսվորութիւնը չէ խանգարում բնաւորութեան վճռողական լինելուն. ընդհակառակը, ինչ վերաբերում է ինձ ևս միշտ աւելի համարձակ եմ գնում առաջ, երբ չփառեմ, թէ ինձ ինչ է սպասում: Չէ՞ որ մահուանից աւելի վատ ոչ մի բան պատահելու չէ—իսկ մահից խոյս տալ կարելի չէ:

Ամրոց վերագառնալով, ես Մակսիմ Մակսիմիչին ասացի քոլորը, ինչ որ պատահեց ինձ և որին ես ականատես էի եղած, և ցանկացայ զիտենալ նորա կարծիքը նախաստհմանութեան մասին: Նա առաջ խօսքը չհասկացաւ, բայց ես ինչ քան կարող էի բացատրեցի նորան, և այն ժամանակ նա ասաց խորհրդաւոր կերպով զլուխը շարժելով.

Այս... Դա գժուար խնդիր է... Բայց այս ասիական հրացանի ոաները յաճախ կրակ չեն առնում, երբ վատ են ձիթած, կամ եթէ թոյլ կերպով սեղմած լինիս: Խոստովանում եմ, չեմ սիրում նոյնպէս չերքէզների պտուտակաւոր հրացանները, որոնք, կարծես, անվայել են մեր աստիճանին, նոցա կոթը փոքր է, այնպէս որ յաճախ մարդու քիթը խանձում է արձակելիս: Բայց նորանց թրե՛րը... էլ մի ասէ:

Յետոյ նա աւելացրեց մի քիչ մտածելով.

— Այս, ափսոս, խեղճ մարդ... Ասս ի՞նչ գործ ունես զիշերը հարբած կօզակի հետ խօսելու: Սակայն, երեխ նորա ծնած օրից այդպէս էր գրուած նորա ձակատին...

Աորանից աւելի ես նորանից ոչինչ չլսեցի. նա ընդհանրապէս չէ սիրում բնազանցական վիճականութիւններ:

### Յականնէն Մակուտեանց:

1890 թ. 4 սեպ.  
Ակադեմիա:



## «ԱՐԱՔՍԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պիետրիբուրգ. — Լիճ: Ալատ չեն թէ թարգմանական և թէ ինքնուրոյն Զեր երկու բանաստեղծութիւնները, սակայն առայժմ տպագրելու մասին ոչինչ չենք կարող ասել:

Մոսկվա. — Օր. Ա. Զեր «Ծախտենու» մասին կգենք Զեր նամակով:

Դաշտ. — Կ. Յ. Ստացած ենք Զեր երկու ընդարձակ գրութիւնները: Մանրամասնօրէն կգրենք Զեր նամակով:

— Պ. Ա. Զեր բանաստեղծութիւնները թէև յաջող են, բայց այնուամենայնիւ առայժմ «Վրաքսում» յարմար չենք գտնում տպելու. այն էլ պէտք է ասած, որ գոքա մեծ մասամբ նմանութիւն են:

Բատկի. — Գր. Խ. Զեր «Կիւթեթերը» գեռ ամբողջովին կարդացած չենք, թէև գժուար նպատակայարմար լինեն «Վրաքսում»:

Ելեմայիս. — Ա. Երկրագործութեան վերաբերեալ Զեր գրուածքը, թէև շարուած պատրաստ է, սակայն ներկայ գրքի մէջ տեղի սղութեան պատճառով անկարող եղանք զետեղել:

— Ստացած ենք Զեր բանաստեղծական հիւսուածքները. Շնկեր սիրելի, Ալատ, Տապանագիր, Որբի երգը, Հուրին, 1-ն յունուարի, Երբ ալեկոծվում է արտը գեղնած (Լերմատովից), Պուն, զուն, Տենչ սիրելինների, Ենզաւակ այրի, Մայր, Կէրան, Վշօթք և Ալատկ. սական. սոցա մասին առայժմ որոշ ոչինչ չենք կարող ասել:

Մշշուանդրով. — Գ. Ֆ. Ա. Ստացած ենք Զեր ուղարկած երեք բանաստեղծութիւնները, որոնց մասին նամակով կ'գրենք: Զեր երկրորդ խնդիրը մանաւանդ անյարմար ենք գտնում կատարելու:

Դաշտ. — Գ. Ք. Ա. Ստացած ենք Զեր բանաստեղծութիւններից հաւասական է տպենք «Ալարժապետը», թէև վատ չեն և միւս երկուսը:

— Բարկաս. Կըտպենք Զեր «Լաղնին»:

Կարմա. Կարմա. — Օր. Ա. Ա. Ստացանք շնորհակալութեամբ Զեր ուղարկած նիւթերը, որոնք կ'մանեն յառաջիկայ գրքի կենսագրականի մէջ:

— Կոմս Տրոյատոր. Զեր հինգ ոտանաւորները ստացած ենք, սակայն «Վրաքսում» անյարմար ենք գտնում տպելու:

— Ո. Ա. Ստացած ենք Զեր թարգմանական բանաստեղծութիւնները, որոնք զետեղելու չենք «Վրաքսում»: Ուղարկեցէք Մուրա, Խաջի Աբրեկը և Պուշկինից թարգմանուածները: Եթէ յաջող թարգմանած լինէք, անշուշտ, կ'տպենք յառաջիկայ գրքում:

**Յունաստան.** — Հայ — Արմէն. Ծաերես տպենք Զեր բանաստեղծութիւնը՝ «Իմ թագաւորութիւնը»:

**Ասուլախան.** — Յ. Ա. Զեր «Աւանդութիւնը» վերադարձրինք Զեր բարեկամին: Զեր բանաստեղծութիւնները վատ չեն, թէև չենք տպում այլ պատճառներով:

**Պալէս.** — Լ. Ա. «Զինավաճառը» յարմար չգտանք, «Հայ գիւղացին» առայժմ կմնայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷՀ ԱՏԵՑՈՒԾԸ Է ՀԵՏԵՒԵԱԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔԸ:

Записки Вост. Отд. Рус. Арх. Общ. հանդիսի Յ. — Պ. Համարներից արտատպուած Պ. Առաջի հետեւել գրութիւնները.

Изъ лѣтней поѣздки въ Армению. Замѣтки и извлечения изъ армянскихъ рукописей I—IX. Վարունակելի:

Софронъ сынъ Исаака, или Исаакъ сынъ Софона?

Этимологія армянского սեպուհ и грузинского сене,

ՎՐԱՆՈՒԹԻՒՆ Ա. Томсонъի «Историческая Грамматика армянского языка города Тифлиса» վերնագրով գրքի վերայ:

Կ. Ա. Եսելովսկուց Կеропэ Петровичъ Паткановъի կենսագրութիւնը պատկերով:

